ՖԻՐԴՈՒՍԻ

պետհրատ

[illegible]

کمیساریات معارف جمهوریت
شوروی ارمنستان

اینستیتوت تاریخ مدنیت

فردوسی

بمناسبت هزارسالهگی تولد سلطان الشعرا

مجموعه

نشریات دولتی
اروان ۱۹۳۴

29 JUN 2006
19 NOV 2010

ՀՍԽՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.5.092
Ֆ-65

ՖԻՐԴՈՒՍԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻՆ
ՆՎԻՐՎԱԾ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՊԵՏՀՐԱՏ • ՅԵՐԵՎԱՆ
1934

06 SEP 2013

9542

Տպագրվում է ՍՍՌՄ ԳԱ Հայֆանի Պատմության Ինստիտուտի որոշմամբ։

Պատ. խմբագիր՝ [redacted]

393
216

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

... Թե ուզում ես յերգդ լսեն՝
Ժամանակիդ շո՛ւնչը դարձիր։—
Կապվի՛ր նյարդով յուրաքանչյուր
Քո օրերին ու քո դարին...

Չի շղթայվի մարդու վոգին
վո՛չ մի կապով արտաքին,
Յերբ դարի, ժամանակի
զրահ ունի իր հագին.
Կը բարձրանա ու կը կանգնի
նա հավատով անսասան
Յեվ կը մնա գալիք կյանքում՝
անխորտակ ու ահագին։—

Յ ե ղ ի շ ե Չ ա ր ե ն ց

Պարսիկ ժողովուրդը, նրա հետ միասին նաև համայն աշխարհի կուլտուրական հասարակությունը յեռանդագին պատրաստվում են մոտ ապագայում տոնելու Իրանի մեծագույն զավակի, հանճարեղ բանաստեղծ և խորհող Ֆ ի ր դ ո ւ ս ո ւ ծննդյան հազարամյակը։

Այդ հոբելյանը՝ նվիրված լինելով Ֆ ի ր դ ո ւ ս ո ւ կյանքին ու անմահ գործին, իրականում վեր է ածվելու մի հոյակապ հանդեսի, վորը կյանքի է կոչված վերակենդանացնելու պարսիկ ժողովրդի հանճարի ստեղծարար գործը, Իրանի անցյալի ու ներկայի բոլոր կուլտուրական արժեքները, վորովհետև Ֆ ի ր դ ո ւ ս ի ն, վորպես բանաստեղծ և քաղաքացի, ապրել ու ստեղծագործել է իր դարին համընթաց, վորովհետև նա յերգել է իր «ժամանակի շունչը», կարողացել է դիտել, վերապրել ու պատկերացնել իր դարաշրջանը, ժամանակակից հասարակությունն իր կյանքի յեռ ու զեռով, ապրումներով, մաքառումներով և խնդություններով։

Ֆ ի ր դ ո ւ ս ո ւ «Շ ա հ - Ն ա մ է»-ի նյութը հենց իր դարի համար արդիական չէր։ Չնայած իր թեմայի վոչ արդիական լինելուն, չնայած այն հանգամանքին, վոր նա իրենից հարյուրավոր և հազարավոր տարիներ առաջ յեղած վիպական և պատմական իրադարձություններն է նկարագրում, այնուամենայնիվ այդ հինը, անցածը բանաստեղծի ստեղծագործության ասպեկտում վերափոխվում

է, արդիականանում և յենթարկում Իրանի «բնությունը և հասարակական ձևերը, վորոնք անգիտակցական յեղանակով մշակված են արդեն ժողովրդի յերևակայության միջոցով»:

Ֆիրդուսու «Շահ-Նամե»-ն X դարի Իրանի հասարակական կյանքի, պարսիկ ժողովրդի քաղաքական, կուլտուրական վերածնության լիարյուն կենդանագիրն է, այդ դարաշրջանը վերարտադրող փայլուն կոթողը: Այդ լոկ պատճառով նա չի կորցնում իր գրավչությունը և նրա արվեստն ու վիպերգությունը «շարունակում են պատճառել մեզ գեղարվեստական հաճույք և պահպանում վորոշ իմաստով նորմայի և անհասանելի տիպարի նշանակությունը»:

Դրանով չի սահմանափակվում Ֆիրդուսու գրական-հասարակական նշանակությունը: Հանճարեղ բանաստեղծի արվեստը համակել է իրեն ժամանակակից և հետագա պարսիկ բանաստեղծներին, ուղղություն է տվել նրանց թեմատիկայի ընտրության բնագավառում և վերջապես, իր կնիքն է դրել նրանց գրական արվեստի վրա: Նրա գրական գործը շուտով ազգային շրջանակներից դուրս է գալիս և թևակոխում նորանոր աշխարհներ: Մերթ գրական ուղիներով նրա «Շահ-Նամե»-ն թափանցում է մերձավոր և հեռավոր յերկրներ, ուր գտնում նոր միջավայրում, հարմարվում, թարգմանվում և առաջացնում այստեղ հետևորդների շարքեր, մերթ բանավոր ասմունքի միջոցով մերվում-ձուլվում նոր միջավայրի ֆոլկլորի հետ ու ազգայնանում: Միջին դարերից սկսած Ֆիրդուսին և իր «Շահ-Նամե»-ն ճանապարհորդում են յերկրից յերկիր. և ներկայումս չկա կուլտուրական մի ազգ, վոր թարգմանած չլինի «Շահ-Նամե»-ն ամբողջապես կամ հատվածաբար: Ֆիրդուսին այսոր արդեն սոսկ պարսկական հանճար չէ. այսոր նա պատկանում է համայն մարդկության:

Ֆիրդուսին պատկանում է նաև մեզ՝ հայերիս: Ինքը հանճարեղ բանաստեղծը, նրա «Շահ-Նամե»-ն ու «Յերգիծանքը», նրա կերտած հերոսներն ու տիպերը հանրածանոթ են հայ ընթերցողին, սիրված են և հարազատացած հայ աշխատավոր գյուղացու միջավայրում: «Շահ-Նամե»-ի առասպելական-վիպական մոտիվները Ֆիրդուսուց շատ առաջ և հետո բանավոր տարածված են յեղել Հայաստանում և արձանագրվել են հայ մատենագիրների կողմից. «Շահ-Նամե»-ի հետևողությամբ, նրա տաղաչափությամբ կերտվել են բանաստեղծական քերթվածներ. նրա վոճերն ու ասույթները, գրական և բացասական տիպերը չափանիշ են յեղել մեր գրականության մեջ բարոյախրատական հասկացողությունների և պատկերավոր մտածողության և վերջապես, նրա կարևորագույն պոեմների մեծ մասը XIX դարի սկզբներից մինչև որս մի քանի անգամ չափածո և արձակ թարգմանվել են հայերեն և ընթերցող հասարակության սեփականություն դարձել*):

Կուլտուրայի Պատմության Ինստիտուտը՝ հրապարակելով Ֆիրդուսուն նվիրած այս ժողովածուն, բնավ հավակնություն չունի պնդելու, վոր սրանով սպառել է այն ամենը, ինչ կապ ունի հայ-իրանական

*) Տես Գ. Լևոնյան, «Ֆիրդուսին հայ գրականության մեջ» այս ժողովածուի յերես 129:

կուլտուր-պատմական և կուլտուր-կենցաղային փոխադարձ հարաբերությունների հետ, վոր հիմնովին լուսաբանել է անգամ բանաստեղծի կյանքի և ստեղծագործության հետ առնչություն ունեցող խնդիրները՝ նրա առաջխաղացումը մեր անցյալ և ներկա կուլտուրայի բնագավառում, նրա մուտքն ու արձագանքը մեր գրականության և ֆոլկլորի մեջ: Այդ խնդիրները քիչ թե շատ լրիվ լուսաբանելու համար հարկ կլինի լույս ընծայելու մի քանի հատոր գիտահետազոտական ուսումնասիրություններ: Ինստիտուտի նպատակն ավելի սահմանափակ է յեղել: Նա ցանկացել է միայն, վորպես նմուշ հետագայում կատարելիք ուսումնասիրությունների, վերլուծության յենթարկել մի յերկու մասնակի խնդիրներ, կապված Ֆիրդուսու «Շահ-Նամե»-ի և վերջինիս աղբյուրների հետ, այն է՝ «Իրանի առասպելական-վիպական մոտիվները «Շահ-Նամե»-յում և հայ մատենագրության ու ֆոլկլորի մեջ», ապա «Շահ-Նամե»-ի վոտանավորի չափը հայ բանաստեղծության մեջ»: Ժողովածուի մեջ տեղ չեն գտել մի շարք կարևորագույն խնդիրների վերլուծություններ, օրինակ, չեն արժեքավորվել «Շահ-Նամե»-ի մի քանի պոեմների հայերեն թարգմանությունները, վորոնք հայտնի յեն մեր ընթերցողներին. չեն լուսաբանվել նաև Ֆիրդուսու կյանքի և ստեղծագործության արձագանքները հայոց նոր գրականության մեջ. մանրազնին չեն հետազոտված «Շահ-Նամե»-ի մոտիվների առկայությունն ու ազդեցությունը մեր ֆոլկլորի, հատկապես «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի վրա և այլն: Նշածս բացերով հանդերձ՝ այնուամենայնիվ այս ժողովածուն ֆիրդուսագիտության առաջին ընդարձակ փորձն է մեր գիտական գրականության մեջ, մի փորձ, վորն ամփոփ գաղափար է տալիս հանճարեղ բանաստեղծի կյանքի ու գործի, դարաշրջանի քաղաքական, հասարակական-տնտեսական և կուլտուրական հարաբերությունների մասին, արծարծում է մի շարք կարևորագույն հարցեր՝ կապված Ֆիրդուսու այն ֆոլկլորային աղբյուրների հետ, վորոնք զուգահեռներ ունեն հայ մատենագրության և ֆոլկլորի մեջ, բնութագրում է բանաստեղծի ստեղծագործական յեղանակներն և վորպես նմուշ, գիտական հասարակության ուշադրությանն է հանձնում հայ-իրանական վեպի մինչև որս անհայտ մի պատում:

Տոգորված այն վառ գիտակցությամբ, վոր ներկա ժողովածուն էլ մի դուզնաքյա նպաստ է հարուստ ֆիրդուսագիտության, Ինստիտուտը վստահ հրապարակում է այն:

Թող այս ժողովածուն լինի պարսիկ և հայ ժողովուրդների անցյալի և ներկայի բարեկամական հարաբերությունները, կուլտուրական կապն ու մերձեցումն ամրապնդող օղակներից մեկը. Թող նա լինի մի համեստ պսակ այն հազարավոր պսակների մեջ, վորոնք դրվելու յեն իր «ժամանակի շնչով» ապրող, իր «դարը» գեղարվեստորեն յերգող, պարսիկ ժողովրդի և համայն մարդկության մեծագույն զավակներից մեկի, հանճարեղ բանաստեղծ Ֆիրդուսու հոյակերտ արձանի վրա:

ՀՍԽՀ Կուլտուրայի Պատմության Ինստիտուտ

1934 թ. օգոստոս

է, արդիականանում և յենթադրում Իրանի «բնությունը և հասարակական ձևերը, վորոնք անգիտակցական յեղանակով մշակված են արդեն ժողովրդի յերևակայության միջոցով»։

Ֆիրդուսու «Շահ-Նամե»-ն X դարի Իրանի հասարակական կյանքի, պարսիկ ժողովրդի քաղաքական, կուլտուրական վերածնության լիարյուն կենդանագիրն է, այդ դարաշրջանը վերարտադրող փայլուն կոթողը։ Այդ իսկ պատճառով նա չի կորցնում իր դրավչությունը և նրա արվեստն ու վեպերգությունը «շարունակում են պատճառել մեզ գեղարվեստական հաճույք և պահպանում վորոշ իմաստով նորմայի և անհասանելի տիպարի նշանակությունը»։

Դրանով չի սահմանափակվում Ֆիրդուսու գրական-հասարակական նշանակությունը։ Հանճարեղ բանաստեղծի արվեստը համակել է իրեն ժամանակակից և հետագա պարսիկ բանաստեղծներին, ուղղություն է տվել նրանց թեմատիկայի ընտրության բնագավառում և վերջապես, իր կնիքն է դրել նրանց գրական արվեստի վրա։ Նրա գրական գործը շուտով ազգային շրջանակներից դուրս է գալիս և թևակոխում նորանոր աշխարհներ։ Մերթ գրական ուղիներով նրա «Շահ-Նամե»-ն թափանցում է մերձավոր և հեռավոր յերկրներ, տեղ գտնում նոր միջավայրում, հարմարվում, թարգմանվում և առաջանում այստեղ հետևորդների շարքեր, մերթ բանավոր ասմունքի միջոցով մերվում-ձուլվում նոր միջավայրի ֆոլկլորի հետ ու ազգայնանում։ Միջին դարերից սկսած Ֆիրդուսին և իր «Շահ-Նամե»-ն ճանապարհորդում են յերկրից յերկիր. և ներկայումս չկա կուլտուրական մի ազգ, վոր թարգմանած չլինի «Շահ-Նամե»-ն ամբողջապես կամ հատվածաբար։ Ֆիրդուսին այսօր արդեն սոսկ պարսկական հանճար չէ. այսօր նա պատկանում է համայն մարդկությանը։

Ֆիրդուսին պատկանում է նաև մեզ՝ հայերիս։ Ինքը հանճարեղ բանաստեղծը, նրա «Շահ-Նամե»-ն ու «Յերգիծանքը», նրա կերտած հերոսներն ու տիպերը հանրածանոթ են հայ ընթերցողին, սիրված են և հարազատացած հայ աշխատավոր գյուղացու միջավայրում։ «Շահ-Նամե»-յի առասպելական-վիպական մոտիվները Ֆիրդուսուց շատ առաջ և հետո բանավոր տարածված են յեղել Հայաստանում և արձանագրվել են հայ մատենագիրների կողմից. «Շահ-Նամե»-յի հետևողությամբ, նրա ազդեցությամբ կերտվել են բանաստեղծական քերթվածներ. նրա վոճերն ու ասույթները, դրական և բացասական տիպերը չափանիշ են յեղել մեր գրականության մեջ բարոյախրատական հասկացողությունների և պատկերավոր մտածողության և վերջապես, նրա կարևորագույն պոեմների մեծ մասը XIX դարի սկզբներից մինչև օրս մի քանի անգամ չափածո և արձակ թարգմանվել են հայերեն և ընթերցող հասարակության սեփականություն դարձել *)։

Կուլտուրայի Պատմության Ինստիտուտը՝ հրատարակելով Ֆիրդուսուն նվիրած այս ժողովածուն, բնավ հավակնություն չունի պնդելու, վոր դրանով սպառել է այն ամենը, ինչ կապ ունի հայ-իրանական

*) Տես Գ. Լևոնյան, «Ֆիրդուսին հայ գրականության մեջ» այս ժողովածուի յերես 129։

կուլտուր-պատմական և կուլտուր-կենցաղային փոխադարձ հարաբերությունների հետ, վոր հիմնովին լուսաբանել է անգամ բանաստեղծի կյանքի և ստեղծագործության հետ առնչություն ունեցող խնդիրները՝ նրա առաջխաղացումը մեր անցյալ և ներկա կուլտուրայի բնագավառում, նրա մուտքն ու արձագանքը մեր գրականության և ֆոլկլորի մեջ։ Այդ խնդիրները քիչ թե շատ լրիվ լուսաբանելու համար հարկ կլինի լույս ընծայելու մի քանի հատոր գիտահետազոտական ուսումնասիրություններ։ Ինստիտուտի նպատակն ավելի սահմանափակ է յեղել։ Նա ցանկացել է միայն, վորպես նմուշ հետագայում կատարելիք ուսումնասիրությունների, վերլուծության յենթարկել մի յերկու մասնակի խնդիրներ, կապված Ֆիրդուսու «Շահ-Նամե»-յի և վերջինիս աղբյուրների հետ, այն է՝ «Իրանի առասպելական-վիպական մոտիվները «Շահ-Նամե»-յում և հայ մատենագրության ու ֆոլկլորի մեջ», ապա «Շահ-Նամե»-յի վոտանավորի չափը հայ բանաստեղծության մեջ»։ Ժողովածուի մեջ տեղ չեն գտել մի շարք կարևորագույն խնդիրների վերլուծություններ, օրինակ, չեն արժեքավորվել «Շահ-Նամե»-յի մի քանի պոեմների հայերեն թարգմանությունները, վորոնք հայտնի յեն մեր ընթերցողներին. չեն լուսաբանվել նաև Ֆիրդուսու կյանքի և ստեղծագործության արձագանքները հայոց նոր գրականության մեջ. մանրազնին չեն հետազոտված «Շահ-Նամե»-յի մոտիվների առկայությունն ու ազդեցությունը մեր ֆոլկլորի, հատկապես «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի վրա և այլն։ Նշածս բացերով հանդերձ՝ այնուամենայնիվ այս ժողովածուն ֆիրդուսագիտության առաջին ընդարձակ փորձն է մեր գիտական գրականության մեջ, մի փորձ, վորն ամփոփ գաղափար է տալիս հանճարեղ բանաստեղծի կյանքի ու գործի, դարաշրջանի քաղաքական, հասարական-տնտեսական և կուլտուրական հարաբերությունների մասին, արծարծում է մի շարք կարևորագույն հարցեր՝ կապված Ֆիրդուսու այն ֆոլկլորային աղբյուրների հետ, վորոնք զուգահեռներ ունեն հայ մատենագրության և ֆոլկլորի մեջ, բնութագրում է բանաստեղծի ստեղծագործական յեղանակներն և վորպես նմուշ, գիտական հասարակության ուշադրությանն է հանձնում հայ-իրանական վեպի մինչև օրս անհայտ մի պատում։

Տոգորված այն վառ գիտակցությամբ, վոր ներկա ժողովածուն էլ մի դուզնաքյա նպաստ է հարուստ ֆիրդուսագիտության, Ինստիտուտը վստահ հրատարակում է այն։

Թող այս ժողովածուն լինի պարսիկ և հայ ժողովուրդների անցյալի և ներկայի բարեկամական հարաբերությունները, կուլտուրական կապն ու մերձեցումն ամրապնդող օղակներից մեկը. թող նա լինի մի համեստ պսակ այն հազարավոր պսակների մեջ, վորոնք դրվելու յեն իր «ժամանակի շնչով» ապրող, իր «դարը» գեղարվեստորեն յերգող, պարսիկ ժողովրդի և համայն մարդկության մեծագույն զավակներից մեկի, հանճարեղ բանաստեղծ Ֆիրդուսու հոյակերտ արձանի վրա։

ՀՍԽՀ Կուլտուրայի Պատմության Ինստիտուտ

1934 թ. օգոստոս

Կ. ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՖԻՐԴՈՒՍԻՆ

ԵՎ

ԻՐԱՆԻ ՎԻՊԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ «ՇԱՀ-ՆԱՄԵ»-ՅՈՒՄ ՈՒ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա

ՖԻՐԴՈՒՍԻՆ ՑԵՎ ԻՐ ԴԱՐԸ

1

Քադիսիի ճակատամարտը (637 թ.), հուժկու հարված հասցնելով Իրանի հզոր գահակալներին, Արևելքում և Արևմուտքում տարսափ տարածող Սասանյան շահնշահների դարավոր տիրապետությանը, վորոշեց Իրանի անկախության բախտը։

Արաբական թերակղզում առաջացած նոր պետությունը—Խալիֆատն իր քաղաքական և տնտեսական էքսպանսիայի տուրք տալով՝ Ոմարի և Ոսմանի առաջնորդությամբ՝ աստիճանաբար նվաճելով Իրանի բարձրավանդակը, 650 թվին գրավեց Իրանի հռչակավոր մայրաքաղաք Ստահրը և տեր դարձավ ամբողջ յերկրին։

Քաղաքական-ռազմական հետևանքներով լի այս խոշորագույն իրադարձությանը զուգընթաց՝ Իսլամը հռչակվում է պետական կրոն Զրադաշտի հայրենիքում, և ազգաբնակությունը իսլամիզացիայի յե յենթարկվում։ Այս պրոցեսը, ճիշտ է, ավելի դանդաղ է քաղաքական-իդեոլոգիական հող նվաճում, քան ռազմական էքսպանսիան, բայց և այնպես VIII և IX դարերում նա հաստատուն հող է գրավում և տիրական է դառնում Իրանի բարձրավանդակում։ Մուհամմեդի կրոնը փաստ է դառնում, և Իրանի բնակիչները խառցնում են նոր վարդապետության հետևողների, մասնավորապես, շիաների շարքերը։

Պարսիկներն՝ ընդունելով Իսլամը, ճանաչվում են իրավահավասար անդամներ լայնատարած Խալիֆատում և սկսում են մուտք գործել Խալիֆատի կենտրոնաձիգ բյուրոկրատական պետական ապարատը։

Նրանք ընդամենը մի հարյուր տարվա ընթացքում գրավում են Խալիֆատի, հատկապես Աբբասյան Խալիֆատի մեջ բարձրագույն և ամենապատասխանատու պաշտոնները (վեզիրական տոհմեր՝ Բարմեկիդները, Աֆշինը)։

Նորադավան պարսիկների առկայությունը Խալիֆատի ղեկավար ապարատում միայն քաղաքական-վարչական բնույթի չէր։ Նրանց հետ զուգընթաց մուտք է գործում Խալիֆատի քաղաքական-տնտեսական և իդեոլոգիական ընագավառներն Իրանի, հատկապես Սասանյանների, հարուստ կուլտուրան։ Թարգմանում են արաբերեն և յուրացնում Իրանի տեխնիկայի և գիտության ու պոեզիայի հուշարձանները։ Պահլավի թարգմանական գրականության միջոցով արաբները հաղորդակից են դառնում հույն և հնդիկ գրական, գիտական և փիլիսոփայական ժառանգությանը։ Պարսիկ կուլտուրան, Պահլավի գրականությունը դառնում է մի առատ աղբյուր արաբական նոր կուլտուրայի կերտման ասպարեզում։

2

Խալիֆատը VIII—IX դարերում տարածում է իր սահմանները Հնդկաստանից մինչև Ջիբրալտար, նվաճում է այդ լայնածավալ տերրիտորիայում գտնվող մեծ ու փոքր յերկրներն ու պետությունները։ Խալիֆատի ռազմական-քաղաքական նման ծավալումը միջնադարյան պայմաններում հղի յեր նաև քայքայման տարրերով, կենտրոնախույզ ձգտումներով։ IX դարում խալիֆի կենտրոնաձիգ բյուրոկրատական հսկա միապետությունն ապրում է իր քայքայման պրոցեսը։ Ծայրագավառները, նվաճված սահմանամերձ մեծ պրովինցիաները հնարավոր չեր քաղաքականապես և վարչականորեն ղեկավարել կենտրոնից—Բաղդադից։ Անհրաժեշտ եր տեղական ուժերով կառավարել այդ յերկրամասերը։ Խալիֆները դադարում են կենտրոնից, կենտրոնական ապարատից ուղարկված կուսակալներով-վոստիկաններով կառավարել այդ յերկրամասերն և դրանց փոխարեն նշանակում են տեղական հզոր ֆեոդալներից Խալիֆատի գործակալներ։ Այս քաղաքականությամբ խալիֆը ձգտում եր, հնարավորության սահմաններում, ավելի ամուր կապերով կապել Խալիֆատի հետ սեպարատիստա-

կան ձգտումներ ունեցող, նվաճված յերկրների հզոր ֆեոդալներին։ Այս քաղաքականությունը կիրառվում է նաև Իրանում։

Խալիֆատի կենտրոնաձիգ այս քաղաքականությունը յերկսայրի սուր դարձավ հենց Խալիֆատի հետագա բարգավաճման և ամրապնդման համար։ Կարելի յե ասել, վոր Խալիֆատի միջոցառումներն այդ բնագավառում վրիպած եյին և արագացրին Խալիֆատի հզորության անկումը։

Ապակենտրոնացման ձգտումները մանավանդ ուժեղ եյին արտահայտվում Իրանի արևելյան մարզերում։ IX դարում մեկը մյուսի հետևից ապստամբում են այլևայլ հզոր զորավարներ, կուսակալներ և եմիրներ ու իրենց անկախությունն են հռչակում Իրանի զանազան յերկրամասերում և մարզերում, պահպանելով անվանական վասալության սոսկ իրավական-ձևական հարաբերություն Բաղդադի խալիֆների հետ։ Մեկը մյուսին հաջորդում են Իրանում գերիշխանություն հաստատած Թահիրիդների (821—873), Սաֆֆարիդների (867—903), Սամանիդների (875—999) և այլն հարստությունները։

Իրանի հողի վրա առաջացած այս ֆեոդալական հարստությունները, հռչակելով իրենց անկախությունը, իրականում շարունակում եյին կիրառել Խալիֆատի բյուրոկրատական կենտրոնաձիգ միապետության արտաքին և ներքին քաղաքականության հիմնական սկզբունքները։ Այդ հարստությունները պատկանում եյին Իրանի հզորագույն դեհկան-ֆեոդալների այն խավին, վորը կայուն կապեր եր հաստատել դարաշրջանի առևտրափողային դասի հետ, մասնակից եր առևտրա-փողային հարաբերություններին ու տնտեսական ձեռնարկումներին։ «Սամանիդները, հանդիսանալով ապրանքա-փողային հարաբերություններից մի շարք ոգուտներ քաղող ֆեոդալական խմբակների, ինչպես նաև խոշոր վաճառականական կամպանիաների շահերի տիպիկ արտահայտիչներ, ասում է Իրանի պատմության այս շրջանի մասնագետ Ա. Յակուբովսկին,[1] — աշխատում եյին բարենպաստ պայմաններ ստեղծել քաղաքի, գյուղական շրջանի և քոչվորական տափաստանների ապրանքաշրջանառության, ինչ-

[1] А. Якубовский „Феодальное общество Средней Азий и его торговля с Восточн. Европой в X—XV вв.“ стр. 18.

պես նաև բարենպաստ պայմաններ քաղաքային առևտրի զարգացման համար: Սակայն, վորքան էլ մեծ լինի առևտրական կապիտալի դերը կենտրոնացած պետության կյանքում, այնուամենայնիվ իշխանությունը չի դադարում ֆեոդալական լինելուց: Ֆեոդալական է մնում, նախ և առաջ, հենց աստիճանավորների (չինովնիկների) կազմը,— պետության կառավարման պատասխանատու պաշտոններում մենք միայն ֆեոդալներ ենք տեսնում.— դեռ ավելին, չնայած ապարատի կենտրոնացած լինելուն, պետության առանձին բնագավառների կառավարման յեղանակը ծայրից ծայր ֆեոդալական է»:

Ահա սրանց, այս պարսիկ-մուսուլմանների ժամանակաշրջանում էր, վոր ուժեղ թափով զարգանում է Պարսկաստանի կուլտուրան, հանդելով X դարում իր զարգացման գագաթնակետին՝ ազգային կուլտուրական վերածնության, մասնավորապես գրականության «Վոսկե դարին»:

3

Քաղաքական-տնտեսական և կուլտուրական բնագավառներում X դարի Իրանը բաց է անում իր պատմության ամենահարուստ էջերից մեկը:

Սամանիդների պետության սահմաններն Իսմայիլ Իբն Ահմեդի ժամանակ (892—907) տարածվում էին Բուխարայից մինչև Պարսից ծոցը, Հնդկաստանի սահմաններից մինչև Բաղդադի շրջակայքը: Այս սահմանները, ճիշտ է, յերկարատև չեղան, շուտով փոփոխության յենթարկվեցին կրճատման և նեղացման ուղղությամբ և X դարի առաջին քառորդից սկսած՝ Սամանիդների պետությունը սահմանափակվեց իր սկզբնական Տրանսոքսանիայում (այժմյան Թուրքեստան), Խորասանում, իր գերիշխանությունն յենթարկած ունենալով միայն մի յերկու մանր վասալական իշխանություններ, բայց և այնպես այդ սահմաններում էլ նրանք կարողացան ստեղծել ժամանակավոր քաղաքական անվտանգություն, տնտեսական բարգավաճ կյանք և կուլտուրական «Վոսկե դար»:

Հասունացած ֆեոդալական հասարակության պայմաններում նրանց կառավարչական սիստեմն ու վարչաձևը չէր կարող հարատևել: Հակամարտ ուժերն այդ հասարակության մեջ որ ավուր ուժեղանում էին և ծանրապես անդրադառնում Սամանիդների ամբողջ պետականության վրա: Դրանք են առաջին հերթին՝ ծանր հարկերի տակ ճնշված գյուղացիական մասսան և արհեստավորությունը, վորոնք Սամանիդների պետական բյուջեյի (45 միլ. դիրհեմ) համարյա միակ աղբյուրն էին հանդիսանում և ստիպված էին ծածկելու ամբողջ բանակի ծախքը (մոտ 20 միլ. դիրհեմ), ապա սեպարատիստական հովերով տարված մեծամեծ ֆեոդալները-դեհկանները, վորոնք, անվանական կախում ունենալով Սամանիդներից, փաստորեն ինքնիշխան էին իրենց խոշոր կալվածքներում—«աշխարհներում»: Սրանց դեմ վարած պայքարը Սամանիդների համար ծանր էր և մեծածախս: «Սամանիդները դրանից կրում էին վոչ միայն խոշորագույն նյութական վնաս, քանի վոր այդ դեհկանները վոչինչ չէին մուծում պետության գանձարկղը, այլև քաղաքական, վորովհետև այդ ֆեոդալների բները (կալվածքները) կոնսոլիդացման կենտրոններ էին հանդիսանում, վորոնց շուրջը վորոշ ժամանակներում համախմբվում էին բոլոր ռեակցիոն ֆեոդալական ուժերը: Այստեղից էին յելնում բոլոր այն խռովությունները, վորոնք համարյա ամբողջ X դարի ընթացքում սիստեմատիկաբար քայքայում էին Սամանիդների պետության միասնությունն ու հզորությունը, մինչև վոր, վերջապես, այսպես կոչված Կարախանիդների նվաճումը, վերջնականապես լուծարքի յենթարկեց նրան»[1]:

Սամանիդների պետության քայքայումը մեծապես արագացվեց շնորհիվ այն հանգամանքի, վոր գյուղացիական մասսան մոտ մի դար տևող այս պայքարում անտարբեր դիրք էր գրավել: Գյուղի աշխատավորության համար այդ պայքարը ֆեոդալական ներքին ընտանեկան բնույթ էր կրում: Նա գիտակցում էր, վոր ֆեոդալներից վոր մեկն էլ հաղթող դուրս գար, մեկ է՝ տնտեսական ճնշող լուծը, վորի ծանրության ներքո տառապում էր ինքը, չէր թեթևանալու:

Սրանք են հիմնական պատճառները Սամանիդների պետության կազմալուծման և նրանց հարստության վերջնական տապալման:

[1] А. Якубовский, о. с. յերես 19.

Փոքր ինչ առաջ հիշեցինք, վոր Սամանիդներն յերկրի ապրանքափոխային դասի և առևտրական կապիտալի ստեղծած հարաբերություններից՝ շահեր քաղող ֆեոդալական խավի արտահայտիչներն եյին: Հենց այդ խմբակցությունների շահի տեսակետից՝ նրանք պետք է զարկ տային յերկրի տնտեսությանը, մասնավորապես գյուղատնտեսության զարգացմանն և ապրանքայնացմանը: Ընդամենը մի հարյուրամյակի ընթացքում նրանք փորում են մի շարք ջրանցքներ, մշակել են տալիս մինչ այդ խոպան հողերը, սկզբում վարկավորում են հողագործին և թեթևացնում նրա հարկերն ու տուրքերը, ոժանդակում են նրան փրկանքի միջոցով ազատագնվելու կենտրոնախույզ կալվածատերերից-դեհկաններից հողամասեր և այլն: Սակայն, այս քաղաքականությունը շուտով փոխվում է: Միջ-ֆեոդալական կռիվների ընթացքում Սամանիդների պետական գանձարանը պետք է միշտ լցված լիներ. գանձարանի հարստացման միակ աղբյուրը, ինչպես ասացինք, գյուղացիներն ու արհեստավորներն եյին, վորովհետև ֆեոդալները հրաժարվում եյին նպաստել պետությանը: Գյուղացիությունը սկսում եր հարկերի տակ ճնշվել. նա անտարբեր է դառնում դեպի Սամանիդների վարած գահակալական կռիվները:

Արդյունագործությունը, քաղաքային, միջքաղաքային և միջերկրային առևտուրն ու արհեստը նմանապես ծաղկած վիճակ եյին ապրում այս պետության մեջ: Զուր չե արաբ աշխարհագիր Իստահրին ասում, վոր Մավերաննահրի բնակիչները կարող են կառավարվել առանց այլ յերկրների արտադրանքների, վորովհետև իրենք յերկրի ներսում ամեն ինչ ունեն[1]:

Նույն դարաշրջանի մի այլ աշխարհագիր՝ Մակդիսին մանրամասն թվարկում է առևտրի և արդյունագործության արտադրանքներն ու ապրանքները: Դրանց մեջ առաջնակարգ տեղ են բռնում՝ տեքստիլ արդյունագործությունը, մետաքսագործությունը, կաշեգործությունը, կերամիկան, զինագործությունը, վոսկերչությունը, անգամ լաթաթղթերի արդյունագործությունը: Շուկաները լի յեն ներմուծվող ապրանքներով, վոր բերվում են և՛

1 А. Крымский «История Персии, ее литературы», Москва 1909, յերես 51. [Bibliot. geographik. Arabic. I, 287].

հեռավոր Չինաստանից, և՛ Ռուսիայից, և՛ Հնդկաստանից, և՛ Արաբիայից և այլն և այլն[1]:

Տնտեսական այս բարգավաճ հիմքի վրա բարձրանում է Սամանիդների պետության կուլտուրական շենքը:

Սամանիդների ներքին և կուլտուրական քաղաքականության հատկանշական գծերից մեկը համբերատար վերաբերմունքն եր կրոնա-իդեոլոգիական բնագավառում: Շիա, անգամ զրադաշտական, վեզիրներ, զորավարներ, գիտնականներ, բանաստեղծներ և տեխնիկայի ներկայացուցիչներ հազվադեպ չեյին պետական-կուլտուրական միջավայրում: Բավական է հիշել մեծ վեզիրներ Բալ՛ամիին և Ջեյխանիին (զրադաշտական), հռչակավոր Ֆիրդուսուն (շիա) և Դակիկիին (զրադաշտական)...

Զարգանում են գիտությունն ու գրականությունը, դպրոցն ու գրագիտությունը նոր պարսկերեն լեզվով, թարգմանում են արաբերենից և պահլավերենից գիտության և գրականության կարևորագույն և արժեքավոր գրքեր. հավաքում և ցուցակագրում են պարսկերեն (պահլավի և նոր) և ոտար լեզուներով գրքեր, հիմնվում են հռչակավոր գրադարաններ Բուխարայում, Մերվում, Շիրազում և այլուր: Կազմվում են իր ժամանակի համար խոշորագույն հանրագիտարաններ, բժշկարաններ, առայժմ միայն արաբերեն: Բավական է խոշորագույն գիտնականներից և փիլիսոփաներից հիշել մի այնպիսի անուն, ինչպիսին է Իբն-Սինան (Avicenna) և այլն:

Գիտության դպրոցին զուգընթաց զարգանում է մանավանդ գեղարվեստական գրականությունը, հատկապես Իրանի փառքը հանդիսացող պոեզիան: Նոր շահերի պալատներում խմբվում են առանց կրոնի և դավանանքի խտրության բանաստեղծներ՝ մեկը մյուսից տաղանդավոր և բեղմնավոր: Իրանի նոր տերերը սիրով են ընդունում նրանց, հովանավորում և պատվերներ տալիս («բանաստեղծների Ադամ»— Ռուդագին և զրադաշտական տաղանդավոր բանաստեղծ Դակիկին): Բանաստեղծները վոչ միայն գովերգում եյին իրենց մեկենասներին, այլև նրանց կապում Իրանի հին տերերի, շահնշահների հետ, սրբագնացնում նրանց իրավունքը Սասանյանների գահը ժառանգելու, փառաբանում եյին Սամանիդների անցյալն ու ներկան:

1 А. Крымский, о. с. 51 [Bibl. geogr. Arab. II, 323-26].

Հենց այդ նպատակն հետապնդելով՝ Սամանիդները վոչինչ չեն խնայում ի մի հավաքելու և թարգմանելու այն ամենը, ինչ խոսում-պատմում եր Իրանի հին տերերի՝ թագավորների և փահլեվանների սխրագործությունների մասին: Դարերի այդ պատմությունը պահվում, պահպանվում եր դրադաշտական գրքերի, պահլավի գրականության մեջ և Իրանի բնակիչների բերանում:

V—VI դարերում պահլավերեն խմբագրված եր «Յատկար-ի Զարիրան»-ը[1], «Կարնամակ-ի Արտաշիր-ի Պապական»[2], վորոնք կազմված լինելով հին գրավոր և բանավոր զրույցներից, պատմում եյին Իրանի անցյալից յերկու հիմնական դրվագներ՝ դրադաշտականության հաղթության և Սասանյան հարստության հիմնադրման մասին: Խոսրով I Անուշիրվանը (531—579) հավաքել և ամփոփել ե տալիս հին Իրանի թագավորների մասին յեղած զրույցները մի գրքում, վոր կոչվում ե «Խվատայ Նամակ» կամ նոր պարսկերեն արտասանությամբ՝ «Խոդայ-Նամե»: Սասանյան վերջին թագավորի՝ Հազկերտի ժամանակ «Խվատայ-Նամակ»-ը կրկին մշակում և խմբագրում ե Դեհկան Դանիշվերը, հասցնելով այն մինչև Խոսրով II (530—628): VIII դարում «Խոդայ-Նամեն» պարսիկ Իբն-ալ-Մոկաֆֆան պահլավերենից թարգմանում ե արաբերենի և հայտնի դարձնում ամբողջ մուսուլման աշխարհին:

Ահա այս գիրքն ե Սամանիդների ուշադրությունը գրավում: 957—58 թ. թ. այս գիրքը պահլավերեն բնագրից արձակ թարգմանում, այլ աղբյուրներից լրացնում ու «Շահ-Նամե» վերտառությամբ ներկայացնում են Սամանիդների Խորասանի Թուս քաղաքի կառավարիչ՝ Մոհամմեդ-Աբու-Մանսուր Իբն Աբդերրեզզակին: 963 թվին Սամանիդների վեզիր Բել՛ամին համառոտած թարգմանում ե Տաբարիի «Պատմությունը»:

Այս ամենը կարելի յե նախապատրաստական աշխատանք համարել առաջիկա մեծ գրական ձեռնարկությունների համար: Դրանք սոսկ հում նյութեր են, վոր սպասում են վերամշակողին:

[1] W. Geiger «Das Yâtkar-i Zariran und sein Verhâltniss zum Sah-nâme», München, 1890.

[2] Geschichte d. Artachsîr-i Papakân, aus d. Pehlewi übersetzt v. Th. Nöldeke, Gottingen, 1879.

Արդեն հերթական խնդիր ե դառնում այդ նյութերի քաղաքական իդեոլոգիական վերամշակումը: Այդ եր պահանջում քաղաքական մոմենտը:

Սամանիդների գահակալության լեղիտիմ իրավունքը պետք ե հիմնավորվեր մանավանդ X դարի վերջերին, յերբ ամենուրեք, հատկապես Թուրանի ֆեոդալների կողմից շատ սուր հակասամանիդյան պայքար եր մղվում: Անհրաժեշտ ե «Շահ-Նամե»-յի հերոսների, հզորների ու փահլեվանների գովերգությամբ վերհանել իրանցիների առավելությունն ու ժառանգական օրինական իրավունքը հակառակ սահմանամերձ, թշնամի Թուրանի հին ու նոր ֆեոդալների քաղաքական հավակնությունների: Անհրաժեշտ եր գրական-գեղարվեստական պրոպագանդայի միջոցով հրահրել պարսիկների զգացմունքներն ու կուռ շարքերով համախմբել նրանց Սամանիդների գահի շուրջը:

Քաղաքական պրոպագանդայի բնագավառում արձակ գրվածքները միջին դարերում չեյին կարող մեծ արժեք ունենալ:

Չափածո գրվածքը, յերգն ու յերաժշտությունը, վորպես ագիտացիոն միջոց, ավելի ազդեցիկ են, ավելի արագ են տարածվում և մասսաներ գրավում, քան արձակը: Թերևս հենց այս նկատառումով Սամանիդների համար հրամայական պահանջ ե դառնում արձակ «Շահ-Նամե»-ն վերածել սահուն, յերաժշտական վոտանավորի: Ժամանակի ու պայմանների այդ թելադրանքը ծրագրում եր կենսագործել տիրող դասի ներկայացուցիչ, գահակալող Սամանիդ Եմիր Նուհ II Իբն Մանսուրը (976—999):

«Շահ-Նամե»-յի չափածո մշակումը հանձնարարվում ե ականավոր պալատական բանաստեղծ Դակիկիին, վորը հազիվ կարողանում ե ձեռնամուխ լինել այդ գործին և մոտ մի հազար բեյթ գրել, յերբ 977 թվին սպանվում ե իր ծառայի ձեռքով: Զրադաշտական Դակիկին այդ հազար բեյթով բանաստեղծական մշակման ե յենթարկում իրեն հարազատ զրադաշտականության մուտքն ու հաղթանակն Իրանի բարձրավանդակում:

Դակիկիի մահով այդ քաղաքական իդեոլոգիական մեծ նշանակություն ունեցող գործը չի մեռնում, վորովհետև սոցիալական պատվերն առկա յեր, մեկենասները շատ, ժամանակը պատեհ, իսկ հետաքրքրությունն Իրանի վիպական-հերոսական անցյալով ավելի քան ժողովրդական:

Ցեվ ահա այդ վիթխարի գործին ձեռնամուխ է լինում և մեծ վարպետությամբ գլուխ բերում հռչակավոր Ֆիրդուսին։

4

Ո՞վ է Ֆիրդուսին[1]։

«Շահ-Նամե»-յի հմայքն այնքան մեծ էր Իրանում, նրա հեղինակի անունը այնքան գրավիչ ու սիրված, որ մեծ բանաստեղծի մահից հետո Իրանի ժողովուրդը հյուսում է նրա անվան ու գործի շուրջը մի շարք լեգենդներ, հեքաթախառն պատմություններ, որոնք նույնքան գունագեղ և պոետիկ են, որքան հրաշակերտ «Շահ-Նամե»-ն։ Իրանցին ուժ է տվել իր վառ յերևակայությանը, գծագրել է «բանաստեղծների արքայի» վիպախառն պատկերը, ստեղծել է հանճարի և բռնակալի կյանքի և մտածողության հակադրություններ։ Արևելքում տարածված այս զրույցները մուտք են գործում նաև Յեվրոպա։ Այստեղ էլ են մշակվում այդ զրույցները, նոր եպիզոդներ ու պատկերներ են ստեղծվում։ Յեվրոպական լավագույն բանաստեղծական վերամշակություններից մեկն է մեծ մտածող և հանճարեղ բանաստեղծ Հայնրիխ Հայնեյի «Ֆիրդուսի» քերթվածը[2])։

Որքան էլ գունագեղ, որքան էլ գեղարվեստական լինեն այդ բանաստեղծական, կենսագրական հորինվածքները պաշտամունքի առարկա դարձած հանճարեղ բանաստեղծի մասին, բայց

1 Բանաստեղծի անունը պարսկերեն գրվում է الفردوسی։ Յեվրոպական այլ և այլ գրականությունների մեջ բանաստեղծի անունը տարբեր է արձանագրված. ոմանք գրում են Ֆիրդավսի, մյուսները՝ Ֆիրդաուսի (Firdausî-Th. Nöldeke) կամ Ֆիրդոուսի, Ֆերդավսի կամ Ֆերդովսի (ռուս գրակ. մեջ. Фирдовсий, Фирдоусий, Фирдоуси, Фирдуси, նաև Фердавси)։ Ամենատարածված ձևը Ֆ ի ր դ ո ւ ս ի յն է։ Այդպես է նաև հայ գրականության մեջ հնուց ի վեր։ Ֆիրդովսի, Ֆերդովսի կամ Ֆիրդաուսի՛-Ֆերդաուսի՛ արտասանությունն ավելի ճշմարտանման է։ Այդ մասին տե՛ս Th. Nöldeke, А. Крымский... և վերջերս, Юрий Марр-ը («Заря Востока», 1934 թ. № 116/3227)։ Թյուրիմացությունների առաջն առնելու, ինչպես նաև հայ գրականությունից ոգտվող ընթերցողին դյուրություն տալու նպատակով՝ մենք այստեղ պահում ենք մեր գրականության մեջ ընդունված Ֆ ի ր դ ո ւ ս ի արտասանության և գրության ձևը։
Ֆիրդուսի նշանակում է «դրախտային»։ Կ. Մ.-Ո.

2 Նորագույն թարգման. Սողոմոն Տարոնցու—«Պոետ Ֆերդուսի» «Խորհրդ. Հայաստան», 1934 թ. № 122 (4121).

և այնպես նրանք մթագնել են նրա նկարագիրը, նրա կյանքի իրական պատմությունը։

Իրանիստների աչքից չի վրիպել այդ հանգամանքը։ Նրանք հիմք ընդունելով մեծ Ֆիրդուսու «Շահ-Նամե»-յում, «Յուսուֆ և Զուլեյխա» պոեմում և այլ լիրիքական ու յերգիծական քերթվածքներում սփռված ակնարկությունները, գծագրել են բանաստեղծի իրական կենսագրությունը։

Աբուլ Ղասըմ Ֆիրդուսին ծնվել է մոտ 935 թվին Խորասանի Թուս քաղաքին մերձակա Բաժ գյուղում. մեռել է 1020 թ.։ Ծննդավայրում նա ուներ սեփական մի կտոր հող, որը նրան հնարավորություն էր տալիս իր կենսական կարիքները հոգալու։

Ասում են՝ Ֆիրդուսին վաղ յերիտասարդական հասակից է սկսել բանաստեղծություններ գրել։ Առաջին շրջանում նա գրելիս է յեղել միայն լիրիքական քերթվածքներ։ Շուտով պայմաններն ստիպում են նրան ավելի յեռանդուն թևակոխելու պոեզիայի բնագավառը։ Իր տնտեսական պայմանները բարելավելու նպատակով՝ նա ձեռնամուխ է լինում Իրանի վիպական զրույցների ու յերգերի վերամշակության։ Նա ծրագրում էր Իրանի այդ ֆոլկլորի բանաստեղծական վերամշակությունները ձոնել մի որևէ մեկենասի,—իսկ այդպիսի մեկենաս դժվար չէր գտնել այդ ժամանակաշրջանում, որովհետև ազնվականության սոցիալական պատվերն առկա յեր,—ստանալ նրանից շոշափելի նյութական վարձատրություն և իր աղջկանը մարդու տալ։

Հենց այդ տարիներին էր, որ Սամանիդ Նուհ II Իբն Մանսուրը (976—997) պատվեր է տալիս տաղանդավոր բանաստեղծ Դակիկիին հանդերգելու արձակ «Շահ-Նամե»-ն։ Դա՛կիկիի յեղերական մահից հետո նրա գործը շարունակում է Ֆիրդուսին։

Սկզբում Ֆիրդուսին աշխատում է դանդաղ, ընդհատումներով, սակայն, յերբ անցնում է իր կյանքի 60-ամյակը, նա Թուս քաղաքից փոխադրվում է Սպահանի մոտ գտնվող Խալենջան քաղաքը, ծանոթություն է հաստատում Սամանիդների իշխան Ահմեդի հետ և մեծ յեռանդով ու ջանասիրությամբ, մոտ 25 տարի անխոնջ աշխատելով՝ ավարտում է իր հրաշակերտը և 999 թվի հունվարի 25-ին ներկայացնում իր մեկենաս Ահմեդին։ Սա և Սամանյան մյուս բարձրաստիճան պաշտոնյաները սիրով են ընդունում Ֆիրդուսու նվերն և լիաձեռն վարձատրում նրան։

Շուտով Ֆիրդուսու տնտեսական դրությունը վատթարանում է։ 999 թվին Մահմուդ Ղազնեվիդը նվաճում է Խորասանը։ Ֆիրդուսու մեկենասները հեռանում են ասպարեզից։ Մեծ բանաստեղծն այս անգամ էլ հույսը դնում է իր գրչի, իր ստեղծագործական կարողության վրա։ Մոտ 10—11 տարի նա անդադրում վերամշակում է իր «Շահ-Նամե»-ն և կցելով նրան մի ձոն՝ նվիրում է Իրանի նոր գահակալին։ Նա հույս ուներ այսպիսով իր կյանքի մնացորդն անկարոտ անցնել։

Ֆիրդուսու հետին դարերի կենսագիրները հյուսել են բազմաթիվ զրույցներ մեծ բանաստեղծի ու Մահմուդի մասին։ Այդ զրույցների մեջ ջանք չի խնայվել ընդգծելու Իրանի «բանաստեղծների արքայի» և «Իրանի շահնշահների գահը զավթող բռնակալի» հակապատկերները։ Ֆիրդուսին մեծ է, վեհանձն ու առատաձեռն. Մահմուդը՝ «գծուծ, ագահ, Իրանի հերոսական անցյալին անգետ, մի Թուրք բռնակալ»։

Չի կարելի պնդել, որ այդ մեծ յերևակայությամբ հյուսված գունագեղ զրույցները չեն պարունակում պատմական ռեալ կորիզ։ Իրական պատմական աստառը կասկածից դուրս է, գոյություն է ունեցել։ Այդ մասին հիշատակություններ և ակնարկներ կան հենց «Շահ-Նամե»-ի մեջ. վերջապես, բանաստեղծի և սուլթանի փոխհարաբերությունների պատկերը տալիս է հռչակավոր «Յերգիծանքը», մարդկային բուռն զայրույթի և կծու ծաղրի այդ փայլուն վավերագիրը։

Ո՞րն է այդ հարաբերությունների իրական պատկերը։

Ֆիրդուսին իր պատրաստի «Շահ-Նամե»-ն մի ձոնով ներկայացնում է Մահմուդին։ Վերջինս առանձին հրճվանք, վոգևորություն չի ցուցաբերում։ «Շահ-Նամե»-ն Ղազնեվիդ Սուլթանի համար, ըստ ամենայնի, հետաքրքրական գործ չեր. նրա պոետիկ արժեքը նա (Սուլթանը) ի վիճակի չեր գնահատելու. կռապաշտ— հերոսները նրա, այդ բութ դաժան սյուննիի մեջ կարող եյին միայն զզվանք առաջ բերել. զզվելի յեր և նրանց հերետիկոս— բանաստեղծը (Ֆիրդուսին շիա յեր)։ «Շահ-Նամե»-ի պարսիկ ազգային վոգին ոտար եր թուրքին, իսկ Թուրանի դեմ վարած Իրանի հաղթապանծ կռվի փառաբանումն ընդունակ նրա մեջ ուղղակի թշնամական զգացմունքներ առաջացնել, այսպես է ընու-

թագրում ակադեմիկոս Ա. Յե. Կրիմսկին Ֆիրդուսու և Մահմուդի փոխհարաբերությունը[1]։

Պարզ է, յեթե Մահմուդը նույնիսկ լավ հասկանար պարսկերենն և Ֆիրդուսու «Շահ-Նամե»-ի արժեքը, յեթե Ֆիրդուսին նույնիսկ շիա չլիներ, այնուամենայնիվ Մահմուդը չեր կարող և չեր ցանկանա արժեքավորել այդ խոշոր քերթվածը, վորը վերաբերում եր այլ հարաբերությունների, Իրանի հաղթապանծ կռվին ընդդեմ Թուրանի, և իրեն նախորդող Իրանի հզորների փառաբանության։

Ֆիրդուսու ակնկալություններն ու հույսերն ի դերև անցան։ Առատ վարձատրության փոխանակ նա ստացավ մի փոքր գումար, վոր չեր կարող ապահովել նրա՝ 76 ամյա ծերունու կյանքը։ Մահմուդը՝ բանսարկուների միջոցով իմանալով բանաստեղծի դժգոհության մասին, սպառնում է նրան սպանել։ Ֆիրդուսին փախչում է Հերատ և այստեղ գրում է իր հռչակավոր «Յերգիծանքը»։

Մեծ բանաստեղծը սրանից հետո էլ չի վայելում կյանքի անդորրություն։ Մահմուդի անունն ու նրա թշնամական վերաբերմունքը Ֆիրդուսու հանդեպ սարսափ են ազդում բանաստեղծին հյուրընկալող Իրանի մեծամեծներին։ Նրանք վախենում են յերկար պատսպարել նրան։ Յեվ ծերունի տարագիր բանաստեղծը՝ աստանդական ցուպը ձեռքին՝ թափառում է Իրանում, մի քանի տարի ապաստան է գտնում Բույիդ սուլթանների մոտ, ապա վերադառնում է հայրենի Թուս քաղաքը և շուտով այստեղ կնքում է իր մահկանացուն։ Սյուննի հոգևորականությունը հրաժարվում է նրա աճյունին տեղ տալ մուսուլմանական հանգստարանում, և նրա բազմավաստակ աճյունն ամփոփվում է քաղաքի շրջակայքում։

Նրա գերեզմանը դարերից ի վեր դարձել է ուխտատեղի բոլոր նրանց համար, ով սիրում է ճշմարիտ խոսքը, ճշմարիտ պոեզիան և մարդկային ցեղի մեծագույն վորդիներից մեկին՝ Իրանի Պառնասի արքա Ֆիրդուսուն և նրա հրաշակերտը։

Ասում են, Ֆիրդուսու մահվանից փոքր ինչ առաջ՝ Մահմուդը

1 А. Крымский «История Персии»... (III Литоизд.) Москва 1909. Այս հատվածի համար գլխավորապես՝ ոգտվում ենք այս աշխատությունից։ Աչքի յենք ածել նաև Th. Nöldeke «Das iranische Nationalepos (Grundriss der Jranischen Philologie», Ստրասբուրգ, 1895, հտ. II)։

լսում է «Շահ-Նամե»-ի տողերից մի քանիսը, հրճվում է նրանց սրամտությամբ և գեղեցկությամբ, տեղեկանում է այդ տողերի հեղինակի մասին։ Նա տեղյակ չէր «Յերգիծանքին», ուստի հրամայում է Թուս ուղարկել, իբրև նվեր Ֆիրդուսուն, 60 հազար դիրհեմ։

Ֆիրդուսին մի որ փողոցով անցնելիս՝ լսում է, թե ինչպես մի մանուկ յերգում է նրա «Յերգիծանքի» հետևյալ տողերը․

«Յեթե շահը խելոք լիներ, բայց վոչ ժլատ և ագահ,
Ինձ հարգանքով և մեծ շքով կը բարձրացներ շքեղ գահ»։

Զառամյալ բանաստեղծը՝ լսելով փոքրիկ տղայի այդ յերգը՝ կաթվածահար է լինում։ Տանում են տուն, և նա մեռնում է։

Յեվ այն ժամին, շարունակում է ավանդությունը, յերբ մեծ բանաստեղծին քաղաքի մեկ դռնով տանում եյին դեպի հավիտենական հանգստավայրը, մյուս դռնից ներս է մտնում Մահմուդի նվերներով բեռնած ուղտերի քարավանը։

Այս զրույցը պոետիկ լինելով հանդերձ՝ արևելյան վառ յերևակայության գունագեղ արգասիք է, վորի նպատակն է հաշտեցնել հզոր Մահմուդին Իրանի մեծագույն զավակի հետ։

5

Իրանի Պառնասի գահակալ Ֆիրդուսին բազմանուն գործեր չի թողել։ Նրա գրչին են պատկանել միայն յերեքը՝ «Շահ-Նամե»-ն, «Յերգիծանք»-ը և «Յուսուֆ ու Զուլեյխա»-ն։ Այս վերջինը մի մեծածավալ սիրավեպ է, վորը գրել է մեծ բանաստեղծն իր խոր ծերության որերին։

«Յերգիծանք»-ը մի բուռն բողոք է ընդդեմ իմաստունն ու գեղեցիկը, մարդկայինն ու հավիտենականը վոտնահարող տգետ բռնակալի։ «Յերգիծանք»-ը գեղեցիկ է և արժեքավոր իբրև մի պայծառ վավերագիր ֆեոդալական կարգերում իշխող բռնակալության։

Պարսից հանճարի, կարելի յե ասել, ամբողջ մարդկության պոետիկ ստեղծագործության գլուխ գործոցներից մեկն է Ֆիրդուսու «Շահ-Նամե»-ն։ Համաշխարհային գրականության, վիպական պոեզիայի մեջ նրա հավասարը միայն «Իլիական»-ն ու «Վոդիսական»-ն են։

Յեթե հույն հանճարի այդ գոհարները պոետիկ անդրադարձումն են Հելլադայի պատմության մի կարճ ժամանակամիջոցի, մի տասնյակ տարիների, ապա Իրանի հանճարը գեղարվեստորեն վերամշակում է մարդկային ցեղի պատմությունը՝ սկսած «Առաջին մարդուց» մինչև Իրանի աշխարհակալության անկումը՝ Բաղդադի ճակատամարտը 637 թ., այսինքն հազարավոր տարիների Իրանի «պատմությունը»։

Մի յերկու խոսքով աշխատենք տալ «Շահ-Նամե»-յի բովանդակությունը[1]։

«Նահ-Նամե»-ն սկսվում է «Նախամարդուց»—«առաջին թագավորից»։ Այդ շրջանը մարդկության մանկությունն է։ Սրան հետևում է Փիշդադյան հարստության հիմնադիր Հուշենգը, վորի ժամանակ մարդկությունը հաղորդակից է դառնում կուլտուրական հայտնագործումներին։ Սա և սրա հաջորդներն աշխարհի միակ և միանձնյա գահակալներն եյին։ Այս հարստության գահակալներից մեկը՝ Ջեմշիդը պարծենում է իր հզորությամբ և պահանջում է, վոր իրեն աստծու տեղ պաշտեն[2]։

Աստվածն ի պատիժ ուղարկում է Իրանի վրա ծագումով արաբ, դաժան բռնակալ Զոհակին (Աժդահակ, վոր նշանակում է վիշապ), վորի ուսերից Ահրիմանի համբույրի հետևանքով՝ աճում են յերկու թունավոր ոձեր[3]։ Զոհակը գրավում է Իրանի գահը և իշխում մի հազարամյակ։ Նա կերակրում է իր ոձերին մարդկային ուղեղով[4]։

Դարբին Կավեն ապստամբություն է բարձրացնում Զոհակի դեմ հոգուտ Ջեմշիդի սերնդի և գահ է բարձրացնում Ֆերիդունին,

---

[1] Բովանդակությունը քաղում ենք ակադեմիկոս Ա. Կրիմսկու հիշյալ աշխատությունից, նաև A. F. G. v. Schack «Heldensagen des Firdusi» I Band, յերես 88—100; Th. Nöldeke «Das iranische National Epos» (Gr. d. Jr. Phil. II Bn.)

[2] Հմմտ. Խորենացու «Հայկ և Բել» առասպելը (նաև Աստվածաշունչը)։

[3] Հմմտ. Փավստոս Բուզանդ IV, խդ. և V իբ. Պապ թագավորի, ինչպես և Մ. Խորենացի I գրքի հավելվածը Աժդահակի մասին։ Այդ մոտիվը առկա յե նաև հայկական հեքաթներում։

[4] Պապ թագավորն՝ իրեն հարազատ համարելով ոձերին, արվագիտությամբ է զբաղվում։ Արվագիտությունն էլ Ահրիմանյան-Զոհակյան ախտ է։

վորը բռնում և Զոհակին և շղթայած գամում լեռան ժայռերին մինչև աշխարհի վախճանը[1]:

Ֆերիդունն աշխարհը բաժանում է իր յերեք վորդիների մեջ: Յեղբայրները կռվում են. Թուրն ու Սելմը սպանում են Իրանի թագավոր, իրենց կրտսեր յեղբայր, Իրեջին: Սկսվում է հազարամյա պատերազմն Իրանի և Թուրանի (Թուրի յերկիր) մեջ: Իրեջի թոռը—աղջկա վորդին Մենուչեհրը (հայերեն Մանաճիհր-Մանուչար) սպանում է պապ-յեղբայրներին և միաժամանակ վերականգնում է ընդհատված խաղաղությունը:

Իրանցիների կողմն են անցնում Սեջեստանի (Սեյիստանի) հզորները՝ Սամը, նրա վորդին Զալը, ապա սրա վորդին՝ Իրանի մեծահռչակ փահլեվան՝ Ռոստամը:

Մենուչեհրի հաջորդ Նովդարը գերի յե ընկնում Թուրանի Աֆրասիաբ թագավորի ձեռքը և սպանվում: Նորից հրահրվում է ընդհատված պատերազմը և տևում է հինգ թագավորների՝ Զովի, Գերշասպի, Քեյ-Քոբադի (Քայանիդների հարստության հիմնադիր), Քեյ-Քաուսի և Քեյ-Խոսրովի ժամանակաշրջանում, մոտ յերեք հարյուր տարի: Սպանվում է Աֆրասիաբը, և նորից ընդհատվում է Իրան-Թուրանի պատերազմը:

Այս շրջանումն են ծավալվում փառապանծ Ռոստամի սխրագործություններն ընդդեմ դևերի և թուրանցիների և վերջապես, Ռոստամի և Սոհրաբի կռիվը վողբերգական վախճանով[2]:

Պատերազմը նորից վերսկսվում է Գուշտասպի ժամանակ: Սա ընդունում է Զրադաշտի կրոնը: Թուրանի թագավոր Արջասպը, Աֆրասիաբի թոռը, մերժում է: Այս պատերազմի ժամանակ Իրանի հզորների կողմից հանդես են գալիս Գուշտասպը, սրա յեղբայր Զարիրն և վորդի Իսֆենդիարը[3]: Վերջինս պատերազմ-

---

1 Խորենացի I գ. Ա. հավելված. հմմտ. լեռներում շղթայված կամ ժայռերին գամված հսկաների հետ (Պրոմեթևս, Ամիրան, Մհեր, Արտավազդ, և այլն):

2 Հմմտ. «Սասնա ծռեր» ժողվեպի «Դավթի և Մհերի կռիվը» կամ «Մհերի և իր վորդու կռիվը» վիպական եպիզոդների հետ:

3 Այդ պատերազմը նկարագրված է Պահլավի «Յատկար-ի Զարիրան»-ի մեջ, վորից օգտվել են Ֆիրդուսին, Դակիկին և վորի վիպական վարիանտները մենք գտնում ենք Բուզանդի պատմության և «Սասնա ծռերի» մեջ: Տես ստորև:

ների այս շրջանում գրավում է Ռոստամի տեղը: Ֆիրդուսին նրան համահավասար է ճանաչում Ռոստամին:

Ռոստամն սպանում է Իսֆենդիարին, ինքն էլ շուտով սպանվում է:

Սրանով փաստորեն վերջանում է Իրանի «պատմության» հերոսական-առասպելական շրջանը: Սակայն Ֆիրդուսու նպատակն էր գեղարվեստորեն վերարտադրել Իրանի պատմական հզորությունը, յերգել ու գովաբանել Սասանյանների ժամանակաշրջանը, Իրանի հզորության ամենափառահեղ շրջանը, ուստի նա ստիպված մի կամրջակ և ձգում Լոհրասպյան—Գուշտասպյաններից դեպի Սասանյանների շրջանը:

Նա փոքր ինչ կանգ է առնում Դարեհյան տոհմի վրա, պարտվում է չար Իսկանդարին (Աղեքսանդր Մակեդոնացուն), մի փոքրիկ հատվածով բնութագրում է Իրանի Արշակունիներին, վորպես անկման մի շրջան, ապա մեծ մանրամասնություններով վերամշակում է Սասանյանների պատմական դարաշրջանը: Այստեղ ընթերցողի աչքի առաջ իրար հաջորդում, փոխարինում են ու անցնում Սասանյան աշխարհակալները՝ սկսած Արտաշիրից (224—242) մինչև Սասանյանների անկումը—Քադիսիի ճակատամարտը (637 թ.): Այս դարաշրջանի գեղարվեստական վերարտադրման մեջ ամենագեղեցիկ, հմայիչ, արևելյան վառ յերևակայության ամբողջ թափով նկարագրված հատվածներն են՝ հեքաթային հերոս Բահրամ Գուրի (420—438), Քիսրայի (Խոսրով I Անուշիրվան) (531—579) սխրագործություններով լի եպիզոդները: (Վերջինս բանաստեղծի համար գահակալի իմաստության և արդարության մարմնացումն ու իդեալն է): Վերջապես մեծ վոգևորությամբ դյուցազներգված է ռոմանտիկական մանրամասնություններով հարուստ Բահրամ Զուբինի ապստամբությունը:

Իրան-Թուրանի սարսափելի մարդկային նախճիրները, նրանց հզորների մեկը մյուսին փոխարինող մենամարտերը, ռազմական շունչն ու զենքերի շառաչը Ֆիրդուսին ընդհատում է, ինքն էլ, կարծես, շունչ է քաշում և տալիս է զգացմունքով և ապրումներով լի սիրավեպեր, որինակ, «Զալն ու Ռուդաբեն», «Բեժան ու Մենիժան»: Սրանք ամենաշքեղ և գունագեղ հատվածներից են ամբողջ «Շահ-Նամե»-յի մեջ:

Սա յե «Շահ-Նամե»-յի բովանդակությունը, հազարամյա «պատմությունը»: Յեթե մենք հանելու լինենք այդ եպոպեյից մի

յերկու հատված, այդ դեպքում կ'ունենանք Իրան-Թուրանի հա-
զարամյա անհաշտ կռվի «պատմությունը»: Ահուրամազդան և
բոլոր բարի վոգիներն անցնում են Իրանի կողմը, իսկ Ահրիմանն
ու նրա չարքերի բանակը՝ Թուրանի: Դա վերջին հաշվով վեր
է ածվում լույսի ու խավարի, բարու և չարի, յերկրագործու-
թյան և աստանդական խաշնարածության տևական կռվի ասիա-
կան յերկրներում:

Վիպական այս խոշորագույն քերթվածը մերթ ընդ մերթ ընդ-
հատվում է լիրիքական զեղումներով, հրաշալի բնության նկա-
րագրություններով, հին արևելքի փիլիսոփայությամբ՝ կյանքի
և մահվան, արդարության ու չարության, իշխանության և մարդ-
կային իդեալների մասին:

Ֆիրդուսին իր այդ վիթխարի գործը, մարդկության ամենա-
հանճարեղ պոետիկ ստեղծագործությունների գոհարներից մեկը—
«Շահ-Նամե»-ն հազիվ է կարողանում «30 տարի» անխոնջ աշ-
խատանք թափելով՝ գլուխ բերել:

Այդպիսի բազմաբովանդակ և ծավալուն հուշարձան կերտելու
համար անհրաժեշտ էր, վոր բանաստեղծը խորամուխ լիներ ան-
ցյալի գրավոր և բանավոր ժառանգության մանրակրկիտ ուսում-
նասիրության մեջ. անհրաժեշտ էր ժողովրդական բանահյուսու-
թյան ուշիմ և սիստեմատիկ հավաքում և վերամշակում: Յեվ Ֆիր-
դուսին հաղթահարում է բոլոր դժվարությունները, յուրացնում
և իր ստեղծագործական լաբորատորիայում վերամշակում է հա-
վաքածը, ձեռք բերածը: Բացի տաղանդավոր Դակիկիի մոտ հա-
զար բեյթից, վոր սիրով հյուրընկալում է իր մեծ գործի մեջ, նա
ոգտվում է պահլավ գրական ժառանգությունից և արաբերեն ու
պարսկերեն թարգմանություններից, ոգտվում է, վերջապես, Ֆոլ-
կլորից, վոր դարեր շարունակ սերնդից սերունդ անցնելով ապ-
րում էր իրանցիների բերանում:

«Սկսում եմ այժմ հյուսել յես Դեհկանի խոսքերից
Մի պատմություն, վոր քաղված է հնադարյան վեպերից»:

«Շահ-Նամե»-ն գլուխ է բերված:

Բանաստեղծը հետադարձ հայացք է ձգում իր անցած ուղի-
ների վրա և Հորացիոսի ու Պուշկինի նման վստահ ու հպարտ ինքն
է արժեքավորում իր հրաշակերտը:

Շատ հուշարձան գեղաքանդակ կը տապալվի, կ'ավերվի
Անձրևներից, քամիներից և շողերիցն արևի.
Բայց իմ յերկով յես կերտեցի մի հուշարձան այնպիսի,
Վորին արևն ու անձրևը և քամին չեն վնասի:
Դարեր իրար կը հաջորդեն, բայց իմ յերկը կը մնա.
Յեվ ամեն մարդ կ'ուզե կարդալ, յեթե խելքի տեր է նա...
. . . .

Սակայն թեպետ շատն է յեղել և շատ գործեր են արված,
Բայց իմ գործի նման մի գործ դեռևս չի կատարված:
Այս յերեսուն տարիներում քաշելով մեծ նեղություն,
Յես Իրանը կենդանացրի փարսի լեզվով իմ սիրուն:

Արդարացի յեր Ֆիրդուսին:

Դարեր իրար հաջորդեցին և նրա յերկը մնաց: Յեվ վոչ միայն
այդ: Նրա «Շահ-Նամե»-ն առաջ բերեց դյուցազներգության մի
շկոլա: Պարսկաստանում, Թուրքիայում, անգամ ֆեոդալական
Վրաստանում Ֆիրդուսին ունենում է բազմաթիվ հետևորդներ,
վորոնք ջանք են թափում նմանվելու մեծ բանաստեղծին, դյու-
ցազներգելու նրա հերոսական և սիրային եպիզոդները կամ նրա
հետևողությամբ նյութեր ընտրելով Իրանի կամ հայրենական հե-
րոսական աշխարհից՝ նորանոր պոեմներ կերտելու: Վոչոք չհասավ
Իրանի մեծ հանճարին. Նրա լուսաճաճանչ ճառագայթները նսե-
մացրին հետևորդների մտքի և յերևակայության լույսի դողդոջ
առկայծումները, և մենք մեծ բանաստեղծի խոսքերը հարասելով՝
կարող ենք ասել.

Շատ են յեղել, շատ էլ գործեր են հորինվել,
Բայց նրա գործի նման մի գործ դեռ չի գրվել:

Բ.

ՖԻՐԴՈՒՍՈՒ «ՇԱՀ-ՆԱՄԵ»-ՅԻ ՊԱՀԼԱՎԻ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1

Ինչպես վերը հիշեցինք, Ֆիրդուսին օգտագործել է յերկու կարգի աղբյուրներ՝ գրավոր և բանավոր։ Գրավորը քաղել է գերազանցապես պահլավի և սրանից արաբերեն ու նոր պարսկերեն թարգմանված աղբյուրներից, իսկ բանավորը, անշուշտ, ժամանակի ֆոլկլորից, ժողովրդի՝ դեհկանների և գյուղացիների բերանից։

Գրավոր աղբյուրների մեջ բացի Դակիկիի մոտ 1000 բեյթ «Շահ-Նամե»-յից՝ հիմնականներն են՝ ա. «Յատկար-ի Զարիրան», «Խոդայ Նամե» (պահլ. «Խվատայ Նամակ»), «Կարնամակ-ի Արտաքշիր-ի Պապական» և այլն։

Արդ՝ տեսնենք, թե ինչպիսի վիպական զուգահեռներ ունեն պահլավի գրականության այդ խոշորագույն յերկերը, վոր անտարակույս, խմբագրված են՝ հիմք ունենալով Իրանի ժողովրդական առասպելները, զրույցներն ու վեպը, մեր հին մատենագրության մեջ, և ինչպես են օգտագործել ու վերծանել այդ ֆոլկլորիստիկ նյութերը հայ մատենագիրներն և հետագայում Ֆիրդուսին[1]*։*

Սկսենք «Կարնամակ»-ից[2]*։*

---

[1] *Հայ մատենագիրներից քննության ենք առնում Մովսես Խորենացու, Ագաթանգեղոսի և Բուզանդի պատմությունների մեջ յեղած և «Կարնամակ»-ին վերաբերող հատվածները։*

[2] *Հայ ընթերցողին մատչելի լինելու նպատակով «Կարնամակ»-ը ցիտում ենք Դր. Հ. Թիրյաքյանի հայերեն թարգմանության համեմատ։ Աչքի առաջ*

«Կարնամակ»-ը մի ժողովածու յե զանազան վիպական մոտիվների, վորոնց զուգահեռները տարածված են այլ և այլ ժողովուրդների բանավոր ստեղծագործությունների մեջ։ Յեթե մենք «Կարնամակ»-ից անջատելու լինենք ներածականը—«Սարնամակը» և «Կցորդը», այդ դեպքում մնացած բոլոր հատվածներն, անկասկած, պետք է համարվեն ժողովրդական բանահյուսության արգասիք։

Վիպական մոտիվներ են՝ 1. Սասանի խաշնարածությունը, հայտնությունն և ամուսնությունը[1]*, 2. Արտաշիրի ծնունդը, մանկությունն և նրա ու Արտավանի մեջ տեղի ունեցած միջադեպը*[2]*. 3. Արտաշիրի սիրաբանությունն Արտավանի հարճի հետ (նախնականում՝ համաձայն այլ ժողովուրդների վեպերի մեջ տարածված վիպական զուգահեռների՝ աղջկա հետ), փախուստն և ապստամբությունը*[3]*. 4. Արտաշիրի կռիվը Յեվթան Բուխտի և Վորդի հետ*[4]*. 5. Արտաշիրի ամուսնությունն Արտավանի աղջկա հետ, Թույնի եպիզոդը և Շապուհի ծնունդն ու մանկությունը*[5] *և 6. Շապուհի ամուսնությունն ու Վորմզդի ծնունդն ու մանկությունը*[6]*։*

«Կարնամակ»-ը, ինչպես հռչակավոր արևելագետ Th. Nöldeke*-ն հավանական է համարում, գրի առնված պիտի լինի Խոսրով* II *Պարվեզի օրոք (590—628 թ. թ. հ. ք.)*[7]*. սակայն գրավոր խմբագրությունից առաջ Արտաշիրյան վիպական ցիկլը բանավոր տարածված է յեղել վոչ միայն Իրանում, այլ և հարևան յերկրներում։*

*Ոտար և հայ բանասիրությունը վաղուց ապացուցել է, վոր Արտաշիրյան վեպը մուտք է ունեցել և ընտանի յե յեղել նաև Հայաստանում։ Նրա արձագանքը գտել են Մովսես Խորենացու «Հայոց պատմության» (*II *հ.) ինչպես նաև Ագաթանգեղոսի «Պատմություն Հայոց» նույն վերսիայի առաջաբանի մեջ։ Մեր կողմից կ'ավելացնենք, վոր վոչ միայն Արտաշիրյան ցիկլը, այլ և պահլավի մյուս վիպական մոտիվները կամ պատմական ռոման-*

ունեցել ենք նաև Th. Nöldeke*-յի գերմաներեն թարգմանությունը։ Ցիտելով հայերենից տեղ-տեղ նշանակել ենք փակագծերի մեջ նաև գերմաներեն թարգմանության համապատասխան յերեսները։*

[1] *«Կարնամակ» թարգմ. Դր. Թիրյաքյանի, եջ 4—5.* [2] *Անդ, եջ 5—8.* [3] *Անդ, եջ 8—16.* [4] *Անդ, եջ 16—23.* [5] *Անդ, եջ 13—14, 23—28.* [6] *Անդ, եջ 29—33.* [7] Th. Nöldeke, o. c. *եջ 23։*

ները («historicher Roman», ըստ Th. Nöldeke-յի) ծանոթ են հիշածս մատենագիրներին, ինչպես նաև Փավստոս Բուզանդին, որի անունով մեզ հայտնի «Պատմության» և այդ վիպական մոտիվների զուգահեռներն ու նմանությունները հետաքրքրական են հայ-իրանական կուլտուրական-կենցաղային հարաբերությունների պատմության համար։

Հայ աղբյուրների և «Կարնամակ»-ի տվյալների ազգակցությանը Th. Nöldeke-ն հետևյալ բացատրությունն է տալիս. նախ՝ Մովսես Խորենացին «muss eine der unsrigen (իմա «Կարնամակ»-ին) ähnliche Erzählung von Artachšîr «dem Sohne Sasan's» gekannt haben». փոքր ինչ ստորև ավելացնում է՝ «der (M. v. Ch.) aus den armenischen Volkssagen schöpfte» կամ «die Angaben bei Moses lassen auf einen ganzen Kranz von solchen Artachšîr-Sagen schliessen». ապա նա հավանական է համարում, «dass der Armenier (Ագաթանգեղոսի հեղինակը) die Erzählung des Kârnâmak *setbst vor Augen oder eher im Gedächtniss* hatte als etwa einer Quelle derselben»[1].

Ըստ Th. Nöldeke-յի դուրս է գալիս, որ Խորենացին ծանոթ է յեղել նման մի պատմվածքի կամ քաղել է հայ ժողովրդական զրույցներից. իսկ Ագաթանգեղոսը կամ «Կարնամակ»-ն է աչքի առաջ ունեցել, կամ սրա նման մի այլ պատմվածք իր հիշողության մեջ։

Այս յենթադրությունները մենք չենք կարող ամբողջապես ընդունել։ Հայ մատենագիրների տեղեկություններն Արտաշիրյան ցիկլի մասին մեծապես տարբերվում են «Կարնամակ»-ի տվյալներից։ Մենք ավելի հավանական ենք համարում այն, որ ոչ Ագաթանգեղոսը և ոչ էլ Մովսես Խորենացին ծանոթ չեն յեղել «Կարնամակ»-ին, որ նրանք աչքի առաջ չեն ունեցել գրավոր պահլավերեն աղբյուր, այլ պարզապես իրենց տեղեկությունները քաղել են Հայաստանում, գուցե նաև Իրանում, տարածված Արտաշիրյան վիպական ցիկլի, գրավոր «Կարնամակ»-ին անհայտ պատումներից (вариант)։

Հիմնավորենք մեր տեսակետը, համեմատելով հայ մատենագիրների և «Կարնամակ»-ի տվյալները։

[1] Th. Nöldeke, o. c. էջ 22,25 (ընդգծումը մերն է. Կ. Մ.-Ո.)

2

Սկսենք Ագաթանգեղոսից։

1. Ագաթանգեղոսը ծանոթ չէ Արտաշիրի ծագման զրույցին. ընդհակառակն՝ «Կարնամակ»-ը մանրամասն պատմում է այն։

2. Ըստ Ագաթանգեղոսի՝ Արտավանը ներհուն դետ է և կանխագետ ախտարհամար, ինքն է տեսնում «զընթացս աստեղ»[1] և ինքն էլ բացատրում է նրանց նշանակությունը. մինչդեռ ըստ «Կարնամակ»-ի՝ Արտավանը դետ և ախտարհամար չէ, ինքը չի դիտում աստղերի ընթացքը և չի բացատրում նրանց նշանակությունը, այլ այդ ամենը կատարում է դետերի և ախտարհամարների խորհուրդը։

3. Ագաթանգեղոսը ծանոթ է հարճի ծագմանը. «Դուստր էր սա ուրումն յաւագ ծառայից» և գիտե նրա անունը — Արտադուխտ՝ իսկ «Կարնամակ»-ը չգիտե հարճի ոչ անունն և ոչ էլ ծագումը[2]։

4. Ագաթանգեղոսը ծանոթ չէ այն անարգանքին, որ Արտավանը հասցրել էր Արտաշիրին, ուղարկելով նրան ախոռ և կարգադրելով, որ՝ «զգույշ լեր, գիշեր-ցերեկ կենդանեաց քովէն չհեռանաս և նախճիր, և ճոկան և այլ հանդիսավայրեր չերենաս»[3]։ Ըստ Ագաթանգեղոսի, ընդհակառակն, Արտաշիրն սպասավորներով շրջապատված ապրում է «խորանում»։

5. Ըստ Ագաթանգեղոսի՝ Արտաշիրը չի փախչում և իր հետ չի փախցնում Արտադուխտին, այլ «յարուցեալ ժողովեաց զմեծամեծս ի Պարսից և յԱսորեստանեայց» և կոչ է անում նրանց ապստամբել Արտավանի դեմ. մինչդեռ «Կարնամակ»-ը մանրամասն պատմում է, թե ինչպես հարճը (իմա Արտադուխտը) գողանում է Արտավանի գանձարանից՝ «հնդիկ սուր և ոսկի թամբ և կամար մեծասար, և թագ ոսկի, և շքեղ ասպազէնք և այլ շատ բաներ». թե ինչպես Արտաշիրն «Արտաւանի նժոյգներէն, որը եօթանա-

[1] Չակերտների մեջ յեղածը մեջբերումներ են Ագաթ. հույն վերսիայի առաջաբանի հ. Գ. Զ. ձեռքով կատարած գրաբար թարգմանությունից։ Տես Ագաթանգեղոս «Պատմութիւն Հայոց», Տփխիս 1909։ Յեր. Կ-ԿԳ.

[2] Ֆիրդուսու սկզբնաղբյուրի մեջ աղջիկը նմանապես անանուն է յեղել։ Բանաստեղծն ինքն է նրան անուն տվել, կոչելով Գյուլնար (Նռան ծաղիկ)։

[3] Այս և մյուս բոլոր մեջբերումները Դր. Թիրյաքյանի «Կարնամակ»-ի թարգմանությունից ենք անում։

սուն հրասանգ ճամբայ կտրող երկու ձի թամբեց. միոյն վրայ ինք նստաւ և միւսոյն վրայ աղջիկը հեծցուց, և Փարսխստանի ճամբան բռնեցին»:

6. Ապա Ագաթանգեղոսը նկարագրում է Արտաշիրի բանակցությունները Արտավանի հետ (Զիկ և Կարեն իշխանների միջոցով), Արտադուխտին ապահով դղյակում տեղավորելը և հաղթական պատերազմը, Արտաշիրի մենամարտությունը կամ բախումն Արտավանի հետ, որ, դժբախտաբար, անավարտ է մեզ հասել.— «Իբրեւ այն ինչ առ միմեանս մերձեցեալ՝ կամէին յիրեարս խառնել, ձայնեաց առ արքայ Արտաւան և ասէ»... (պատմվածքն ընդհատվում է). Նա ծանոթ չէ Արտաշիրի արկածալի կյանքին և սխրագործություններին. մինչդեռ «Կարնամակ»-ը մանրամասն նկարագրում է Արտաշիրի փախուստը, Արտավանի հետապնդումը, խոյի միջադեպը (նույնը նաև Ֆիրդուսին) և այլն, և այլն: «Կարնամակ»-ն ու Ֆիրդուսին չեն հիշում Զիկ և Կարեն իշխաններին:

Ագաթանգեղոսի և «Կարնամակ»-ի տվյալների նմանությունները եւ նմանապես շատ են և ակներև:

Դրանք են.

1. Ըստ Ագաթանգեղոսի՝ Արտաշիրը Սասանի որդին է, «յորմէ Սասանականքն՝ որ ի նմանէ՝ և ի թագաւորացն Պարսից ընկալան զծագումն». «Կարնամակ»-ը նույնպես Արտաշիրին համարում է Սասանի որդի «Դարեհեան Դարեհի տոհմէն սերած», այսինքն՝ «ի թագաւորացն Պարսից»:

2. Յեվ ըստ Ագաթանգեղոսի, և ըստ «Կարնամակ»-ի Արտաշիրն Արտավանի «ծառաներից» մեկն է:

3. Յերկուսն էլ գիտեն, որ Արտավանի ննջարանում գիշերում է սիրելի կամակատար հարճը՝ — «առ ի պէտս կարեւոր հարկի սպասարկութեան առ ի նմանէ հրամայելոցն» (Ագաթանգեղոս) կամ «Արտաւանին ամեն տեսակ գործերը (իմա նա—հարճը) կը կատարէր» («Կարնամակ»):

4. Յերկուսն էլ գիտեն, որ Արտաշիրն ու հարճը սիրում են միմյանց:

5. Յերկուսն էլ գիտեն, որ Արտավանն աստղերի ընթացքից է գուշակում իր մոտալուտ անկումն ու կորուստը: (Տես նաև յերկուսի տարբերությունը):

6. Յերկուսի մոտ էլ գուշակությունը հասցնում է անտեղյակ Արտաշիրին հարճը, որին նա խոստանում է «պատիւ տիկնութեան»:

7. Յերկուսի մոտ էլ Արտաշիրը նախքան ճակատագրական պատերազմի դուրս գալն Արտավանի դեմ հեռացնում և ապահով տեղ է հասցնում ոգնական և սիրելի հարճին: Ըստ Ագաթանգեղոսի՝ Արտադուխտին նա հետո յե փախցնում Արտավանի պալատից — «յղեալ առ Արտադուխտ՝ ի բաց կորզեաց զնա. և արգել փակեաց զնա աղխիւքն հանդերձ յամուր դղեկի», իսկ ըստ «Կարնամակ»-ի իր հետն է փախցնում և այլն:

Ֆիրդուսին բանաստեղծորեն վերամշակում է «Կարնամակ»-ի պատմվածքը, ընդհանրապես հարազատորեն պահպանելով նրա եպիզոդների հաջորդականությունը. հերոսների նկարագիրն ավելի կենդանի դարձնելու, ինչպես և դեպքերի դրամատիկական զարգացումն ուժեղացնելու նպատակով՝ նա որոշ մանրամասնություններ է միայն ավելացնում և հապավում:

Ֆիրդուսու տարբերությունների մեջ ուշադրության արժանի յեն՝ 1. Աղջիկը հասարակ հարճ չէ, այլ Գյուլնարն Արտավանի խորհրդականն ու գանձապահն է, 2. Արտավանը վոչ թե յերազ է տեսնում, ապա խնդրում այդ յերազի բացատրությունը, այլ կանչելով աստղագետներին՝

«Իւր աստղ ու բախտէն հարցուց նոցա շատ».

Ֆիրդուսի

Վիպական պատմվածքի տարբերությունների և նմանությունների այս համեմատությունն էլ պարզ ցույց է տալիս, որ նրանք (Ագաթանգեղոս և «Կարնամակ») միևնույն պատմական իրադարձությունը նկարագրելիս՝ իրենց տվյալները քաղում են տարբեր աղբյուրներից, մեր կարծիքով, Արտաշիրյան վիպական ցիկլի տարբեր վարիանտներից. Ագաթանգեղոսը Հայաստանում տարածված «Արտավան-Արտաշիրյան» կամ «Արշակունի-Սասանյան» վիպական ցիկլից, իսկ «Կարնամակ»-ն — իրանականից, այն էլ, գլխավորապես, Սասանյան արքայից արքաների պալատի շուրջը պտտվող յերգերից, զրույցներից և այլն:

Յերկու վերսիաների հեղինակներն էլ յուրովի յեն մշակել իրենց աղբյուրները. յերկուսն էլ որոշ միտում են մտցրել, որոշ գաղափարախոսական գույն են տվել պատմվածքին, ընդվորում

Պարսիկը ձգտում է փառաբանել Արտաշիրին, Սասանյան հարստության ականավոր հիմնադրին, մինչդեռ Հայի, կ'ավելացնենք քրիստոնյա-կղերական Հայի համակրանքը՝ չնայած կրոնական հիմնական խորության՝ Արտավանի կողմն է։

Ինչպես հիշեցինք «Կարնամակ»-ի այս հատվածը կցված է միայն հույն վերսիային. հայկականի մեջ նրա ամբողջությունը պակասում է, յեթե հաշվի չառնենք մի քանի ակնարկներ, այն էլ խիստ պատմականացված, Ագաթանգեղոսի մեր ձեռքը հասած խմբագրության մեջ[1]։

Հայ և օտար բանասերներից վոմանք, հիմք ընդունելով Ղազար Փարպեցու և Մովսես Խորենացու ուղարկներն ու տվյալներն Ագաթանգեղոսի պատմությունից, կարծում են, վոր Ագաթանգեղոսի հայկական նախնական վերսիան էլ այդ հատվածը չի ունեցել։ Այդ հատվածը գոյություն է ունեցել միայն հույն վերսիայի մեջ, վոր թարգմանել ու խմբագրել է հայ իրականությանը, Հայաստանի նիստ ու կացին, կրոնին ու պաշտամունքին, զրույցին ու առասպելին քաջ ծանոթ մի հայ 555—591 թ. թ. միջոցին։

Մեր տեսակետն այլ է։

Մենք կարծում ենք, վոր «Կարնամակ»-ին զուգահեռ հայկական պատումը գոյություն է ունեցել հայ միջավայրում նախ քան պահլավ գրավոր «Կարնամակ»-ի խմբագրումն Իրանում. վոր հայկական պատումն անպայման գոյություն է ունեցել Ագաթանգեղոսի նախնական խմբագրության մեջ, վոր «Կարնամակ»-ի իրադարձությունները իրականում հանդիսանում են յերկարաձիգ շղթայի այն օղերը, վորոնցով սկսվում է հայ-իրանական կամ ավելի ճիշտ հայ Արշակունիների, ապա ֆեոդալների և Սասանյանների դարավոր պայքարը, վոր այնքան բազմերանգ նկարագրված է մեր հին վեպի մեջ (Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Հովհան Մամիկոնյան, Սեբեոս և այլն)[2]։

Ագաթանգեղոսը բազմիցս խմբագրվել է ընդարձակման և կրճատման տեսանկյունով։ Նախնական վերսիային, մի կողմից, կցվել են բազմաթիվ նոր հատվածներ վարքաբանական և դավանաբանական բովանդակությամբ. մյուս կողմից, հանվել են

1 Ագաթանգեղ. գլ. Ա., 18.

2 Այդ մասին մենք մանրամասն խոսում ենք Ագաթանգեղոսին և Հայ վեպին նվիրված մեր անտիպ աշխատության մեջ։

իրական պատմական և աշխարհիկ-վիպական հատվածներ, վորոնց թվում, անշուշտ, և «Կարնամակ»-ի ավելի ընդարձակ հատվածը, քան մեր ձեռքն է հասել հունական վերսիայի միջոցով։ Այդ հատվածը, ըստ իս, հանված պիտի լինի Ղազար Փարպեցուց առաջ գոյություն ունեցող այն խմբագրությունից, վորի մեջ առկա չեր ի թիվս այլ հատվածների նաև Գրիգորի վարդապետությունը։

Վոր նախքան Ագաթանգեղոսի հունական վերսիայի առաջանալը հայ միջավայրին ծանոթ է յեղել «Կարնամակ»-ի Արտավան-Արտաշիրյան վեպի հայկական պատումը, այդ մասին մենք ունենք կողմնակի վկայություններ նաև Փավստոս Բուզանդի պատմության մեջ։ Փոքր ինչ հետո կտեսնենք այդ։

Անցնենք Մովսես Խորենացու «Հայոց պատմության» այն հիշատակության, վոր սերտ կապ ունի «Կարնամակ»-ի բովանդակության հետ։

3

Մ. Խորենացին այստեղ էլ, ինչպես միշտ, հիշում է իր աղբյուրը։ Սակայն այստեղ էլ ըստ իր սովորության՝ խորամանկ հետախուզություններով, մի կողմից, աշխատում է ի հայտ բերել այդ աղբյուրը, բնութագրել նրա ինչ լինելը, մյուս կողմից, բացատրության մի ջրապտույտ է ստեղծում, հիշում է մի շարք անուններ մեկը մյուսից անհայտ, և մեզ թվում է, թե թագցնում է իր իսկական աղբյուրը։ Մ. Խորենացու ասելով՝ նա իր տեղեկությունները քաղել է Ռաստոհուն կոչվող մատյանից, վոր հունարեն թարգմանել էր Իրանից փախած և Հունաստան ապաստանած Շապուհ թագավորի դպիր Խոռոհբուտը (մկրտության անունը — Ցեղխազար)։ Նա այդ մատյանից քաղում է՝ «երկրորդեմք», «Թողլով զառասպելաց բարբաջմունս», «միայն զստոյգն, որ ինչ ճշմարտութեանն վայել է պատմութիւն»։ Ինչո՞ւ։ «Զանզի անտեղի է մեզ այժմ երկրորդել, ասում է նա, զառասպելսն յանդգն երազոյն Փափագայ, և արտադատութեան հրոյն մանուածոյ՝ որ ի Սասանայ, և պատումն զհօտին, և լուսնակն, և ախտարմողացն յառաջասացումն՝ որ են քաղդեայք, և որ ինչ զկնի այսորիկ. և պոռնկական խորհուրդն Արտաշրի հանդերձ սպանութեամբք, և անմիտ հանճարաբանութիւն մոգին զատեր վասն նոխազին, և որ ինչ այլն ամենայն։ Նա և այծին դիեցումն ման-

կանն ընդ հովանեաւ արծւոյն, և գուշակումն ագռաւուն, և գերապանծին պահպանութիւն առիւծուն արքանեկութեամբ գայլուն, և միայնամարտութեան առաքինութիւն, և որ ինչ այլաբանութեանն բերէ կարգ»[1]։

Նախ, մի քերկու խոսք Մ. Խորենացու այս հատվածի տեքստի մասին։

Մեզ թվում է, որ այս հատվածի մեջ «եւ անմիտ հանճարաբանութիւն մոգին դստեր վասն նոխազին» աղճատված է գրիչների կողմից, իսկ հետագայում այդ սխալ վերծանությունը մնացել է Մ. Խորենացու «Հայ. Պատմության» քննական հրատարակության տեքստի, ինչպես նաև զանազան լեզուներով կատարած թարգմանությունների և ուսումնասիրությունների մեջ։

Մկրտիչ Էմինը թարգմանում է այդ խոսքը՝ «о бессмысленных хитросплетениях *дочери мага* относительно козла»[2].

Խորեն Ստեփանեն աշխարհաբար թարգմանում է. «մոգի աղջկան անմիտ հանճարաբանությունը այծի մասին»[3]։

Խորենացու պատմության յեվրոպացի թարգմանիչներն այդ խոսքը ընդհանրապես այդ իմաստով են թարգմանում, օրինակ, Dr. M. Lauer-ը՝ «die thorichten Reden der Tochter des Magiers über einen Ziegenbock und alles Andere»[4].

Vaillant de Florival-ը թարգմանում է՝ «et cette passion insensée de la fille du mage pour un bouc, et tout le reste»[5].

Ֆրանսերեն նոր թարգմանության մեջ հայագետ Victor Langlois-ն բառացի, անգամ տառացի (չհաշված առաջինի «du mage» յերկրորդի «d'un mage») կրկնում է այս հատվածի թարգմանությունը[1]։

Յեվրոպացի մյուս թարգմանիչներն էլ այդ իմաստով են թարգմանում։

Ի դեպ, անհրաժեշտ է այստեղ հիշել, որ մասնավորապես ֆրանսացի հայագետները սխալ են թարգմանում Խորենացու նույն այդ գլխի ընդգծածս բառերը հետևյալ խոսքի մեջ՝ «Բանդի անտեղի է մեզ այժմ երկրորդել զառասպելսն յաղագս երազոյն Փափագոյ»։ Նրանք թարգմանում են՝ «les fables au sujet du songe plein de desirs» (V. de Florival) կամ «les contes relatifs au songe du desir» (V. Langlois)։ Այստեղ պարզապես թարգմանիչները շփոթել են «Փափագ» հատուկ անունը «փափագ» հասարակ անվան հետ։ Թարգմանությունը քերականորեն էլ ճիշտ չէ։

Խորենացու պատմության այս գլուխը (II, Հ.) իր աղճատ տեքստով առհասարակ մի կատարյալ փորձաքար է դարձել թարգմանիչների համար։ Փոքր ինչ հետո մենք կը տուզենք ևս մի աղճատ հատված հենց նույն այդ գլխից։

Այժմ դառնանք քննելի հատվածին։

Ի՞նչ է ուզում Խորենացին ասած լինել այդ հակիրճ խոսքով կամ Արտաշիրի ու Արտավանի պայքարի վ՞ր միջադեպն է հիշում։

Մովսես Խորենացին այս խոսքով ակնարկում է՝ Արտաշիրի փախուստը, նրան համընթացող նոխազին («Կարնամակ»-ի խոյին) և Արտավանի հարցի պատասխան մոգ դատուրի բացատրությունը — «հանճարաբանութիւնը» («Կարնամակ», եջ 12, Դր. Թիրյաքյան, եջ 45—46, Th. Nöldeke)։

Պարսից արքունիքում յերկնային լուսատուների, աստղերի ընթացքն, ինչպես և յերազներն ուսումնասիրում էյին և գուշակություններ անում ախտարմողները, քավդյաները, մոգերը։ Փափագի յերազը բացատրում են ախտարմողները (Խորենացի, II, Հ.), Արտավանը «քաղդէիցն գոլով գիտութեամբ ներհուն», ինքն է բացատրում «զընթացս և զհոլովմունս աստեղացն» (Ագաթանգ. հույն. առաջաբան, թարգմ. Գար. Զարբ.)։ Բաբակի, Արտավանի

---

1 *Մովսես Խորենացի «Պատմ. Հայոց» աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Հարութիւնեան, Տփխիս 1913, գիրք II, գլ. Հ. յերես 206—7.*

2 «История Армении Моисея Хоренского», нов. перевод Н. О. Эмина, с примечаниями и приложениями. Посмертное издание, Москва 1893, стр. 117.

3 *Մովսես Խորենացի «Հայկական պատմություն» աշխարհաբար թարգմանեց և լուսաբանեց Խորեն ծ. վ. Ստեփանե, Ս. Պետերբուրգ 1889, եջ 190։*

4 «Des Moses von Chorene Geschichte Gross Armeniens» aus dem armenischen übersetzt von Dr. M. Lauer, Regensburg, *1869, եջ 130։*

5 Moïse de Khorène «Histoire d'Arménie», texte Arménien et traduction française», Paris 1836.

1 Moise de Khorène, Histoire d'Arménie en trois livres, traduction nouvelle (Coll. d. Historiens... de l'Arménie, Tome deuxieme), Paris 1869, *եջ 117*

յերազները բացատրում են՝ յերազահանները, յերազագետները, մոգերը, քավդեյապետը, դաստուրը («Կարնամակ», էջ 5, 9, 11, 12 և այլն — Դ ր. Թ ի ր յ ա ք յ ա ն. 37—38, 43—46 և այլն Th. Nöldeke)։

Այս բոլորից հետո ակներև է, վոր մոգի աղջիկն այստեղ վոչ դեր ունի և վոչ էլ տեղ. վոր այդ «դստեր» բառն աղճատված է։ Արդ՝ նկատի ունենալով Արտաշիրյան վեպի այդ հատվածի իմաստը, նրա զուգահեռներն Իրանի պատումում — «Կարնամակ»-ում, յերազահան և ախտարմող մոգերի դերը Պարսից արքունիքում, մենք առաջարկում ենք այդ խոսքի հետևյալ ընթերցումը «Եւ անմիտ հանճարաբանութիւն մոգին դաստեր վասն նոխազին» այսինքն՝ «դաստուր մոգի անմիտ հանճարաբանությունը նոխազի մասին», մի ուղղում, վոր լիապես համապատասխանում է «Կարնամակ»-ի բովանդակությանը։ Ըստ այնմ բառի ուղղականը կը լինի «դաստուր» (dastûr) նման «ընուր», «կտուր» գոյականների վոչ դասական հոլովման, սեռ-տրակ. «ըներ», «կտեր», «դաստեր». կամ «դաստեար» (dastyâr), սկզբնապես «դաստեարա» (dastyâra), ինչպես «աղբեարա, աղբեար, աղբեւր, ռամկ. աղբիւր կամ «դուստեարա, դուստեար, դուստեւր, դուստըր (դուստր), վորպիսի ձևի սեռ.-տրակ ըստ կանոնի՝ աղբեր, դստեր, ոսկեր և այլն[1], ուրեմն այստեղ էլ որինաչափորեն պետք է լինի «դաստեր»։

Պարզապես գրիչը չի հասկացել բառի և ձևի իմաստը և հապավելով «ա»-ն, գրել է հանրածանոթ «դստեր» բառը, «դուստր» բառի սեռ.-տրակ. հոլովը։ Այստեղից էլ առաջանում են վերը հիշված բոլոր թյուր ըմբռնումներն ու սխալ թարգմանությունները։

Խորենացու այս հակիրճ հատվածի մեջ կա ևս մի խոսք, վոր աղճատված լինելու հետևանքով չի հասկացվում և սխալ թարգմանությունների առիթ է տալիս։ Միաժամանակ այդ աղճատ խոսքի վերականգնումն ավելի մեծ հնարավորություն է տալիս մեզ համեմատելու Խորենացու և «Կարնամակ»-ի տվյալները։ Ասածս վերաբերում է Խորենացու հետևյալ խոսքին՝ «քանզի անտեղի է մեզ այժմ երկրորդել զառասպելն յաղագս... արտադասութեան հրոյն մանուածոյ, որ ի Սասանայ»[2]։

[1] Н. Марр, «Грамматика древне-армян. языка» (Этимология), СПБ 1903, էջ 90—1, § 105։

[2] Խոր. Պատմ. II, Հ. ընդգծումը մերն է. Կ. Մ-Ո.

Խորենացու ընդգծածս խոսքը սովորաբար թարգմանում են՝ «об исхождении вьющегося пламени из Сасана» (Н. О. Э м и н), կամ «և վոլորուն կրակի դուրս գալը Սասանից» (Խ. վ. Ս տ ե փ ա ն է). «... und dem absurden Feuer faden, der von Sasan ausging (Dr. M. L a u e r); կամ՝ «au sujet de l'éruption du feu, qui s'échappait de Sasan» (V. de F l o r i v a l); «a la colonne de feu, qui sortait de Sasan» (V i c t o r L a n g l o i s)[1].

Խորենացու մյուս թարգմանիչները բացառություն չեն. նրանք էլ այդպես են հասկացել և մոտավորապես այդպես են թարգմանել։

Սխալն առաջացել է «արտադասութեան» բառի թյուր ըմբռնումից։ Մեզ թվում է, թե այս սխալն էլ հնարավոր է ուղղել և Խորենացու տեքստը վերականգնել դարձյալ նույն «Կարնամակ»-ի տեքստի ոգնությամբ։

Բաղդատմամբ Th. Nöldeke-ն «Կարնամակ»-ի այդ միջադեպին համապատասխան հատվածը թարգմանում է.

«Jn der dritten Nacht sah er ebenso, wie die Feuer Frôbâ, Gušasp und Burgîn Mithr im Hause des Sâsân gross wurden und der ganzen Welt Erleuchtung gaben»[2] [Մի յերրորդ գիշեր այնպէս տեսաւ, որ Ատր-Հրուբա, (Ատր)-Գուշասպ և Բուրզին-Միհր Սասանա տանը մէջ կը ցոլային և բոլոր աշխարհը կը լուսաւորէին][2]։

Frôbâ բառի արտասանությունը Th. Nöldeke-ն կասկածելի յե համարում։ Ապա նա բացատրում է՝ «Dass dies kein Mannesname ist, erhellt schon aus der häufigen Wiederholung, wie den auch «Gott» nur bei Königen zulässig wäre»[3].

«Կարնամակ»-ը տալիս է նաև այդ կրակների փունկցիոնա նշանակությունը՝ «das Feuer Frôbâ bedeutet religionskundige und von ihres Gleichen (?) hervorragende Männer, das Feuer Gušasp Krieger und Heerführer, das Feuer Burgîn-Mithr die Bauer und Ackerleute der ganzen Welt»[4]. [Ատր-Հրուբա՝ մեծ

[1] Տե՛ս հիշածս թարգմանությունների համապատասխան գլուխները (II, Հ.)

[2] «Geschichte d. Artachšîr-i Papakân, aus d. Pehlewi übersetzt von Th Nöldeke, Gottingen 1879, էջ 37 (Դր. Թիրյաքյան, էջ 4)։

[3] Անդ, էջ 37 ծան. 3։

[4] Անդ, էջ 37—38. (= Թիրյաք. էջ 5)։

մարդկանց և մոգուց դենպետութեան. և Ատր-Գուշասպ սպաստա-
լարութեան և ասպահապետութեան և Ատր-Բուրզին-Միհր՝ գիւ-
ղատնտեսութեան և երկրագործութեան նշանակ են[1]]:

Այդ միևնույն անունները տեղ են գտել նաև Ֆիրդուսու «Շահ-Նամե»-ի մեջ, սակայն, վորոշ աղճատումներով, թերևս բանաստեղծի ղարաշրջանի արտասանությամբ՝ «Die sehr abweichenden Namen bei Fird. (Vullers I, p. 29) scheinen doch nur Entstellungen der echten Formen zu sein», ասում է Th. Nöldeke-ն[2]:

Մեզ թվում է, վոր հենց այդ «կասկածելի» Atr-Frôba-ն է թագնված Մ. Խորենացու «արտադատութիւն» աղճատ բառի տակ:

Պահլավագետ Դր. Հ. Թիրյաքյանը, վոր մեր գրականությունը հարստացրել է «Կարնամակ»-ի, ապա Ֆիրդուսու նույն հատվածի «Դրվագ Արտաշիր Բաբականի» յուրալեզու թարգմանությամբ, գտնում է, վոր Atr-Frôbâ-ն Ատր-Հրութան կամ Ատր-Հրուբադ-ն է «ըստ ոմանց՝ Ատր-Խորդադ = و ادر خرداد զոր հայացի՝ Արտ-Հրադադ»[3]:

Հիմք ընդունելով Դր. Թիրյաքյանի այս ստուգաբանությունը, առաջարկում ենք Խորենացու «արտադատութիւն» բառի հետևյալ հավանական ուղղումը:

Խորենացու «Պատմության» սկզբնական բնագրի մեջ հավանորեն յեղել է «ատր-հրադատութեան». հետագայում գրիչների կամ խմբագրողների ձեռքով քննելի խոսքի հաջորդ «հրոյն» բառի ազդեցությամբ՝ հապավել է «հր» մասնիկը և մնացել է միայն «ատրադատութեան» ձևը[4]. սա յել հունաբան գրիչների կամ խըմբագրողների կողմից դիտվել է իբրև սխալ և ուղղվել է հունաբան սովորական տերմինաբանության համեմատ՝ «արտադատութեան» և հասկացվել է իբր «վորոշում, բացորոշում» (արտադատել-վորոշել, բացորոշել—Առձ. բառարան), ինչպես, որինակ՝ «արտաբերութիւն, արտաբերումն, արտաբերեմ և այլն) կամ «ր»

1 Անդ, եջ 37—38 (=Թիրյաք. եջ 5).

2 Անդ. եջ 38, ծան. 1 (տե՛ս նաև Ֆիրդուսու «Շահնամակ», թարգմ. Դր. Թիրյաքյանի):

3 «Կարնամակ», եջ 42, ծան. 18:

4 Մ. Խորենացին ինքն էլ կարող էր հենց այդ նկատառումով «հր»-մասնիկը դուրս գցած լինել:

և «տ» տառերի սովորական յեռևառաջությունն է տեղի ունեցել:

Այսպիսով «արտադատութեան» բառը ուղղելու յե «ատրադատութեան», վորը կարող է ներկա դեպքում նշանակել նաև «Ատրադատի»: Բառերի նշանակության փոփոխությունը կցորդական զուգորդությամբ «մի առարկայի գաղափարից անցնում է մի այնպիսի առարկայի գաղափարի, վոր տեղով, ժամանակով, պատճառով կամ վորևէ ուրիշ առնչությամբ կապվում է առաջինի հետ», ասում է պրոֆեսոր Մ. Աբեղյանը[1]: Բառերի նշանակության փոփոխության այդպիսի կիրառություններից բերենք մեկը. «Հատկության վերացական անունները հատկություն ունեցող առարկաների անվան տեղ. որինակ՝ նորություն—նոր լինելը, նորի հատկություն, այլև նոր բան, նորույթ: ...Հաճախ այսպիսի վերացական անունները, ինչպես և ուրիշ անունները, գործածվում են իբրև հավաքական անուն, որինակ՝ բանվորություն, ուսանողություն, աշակերտություն...»[2]:

Թվում է, այս լեզվական որենքին է համապատասխանում այն, վոր վերացական անունները մեկ-մեկ կարող են գործածվել իբրև հասարակ և հատուկ անուններ յեզակիի իմաստով, որինակ՝ վեհափառություն, վեհափառ (նոր առում):

Մեր հին լեզվի մեջ, կարծես, կան մի քանի նման կիրառություններ, որինակ՝ «...որ և հիմնարկեցաւ տեղիս ի ձեռն Յոհաննու Հայոց կաթողիկոսութեան (=կաթողիկոսի) եւ Յոհաննու Արշարունեա(ց) յիւր բարեխաւսութիւն...»[3] կամ՝ «...անհնարին բեկմամբ՝ վասն իւրեանց յայնմ ի բնակ տեառնէն կամ ի հոգևոր վարդապետութենէն (=վարդապետէն) որբ մնալոյ, մեծաւ լալեաց տրտմութեամբ մինչև ի գեւղն Թորդան... յուղարկէին»[4] կամ՝ «...և եա արքայորդին Տիրան զդուստր իւր կնութիւն (=կին) Յուսկան»[5]: Յեվս մի յերկու որինակ՝ «զի եկեսցեն ձեռնադրես-

1 Պրոֆ. Մ. Աբեղյան «Հայոց լեզվի տեսություն», Յերևան, 1931 թ. յեր. 150:

2 Անդ, յեր. 151—2:

3 Գարեգին Վ. Հովսեփյան «Գրչության արվեստը հին հայոց մեջ», Վաղարշապ. 1913, յեր. 5:

4 Փավստոս Բուզանդ «Պատմութիւն», III, ժա, 25:

5 Անդ, III, ե, 10:

ցեն զՋոնակ ի կաթողիկոսութեան... և զՋոնակն ձեռնադրեցին կաթողիկոսութիւն ըստ հրամանի թագաւորին»[1]. «զի ձեռնադրեսցեն անդ զսուրբն Ներսէս կաթողիկոսութիւն (=կաթողիկոս) Հայոց Մեծաց»[2]։

Մեր բանասերները սովորաբար սխալ համարելով այս կիրառությունները, ուղղում են, ավելացնելով «ի» նախդիրը (ի նախդրով հայցական կամ տրական)։

Ձե՛նք աղճատում արդյոք բնագրի լեզուն։

Բերենք մի յերկու օրինակ էլ Կորյունից։

«...և ընդ նմին այլոց ևս քաջալերութիւն աշակերտակցաց մերոյն վարդապետութեան (=վարդապետին)».[3] «...բազում ինչ նպաստութիւն ցուցանէր ուսուցանողաց վարդապետութեանն (=վարդապետին), իբրև որդւոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ»[4]. «...Որում անունն Յովնաթան կոչէին, որոյ բազում յօժարութիւն ի վարդապետութենէն (=վարդապետէն) էր գտեալ»[5]. «...Արք զգաստք՝ զգուշագոյնք հրամանաց վարդապետութեանն (=վարդապետին)»[6]. «... Ուստի և իմ մասնաւոր աշակերտութեամբ վիճակ առեալ, թէպէտ և էի կրսերագոյն և առաւել քան զկար մեր»[7]։

Այսպիսի առումներ կան նաև Բուզանդի, Ագաթանգեղոսի և Մակաբայեցիների գրքերի մեջ, վոր և հանձնում ենք մեր լեզվաբանների հատուկ ուշադրությանը։

Այս ամենից հետո՝ մենք կ՚առաջարկեյինք Խորենացու «յաղագս... ատրագատութեան հրոյն մանուածոյ՝ որ է ի (տանն) Սասանայ» կամ «որ ի Սասանայ» թարգմանել «Սասանի (տանը) (յերևացող) կամ Սասանից (դուրս յեկող) Ատրագատ կրակի մանված մասին». ռուսերեն՝ «о вьющемся пламени Атрадата, что из Сасана» կամ «что (в доме) Сасана». «Յաղագս... Ատրագատութեան հրոյն մանուածոյ» հնարավոր է կարդալ նաև «յաղագս... Ատրագատական (=Ատրագատի) հրոյն մանուածոյ», ինչպես, օրինակ, «զի... նուէրս տարցի բագնին Անահտական (=Անահիտի) պատկերին». (Ագաթանգեղոս)։

Այս ուղղումով Մ. Խորենացու աղճատ տեքստը վերականգնվում է և մութ ու դժվարիմաց խոսքն ստանում է մի իմաստ, վոր լրիվ համապատասխանում է «Կարնամակ»-ի հիշածս հատվածի նկարագրության ձևին, բովանդակության ու իմաստին։

4

Խորենացու տեքստի այս անցողակի ուղղումից հետո, վոր անհրաժեշտ եր մեր հետագա համեմատական վերլուծությունները ծավալելու համար, դիմենք նրա հիշատակությունների Արտաշիրյան վեպի մասին։

Խորենացին միջանկյալ է հիշում այս «զառասպելաց բարբաջմունս»։ Նա «անտեղի է» համարում նրան «երկրորդել»։ Սակայն այդ «անտեղին» և արժեքավորը և այդ է, վոր լուսաբանում է հայ-իրանական կուլտուրական-կենցաղային հարաբերությունների պատմության եջերից մեկը։

Անցնենք Խորենացու կամ նրա աղբյուր Ռաստսոհունի և «Կարնամակ»-ի նկարագրած իրադարձությունների համեմատությանը։

Ծանո՞թ եր Խորենացին «Կարնամակ»-ի մեր ձեռքը հասած խմբագրությանը. ունեցե՞լ է նա Ռաստսոհուն կոչվող վորևե «պատմական» աղբյուր, թե՞ «անտեղի» «առասպելների բարբաջմունքը» քաղել է ժողովրդական զրույցներից և ավելի ազդու ու համոզիչ լինելու նպատակով՝ դիմել է «իր սովորության համաձայն» ինչվոր յերևակայական աղբյուրի, կոչելով այն Ռաստսոհուն։

Ահա հարցեր, վորոնց լուսաբանումն անհրաժեշտ է խնդիրը լուծելու համար։

Պրոֆ. Գրիգոր Խալաթյանցը համարում է ինչպես Խորոհբուտի, այնպես էլ Ռաստսոհուն կոչվող Բարսումայի պատմությունները ֆիկցիաներ («*такой истории не существовало*»). «Наш автор *(իմա Խորենացին)*, ասում է նա, «намеренно предупреждает читателя относительно рассказов своих о войнах

[1] Անդ, IV, ժե, եջ 105։

[2] Անդ, IV, դ, 61։

[3] Կորյուն, «Պատմ. վարուց և մահու սրբոյն Մեսրոպայ վարդապետի» Վենետիկ 1894, յերես 8։

[4] Անդ, յերես 25։

[5] Անդ, յերես 31։

[6] Անդ, յերես 44։

[7] Անդ, յերես 8։

персов с греками в IV веке, определенно указывая на книгу
Хорохбута, чтобы тем скрыть настоящий свой источник»[1].

Մտացածին («вымысел») *համարելով այդ պատմիչներին՝ Գ ր. Խ ա լ ա թ յ ա ն ց ն այնուամենայնիվ՝ ավելացնում է՝* «*что у Хоренского был в руках какой то персидский источник, едва-ли подлежит сомнению.* Это видно, во-первых, из списка персидских царей (гл. 68, 69), который, хотя и составлен по данным Анонима (стр. 9—10), однако, как-будто проверен и дополнен каким-либо персидским источником; во-вторых, из «басни о Папаке» (гл. 70), которая в сжатом своем виде во многом напоминает легендарную историю Арташира Папакана в пехлевийской версии: в той и другой упоминается о *сне Арташира, о пламени, о предсказаниях астрологов, о блудных помыслах Арташира, о девице (дочери Мага), о козе (баране), об орле и различных зверях* и проч.[2], и в третьих, это видно из приведенных у Хоренского любопытных легенд о Бюраспе-Аждахаке (в приложении к I кн.) и Ростаме-Сагчике (II, 8), которые отличаются чисто иранским колоритом и подтверждаются персидскими источниками»[3].

Բացի վերոհիշյալ աղբյուրներից՝ պրոֆ. Գ. Խ ա լ ա թ յ ա ն ց ը կարծում է, որ Խորենացին Կամսարականների ծագման ավանդությունը պատմելիս՝ «пользовался в этом случае поздними фамильными преданиями Камсараканов»[4].

Ըստ Գ ր. Խ ա լ ա թ յ ա ն ց ի՝ դուրս է գալիս, որ Խորենացին իր պատմության I, *Ա. և Բ. հավելվածի,* II, *Ը, Հ, ՀԳ. հատվածների համար ունեցել է յերեք հիմնական աղբյուրներ, յեթե հաշվի չառնենք այն, որ նա ընդհանրապես չի ընդունում Խորենացու վկայությունների իր աղբյուրների գոյության մասին, այն է՝ ա. մի ինչ որ Պարսից (գրավոր) աղբյուր* («какой-то персидский источник»[5] *մի այլ տեղում՝* «быть может, даже книга Барсумы»[6]: *Իսկ ուր մնաց նրա մյուս հայտարարությունը, թե*

---

[1] Гр. Халатьянц, «Армянские Аршакиды» и т. д., стр. 124.
[2] *Ընդգծումները Գր. Խալաթյանցինն են. Կ. Մ.-Ո.:*
[3] Гр. Халатьянц, о. с. *եջ 118:*
[4] *Անդ, եջ 120:*
[5] *Անդ, եջ 118:*
[6] *Անդ, եջ 372:*



Ֆիրդուսու «Շահ-Նամե» վեպի սկիզբը 1828 թ. ձեռագիր օրինակում (13-րդ էջ)
Ձեռագիրը գտնվում է ՀՍՀԽ Կուլտուր-պատմական Թանգարանում



Ֆիրդուսու «Շահ-Նամե» վեպի սկիզբը 1828 թ. ձեռագիր օրինակում (12-րդ էջ)
Ձեռագիրը գտնվում է ՀՍԽՀ Կուլտուր-պատմական Թանգարանում.

«такой истории не существовало» (?!), բ. Պարսից առասպելներ («басня о Папаке, которая напоминает легендарную историю Арташира Папакана в пехлевийской версии») և զրույցներ («о Бюраспе-Аждахаке.. и о Ростоме Сагчике.., которые отличаются чисто иранским колоритом и подтверждаются персидскими источниками») և վերջապես, գ. Կամսարականների տոհմական ավանդությունները:

Պրոֆ. Գ. Խալաթյանցի թեզերը հակասական են: Նա մեկ բացասում է Պարսից աղբյուրների գոյությունը, մեկ էլ՝ անկասկած համարում և ընդունում: Յեթե, իրոք, Խորենացին «ինչ վոր պարսիկ աղբյուր» է ունեցել, այդ դեպքում անհասկանալի յե մնում, թե ինչու պրոֆ. Գ. Խալաթյանցը չի ընդունում Ռաստսոհուն կոչվող Բարսումայի պատմությունը, վորպես Խորենացու աղբյուր: Այդ անհայտ, բայց «կասկածի վոչ յենթակա» «ինչ վոր պարսիկ աղբյուրը» կարող է ամենայն իրավամբ Բարսումայի մատյանի հետ նույնանալ. չէ՞ վոր պրոֆ. Գ. Խալաթյանցի համար յերկուսն էլ հավասարաչափ յենթադրական աղբյուրներ են, քանի վոր նրանցից և վոչ մեկը մեզ չի հասել:

Փաստարկման յերկրորդ կետում էլ պրոֆ. Գ. Խալաթյանցը հանգում է հապճեպ, սխալ յեզրակացության: Նրա սխալներն են.

1. Վոչ Խորենացին և վոչ էլ «Կարնամակ»-ը ծանոթ չեն Արտաշիրի յերազին. այդպիսի յերազի մասին վոչ մի աղբյուր չի խոսում.— յերկուսն էլ՝ թե Խորենացին և թե «Կարնամակ»-ը հիշում են Փափագի յերազը: Միայն «Կարնամակ»-ը մեջ է բերում նաև Արտավանի յերազը:

2. Խորենացին գիտե «մոգի աղջկա» մասին, «Կարնամակ»-ը տեղյակ չե.

3. Խորենացու հիշված հատվածի մեջ խոսքը ճոխազի մասին է. իսկ «Կարնամակ»-ը յերկար ու ձիգ պատմում է խոյի մասին:

4. Խորենացին հիշում է «об орле и различных зверях». իսկ «Կարնամակ»-ի մեջ մի հատիկ խոսք չկա այդ կենդանիների և նրա հետ կապված միջադեպի մասին:

Պրոֆ. Գր. Խալաթյանցի այս սխալներն ու հապճեպ յեզրակացություններն արդյունք են այն հիմնական տենդենցի, վորը վոգևորել է նրան իր անհաշտ պայքարում ընդդեմ Խորենացու «Պատմության»:

Մ. Խորենացու տվյալները Պարսից առասպելական և վիպական աշխարհի մասին այնքան հակիրճ են, այնքան սակավաբան, վոր դժվար է աղբյուրների համեմատության միջոցով յերևան հանել նրա սկզբնաղբյուրի մանրամասնությունները։ Նա գիտակցաբար է այդքան սակավաբան։ Նա շատ բան գիտե. այդ յերևում է նրա հակիրճ, բայց բազմաբովանդակ համառոտագրությունից։ Ցեվ յեթե շատից միայն այդքանն է տալիս, այն էլ բարոյական հարկադրանքով զիջում է իր մեկենասին՝ «Այլ տացուք զայսոսիկ՝ մանկականի քոյոց տիոց և անհասութեան խակութեանդ լեալ տարփանք»[1]... «զի ի վերայ այլոց անհնարից, հնարաւոր վասն քո արարեալ մեր կատարեմք և զայս»... «Միայն թէ և քեզ, ասում է նա մեկենասին, այսոքիկ ուրախութիւն և կամ շահ օգտութեան»[2]։

Այս բոլորից հետո պարզ է, վոր բարոյական հարկադրանքով շարադրած «առասպելաց բաբրաջմունքը», ի վիճակի չեն լինել վերականգնելու այն ամենը, ինչ վոր ինքը պատմագիրը լսել կամ քաղել է գրքերից։ Բայց և այնպես այդ սակավաբան հիշատակությունները, այդ պատառիկներն էլ արժեքավոր են Իրանի հին վեպի և առասպելի պատմության համար։

Անցնենք այժմ Մ. Խորենացու և «Կարնամակ»-ի տվյալների համեմատությանը։ Բաղդատենք, նախ, այդ աղբյուրների նմանությունները։

Խորենացու (կամ նրա աղբյուրի) և «Կարնամակ»-ի տվյալները միայն վեպի կառուցվածքային նմանություններ են արձանագրում։ Հայ պատմագիրը ծանոթ է՝ Փափագի յերազին «ատբաղատութեան հրոյն մանուածոյ» (այսինքն՝ Ատրադատ կրակի պտույտին, վոլորքին), ախտարմողների բացատրությանը, Արտաշիրի «պոռնկական խորհրդին, հանդերձ սպանութեամբք»,[3] «դաստուր մոգի» հանճարաբանությանը և մի շարք այլ դիպված-

1 Մ. Խորեն. I, հավելվ. Ա.

2 Մ. Խոր. I, հավելվ. Բ.

3 Անդ, II, Հ.։ Թե ինչ պոռնկական խորհուրդ է և ինչ սպանություն, այդ մասին դժվար է մի բան ասել։ Խորենացին լակոնիկ է, իսկ մանրապատում «Կարնամակ»-ն ու Ֆիրդուսին այդ մասին վոչինչ չեն ասում։ Թերևս Խորենացին հարճի որդությունն է համարում «պոռնկական խորհուրդ», բայց այդ դեպքում չի հաստատվում վոր սպանությունն է ակնարկում նա։

ների, վորոնց մասին նա սահմանափակվում է ասելով՝ «որ ինչ զկնի այսորիկ» կամ «որ ինչ այլն ամենայն»։ «Կարնամակ»-ն իր հերթին՝ բացի «պոռնկական խորհրդին, հանդերձ սպանութեամբք»՝ այդ բոլորին ծանոթ է և Խորենացու «որ ինչ զկնի այսորիկ» կամ «որ ինչ այլն ամենայն» անբովանդակ ասույթների փոխարեն՝ տալիս է Արտաշիրյան վեպի մանրապատում բովանդակությունը։ Բացի դրանից Հայն ու Պարսիկը նման են իրար և «առասպելի» վեպի զարգացման հաջորդականությամբ մինչև դաստուրի «հանճարաբանությունը», վորից հետո Խորենացու խոսքը ընդհատվում է «և որ ինչ այլն ամենայն» վոչինչ չասող բառերով։

Խորենացու և «Կարնամակ»-ի նմանություններն ակնհայտնի յեն, բայց տարբերությունններն էլ վոչ պակաս ակներևս։

1. Խորենացին ծանոթ է Փափագի մեկ յերազին. «Կարնամակ»-ը նկարագրում է երեք յերազ։

2. Խորենացին արձանագրում է միայն մեկ կրակի առասպելը. «Կարնամակ»-ը խոսում է յերեքի մասին (Ատր-Հրուբա— Atr-Frôba (?), (Ատր)-Գուշասպ-Gušasp և Բուրզին-Միհր-Burgîn-Mithr) «որ Սասանայ տանը մէջ կը ցոլայեն և բոլոր աշխարհը կը լուսաւորէին»[1]։

3. Խորենացին գիտե «պատումն գհօտիւն». «Կարնամակ»-ը չգիտե այդ և դրա փոխարեն տալիս է յերկրորդ յերազի բովանդակությունը, այն է՝ «որ Սասան զարդարուն սպիտակ փղի մը վրա նստած էր... և բոլորը երկրպագում և փառաբանում էին նրան»[1])։

4. Խորենացին հիշում է «Եւ լուսնակն», այսինքն՝ ակնարկում է մի միջադեպ, վոր կապ պիտի ունեցած լինի Սասանի կյանքի հետ. «Կարնամակ»-ը դրա փոխարեն պատմում է՝ Բաբակ «տեսաւ որ արեգակը Սասանին գլխուն վերևէն կը ծագէր և համակ աշխարհը կը լուսաւորէր»[1]։

5. Խորենացու մոտ «անմիտ հանճարաբանությունը» Նոխազի մասին է. «Կարնամակ»-ի մեջ նոխազի փոխանակ խոյն է հիշվում։

1 Դր. Թիրյաքյան, «Կարնամակ», յերես 4։

6. Խորենացին իր աղբյուրից քաղել է՝ «Նաև այծին դիեցումն մանկանն ընդ հովանեաւ արծւոյն, և գուշակումն ագռաւուն և գերապանծին պահպանութիւն առիւծուն հանդերձ արբանեկութեամբ գայլուն, և միայնամարտութեանն առաքինութիւն, և որ ինչ այլաբանութեանն բերէ կարգ»։ «Կարնամակ»-ը ծանոթ չէ այս առասպելներին։

Չի՞ քաղել, արդյոք, Խորենացին այս նյութերը Կամսարականների տոհմային զրույցներից, ասենք, Պերոզամատի զրույցներից, «վասն որոյ բիւր առասպելս յօդեցին պարսք զնմանէ,— անբանից սպասաւորել մանկանն» (Խորեն. II, ՀԳ.)։

«Կարնամակ»-ն այդ եպիզոդների փոխանակ մանրամասն նկարագրում է։

1. Արտաշիրի ծնունդն ու մանկությունը Փափագի տանն ու յերիտասարդությունն Արտավանի արքունիքում.
2. Արտաշիրի պատերազմը քրդերի դեմ.
3. Նրա կռիվը Haftânbôcht (Յեվթանբուխտի) հետ.
4. Արտաշիրի ամուսնությունն Արտավանի աղջկա հետ.
5. Շապուհի ծնունդն ու մանկությունը.
6. Սրա ամուսնությունն ու Որմզդի ծնունդը։

Խորենացու և «Կարնամակ»-ի տարբերությունների մեջ աչքի յե ընկնում մանավանդ 5-րդ կետը, այն է՝ նոխազի (Մ. Խորեն.) և խոյի («Կարնամակ») մասին։ Առաջին հայացքից այդ տարբերությունը մի անարժեք մանրամասնության տպավորություն է թողնում, սակայն, յերբ ուշի ուշով ընթերցում ենք մեր մատենագիրների տարբեր տեղերում հիշատակած վկայությունները, յերբ իմաստավորում ենք այդ հատ ու կտորները, միջանկյալ արտահայտությունները, արդեն ստիպված ենք փոքր-ինչ այլ կերպ արժեքավորել «նոխազի» (այծի) ու «խոյի» (վոչխարի) վիպական եպիզոդը՝ կապված Արշակունի Արտավանի և Սասանյան Արտաշիրի վճռական կռվի հետ։

Մեզ թվում է, թե տարբեր կենդանիների հանդես գալը սերտ կապ ունի Իրանի յերկու հզոր ֆեոդալական տների տոտեմական հասկացողությունների հետ, ընդ վորում խոյը Սասանյանների տոտեմն է կամ տոտեմական կենդանին, իսկ Ն ո խ ա զ ը՝ Պահլավ Արշակունիներինը։

Փորձենք հիմնավորել մեր այս հիպոթեզը։

Ըստ «Կարնամակ»-ի՝ Արտավանը[1] հարցնում է դաստուրին «Was bedeutet jener Widder, der mit ihm (իմա Արտաշիրին) zugleich auf dem Pferde ist? Antwortete dieser: «Möget ihr unsterblich sein, die Majestät der Kajânier hat den Ardešîr erreicht; auf keine Weise kann man seiner mehr habhaft werden. Darum macht euch und den Reitern keine Mühe mehr, noch bemüht weiter die Pferde, dass sie zu Grunde gehen». [Ի՞նչ կը նշանակէ այն խոյն, որ անոր հետ ձիուն վրա նստած է։ Դաստուրն ըսավ թէ.—«Յաւիտեան կեցջիք, Գայեանց փառքն Արտաշրին հասածէ. այլ ևս զայն բռնելու ճար չկայ. ի զուր ձեզ և այրուձիոյն նեղութիւն մի տաք և ձիանը մի հոգնեցնէք։][2]

Ըստ Ֆիրդուսու՝ Արտավանի հարցին «առաջնորդ մոգպետը» պատասխանում է.

... Ասկէ սլացան անցան երկու ձիաւոր՝
Փոշեթաթախ համակ և բերանին չոր.
Մեկուն ալ ետևէն մի խոյ կը ցատկէր,
Որոյ նըկարտանց մէջ չեմ տեսած պատկեր...

Մեծ վեզիրն ասում է.

... Եթե հասաւ նստաւ բախտ[3] նորա քամակ.
Իզուր է մեր պընդելն, հով կ'որսանք համակ։[4]

Ախտարմողների պետը դիտելով աստղերի ընթացքը, ասում է Արտավանին. «Der Widder hat sich vom Saturn und Mars entfernt und dem Jupiter und Mercur genährt»[5]։

Ըստ Th. Nöldeke-ի յերկնային խոյն ունի իր ներկայացուցիչը յերկրում՝ «der Widder am Himmel auf den gleich nachher

[1] Th. Nöldeke-ի թարգմանության մեջ (յեր. 45) Արտավանի փոխարեն տպված է Ardašîr· վրիպակ է կամ հմուտ Իրանիստի տրամադրությանը յեղած ձեռագրի սխալ. հմմտ. Դր. Թիրյաքյան, յերես 12. վորն ունի ճիշտ «Արտաւանը»։

[2] Nöldeke, յերես 45—46, Թիրյաք. յերես 12.

[3] Բախտ=Խոյ, Կ. Մ.-Ո.

[4] «Շահնամակ»—Արտաշիր Բաբական, թարգմ. Հ. Թիրյաքյան, Նյու-Յորք, 1909, յերես 19.

[5] Th. Nöldeke, o. c. 44,=Դր. Թիր. յեր. 9.

(վերը մեջ բերած ցիտատը) vorkommenden Widder der Majestät warak hinzudeuten scheint»[1]։ Ապա մի այլ ծանոթության մեջ նա ասում է. «Diese äusserst sinnliche Vorstellung von der königlichen Majestät als einem feisten Widder, der dem zur Herrschaft Bestimmten nachläuft, bildet eine interessante Ergänzung zu dem lehrreichen Aufsatz Spiegel's in Kuhn's Beitr. V, 387 ff»[2]. (Այս աշխատությունը, դժբախտաբար, չկարողացանք գտնել)։

Մի կողմ թողնենք բազմահմուտ Th. Nöldeke-ի սխալ տեսակետը, վորով յերկնայինն և համապատասխան յերկրայինն, հոգեղեն ներկայացուցիչ ունենում և վոչ հակառակը, այստեղ կարևորն այն է, վոր խոյը, Churrak-i Kajân (Die Majestät der Kajânier), իշխանության մարմնացումն է, վոր հովանավորում է Իրանի հին աշխարհակալներին ու նրանց տրադիցիաները շարունակող Սասանյաններին ի դեմս Արտաշիրի։ Նա պաշտպանում է և հովանավորում. ում հետ լինի նա, նրանն է հաղթությունը, նրանն է իշխանությունը, նրանն է բախտը։

Տոհմական-տոտեմական հասարակության մեջ տոհմերի հակամարտության ժամանակ բախվում են նաև նրանց տոտեմները։ Պարտված տոհմը վոչնչացվում է կամ սորկական վիճակի իջնում, իսկ տոտեմը հայտարարվում է անհաշտ թշնամի կամ ստորադասվում տոհմական պանթեոնում։

Իրանի ֆեոդալական այս յերկու հզոր տների պայքարի ընթացքում տոտեմ խոյը Սասանյանների կողմն է, նրանց վոգին և պաշտպանը։ Արտավանը չի ճանաչում այդ խոյին։ «Das Reiterpaar kennen wir, aber was soll wohl jener Widder sein?» [«... այն երկու ձիավորները գիտենք. սակայն այն խո՞յն ինչ պիտի լինի»[3]], — հարցնում է նա։ Պարզ է, վոր նրա հոգևոր աշխարհում խոյը տեղ չունի, այլ նրան փոխարինում է մեկ ուրիշ կենդանի, մի այլ տոտեմ։

Արդ՝ վո՞րն է այդ տոտեմը։

Ձեռքի տակ չունենք պարսիկ աղբյուրներ և համապատաս-

1 Անդ, Th. N. յերես 44, ծան. 2.
2 Անդ, յեր. 45, ծան. 2.
3 Nöldeke, o. c. 45,=Թիրյաքյան, յերես 12.

խան գրականություն, վորպեսզի ապացուցենք մեր այդ թեզն Իրանի կուլտուրայի (հոգևոր և նյութական) հուշարձանների տվյալներով։ Սակայն, մեզ թվում է, վոր հայկական աղբյուրներն էլ ի վիճակի յեն նպաստելու այդ խնդրի լուծմանը։

Սասանյան Իրանի պալատականն արհամարհում է հայոց թագավորին — Պահլավ Արշակունի Արշակին, «ասելով ի պարսկերէն լեզու, թէ՝ Այծից Հայոց արքայ, եկ նիստ ի խրձան խոտոյ ի վերա»[1]։

«Նաև այծին դիեցուցին մանկանն ընդ հովանեաւ արծւոյն»[2]. մի ակնարկ, վոր թվում է, թե վերաբերում է Պահլավ Պերոզամատին՝ «բիւր առասպելս յօդեցին Պարսք զնմանէ, — անբանից սպասաւորել մանկանն» ...[3]

Հյուսիսական պատերազմի ժամանակ, յերբ քրիստոնյա Տրդատն սպանում Հոների կապապաշտ Գեղահոն թագավորին (Իրանի Արշակունիների մի ճյուղ, ինչպես նաև Բուզանդի հյուսիսականների՝ Մազքութների թագավոր Սանեսանը՝ «Եղբայր իմ էր ազգաւ Արշակունի»)[4], «... Իշխանն Անգեղ տանն... ձայն տուեալ ասէր. «Իշխան Սփնեաց, ի մէջ ած զգունդ այծուցդ, զի անկաւ Հոնն քօշն»[5]։

Այս արտահայտությունները («Այծից Հայոց արքայ», «Այծի դիեցուցին մանկան», «գունդ այծուց» և նրանց զորավար թագավորը «Հոնն քօշն») պատահական չեն[6]։

Դրանք անպայման արտացոլում են այն հասկացողությունները, վորոնք գոյություն են ունեցել տվյալ տոհմական հասարակության մեջ և ծաղրի ու արհամարհանքի առարկա յեն դարձել թշնամի տոհմական հասարակության կողմից։ Այստեղ կարող են կասկածելի թվալ միայն հոների մականունները։ Սակայն, չպետք է մոռանանք, վոր, նախ՝ այդ արհամարհական արտահայտությունները հայ ֆեոդալներն են անում, յերկրորդ՝ քրիս-

1 Բուզանդ, IV, ժգ.
2 Մ. Խորենացի, II, Հ.
3 Անդ, II, ՀԳ.
4 Բուզանդ III, է.
5 Զենոբ Գլակ, «Պատմ. Տարոնի», Վենետիկ 1832, յերես 47.
6 Կապ չունին, արդյոք, այս արտահայտությունների հետ Խանդութ խանումի հետևյալ խոսքերը՝ «Ըծի (այծի) գլուխ Դավիթ իմ նամուսին դեպավ» («Սասնա ծռեր»)։ «Այծի գլուխ» Դավիթը հայ թագավոր է։

տոնեուԹյան հանաչմամբ հենց ինքը «Ա յ ծ ի ց Հ ա յ ո ց ա ր ք ա ն» պետք է վերագնահատեր իր իդեոլոգիական աշխարհի հետ այժմ կապ չունեցող նախկին արժեքները և յերրորդ՝ այդ արտահայտությունը տեղ է գտել քրիստոնյա պատմիչի յերկում։

Նախատական այդ «այծը» հայկական կենցաղի, տնտեսության և պաշտամունքի մեջ մինչև վերջերս էլ մեծ նշանակություն է ունեցել։ Բավական է հիշել հայկական լեռնաստանի (Մոկս, Շատախ և այլն) «չուռ» այծը և նրա տնտեսական մեծ նշանակությունը բնակիչների համար։

Մեռելների տարեգլուխը Հայաստանի բազմաթիվ գավառներում սուրբ Խաչի տոնն է։ Այդ օրը տարվա ընթացքում մեռածների հարազատներն ու բարեկամները հավաքվում են հանգստարանում և ճաշ են տալիս։ «Սա Todenspeisung-ի մնացորդ է, հաղորդում է ինձ ազգագրագետ Ս. Տ.-Հակոբյանը։ Այդ օրը մատաղացու կենդանիների մեջ ամենից նախընտրելին է ուլը»։ Այդ սովորությունը մի մնացորդ է տոտեմական հասկացողությունների՝ կապված նախնիների պաշտամունքի հետ։

Խոյի և Նոխազի (քոշի) քանդակներ կան նաև արվեստի մեջ։ Լենինգրադի Պետական Էրմիտաժի Արևելյան բաժնի Սասանյան հատվածում կան բազմաթիվ արծաթի սինիներ խոյի քանդակներով, վորոնք վերաբերում են Սասանյանների դարաշրջանին։ Այժմ էլ Հայաստանի հին հանգստարաններում կան բազմաթիվ խոյակերպ քանդակած գերեզմանաքարեր։ Այդ քանդակների մանրամասն հետազոտությունը լավագույն դրվագը կը լինի Հայաստանի քանդակագործության պատմության։

Բեռլինի Altes Museum-ում, Ս. Տեր-Հակոբյանի վկայությամբ, պահվում է մի Թանգարժեք վոսկի սափորի ունկ, վորը վոտների վրա կանգնած մի քոշ է։ Այդ ունկը գտնված է Հայաստանում, հայկական ծագումն ունի, և, ըստ յերևույթին, պաշտամունքային սափոր է յեղել կամ արքունական տոհմային նվիրական մի զարդ։

Հետաքրքրական են այս կապակցությամբ նաև հայկական և ուրիշ ազգերի հեքաթները, վորոնց մեջ հերոսներին հետապնդում են կամ օգնության հասնում խոյերը կամ Նոխազները։

Այս հեքաթային սյուժեն շատ հետաքրքրական է տոտեմիստական աշխարհայեցողության վերլուծության կապակցությամբ։

Թվում է, վերը բերված բոլոր փաստարկումներից և վկայություններից հետո իրավունք ունենք հավանական համարելու մեր հիպոթեզը, թե խոյն ու Նոխազը տոտեմներ են, ընդ վորում Խոյը Սասանյանների տոտեմն է, իսկ Նոխազը՝ Պահլավ-Արշակունիներինը։

«Կարնամակ»-ի թվարկած վիպական մոտիվներն ունեն իրենց զուգահեռները մեր հին ու նոր վեպի մեջ։ Դրանց մի մասը շրջիկ մոտիվներ են, մյուսը՝ հայ-իրանական միջավայրում (մինչ արաբական շրջան) վիպած, ստեղծված (նկատի ունենք բովանդակությունը և վոչ թե վիպական ձևը) և յերրորդը՝ Ֆիրդուսու «Շահ-Նամե»-յի ազդեցությամբ՝ միահյուսված հայ ժողովրդական վեպի հետ։ Այդ տեսակետից մանավանդ հետաքրքրական են հետևյալ եպիզոդները, վորոնք վիպական զուգահեռներ ունեն «Սասնա ծռեր»-ի մեջ և մեծապես նպաստում են մեր «ծռերի» կյանքի ու կենցաղի մի շարք վիպական-առասպելական էջերը լուսաբանելուն։

1. Արտաշիրի կռիվը Haftânbôcht-ի հետ — Սանասարի կռիվը վիշապի հետ.

2. Արտաշիրի, Շապուհի և Վորմզդի ամուսնությունները — Դավթի ամուսնությունը.

3. Շապուհի և Վորմզդի ծնունդն ու մանկությունը — Դավթի ու Պստիկ Մհերի ծնունդն ու մանկությունը.

4. Արտաշիրն Արտավանի արքունիքում — Դավիթը Մսրա Մելիքի «տանը» և այլն[1]։

Այս ամենը սովական ողակներն են այն յերկար, կուռ շղթայի, վոր կոփվել է Հայաստանի ու Իրանի ժողովուրդների կուլտուրական և դրացիական հարաբերությունների ընթացքում ու իր թանձրացած սինթեզն է գտել «Սասնա ծռեր» հայ ժողովրդական վեպի մեջ։

Այժմ պարզենք, թե ինչ հարաբերության մեջ է Խորենացին «Կարնամակ»-ի հետ։

1 Պատրաստում ենք հայ ժող. վեպի վերլուծությանը նվիրած մի ուսումնասիրություն, վորի մեջ հիմնավորում ենք այստեղ հայտնած տեսակետները։

Խորենացու և «Կարնամակ»-ի տվյալների նմանությունները ու տարբերությունները ցույց են տալիս, վոր մեր պատմագիրը ծանոթ չի յեղել «Կարնամակ»-ի մեր ձեռքը հասած խմբագրությանը. վոր թե առաջինն և թե յերկրորդն իրենց նյութերը քաղել են միևնույն իրադարձությունները նկարագրող յերկու տարբեր աղբյուրներից և նյութն էլ մշակել են յերկու իրար բացասող ու հակադիր ուղղություններով, միտումներով: Խորենացին Իրանի պատմության մեջ շրջադարձ կազմող խոշորագույն իրադարձությունները նկարագրելիս՝ շեշտը դրել է առասպելականի վրա, գունավորել է այն, վորպեսզի յերևան հանի Հայաստանի «բնիկ տերերի» — Արշակունիների վոխերիմ թշնամի Սասանյանների գահակալության ապօրինությունն ու անբարոյական միջոցառումները գահը զավթելու համար («պոռնկական խորհուրդն Արտաշրի հանդերձ սպանութեամբք» — նման բան չկա «Կարնամակ»-ի մեջ) և հեգնում ու ծաղրի յե յենթարկում նրանց «անմիտ բարբաջմունքը»: Հայ պատմագրին հակառակ է վարվել պարսիկ մատենագիրը — «Կարնամակ»-ի խմբագիրը: Ապրելով Սասանյան հարստության ամենածաղկած դարաշրջանում, նա ի մի յե հավաքել այն ամենը, ինչ վոր կար Սասանյան հարստության հիմնադիրների մասին Պարսից արքունական դիվաններում (գուցե և տոհմական ավանդություններում), գրի յե առել պարսիկ ժողովրդի զրույցները, ապա մշակել է, շեշտը դնելով այն ամենի վրա, ինչ վոր հիմնավորում է Սասանյանների գահակալության որինականությունը, ժառանգական իրավունքը գրավելու Կայանիների գահը: Սասանի և Արտաշիրի պայքարին ընդդեմ Պարթևների նպաստում են և՛ կրոնը, և՛ Churrak i Kajân (die Majestät d. Kajânier), և՛ Իրանի բնակչությունը՝ ազնվականությունն ու գյուղացությունը, և՛ անձնական բարեմասնությունները, հերոսությունը և՛, վերջապես, ամուսնությունն Իրանի նախկին տերերի՝ Արտավանի և Միհրակ-Անուշզադատի Իրանում մնացած որինական ժառանգ — աղջիկների հետ (Արտաշիրի կինը — Շապուհի մայրը Պարթև Արտավանի աղջիկն է, իսկ Շապուհի կինն ու Որմզդի մայրը՝ վոխերիմ թշնամի Միհրակ Անուշզադատի աղջիկը)[1]:

[1] Լեգիտիմացիայի այս տենդենցն է առաջնորդել «Գրիգորի պատմու-

Ֆիրդուսին իր «Շահ-Նամե»-ի մեջ այս եպիզոդը «Կարնամակ»-ի տենդենցի համեմատ է գեղարվեստական վերամշակության յենթարկում: Դեռ ավելին: Յեթե «Կարնամակ»-ը Սասանյանների որոք կազմված լինելով՝ գովերգում է իր տերերի հարստության հիմնադրին, ապա Ֆիրդուսին, վոր մոտ կես հազարամյակ հետո յե գրել, այն էլ հայրենի Իրանի վոչ-աշխարհակալական շրջանում, ռոմանտիքական եկստազի մեջ իր հանճարի ամբողջ կարողությունն է հանդես բերում հակադրելու «հզոր» Սասանյաններին «թույլ և վոչ հարազատ» Պարթևներին, հիմնավորելու առաջինների առավելությունն ու բնական-որինական գահակալական իրավունքները:

Խորենացին անպայման անկախ է յեղել «Կարնամակ»-ից: Այս բոլորից հետո տեսնենք, թե ինչ աղբյուրից է օգտվել հայ պատմագիրը:

Խորենացու տեղեկություններն Իրանի այդ դարաշրջանի իրադարձությունների մասին այնքան վայրիվերո յեն, մակերեսային, այնքան նվազ պատմական — իրական, ժամանակագրությունն այնքան խանգար, վոր դժվար է ընդունել միայն գրավոր, այն էլ համարյա ժամանակակից, ինչպես կարելի յե յեզրակացնել իր «պատմությունից» (II, Հ.), վորևե աղբյուր: Խորենացին կամ նրա Ռաստոռհուն աղբյուրն Իրանի 224—379 թ. թ. (հ. ք.) ժամանակաշրջանի պատմությունը բոլորովին աղճատ է նկարագրում: Այդտեղ խանգարված են և՛ դեպքերն ու դեմքերը, և՛ փաստերն ու իրադարձությունները: Դժվար է յերևակայել, վոր «Ճշմարտախոս» (Ռաստոռհուն) կոչվող պատմության մի մատյան այդքան անծանոթ լիներ այդ դարաշրջանի Իրանի պատմությանը. դժվար է նմանապես ընդունել, վոր այդ «մատյանը»

թյան» հեղինակին-խմբագրողին, յերբ վերջինս ձգտում է Գրիգորի ծագումը սերել Պարթևներից, այսինքն՝ Հայաստանում գահակալող հարստության տոհմից, իսկ նրա քարոզչության իրավունքը կապել Թադեոս առաքյալի հետ... «և զնորին առաքելոյն (Թադէի) շնորհսն ընկալեալ որ առ հանգստարանաւ նորին զլինելութիւն էառ՝ զնորին ելից զհոգևոր մշակութեանն պակասութիւն»: ... «Շնորհօք առաքելոյն (Թադէի) ստեղծանել կամ լուսաւորել ասեմք յարգանդի մօրն, զառաքելութեան իւրոյ զշնորհս ի ձեռն տալով նմա» (Խորեն., II, ՀԴ, յերես 212): Այդ մասին մանրամասն խոսում ենք մեր «Լուսավորչի վեպը» ընդարձակ ուսումն. մեջ (անտիպ) — Կ. Մ.-Ո.

գրած լինի ազգով պարսիկ մի մատենագիր և ավելի անհասկանալի չի Խորենացու այն պնդումը, վոր այդ մատյանը թարգմանել ե Շապուհ II-ի դպիր Խոռոհբուտը, վորն ի պաշտոնե քաջ ծանոթ պիտի լիներ և՛ արքայից արքայի դիվանին, և՛ իր նախկին տիրոջ Շապուհի ու սրա նախնիների իրական պատմությանը։

Բայց և այնպես Խորենացին չէր կարող համարյա մեկ ու կես դար ընդգրկող ժամանակաշրջանի պատմություն հորինել։ Անտարակույս, նա ունեցել ե մի համառոտ, անստույգ, այն էլ վոչ պարսկի ձեռքով գրած մի պատմություն, վորի հեղինակը գուցե ոգտվել ե նաև «Ռաստասոհունի մատյանից» ու կենսագրական տեղեկություններ տվել վերջինիս մասին։ Այդ աղբյուրը հիմք ընդունելով, նա ինքն էլ իր հերթին, ըստ իր սովորության՝ միացրել ե այդ տվյալներին այն տեղեկությունները, վոր քաղել ե Արտաշիրի մասին Հայաստանում տարածված բանավոր զրույցներից, առասպելներից ու հայկական գրավոր աղբյուրներից, որինակ՝ Ագաթանգեղոսից և Անանունից (=Բուզանդի Ա. դպրություն) և այլն։

Մեր նպատակից դուրս ե, հոդվածի ծավալն էլ չի ներում մեզ ցույց տալու, թե ինչպես ե Խորենացին ոգտվել հիշածս աղբյուրներից։ Այդ մի հատուկ խնդիր ե և շատ կարևոր, ասենք, հենց Խորենացու պրոբլեմը լուծելու համար։ Այստեղ հարկ եմ համարում հիշատակելու, վոր Խորենացին, ոգտվելով Ագաթանգեղոսից, ծանոթ չե Արտաշիրյան վեպի Ագաթանգեղոսի վարիանտին (հույն վերսիայի առաջաբան)։ Խորենացու և Ագաթանգեղոսի Արտաշիրյան վեպի վարիանտներն իրարից անկախ են։ Դա նշանակում ե, վոր Ագաթանգեղոսի պատմությունից այդ վարիանտը Խորենացու ժամանակ հանված, կրճատված ե յեղել։ Սա մի terminus post quem non-ե և՛ Ագաթանգեղոսի խմբագրություններից մեկի և՛ Խորենացու դարաշրջանը վորոշելու համար։

5

«Կարնամակ»-ի վիպական մոտիվների արձագանքը գտնում ենք նաև Փավստոս Բուզանդի պատմության մեջ։

Խոսքս վերաբերում ե Ագաթանգեղոսի հույն առաջաբանի և Բուզանդի պատմության հետևյալ հատվածին։

Արտաշիրի առաջնորդությամբ Պարսից իշխանները, «քանզի ցանկային թօթափել զլուծ տէրութեանն Պարթևաց, և յիւրեանց ի բնիկ ազգատոհմէն Պարսից ունել զոք թագաւոր,... դեսպանս արձակեցին նախ առ արքայ Արտաւան զՃիկ և զԿարէն [1], զտանուտեարս գլխաւոր նահապետութեանց և զզօրավարս զօրաց»։

Արշակ թագավորից դժգոհ «մեծամեծ նախարարք, կուսակալք...» հավաքվում են ու դիմում վոչ թե Արշակին, այլ Ներսես կաթողիկոսին։

Յեվ պարսից իշխանների դեսպանները, և՛ հայ նախարարները բացարձակապես դժգոհ են իրենց արքաներից և պահանջում են սրանց հրաժարականը։

Մեջ բերենք այդ եպիզոդի զուգահեռ հատվածները։

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

... «Ասեն. «Փոյթ պնդութեան է, արքայ, առ մեզ Պարսիկս՝ ծառայից հպատակ կալ արքայի, իբրու գոլով նորուն ամենայնի տէր. և թագաւորին՝ հաւասարութեամբ և արդարութեամբ լինել իրացն խնամատար, և հեռի ի խժդժագոյն բարուց կառավարել. ահարկու առ թշնամիսն երևել և մարդասէր առ հպատակս։ ... Արդ մեր ի վերայ հասեալ ծանր-ծանր վնասուց քոյոցդ յանցանաց, ի բաց որոշեցաք զմեզ ի քումմէ իշխանութենէդ. ոչ ի հպատակութենէն տաղտկացեալք, այլ յապիրատ թագաւորէն խուսափեալք. ոչ զբռնաւորութենէ բուռն հարեալք, այլ անարգութեան մտաց բռնաւորի տանել չկարացեալք»...

Հայեցեալ (Արտաւան) ապա առ պատգամաւորսն ասէ. «Ես ինքն եմ պատճառք չարեացս, զի զոմանս ի ձէնջ իշխանութեամբ և աւագութեամբ մեծարեցի, զայլս ընչիւք ճոխացուցի, և

ԲՈՒԶԱՆԴ

... «Ասեն. «Դու, տէր, քեզէն գիտես, զի այս երեսուն ամ է թագաւորին մերոյ Արշակայ, զի ոչ մի ամ մեզ հանգիստ ոչ եղև ի պատերազմէ. և համակ սրով և սուսերօք և ի սլաքս և ի տէգս նիզակաց զբրտունս երեսաց մերոց ջընջեցաք։ Եւ արդ ոչ կարեմք այսմ դժոյժ ունել, և ոչ այլ կարեմք տալ ճակատս զի լաւ է մեզ՝ թէ ծառայեսցուք մեք թագաւորին Պարսից որպէս ընկերքն մեր արարին... և մեք սոյնպէս առնելոց եմք, զի ոչ այլես կարեմք կռուել...

... Յայսմիկ Հայոց աշխարհէս և ոչ մի այր, ոչ ոք է երթալոց ի թիկունս օգնականութեան նորա։

... Ներսէս խօսէր... «Երթէ տեսէք և քաջ զմտաւ ածէք, և հիշեցէք զբանն տեառն պատուիրանին միաբանութեամբ որպէս պատուիրեացն ծառայից՝ հնազանդ կալ տերանց իւրեանց։ Զի ամենեքեան դուք աւագիք կայք և վկայէք, մանաւանդ

[1] Այս անունները քաջ ծանոթ են նաև Բուզանդին (IV, ծե)։

գլխովս արքունի պարգևօք ագարակաց և կալուածոց տեարս կացուցի»... [1]:

զի ամենեքեան դուք կեցեալ էք յազգէդ Արշակունոյ. ոմանք ի ձէնջ գաւառատեարք լեալք ի նոցանէն, և ոմանք մեծամեծք աշխարհաց, ոմանք աւագ աւագաւանաց, գեղից և գանձուց տեարք լեալ էք, և պէսպէս զաստակերտացն: Զի թէպէտ և առ արքային աստուած յանցաւոր ի ցեղ պեղծ ազգն Արշակունեաց, սակայն զձեզ կեցուցեալ զամենեսեան և յազգս թօթափեալ է, զոմն զործով, զոմն պատուով, զոմն իշխանութեամբ, զոմն զործակալութեամբ»[2]:

Այստեղ մեզ հետաքրքրողը բառերի ու վոճերի նմանությունը չէ, այլ այն, վոր Իրանի և Հայաստանի պատմական իրադարձությունններից յերկուսը, նման լինելով իրենց բովանդակությամբ և զարգացման հաջորդականությամբ, նման են նաև իրենց նկարագրով, վիպական կառուցվածքով և ձևով: Յեթե նկատվում են և վորոշ տարբերություն մոքերի և արտահայտությունների մեջ, այդ էլ պետք է վերագրել, նախ՝ Ագաթանգեղոսի հույն առաջաբանի լակոնիկ, զուսպ շարադրանքին, և Գ. Զարբ.-ի թարգմանության վոչ կենդանի արվեստական լեզվին և ապա Բուզանդի կենդանի խոսակցական և վիպական պարզ արտահայտության ձևին ու գլխավոր դերերի փոփոխության: Ագաթանգեղոսի վերսիայում Արտավանն է նախատում և հանդիմանում ապստամբ իշխաններին ու դեսպաններին, իսկ Բուզանդի մոտ Արշակի փոխանակ հանդես է գալիս Ներսես կաթողիկոսը, վորը, հասկանալի յե, իր ճառը պետք է համեմեր քրիստոնեական բարոյագիտության սկզբունքներով:

Արդ՝ վորտեղի՞ց, ի՞նչ աղբյուրից է վերցրել Ագաթանգեղոսն Արտավան-Արտաշիրյան պայքարի այս դեսպանության միջադեպը:

Մեր ձեռքը հասած պահլավերեն «Կարնամակ»-ը, ինչպես և Ֆիրդուսին իր Արտաշիրյան հատվածում, չունեն նման դեսպանագնացություն և բանակցություն Արտավանի հետ: Մնում է

1 Ագաթանգեղոս, հույն առաջաբան, ԿԲ և ԿԳ.

2 Բուզանդ, IV, ծա, յերես՝ 136—137.



Բահմանի պատճառած վիշտը Քեյ-Խոսրովին

միայն ընդունել, վոր այդ եպիզոդի համար Ագաթանգեղոսը կամ մի ուրիշ գրավոր աղբյուր է ունեցել, — նման աղբյուր հայտնի չէ մեզ, — կամ օգտվել է Իրանի այդ իրադարձությունների մասին Հայաստանում տարածված զրույցներից։ Վերջին յենթադրությունը ամենահավանականն է. չէ՞ վոր, ինչպես տեսանք, Իրանի առասպելներն ու զրույցները պատմվում էին Հայաստանում։ Մեզ հավանական է թվում նաև այն, վոր Բուզանդը կամ նրա աղբյուրն (գրավոր այդպիսի աղբյուր չգիտենք, յերևի բանավոր է յեղել) օգտված պիտի լինի այդ զրույցներից, բայց վոչ անմիջականորեն Արտաշիրյան ցիկլից, այլ միջնորդաբար, Արշակի անվան հետ կապված վիպական ցիկլից, վոր ժամանակագրորեն ավելի ուշ կազմվելով՝ կոնտամինացիայի կարգով յուրացրել է նախորդ շրջանի վիպական ցիկլերի վոճն ու յերանգը։ Արտավանի և Արշակի վիպական կյանքի այս եպիզոդիկ նմանությունը՝ ըստ իս՝ առաջացրել է իշխող քաղաքական-սոցիալական հարաբերությունների համեմատ նաև նման վիպական ձևակերպում։ Հոգևորական Բուզանդն էլ իր հերթին Ներսեսի խրատը խմբագրել է քրիստոնեական բարոյագիտության վոգով և մոտապատկերներով։

Բուզանդը ծանոթ է Արտաշիրյան վեպին։ Նա իր պատմության, ինչպես և Անանունի մեջ, վորի նախնականն ամենայն հավանականությամբ Բուզանդի առաջին դպրությունն է յեղել, մի շարք ակնարկներ ունի այդ իմաստով։ «Բուզանդարան»-ի ակնարկներից հիշենք գոնե մեկը. «Ի բաց կաց յինէն ծառայ չարագործ տիրացյալ տերանցն քոց. այլ ոչ թողից զքեզ և որդւոց քոց զվրէժ նախնեաց իմոց, և զմահն Արտաւանայ արքայի» (IV, ԾԴ)։

Այդ ակնարկների, ինչպես նաև Բուզանդ-Անանունյան հարցի քննությունը ներկա աշխատության նպատակներից դուրս է։ Դրանով կը զբաղվենք մի ուրիշ անգամ։

6

Պահլավի գրականության վիպական-առասպելական անդրանիկ գործերից մեկն էլ «Յատկար-ի Զարիրան»-ն (Yâtkâr-i Zarirân) է[1]։

---

1 W. Geiger «Das Yâtkar-i Zarîrân und sein Verhältnis zum Šah-name

Այս գործը, ինչպես արդեն հիշել ենք, նկարագրում է Իրանի պատմական կյանքի խոշորագույն իրադարձություններից մեկը, այն է՝ Զրադաշտականության հաղթանակն Իրանում Վշտասպ (Vištasp) թագավորի ժամանակ և վերջինիս առաջնորդությամբ զրադաշտական անդրանիկ պատերազմը հին կրոնի կողմնակիցների—Խիոնի (Xyon) իշխան Արջասպի (Arjâsp) դեմ։

«Յատկար-ի Զարիրան»-ը, այդ վիպախառն պատմությունը, Սամանիդների օրով և նրանց պալատում 976 թ. տաղանդավոր զրադաշտական-բանաստեղծ Դակիկին վերամշակել է և գրել շուրջ 1000 բեյթ վոտանավոր, վորը, ինչպես ասացինք, տեղ է գտել Ֆիրդուսու «Շահ-Նամե»-յում։

Նվիրական նշանակություն ունեցող այս պատմությունը Th. Nöldeke-ի և W. Geiger-ի կարծիքով գրված կամ խմբագրված պիտի լինի մոտ 500-ական թվականներին (ք. հ.), այսինքն՝ նկարագրված իրադարձություններից շուրջ մի հազարամյակ հետո։

Վշտասպի և Արջասպի պատերազմը փաստորեն սկիզբն ու նախերգանքն է այն հազարամյա պայքարի, վոր մղում է Ահուրամազդան Ահրիմանի դեմ, Իրանը՝ Թուրանի դեմ։ Բնական է, վոր Ահուրամազդային պաշտող բոլոր յերկրների ու ժողովուրդների մեջ Իրանի պատմության այդ սկզբնական եպիզոդը հիշվեր և ավանդվեր սերնդից սերունդ։ Արամազդյան Հայաստանը բացառություն չեր կարող լինել։ Մինչև քրիստոնեության տարածումն ու պետական կրոն դառնալը՝ հայերը դարեր շարունակ կողք-կողքի յեն ապրել իրանցիների հետ, ժառանգել են նրանց հոգևոր կուլտուրան՝ կուլտը, զրույցն ու առասպելը և այլն, և յուրովի, հարմարեցրած հայկական պայմաններին՝ մշակել են ժառանգածը, հաճախ նոր բովանդակություն և նոր ձև տալով նրանց։ Ստեղծված նորն էլ միանգամից չի վերանում քրիստոնեության հաղթանակով, այլ կրկին վերամշակվում է, տրանսֆորմացիայի յենթարկվում և արդեն հանդես է գալիս նոր մարմնով ու նոր տարազով, «քրիստոնեական» հերոսական բովանդակությամբ և արտաքին պահանջներով, ձևով։

(Sitzungsberichte der kön. bayer. Akademie der Wissenschaft philos.-philol. Classe), München, 1890; Th. Nöldeke, «Persische Studien». Wien 1892, յերես 1—12.

Ցելնելով այսպիսի ըմբռնումից, մենք կարծում ենք, վոր «Յատկար-ի Զարիրան»-ի մոտիվներից և եպիզոդներից մի յերկուսը նույնպես ընդունված են յեղել Հայաստանում։ Դրանք արմատ են ձգել այս նոր միջավայրում և սիրով մշակվել են ու սերունդներին ավանդվել։

Այդ եպիզոդների զուգահեռները մենք գտնում ենք Բուզանդի և մեր մյուս մատենագիրների յերկերի մեջ։ Այստեղ մենք զանց կ'առնենք մյուս մատենագիրների տվյալներն ու կը զբաղվենք միայն Բուզանդով։

Նախ, տանք մի յերկու խոսքով «Յատկար-ի Զարիրան»-ի բովանդակությունը, ապա անցնենք նրա մոտիվների համեմատությանը Բուզանդի համապատասխան հատվածների հետ։

Վշտասպը յուրայիններով և ավագանին ընդունում են Ահուրամազդայի կրոնը։ Այդ լուրը շատ է անհանգստացնում Խիոնի իշխան Արջասպին, վորը կախարդ (Zauberer) Վիդրաֆշի և Նամխվաստի միջոցով թուղթ է ուղարկում Վշտասպին և առաջարկում նրան՝ հրաժարվել Ահուրամազդայի կրոնից, նորից դավանակից դառնալ, վորի փոխանակ խոստանում է ճանաչել նրա գերիշխանությունն և տարեցտարի հարկ վճարել, իսկ հակառակ դեպքում սպառնում է հարձակվել նրա վրա և «das grüne Korn aufzehren und das dürre verbrennen, Tiere und Menschen aus dem Reiche gefangen fortführen und euch in der Knechschaft schwere Bedrückung auferlegen» (համմ. Մսրա Մելիքի սպառնալիք-պատվերը Ձենով Հովանին (Բեռի Թորոսին) — «Սասնա ծռեր» ժողովրդական վեպ)։

Վշտասպը մտահոգվում է։ Նրան այդ ծանր վիճակից հանում է յեղբայրը՝ քաջ զորավար Զարիրը։ Սա թագավորի թույլտվությամբ իր պատասխան գրության մեջ բացարձակ մերժում է Արջասպի առաջարկն և տեղ ու ժամանակ է նշանակում ճակատամարտի համար. «Jhr werdet von dort kommen und wir von hier, ihr werdet unser blicken und wir euch», պատասխանում է նա (համմ. Սասունցի Դավթի պատասխանը Մսրա Մելիքին, — «Սասնա ծռեր» ժողվեպ)։

Վշտասպը զորակոչ է հայտարարում. «Auf Hügeln, Häusern und hohen Bergen lasse Feuer anzünden» (բլուրների, տների և բարձր սարերի վրա թող կրակ վառեն), հրամայում է նա Զարի-

րին։ Բացի մոգերից՝ յերկրի բոլոր տղամարդիկ 10—80 տարեկան պետք ե շտապեն Թագավորի դուռը։ «Wenn ihr aber nicht kommen und diesen Galgen auf euch nehmen wollt, werde ich euch an den Galgen hängen lassen» (Յեթե դուք չգաք և այս լուծը չվերցնեք ձեր վրա, ջես ձեզ կախաղան կը բարձրացնեմ), վերջացնում ե նա իր զորակոչի հրամանը։

Զորքը հավաքվում ե, բաժանվում ըստ գնդերի և կազմ-պատրաստ սպասում հրամանի...[1]

Վշտասպը ճակատամարտից առաջ հարցում ե ուղղում իր իմաստուն խորհրդատու — Ջամասպին (Jâmâsp) այդ «աժդահակյան» ճակատամարտի յելքի մասին։ Գուշակությունը բախտավոր չե. բոլոր նշանները չարագուշակ են. մեծ նախճիր ե սպասվում Վշտասպի բանակի շարքերում[2]։ Վշտասպը հոգեպես ընկճվում ե և գահից ընկնում գետին։ Զորավարները, փահլեվանները սիրտ են տալիս նրան. ամեն մեկը պարծենում ե իր ուժով ու կարողությամբ և կատարելիք սխրագործություններով[3]։

Բայց նա գետնից չի բարձրանում։ Այն ժամանակ մոտենում ե հզոր Սպանդ-դատը (հայկ. ձևը՝ Սպանդարատը) և յերդվում ե, վոր խիոնցիներին բոլորին կը կոտորի և չի թողնի՝ մեկը պրծնի, փախչի։ Սրանից հետո յե, վոր Վշտասպը վոտքի յե կանգնում ու իր գահին բազմում։

Վշտասպը կրկին կանչում ե Ջամասպին և հայտնում ե նրան, վոր ինքն ուզում ե հերոսների վոչնչացումը կանխելու նպատակով՝ մի բրոնզյա ամրոց շինել և նրանց բոլորին այնտեղ պատսպարել թշնամիներից։ Ջամասպը նորից հայտնում ե, վոր այդ անհնարին ե. վոր նրանք թշնամիներին ջարդելով ե, վոր պիտի ընկնեն, վոր խիոնցիներից միայն Արջասպն ե վերադառնալու,

1 Այս զորահավաքը և ըստ գնդերի բաժանվելը նկարագրված ե գերազանց վիպական գույներով և, թվում ե, թե ժողովրդական յերգերից ե բառացի քաղված։ Զարմանալի նմանություն Մսրա Մելիքի զորահավաքի հետ մեր «Սասնա ծռեր» ժողվեպի մեջ։

2 Համեմատիր «Սասնա ծռեր» ժողվեպի մեջ Մսրա Մելիքի մոր յերազի հետ։

3 Հմմտ. Մսրա Մելիքի զորավարների-փահլեվանների պարծենկոտ խոստումների հետ. նաև Մեհրուժանի, Ուռնայրի և պարսիկ զորավարների հոխորտանքները Հայաստանն ու Վասակի, Մուշեղի գնդերը վոչնչացնելու մասին Փ. Բուզանդի պատմության մեջ։

այն էլ այլանդակված, մեր նոր վիպասանների լեզվով ասած «աշլաջոր» դառած։

Սարի գագաթին նստած Վշտասպի վորոշմամբ ճակատամարտն սկսվում ե։

Նախահարձակ ե լինում սպարապետ քաջ Զարիրը և սոսկալի նախճիր գործում։ Արջասպը սարի գագաթին բազմած սոսկում ե այդ տեսարանից։ Նա խոստանում ե Զարիրի սպանողին կնություն տալ իր Զարստան դուստրը։ Արջասպի հրավերն ընդունում ե կախարդ Վիդրաֆշը և թունավոր նիզակով թիկունքից նենգաբար սպանում ե Զարիրին։

Վշտասպը սարի գագաթին նստած՝ այլևս չի տեսնում քաջ Զարիրին։ Նա նախազգում ե, վոր Զարիրն սպանված ե։ Սա էլ Արջասպի նման խոստանում ե Զարիրի վրեժն առնողին կնություն տալ իր Հումակ դուստրը և նվիրել Զարիրի պալատն ու նշանակել սպարապետ։ Նրա խոստմնալի կոչին արձագանքող չկա հերոսների շարքում։

Զարիրի յոթ տարեկան տղա Բաստվարն ե հանդես գալիս և ուզում ե ստուգել իր հոր մահվան լուրը։ Վշտասպը խորհուրդ չի տալիս և արգելում ե Բաստվարին կռվի դուրս գալ։ Բաստվարը գաղտնի ձի յե պահանջում ախոռապետից, ստանում ե, հեծնում ու խառնվում ճակատամարտին։

Թշնամիներին կոտորելով ու ճանապարհը հարթելով՝ նա հասնում ե աղետի վայրը, տեսնում դիակը և վողբում իր հոր մահը։ Ապա վերադառնում ե և բոթը հաղորդելով Վշտասպին, խնդրում ե թույլ տալ, վոր վերադառնա ռազմի դաշտն և իր հոր վրեժն առնի։ Ջամասպի խորհրդով Վշտասպը համաձայնում ե, օրհնում ե Բաստվարին և տալով նրան մի նետ՝ ճանապարհ ե դնում թշնամու դեմ։

Արջասպը տեսնում ե Բաստվարի գործած նախճիրը, սարսափում ե, վոր յեթե այսպես շարունակվի, խիոնցիներից այլևս մարդ չի մնա։ Նա կրկին խոստանում ե մանուկ Բաստվարի սպանողին կնություն տալ իր Բաշտան դուստրը և նրան դարձնել Խիոնի գերագույն պաշտոնյա։

Արջասպի պատվերը հանձն ե առնում կատարելու Զարիրի սպանող Վիդրաֆշը։ Բաստվարն ու Վիդրաֆշը հանդիպում են իրար։ Բաստվարն սպանում ե նրան և ձեռքից խլում Զարիրի

ձին, հեծնում է, իր ձին էլ հետը քշելով, ջարդելով թշնամիներին, հասնում է քաջ հերոս Սպանդ-դատին։

Իրանցիները կոտորում են բոլոր խիոնցիներին. մնում է միայն Արջասպը, որին Սպանդ-դատը գերի չի բռնում, այլանդակում և ճանապարհ դնում Խիոն՝ Սպանդ-դատի սխրագործությունները պատմելու։

Սրանով վերջանում է այդ վերին աստիճանի հետաքրքրական և տեղ-տեղ գեղարվեստական գրական հուշարձանի բովանդակությունը։

«Յատկար-ի Զարիրան»-ի վիպական մոտիվներն այնքան զուգահեռներ ունեն Բուզանդի պատմության մեջ, տեղ-տեղ այնքան նման են, անգամ բառացի հայ և պարսիկ աղբյուրների եպիզոդները, որ հարկ ենք համարում դրանցից գոնե մի քանիսը մեջ բերել, նրանց տեքստերը կողք կողքի դնելով։

Ա.

ՅԱՏԿԱՐ-Ի ԶԱՐԻՐԱՆ

Բ.

ԲՈՒԶԱՆԴ

Հակառակորդ թագավորները չեն մասնակցում ճակատամարտին. ըստ յերկու աղբյուրների էլ նրանք լեռների վրա նստած դիտում են ճակատամարտի ընթացքը։

«König Viȿtâsp setzte sich nun auf dem Gipfel eines Berges nieder, und er hatte mit sich eine Streitmacht... Und Arjâsp... liess sich ebenfalls auf dem Gipfel eines Berges nieder, und er hatte mit sich eine Streitmacht...» [1]

«Der reisige Heerführer, der tapfere Zarir, begann den Kampf so ungestum, wie wenn der Genius des Feuers auf ein Röhricht sich stürzt, und der Sturmwind ihm beisteht. Wenn er mit dem Schwerte vorwärts schlug, totete er zehn Xyon, und wenn er es zurückzog, elf...» [2]

«... Թագաւորն Պապ հաւանեցաւ..., առ ընդ իւր մեծ քահանայապետն Ներսէս, և ելանէր նստէր ի վերայ Նպատական լերինն, և ամէն զօրքն Յունաց և Հայոց իջանէին ի տեղի պատերազմին։...

Իսկ թագաւորն Պապ և եպիսկոպոսապետն Ներսէս կային ի վերայ Նպատ լերինն»...։ [1]

Եւ հեծանէր իւրով գնդաւն հանդերձ... յաջում թևի նա խաղայր յառաջ...

... Խաղացեալ ճակատեալ իբրև զհուր ամենայն զօրքն Հայոց ընդդէմ զօրաց Պարսից... [2]

... Եւ կամ մոլեկան գունդն Մուշեղեան, զի ինձ այսպէս թուէր՝ եթէ հուր-բոց ի գնդէն ելանիցէր և ի

1 W. Geiger, o. c. յէր. 59.
2 Անդ, յէր. 59—60.

1 Բուզանդ, V, դ,
2 Բուզանդ, V, դ.

Արջասպը խոստանում է Զարիրի սպանողին տալ՝
«meine Tochter Zarstan zum Weibe»
և նշանակել նրան
«Zum obersten Minister über das ganze Reich der Xyôn» [1]։

Վիդրաֆշը կատարում է Արջասպի պատվերը և սպանում խոստացածը։

Լեռան գլխին նստած Վշտասպը մտահոգված է. նա կարծում է, որ Զարիրն սպանվել է ռազմի դաշտում.

«Darauf hielt König Vistâsp Umschau von dem Gipfel des Hügels und sprach: Jch bin in Besorgnis, denn mich befällt die Ahnung, dass uns getötet worden Zarir, der Heerführer der Jranier; denn nicht mehr dringt zu meinen Ohren der Kampf der Bo-

1 Անդ, յէր. 60.

նշանացն, իբրև ի հուր հրդեհի այնպէս անցանէր ընդ գունդն որպէս բոց ընդ եղէգն [1]։

Վահան Մամիկոնյանն ուրանում է քրիստոնեությունը, ընդունում է Ահուրամազդայի կրոնը,

«և մատուցանէր ևս ամբաստան զբըրգութիւն զարքայէն Հայոց Արշակայ, և զիւրմէ տանուտեառնէն Վասակայ... և ետ նա (Շապուհ) կին Վահանայ զՈրմիզդուխտ քոյր իւր. և շնորհեաց նման բարձ և զպատիւ... և մեծարեալ փեսայ արար զնա իւր թագաւորն. և ի մէջ զօրաց իւրոց չքնաղացոյց զնա [2]։

Ըստ Մ. Խորենացու.

«Եւ տուեալ նմա (Մերուժանայ) կին զքոյր իւր զՈրմիզդուխտ,... և խոստացաւ տալ նմա զՀայոց թագաւորութիւնն, միայն թէ զնախարարսն նուաճելով ի դէն մազդեզանց զաշխարհս դարձուցէ [3]։

Մերուժանն ու Վահանն ստանում են պարգևները, ամուսնանում են Շապուհի քրոջ (քույրերի) հետ և խոստանում են կատարել Շապուհի կամքը։

Նպատ լեռան գագաթին նստած Պապը կասկածներ ունի Մուշեղի մասին. նա վախենում է, որ սպարապետը դավաճանի...

«Իսկ թագաւորն Պապ և եպիսկոպոսապետն Ներսէս կային ի վերայ Նպատ լերինն...։ Խաղացեալ ճակատեալ իբրև զհուր ամենայն զօրքն Հայոց ընդդէմ զօրացն Պարսից. իսկ գունդն

1 Անդ, V, ե. Համա. «Սասնա ծռեր».
2 Անդ, IV, ծ.
3 Մ. Խորենացի «Պատմ. Հայոց»III, լզ.

gen und das Schlachtgeschrei der Streiter»... [1]

Զարիրի մահվան վրեժն առնողին Վշտասպը խոստանում է կնության տալ իր Հումակ դուստրը, Զարիրի պալատն ու Իրանի սպարապետությունը: Ավագանին և ազատանին լուռ են. առաջարկը չեն ընդունում:

Վշտասպի առաջարկն ընդունում է Զարիրի յոթ տարեկան տղան — Բաստվարը: Սա ուզում է տեսնել իրանցիների կռիվը ու ստուգել՝ քաջ Զարիրը, իր հայրը, ողջ է, թե՞ սպանված:

Վշտասպը թույլ չի տալիս՝ ասելով,

«Gehe du nicht, denn du bist noch ein Knabe und verstehst noch nicht die Behutsamkeit, die in den Schlachten notwendig ist, und deine Finger sind noch nicht geübt im Entsenden der Pfeile. Jch fürchte, es möchten sonst die Xyon kommen und dich töten, denn sie haben ja auch den Zarir getötet...

Aber Bastvar sprach im Geheimen zu dem Stallmeister (âxursardâr): Vistâsp hat den Befehl gegeben: gebt dieses Pferd dem Bastvar, nachdem Zarir getötet ist.

Und der Stallmeister befahl das Pferd zu satteln, und Bastvar bestieg es, und er trieb das Pferd an und tötete die Feinde, bis dass er an die Stelle kam, wo er seinen tapferen Vater tot erblickte [1].

«Und er zögerte nicht lange Zeit, sondern sprach: Wehe, du Licht meiner Seele, deinen schimmernden Panzer, wer hat ihn davongetragen? Wehe, du Held, deinen Rock, wer hat ihn davongetragen? Wehe, dein dem Greif gleiches Pferd, wer hat es fortgeführt?...

Dies dein... Haar und dein reiner Leib ist von den Pferden zerstampft mit ihren Hufen, und Staub lagert auf deinem Gewand...

Darauf trieb Bastvar sein Pferd an, und er tötete die Feinde, bis dass er vor den König Vistâsp kam, und er sprach zu ihm:... Und tot habe ich gesehen diesen reisigen Heerführer, den tapferen Zarir, meinen Vater» [2].

Բաստվարը Վշտասպից իրավունք է խնդրում «Rache zu suchen für meinen Vater». Վշտասպը թույլ է տալիս. հրամայում է մի ձի թամքել, հանձնում է նրան մի նետ, ապա օրհնում է և ճանապարհ դնում:

Բաստվարը հերոսաբար ջարդում է թշնամիներին: Արջասպն՝ իր լեռան գագաթից տեսնելով այդ ամենը, նորից խոստանում

[1] W. Geiger, o. c., էջ. 61—62.

[1] W. Geiger, o. c. էջ. 62—3.

[2] W. Geiger, o. c. էջ. 63—65.

Մուշեղեան յառաջեալ քան զայլ գունդսըն՝ յառաջամուխ տագնապեալ երթային. մինչ զի նայէր թագաւորն և տեսանէր, զի ըստ ակն անկանէին, մինչ զի ոչ երևէին թագաւորին նշանքն Մուշեղի: Իսկ իբրև չերևել սկսան նշանքն, աղաղակել սկսաւ թագաւորն Պապ առ Ներսէս և ասէ. Դու խլեցեր այրեցեր զխս... ահա ի զօրսն Պարսից անկաւ (Մուշեղ), և արդ մեծամեծս վնաս գործեցէ [1]:

Մերուժանը հարձակվում է Հայերի վրա: Մանուելը պատրաստում է Հայաստանի զորքը: Ճակատամարտից առաջ

«զոլեկլին Արշակունի հանդերձ մանկամբքն Արշակաւ և Վաղարշակաւ, զնոսա և զեւրեանց կանանին ընդ նոսա արձակեալ, յամուր յուղարկէին ի լեառըն մեծ՝ որ անուանեալ կոչի Վարագ: Եւ մանուկն Արտաւազդ, որդի Վաչէի, ընդ կանանին տայր հրաման երթալ Մանուէլ. իսկ նա ոչ հաւանէր, չառնոյր յանձն: Եւ էր նա ի տիոց տղայ. և ըստ մանկութեան օրինի, ըստ կրօնից Հայոց՝ որպէս օրէն էր՝ զգլուխ մանկտոյն (գերծել) սոյնպէս ի ժամանակին գերծեալ էր զգլուխ մանկանն Արտաւազդայ, և ցցունս էր թողեալ և գէս արձակեալ: Այլ իբրև ոչ հաւանեցաւ նա ընդ կանանին երթալ, մտրակ ի վեր առեալ Մանուէլի տանջէր զմերկ զլուխ Արտաւազդայ. սաստէր նմա չերթալ ի պատերազմ վասն մանկութեան ժամանակին տիոց: Իսկ նա առ նորա ակնէ գնաց ընդ նոսա, բայց ապա յետոյ վառեալ կազմեալ պատրաստեալ զկնի պատերազմին:

... Այլ մանուկն Արտաւազդ ի Մանուէլէ գաղտ եկեալ էր ի ճակատն, սակայն վառեցաւ կազմեցաւ և եմուտ զանխուլ ի մանուէլեան գնդէն, առ ափն Եփրատ գետոյն. եհար սատակեաց ի մերուժանեան գնդէ անտի անթիւ բազում սպառազէնս կոտորեաց [1]:

Երբ մանուկ Մհերը լսում է իր հոր՝ Դավթի մահվան բոթը, ասում է.

«Աչքե՛ր, դու կուրներ, տղա-տղա չեթըմնե՛ր,
Ծընդաներ վըր քու խոր Գըլխու գո՛ւտին.
Աչքե՛ր, դու կուրներ, տղա-տղա չեթըմներ,
Ծընդաներ վըր քու խոր Բա՛մա՛րն ը Գողվըտին.
Աչքե՛ր, դու կուրներ, տղա-տղա չեթըմներ,
Ծընդաներ վըր քու խոր Թուրն ը Կեծակին.
Աչքե՛ր, դու կուրներ, տղա-տղա չեթըմներ,
Ծընդաներ վըր քու խոր Շապիկն ը Զրեխլին.
Աչքե՛ր, դու կուրներ, տղա-տղա չեթըմներ,
Ծընդաներ վըր քու խոր Զըրզմեն ը Ուրտնեին.
Աչքե՛ր, դու կուրներ, տղա-տղա չեթըմներ,
Ծընդաներ վըր քու խոր Քո՛ւռիկն ը Ջալալին»:

Կ'ելնի կը յա կըռվու տեղ,
Կը յա վըր խոր լեշին, արուն կը յեռա տեղ.
Ըսաց. «Ով երկնային տեր,
Քանի մ' եղեղեն, վոռձեղեն
Մընչ Շմշիկ Սուլթանի երկրին կա,
Ցես սպանիմ, նոր իմ խոր արուն տա՛տրի»:

[1] Բուզանդ, V, ղ.

[2] Բուզանդ, V, խգ.

և մանուկ Բաստվարի սպանողին մարդու տալ իր Բաշստան աղջիկը և կարգել բարձրագույն պաշտոնյա ամբողջ պետության մեջ:

Այդ առաջարկը նորից ընդունում է կախարդ Վիդրաֆշը: Նա ռազմի դաշտն է նետվում և ուզում է Բաստվարին էլ Զարիրի նման նենգաբար, թիկունքից զարկել և սպանել: Բաստվարը նկատում է այդ և գոռում.

«Verruchter Zauberer! von vorne komm' heran, du Sklave! denn ich denke, ich verstehe es ja gar nicht, ein Streitross zwischen den Schenkeln zu regieren, und ich denke, ich verstehe es nicht, einen Pfeil im Köcher zu führen. Von vorne komm' heran, du Sklave! so will ich dir dein süsses Leben rauben, wie du es dem tapferen Heerführer Zarir, meinem Vater, getan.

Und Vîdrafs der Zauberer... kam heran, von vorne griff er den Bastvar an, und das schwarze eisenhufige Streitross des Zarir, wie es die Stimme des Bastvar vernahm, da stemmte es die vier Beine auf und stiess 999 Schreie aus.

Vîdrafs schleuderte den Spiess, aber Bastvar fing ihn mit der Hand auf.

Da rief die Seele des Zarir; Wirf diesen Spiess aus der Hand und nimm aus deinem Köcher einen Pfeil und gib damit diesem Frevler Antwort.

Und Bastvar warf den Spiess aus der Hand und nahm einen Pfeil aus seinem Köcher und traf den Vidrafs damit ins Herz, dass er zum Rücken wieder herausdrang, und stürzte ihn

Ինչ կա, սպանեց, եկավ.
Կը խփ տեղ մը արուն եւ մէկ կ'եռա:
Կ'երթա, մեկ պառավ կը խփ.
Ձեն եւ ըսպանեց, եկավ վրր խոր
ջանդըկին:
Աւըն, եկան Սասուն [1]:

... «Նշան մի գիտեմ ես զնորա (իմա Մերուժանայ),— ասում է Մանուէլը,— զի յորժամ ի ձի հեծեալ էր, նրան բարձի նորա ոչ յանձին և ի ծունկն ոչ հասանէր, այլ ի բացեայ կայ ի ձիոյ անտի: Արդ եկ զոյգ հասարակ այսմ նշանի ուշ դիցուք, թերևս ճանաչել կարասցուք»... Այդ նշաններով ճանաչում են Մերուժանին. «զի յայլակերպս լեալ էր, զի իւր նշանսն ոչ ունէր: Ապա ձայն տուեալ յառաջ կոչեաց զՄերուժանն Մանուէլ, և ասէ ցնա, թէ՝ Ա՛յ կախարդ, ցե՞րբ խարես զմեզ, և վասն քո և զայլս ես տաս ջարդել, այլ մեք ծանեաք զքեզ, զի աւադիկ կաս, և ապրել քեզ չիք հնար այսօր ի ձեռաց մերոց. զի այսօր էած կատարեաց զչարիս քո տէր աստուած ի գլուխ քո, և մատնեաց տէր ի ձեռս մեր:

Իսկ յորժամ զայն լսէր Մերուժանն, անդէն վաղվաղակի նիզակ առեալ, յառաջ խաղացեալ, ախոյեան եկանէր Մանուէլին (տպ. Մանուէլն): Սակայն յորժամ հարկանէին նիզակօքն, քանզի երկոքեան արքն յաղթք էին, երկոքեան ի ձիոյն յերկիր անկանէին, և անդէն նիզակակիցն Մանուէլի Բաբիկ... հասանէր, նիզակաւ ի վերուստ ի վայր ի կողին կարէր ընդ գետինն. և ոչ կարէր յառնել:

Իսկ զպարապեան Մանուէլ իւր վարուանդապասաքն յերիվարն հանէին, և զՄերուժանայ զգլուխն ի բաց հատանէին. և ամենայն զօրացն լինէր փախուստ

[1] «Թլոր Դավիթ և Մհեր» գրի առավ Սեն. Տեր-Հակոբյան (ձեռագիր):

zu Boden und tötete ihn. Dann wählte er den weissen Schuh des Zarir aus, der mit Perlen und mit gold gestickt war, bestieg selber das Pferd des Zarir und fasste das eigene Pferd mit der Hand [1].

Բաստվարը՝ կոտորելով թշնամիներին, հասնում է Իրանի հզորներին՝ Գարամիկ-քարտին, ապա Սպանդ-դատին: Նրանք միասին կռվում են, անմի յեն անում խիոնցիներին: Սպանդդատը բռնում է Արջասպին և

... «schnitt ihm eine Hand und einen Fuss und ein Ohr ab und brannte ihm ein Auge mit Feuer aus und schickte ihn auf einem Esel, dem er den Schwanz abgehauen, in sein Reich zurück und sprach: Gehe und verkündige, was für Thaten du gesehen hast von meiner, des Helden Spanddat Hand; damit die Xyon erfahren, was sich begeben hat am Tage Farvardin in der Az-dahak Schlacht der Leute des Vistâsp [2].

[1] W. Geiger, o. c. էջ 66—8.
[2] W. Geiger, o. c. էջ 69.

իբրև տեսին, թէ Մերուժանն մեռաւ [1]

Եւ ապա զունդն մանուէլեան խրախոյս առեալ յարձակեցան զհետ մերուժանեան գնդին, հարկանէին սատակէին զնոսա, և զմի ի նոցանէն ոչ ապրեցուցանէին:

Այլ մանուկն Արտաւազդ ի Մանուէլէ զաղտ եկեալ էր ի ճակատն. սակայն վառեցաւ, կազմեցաւ, եմուտ, զանխուլ ի մանուէլեան գնդէն առ ափն Եփրատ գետոյն. եհար սատակեաց ի մերուժանեան գնդէ անտի անթիւ բազում սպառազէնս կոտորեաց: Եւ նշանակիր մի ի Մերուժանայ իբրև ետես զԱրտաւազդն յընչայց քերեայ (տպ. յընչացք երայ) [2], զի տեսանէր զնա պատանեակ մի կայտառ անմօրուս, երեսօք գեղեցիկ, ապա զնշանն զնիզակաւն պատեալ, յարձակեցաւ ի վերայ նորա: Իսկ նա ընդ գիրկս մտեալ, հարկանէր զայն նետիւ, և կարանէ ի կարան թափ հանեալ զնետն՝ ցամաք ընկենոյր զնա: Եւ առեալ զնիզակն զհետ մտեալ փախստէից, ընդ սուր հանեալ զզօրսն Մերուժանայ, աւելի քան զամենեսեան Արտաւազդ որդի Վաչէին մանուկն կոտորէր. և...[3] (դառնայր) ինքն մեծաւ անուամբ և բազում աւարաւ՝ զոր կապուտն թափէին ի զօրաց թշնամեացն [4]:

[1] Հմմտ. Մ. Խորենացի «Պատ. Հայոց» III, Լէ, նաև Հայկի մենամարտը Բելի հետ, I. «Սասնա ծռեր» Դավթի մենամարտը Մսրա Մելիքի հետ:

[2] Նորայր Բյուզանդացի «Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք», Տփղիս 1910, էջ 244—245:

[3] Շարունակությունը պակասավոր է և աղճատ:

[4] Բուզանդ, V, խդ, էջ 215 («Եկին, բերին զայրն նշանակիրն Մերուժանայ, զոր եհարն Արտաւազդ նետիւն. և ամէն որ զարմանայր ընդ այն, զի նետն թափ կարանէ ի կարան անցեալ էր, իբրև տեսին զնա՝ ապրեցաւ ի մահուանէ» (վերջին խոսքը պակասավոր է):

Տեղի սղության պատճառով հնարավոր չենք համարում այս վիպական եպիզոդի համար զուգահեռներ բերել «Սասնա ծռեր» ժողովրդական վեպից: Հետաքրքրվողները կարող են կարդալ «Սասնա ծռեր»-ի հրատարակված վարիանտների և մոտ ապագայում հրատարակելիք ամբողջական ժողովածուի «Դավիթը պատուհասում ե հարկահաններին» գլուխները:

Համեմատության արժանի յե նաև Յովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» համապատասխան վիպական զուգահեռները[1]:

«Յատկար-ի Զարիրան»-ի և Բուզանդի ու «Սասնա ծռեր» ժողովեպի վիպական ընդհանուր մոտիվի և մասնակի եպիզոդների նմանություններն ու զուգահեռները շատ են: Մենք կարող ենք կրկնապատկել մեջբերածը, սակայն այդ աշխատանքը մեր այս սեղմ ծրագրած հետազոտության շրջանակից մեզ հեռու կը տաներ: Հայ-իրանական վեպի հարաբերության մասին մենք ավելի ընդարձակ խոսում ենք մեր «Լուսավորչի վեպը» մենագրական հետազոտության և «Սասնա ծռեր» ժողվեպի գենեզիսին նվիրած ուսումնասիրության մեջ:

Սակայն, ինչ են պարզում թեկուզ վերը բերած զուգահեռները: Կարելի՞ յե այստեղ ել առաջադրել այն յենթադրությունը, վոր բանասիրությունն անում եր «Կարնամակ»-ի և հայ աղբյուրների նմանությունների մասին, այսինքն՝ հայ մատենագիրը՝ Բուզանդը կամ նրա աղբյուրը ծանոթ ե յեղել «Յատկար-ի Զարիրան»-ին կամ Իրանի այդ իրադարձությունները նկարագրող վոր և ե գրավոր աղբյուրի:

Յեթե բծախնդիր, ամեն ինչ գրավոր աղբյուրների առկա-

1 Յովհաննու Մամիկոնենի, Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ 1832 թ.:

յության բացատրող բանասերն անգամ պնդելու լինի, վոր Բուզանդը «Յատկար-ի Զարիրան»-ի նման մի գրավոր աղբյուր ե ունեցել և այնտեղից եպիզոդներ քաղելով՝ հայացրել ե և պատմականացրել Հայաստանի պատմության գծով, ապա ինչ պիտի ասենք այն զուգահեռների մասին, վոր գտնում ենք «Սասնա ծռեր»-ի մեջ: Իսկ վերջինիս և Բուզանդի նմանություններն ու զուգահեռները հիմնական են և բազմաթիվ:

Այդպիսի գրավոր աղբյուր գոյություն չի ունեցել: Իրանի վիպական այդ եպիզոդը, ինչպես և «Կարնամակ»-յան վիպական մոտիվները, իսկ փոքր ինչ ստորև կը տեսնենք ես մի շարք առանձին առասպելներ, վեպեր, վիպական հատվածներ, կամ ընդհանուր վիպական մոտիվներ են, կամ իրանական են յեվ Իրանից անցնելով հայ միջավայրը, յուրացվել են, կցվել հայ առասպելին ու վեպին յեվ վերջնականապես հայացել: Ահա այդ վեպերից և առասպելներիցն են քաղել իրենց վիպական պատմվածքները հայ մատենագիրները, և այդ եպիզոդներն են, վոր պատմականացվել են: Մյուս կողմից, հայ մատենագիրների որոք, գլխավորապես հայ ֆեոդալների շրջանում, պատմվող այդ վեպերն ու առասպելները հարատևել են հայ ֆեոդալիզմի վերջնական քայքայումից հետո ել և նորանոր վիպական տարազներ հագնելով՝ դեգրադացիայի յեն յենթարկվել, իջել հայ աշխատավոր գյուղացու խրճիթն ու սերնդից սերունդ ավանդվելով՝ հասել մեր այսօրվա վոչ պրոֆեսիոնալ վիպասաններին, հասել մեզ:

Իրանական վիպաշխարհի պատվաստումը ֆեոդալական Հայաստանի, իսկ հետագայում առհասարակ նահապետական կենցաղ ու տնտեսություն վարող հայ գյուղացու կյանքում, մենք համարում ենք վոչ պատահական: Դեռ ավելին՝ բնական և սպասելի: Մանավորապես այս վիպական մոտիվը պետք ե արձագանք տար յերկու յերկրներումն ել, վորովհետև այդ յերկու հարևան ժողովուրդներն իրենց պատմական կյանքում ապրել են քաղաքական և կուլտուրական անալոգիկ պատմական պրոցես, ականատես են յեղել պատմական այնպիսի իրադարձությունների, վորոնք իրենց կնիքն են դրել յուրաքանչյուր յերկրի ու ժողովրդի հետագա հազարամյա կյանքի, պատմության վրա, դրանք են՝ քրիստոնեությունը Հայաստանում և զրադաշտականությունն Իրանում: Այստեղից արդեն պարզ ե, վոր նման իրադարձությունները

յերկու ժողովուրդների վիպական ստեղծագործության մեջ հանդես պիտի բերեյին թե վիպական պրոմեների, թե վիպական կառուցվածքի և թե մանրամասնությունների ակնբախ նմանություններ, և այդ ամենը, հարկավ, Իրանում զրադաշտականության, իսկ Հայաստանում քրիստոնեության իդեոլոգիական լուսաբանությամբ:

Արդ՝ վորոնք են հիշածս նմանությունները:

1. Զրադաշտական Իրանը կռվում է Թուրանի դեմ. նա առաջարկում է Իրանին կամ հրաժարվել զրադաշտականությունից և այդ դեպքում խոստանում է ճանաչել Իրանի թագավոր Վշտասպի գերիշխանությունն ու հարկատու լինել նրան կամ սպառնում է պատերազմել և ուժով ստիպել իրենց կամքը կատարելու (Իրան-Թուրանի դարավոր կռիվ):

Զրադաշտական Իրանը կռվում է քրիստոնյա Հայաստանի դեմ. սա առաջարկում է Հայաստանին կամ հրաժարվել քրիստոնեությունից, բարեկամություն—«անքակ սէր» հաստատել Իրանի հետ («Տացեմ զդուստր իմ կնութիւն Արշակայ արքայի Հայոց, և տաց նմա տուն մեծ, զի յորժամ գնասցէ ի Հայոց գալ առ մեզ..., զի ի Հայոց մինչև ի Տիզբոն, մինչև առ մեզ համակ իւրում տան ազգի, մինչև առ մեզ եկեսցէ»)[1] կամ սպառնում է «այրացուէր զերկիրն Հայոց առնել», քանդել, բրել. («Պարսից պատերազմ» ըստ պրոֆ. Մ. Աբեղյանի բնորոշման):

Սասունը կռվում է (Բաղդադի) Մսրա Մելիքի դեմ: Սա առաջարկում է Սասունին կամ Մհերի հետ ունեցած բարեկամությունը շարունակել, վճարելով հարկը և հպատակվելով, կամ սպառնում է Սասունը քարուքանդ անել և Սասունի ամբողջ ունեցվածքը, քարն ու հողը բեռներով կրել, տանել Մսրա յերկիրը, Սասունի անունը ջնջել աշխարհից:

2. Պատերազմի հենց սկզբին սպանվում է Իրանի մեծ սպարապետ Զարիրը:

Պատերազմի սկզբին սպանվում է սպարապետ Վաչեն, իսկ հետագայում տասնյակ տարիներ տևող պատերազմի ժամանակ սպանվում են սպարապետ Վասակը, Վաչեն (II-ը):

3. Սպարապետները, հերոսները սպանվում են վոչ թե ճակատ առ ճակատ կռվելով, այլ նենգությամբ «թիկունքից» (Զարիր,

---

1 Բուզ. IV, ի.

Ռոստամը պարանով բռնում է Քամուսին

Վասակ, նախնականում նաև սպարապետ Վաչեն (I), Սասունցի Դավիթը։

4. Նենգությամբ սպանված հայրերի մանուկ վորդիները վրեժ են առնում (մանուկ Բաստվարը՝ Զարիրի, Մուշեղը՝ (վոչ մանուկ) Վասակի, մանուկ Արտավազդը՝ Վաչեյի (I-ի=նախնականում), մանուկ — Պստիկ Մհերը՝ Դավթի)։

Մեզ թվում է, վոր սկզբում այս վիպական մոտիվը կազմված է յեղել Վաչե I-ի անվան և սխրագործությունների շուրջը. վոր պատմվել ու յերգվել են նրա քաջագործությունների ու մահվան մասին զրույցներ ու յերգեր. վոր վրեժխնդիր է յեղել մանուկ Արտավազդը, Վաչե I վորդին. իսկ հետագայում, յերբ «Պարսից պատերազմ» վեպը կենտրոնանում է այս մեծ պատերազմի ամենակարկառուն դեմքի շուրջը, յերբ Մանուել սպարապետն իր կյանքով ու գործով նսեմացնում է իր նախնիներին «Պարսից պատերազմ»-ի հին հերոսներին, Վաչեն ու Արտավազդն այս վերջին շրջանում արդեն նսեմանում են և երկրորդիկ դերեր կատարում։ Ըստ վիպական վոգուն՝ մանուկ Արտավազդը պիտի սպաներ գլխավոր թշնամուն, թերևս իր հորը նենգաբար սպանողին։ Բայց այստեղ, վորպես գլխավոր հերոս, հանդես է գալիս Մանուելը, վորը և սպանում է «կախարդ» Մերուժանին, իսկ մանուկ Արտավազդին բաժին է ընկնում միայն Մերուժանակերպին սպանելը։

Վաչե I-ի և մանուկ Արտավազդի հերոսական վեպը փաստորեն այստեղ վեր է ածվել մի եպիզոդի, վորը սերտորեն կապված չէ բուն վեպի կառուցվածքի և դրամատիկ զարգացման հետ։ Մանավանդ եպիզոդիկ է մանուկ Արտավազդի «հոր» Վաչեյի (II) կյանքն ու վախճանը («Վաչէ, երկրորդն Մանուէլի, ձի զուլամբ երթեալ, սպանանէր»)։ Նա յերկու անգամ է հանդես գալիս Բուզանդի պատմության մեջ՝ մեկ անգամ, յերբ նա նահապետության «իշխանութեան պատիւը» հանձնում է Մանուելին, յերկրորդ անգամն էլ՝ վերը հիշված տողն է նրա մահվան մասին։

5. Թե իրանականում և թե հայկականում գլխավոր թշնամին, վոր նենգ է ու խարդախ, կոչվում է կախարդ (կախարդ Վիդրաֆշ, կախարդ Մերուժան, դև, կախարդ Մսրա Մելիք կամ Արդա Մելիք)։ Յերեքն էլ կրում են արժանի պատիժ, սպանվում են հերոսների ձեռքով։

6. Բնորոշ են միևնույն վիպական մոտիվի յերկու պատումների համար՝ ա. մանուկ Բաստվարի վողբը Զարիրի, իսկ մանուկ (Պզտիկ) Մհերինը՝ Դավթի դիակի վրա, բ. Արջասպի պատուհասումը Սպանդ-դատի (նախնականում, ըստ յերևույթին՝ Բաստվարի), իսկ Կողբադինինը՝ Դավթի ձեռքով։

7. Միևնույն վիպական մոտիվի հայկական և իրանական վերսիաներում հսկա թշնամիներն արհամարհում են (յընչաց քեբել) իրենց մանուկ հակառակորդներին և վերջիններիս հար և նման հարվածներից ընկնում (Վիդրաֆշը քամահրում է Բաստվարին, Մերուժանակերպը (Մերուժանը)՝ մանուկ Արտավազդին, Մսրա Մելիքը՝ մանուկ Դավթին։ Հմմտ. Բելը՝ Հայկին, Գողիաթը՝ Դավթին և այլն և այլն)։

8. Կախարդ, դև, չար ու նենգ ախոյանի պատճառով կոտորվում է անմեղ մարդկանց բազմությունը։

9. Շատ նման վիպական յերանգներով է նկարագրված թըշնամիների զորաժողովն ու հարձակումը։ Թշնամի թագավորներն անթիվ-անհամար զորքով են հարձակվում պաշտպանվողների անպատրաստ ու սակավաթիվ ուժերի վրա (Հմմտ. Արջասպի, Շապուհի և Մսրա Մելիքի զորաժողովն ու հարձակումը)։

Բացի թվարկածս նմանություններից և զուգահեռներից կան յերկուսի մեջ էլ մի շարք ընդհանուր վիպական ու այս վերսիաներին հատուկ մասնակի նմանություններ, վորոնք գալիս են հաստատելու այն, վոր այդ վերսիաներն, իրոք, նույն վիպական մոտիվի տարբեր վերսիաներ են և վոր դրանք սիրով մշակվել են իրենց սեփական միջավայրում, հարմարեցվելով տեղական պայմաններին՝ իրանականն Իրանում, հայկականը Հայաստանում։

Այդ մասնակի նմանություններից բերենք մի քանիսը.

1. Թշնամի բանակների հրամանատարը կամ թագավորն անձամբ չի կռվում, այլ լեռների գլխին նստած, կամ մի բարձր տեղից հրամաններ է արձակում, կարգադրություններ է անում (Արջասպը մի բլրի գլխին, Վշտասպը՝ մի ուրիշ, Պապը՝ Նպատ լեռան գագաթից, Մսրա Մելիքը՝ բլրի կատարին զարկած իր վրանից և այլն)։

2. Թշնամի բանակի հրամանատար թագավորները ճակատամարտից առաջ և ճակատամարտի ժամանակ խոստանում են զորավարներին և հզորներին կնություն տալ իրենց դուստրներին

կամ քույրերին և բարձրագույն պատիվ և իշխանություն (Շապուհը Մերուժանին, Վահան Մամիկոնյանին և մյուսներին. Արջասպը՝ Վիդրաֆշին, Վշտասպը՝ Զարիրի մահվան վրեժը լուծող հզորներին. Մսրա Մելիքը՝ Կողբադուն և մյուս հզորներին—միայն նվեր, պատիվ — և այլն)։

3. Թշնամի բանակի հզորներն ու զորավարները հոխորտում են հակառակորդ բանակը վոչնչացնել և յերկիրն ավերել (Արջասպի զորավարները՝ Իրանի բանակի, Վշտասպինը՝ Արջասպի, Շապուհի զորավարները՝ Ուռնայրը, Մերուժանը՝ հայոց բանակի ու յերկրի, Մսրա Մելիքի փահլևվանները՝ Սասունի նկատմամբ և այլն)։

4. Թշնամի թագավորները խոստովանում են հակառակորդ բանակի քաջությունը, վախենում և գովում են նրանց (Արջասպը խոստովանում է Իրանի բանակի և հզորների քաջությունն ու գովում է նրանց, Շապուհը՝ Հայաստանի գնդին և Մուշեղին, Մսրա Մելիքը՝ Սասունցի Դավթին և այլն)։

5. Թշնամի բանակները վոչնչացվում են ու միայն մեկն է մազապուրծ փախչում իբրև լրատար (Շապուհի բանակը, Արջասպի զորքը, Մսրա Մելիքի ղոշունը)։

6. Հերոսների ձիերը ճանաչում են իրենց տերերի վորդիներին, ուրախ խրխնջում են ու ոգնում նրանց վոչնչացնելու թշնամուն (Զարիրի ձին՝ Բաստվարին, Դավթի Քուռկիկ Ջալալին՝ Մհերին և այլն)։

Ի՞նչ են ասում մեզ այս բոլոր նմանություններն ու զուգահեռները։

Միայն ու միայն մի բան, վոր այդ վիպական մոտիվը նպաստավոր հող գտնելով հայկական միջավայրում, միախառնվել է հայկական դրույցներին, վորոնք կազմվել էյին «Պարսից պատերազմ»-ի շուրջը, սիրվել ու մշակվել է և դարեր ապրելով միացել «Սասնա ծռեր» ժողովրդական վեպին։

Գ.

ՖԻՐԴՈՒՍՈՒ ԴՅՈՒՑԱԶՆԵՐԳԱԾ ԻՐԱՆԻ ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ՅԵՎ ՎԻՊԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐՆ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՅԵՎ ԲՈՒԶԱՆԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

Մենք տեսանք արդեն, վոր պահլավի լեզվով մեր ձեռքը հա-
սած Իրանի վիպական աշխարհի մոտիվներից մի քանիսը պահ-
ված են նաև հայ մատենագրության մեջ։ Սակայն դրանով չի
սպառվում դրացիական դարավոր հարաբերությունների ընթաց-
քում պաշարած կուլտուրական, մանավորապես վիպական-առաս-
պելական հարստության առկայությունը հայ գրականության
մեջ։ Հայ հեղինակներից վոմանք (Մ. Խորենացի և Կոստանդին
Երզնկացի) բացահայտ հիշատակություններ ունեն Իրանի առաս-
պելների գոյության մասին Հայաստանում. մյուսները, ճիշտ է,
նման հայտարարություններ չեն անում, չեն խոսում հարևան
պարսիկների վիպաշխարհի մասին, բայց ընդհակառակը, միջնորդաբար,
հայ ֆոլկլորի միջոցով՝ օգտվում են դրանցից իրենց վիպախառն-
առասպելախառն պատմությունները գրելիս։ Այդ լուռությունը կա-
րող է և գիտակցված և վոչ գիտակցված լինել։ Առաջին դեպքում
պետք է ընդունենք, վոր, օրինակ, մի Ագաթանգեղոս կամ Բու-
զանդ լավ ծանոթ լինելով Իրանի առասպելներին՝ չեն ցանկա-
ցել կամ պահանջ էլ չի յեղել, վոր իրենց պատմությունների մեջ
բացահայտ շարադրեն դրանց բովանդակությունը. յերկրորդ դեպ-
քում՝ պետք է ընդունել, վոր նրանք ծանոթ չեն յեղել իրենց
վիպախառն պատմությունների ծագման բաղադրիչ մասերին և
աշխատել են պատմականացման քողի տակ շարադրել Հայաստա-
նում աւլող-պատմվող Իրանի վեպերն ու առասպելները։

Այս զույգ յենթադրություններից վորն էլ ընդունելու լինենք,
իրողությունը չի փոխվում։ Իրանի առասպելական աշխարհի առ-
կայությունը Հայաստանում անհերքելի փաստ է։ Հայ մատենա-
գիրների «հայկական» առասպելներից և վիպական մոտիվներից
մի քանիսն ունեն իրենց համապատասխան զուգահեռներն Իրանի
վիպաշխարհում։ Այդ զուգահեռների համեմատությամբ՝ ամբողջա-
կան փոխառության կամ անմիջական ազդեցության խնդիրը չէ,
վոր դնում ենք։

Մեր նպատակն է, նախ՝ ցույց տալ, վոր մեր մատենագիր-

ներից Ագաթանգեղոսի և Բուզանդի «պատմությունների» մեջ
պատմական ճանաչված իրադարձություններից մի քանիսը վի-
պական են կամ առասպելական. ապա՝ ցույց տալ նրանց առըն-
չությունը հարևան Իրանի վիպաշխարհի հետ։

Վեպը կամ վիպական մոտիվը ժամանակի ընթացքում մի
յերկրից, մի ժողովրդից անցնելով մի այլ յերկիր, մի ուրիշ ժո-
ղովրդի, նոր միջավայրում, տրանսֆորմացիայի յե յենթարկվում՝
համաձայն այստեղ գոյություն ունեցող ֆորմացիայի։ Դեռ ավե-
լին։ Միևնույն յերկրում, մի դասի կամ դասակարգի, առենք՝
ազնվականության բանավոր ստեղծագործությունն իջնելով մի
այլ դասակարգի կամ դասի (օրինակ, գյուղացության) միջավայ-
րը, հիմնականում պահելով կառուցվածքը կամ նրա էլեմենտները,
այնպիսի վերամշակման է յենթարկվում, այնպես է փոփոխվում,
վոր առաջին հայացքից անգամ անճանաչելի յե լինում։ Յեկ-
վոր վեպը կամ մոտիվը նոր «հայրենիքում» միաձուլվում է
տեղական մոտիվների հետ, մշակվում է այստեղ իշխող գաղափա-
րախոսության վոգով և իմաստով, նոր կոլորիտ-յերանգավորում
է ստանում, նոր մտապատկերներով և պատկերներով հարստա-
նում, մի խոսքով, նոր բովանդակություն և նոր ձև ստանում։
Վիպական մոտիվը այդ ճանապարհով ազգայնանում է։

Այս յերևույթն ընդհանուր է բոլոր ժողովուրդների վիպաշ-
խարհում։ Բավական է հիշել Իրանի «Ռոստամ-Զալ»-ը հայ նոր
ֆոլկլորի մեջ կամ հայ ֆեոդալի «Սասնա ծռեր»-ը մեր աշխատա-
վոր գյուղացության «ստեղծագործության» մեջ։ Սրանք ֆոլկլո-
րիստիկ նյութերի դեգրադացիայի լավագույն օրինակներն են։

Իրանի առասպելական և վիպական մոտիվների մի 'խոշոր
մասն էլ Ֆիրդուսուց, անգամ «Կարնամակ»-ից շատ առաջ բանա-
վոր ճանապարհով մուտք են գործել Հայաստան, ընդունելություն
գտել հայերի, սկզբում, գլխավորապես, ազնվական դասի, ապա
և վեպ ու առասպելով, զրույց ու հեքաթով յերկար դարեր սնվող
գյուղացության կողմից, սիրվել, հարազատացել և միացել հայ-
կական վեպերին և վերածվել նոր վորակի։ Վեպն այսպիսի մի
կենդանի ստեղծագործական պրոցես ապրելով՝ կատարելապես
ազգայնացել է։ Դժվար է ասել, թե վոր մոտիվն է իրանական
կամ վորը զուտ հայկական։ Այս դեպքում կարող է խոսք լինել
միայն նրանց նմանությունների և զուգահեռների մասին։

Նախադրական այս ընդհանուր դիտողությունից անցնենք մի քանի նման առասպելական և վիպական մոտիվների քննարկության:

Սկսենք Ագաթանգեղոսից:

1

Ագաթանգեղոսն առասպելական-վիպական մոտիվներով շատ հարուստ մի ժողովածու յէ: Յեթե այդ «Պատմութիւն Հայոց»-ից հանելու լինենք «Վարդապետութիւն»-ը, վոր հետագայում է կցվել նրան, «Տեսիլ»-ը, վորի նախնականը նմանապես V դարի վերջից շուտ չի կազմված լինել, իսկ VI և մանավանդ VII դ. դ. վերամշակվել և ընդարձակվել է. յեթե մենք վորոշ չափով կրճատելու լինենք դավանաբանական ճառերը, վոր նույնպես նախնականում գոյություն չեն ունեցել (նախնական վարքերը շատ հակիրճ են) և արդյունք են V դարի վերջի և VI դարի վարքաբանական-դավանաբանական լեզվագրության, ապա այդ «պատմությունը» առանց տատանվելու կարելի յե համարել V դարի սկզբներում Հայաստանում տարածված և քրիստոնեական վոգով վերամշակված վեպերի և առասպելների մի ընդարձակ ժողովածու:

Վիպական մոտիվներ են՝ ա. Խոսրովի ու Անակի միջադեպը. նրանց զավակների (Տրդատի և Խոսրովիդուխտի, Գրիգորի և Սուրենի) փախուստն ու մանկությունը (համա. «Կարնամակ»-ի Բաբակը, Ֆիրդուսու Տարակը և Արտավանը, Կամսարականների նախնի Կարենյան Պահլավի, Պերոզամատի զրույցը, Խորենացի II, ՀԳ). բ. Տրդատի յեվ Գրիգորի սխրագործությունները. Գրիգորը Տրդատի մոտ, նրանց բարեկամությունը, վեճը—կռիվն ու արհամարհելը, նվաստացնելը, մահվան դատապարտվելը, արքայի քրոջ Խոսրովիդուխտի օգնությամբ մահվանից ազատվելն և այլն և այլն (համա. Կարնամակյան ցիկլ—Արտաշիրն Արտավանի «տանը» և Արտադուխտը. իրանական վիպաշխարհի մյուս ցիկլերից՝ Բեյ-Բաուսը և Ռոստամ, Բեժան և Մենիժա և այլն). գ. Տրդատի յեվ Գրիգորի մահը, և վերջապես, դ. Տրդատն ու Հռիփսիմեն (ալեգորիկ-աստրալ առասպելը, վոր շատ տարածված է յեղել Հին աշխարհում): Վիպական այդ մոտիվները մենք մանրամասն քննության ենք առնում (իրենց բոլոր հայ և օտար զուգահեռներով) մեր

վերը հիշված «Լուսավորչի վեպը» և «Տրդատ ու Հռիփսիմե» ընդարձակ ուսումնասիրությունների մեջ:

Այստեղ վերլուծենք միայն մի յերկու եպիզոդ և տանք նրանց իրանական զուգահեռները: Եպիզոդներից մեկը ծպտված հերոսի վիպական մոտիվն է:

1. Կոտորածից հրաշքով ազատված Անակ Պարթևի վորդի Գրիգորը ծառայության է մտնում («ըստ հեշտ պաշտաման», «զանձն ի ծառայութիւն տուեալ ի հնազանդութեան պաշտէր առաջի նորա (Տրդատայ)» Նույնանման կոտորածից հրաշքով ազատված Տրդատ Արշակունու մոտ: (Ագաթանգեղոս)

Դարեհյան տոհմի կոտորածից հրաշքով ազատված Սասանի վորդի Արտաշիրը կանչվում է Արտավան Արշակունու պալատը: Սա վոչինչ չգիտե Արտաշիրի ծագման մասին: («Կարնամակ»)

Նամակս առածիդ պէս, ուղարկէ փութով
Մեզ այն քաջ պատանին, գոհ ուրախ սրտով...
Բուն իմ որդւոցըս հետ այնպես յօղուլի ան,
Որ չըսէ ոք երբէք թ՚է օտարական[1]:

Այս փոքրիկ տարբերությունը, վոր կա հայ և իրանական վերսիաներում (Գրիգորն իր կամքով է գնում—ներքին բարոյական պարտավորություն—, իսկ Արտաշիրը հակառակ Փափագի (Սասանի) կամքին Արտավանի պահանջով), միևնույն վիպական մոտիվի տարբեր պատումներն են միայն:

2. Տրդատը գոհ է Գրիգորի ծառայությունից («եւ յամենայն զօրութենէ քումմէ ծառայեցեր դու ինձ միամտութեամբ. և ես գոհ էի զվաստակոց քոց և ունէի ի մտի կեցուցանել զքեզ»): (Ագաթանգեղոս)

Արտավանը գոհ է Արտաշիրից: («Կարնամակ»)

Դինի, ուրախութիւն՝ որս, ամէն ուրէք,
Շահն (Արտաւան) առանց պատանւոյն չէր լինէր երբէք:
Որպէս մի ազգակից կը վարուէր յաւէտ,
Եւ խըտիր չէր դընէր իւր որդւոցը հետ[2]:

3. Տրդատը դժգոհ է Գրիգորից, վորովհետև սա չի կատարում նրա կամքը—հրամանը (... «հրաման ետ թագաւորն Գրիգորի,

---

1 Ֆիրդուսի «Շահնամակ». թրգմ. Դր. Թիրյաք., յերես 6.

2 Ֆիրդուսի «Շահնամակ», յերես 8.

զի պսակս և թաւ ոստս ծառոց նուէրս տարցի բագնին Անահտական պատկերին: Այլ նա ոչ առնոյր յանձն պաշտօնատար լինել դիցն երկրպագութեան» ...«ընդէ՞ր ոչ առնես զկամս իմ»: (Ագաթանգեղոս)

Արտավանը դժգոհ է Արտաշիրից, վորովհետև սա վորսի ժամանակ ընդհարվում է, վեճ է ունենում Արտավանի վորդու հետ և հարկ յեղած հարգանքը չի տածում արքայորդու հանդեպ: («Կարնամակ»)

... Երեսն ի վեր տղուն գոռաց զայրագին.
Իմ է, իմ այս յանցանք, իմ բարուց բերում,
Որ այդչափ հոգ տարի քեզ, ա՛յ ապառում:
Ինչու պէտք էր տանել քեզ ըսպայի հետ,
Որս ու խրախճանութիւն և հանդիսակէտ.
Որպէսզի կապտէիր իմ իսկ զաւակս
Փառք՝ պատիւ ու անուն քաջութեան այսպէս[1]:

4. Տրդատն անարգում է Գրիգորին, անվանելով նրան «այր մի օտարական և անաշխարհիկ»:

Ըստ Տաբարիի, վոր թվում է, թե քաղած պիտի լինի ժողովրդական զրույցներից, Արտավանն անարգում է Արտաշիրին, գրելով նրան՝ «... O du Kurde, der du in den Zelten der Kurden aufgezogen bist» [Ո՜, դու քուրդ, վոր սնվել ես քրդերի վրաններում)[2] (հմմտ. Պռնկորդի բանակալ Յերվանդն անարգում է Արտաշես Արշակունուն, անվանելով նրան «մար» (=քուրդ). «ընդէ՞ր սնուցանես զՄարդ Արտաշէս հակառակ ինձ»..., և զորդի հովուաց և գանդէորդաց ջանայ առնել Արշակունի»...)[3]

Մարտ Մելիքն անարգում է Սասնա Դավթին (հմմտ. հոլ կամ գուրգ խաղալու եպիզոդները «Սասնա ծռեր» ժողվեպի մեջ).

---

[1] Անդ, յերես 9.

[2] «Geschichte der Perser und Araber», aus d. arab. Chronik des Tabari übersetzt... von Th. Nöldeke, Leiden 1879, յերես 11, 12: Այստեղ Արտաշիրի պատմության մեջ վիպական տեսակետից հետաքրքրական է մանուկ Արտաշիրի հզորանալը. «Da sah er einst im Traum einen Engel sich zu Haupten sitzen, der ihm verkündete, dass Gott ihm die Herrschaft über die Länder gebe; er möge sich dazu anschicken. Beim Erwachen war er darüber erfreut und empfand in sich eine Kraft und Kühnheit, wie er solche früher nie gekannt hatte». (անդ, յերես 5—6) հմմտ. Մանուկ Դավթի յերազը և հզորանալը («Սասնա ծռեր» ժողվեպ):

[3] Մովսես Խորենացի «Պատմութ. Հայոց» Տփղիս 1913 թ. II, լը.

5. Տրդատն ուզում է սպանել Գրիգորին («չէ պարտ կեալ դմա (Գրիգորի), զի որդի վրիժապարտի է դա») և մահվան է դատապարտում նրան, իջեցնելով «ի վիրապն ներքին, որ անհնարին էր խորութեամբ, մինչև անդէն մեռցի»: (Ագաթանգեղոս)

Արտավանն ուզում է բարոյապես վոչնչացնել Արտաշիրին, զրկել նրան ձի հեծնելու, գնդակ խաղալու, վորսի գնալու և ասպետական մարզանքներին մասնակցելու իրավունքից և նշանակում է նրան ախոռապան, վորը գիշեր-ցերեկ ձիերի ախոռից չպետք է հեռանա: Ասպետի համար այս կարգադրությունը հավասար է մահվան դատավճռին: («Կարնամակ»)

Գրնա՛ ձիերուս դու հոգ ու դարման տար,
Եւ անոնց մոտ մի տեղ ըրոնէ քեզ համար,
Ախոռատանիս դու դէտ սալար եղիր,
Զը լինի այլոց ու քո մէջտեղ խոտիր:
(Ֆիրդուսի)

6. Մահվան դատապարտված Գրիգորին, Խոր Վիրապում կերակրում է «կին ոմն այրի» (ըստ «Գրիգորի վարքի» արաբ. և մյուս վերսիաների արքայական տնից մի կին (=Խոսրովիդուխտ),[1] վորը հետագայում օգնում է նրան ազատվելու խոր-վիրապից՝ մահվանից:

Անարգված և ասպետական հայեցողությամբ մահվան դատապարտված Արտաշիրին սփոփում է իր սիրո զգացմունքներով և բարեկամությամբ Արտավանի սպասուհին-հարճը, ըստ Ագաթանգեղոսի՝ Արտադուխտը, ըստ Ֆիրդուսու՝ Գյուլնարը:

Ֆիրդուսու Գյուլնարը բանաստեղծական անվանակոչություն է: Ըստ յերևույթին՝ Ֆիրդուսու ձեռքի տակ գտնվող պարսիկ և պահլավի աղբյուրների մեջ հարճն անուն չի ունեցել և նա ստիպված է յեղել հորինել այդ գեղեցիկ անունը:

Մեր կարծիքով, Արտաշիրին օգնող աղջիկը «հարճ» չէ և վոչ էլ մի «աղջիկ», «վորն Արտավանի համար՝ամեն տեսակի սպասավորություն էր անում»: Այդ աղջիկը հավանորեն, ըստ ընդհանուր վիպական մոտիվի՝ անպայման յեղել է Արտավանի քույրը կամ դուստրը: Արտադուխտ անունն էլ թվկապես նշանակում է

---

[1] Այդ մասին մանրամասն մեր «Լուսավորչի վեպը» ուսումնասիրության մեջ:

Արտավանի դուստր, ինչպես Խոսրովդուխտ—Խոսրովի դուստր[1]։

Ցեվ խոսք, յեթե մենք ընդունելու լինենք, վոր այդ աղջիկը մի հասարակ հարճ ե, վորին Արտաշիրը խոստանում ե հաջողության դեպքում «ամենայերջանիկ մարդը դարձնել ամբողջ աշխարհում», ըստ Ագաթանգեղոսի՝ բարձրացնել «ի պատիւ տիկնութեան», իսկ ըստ Ֆիրդուսու՝

Թէ գաս՝ իշխանութեան կը հասնիս, արի՛,
Պարծանաց թագ լինիս մի մեծ աշխարհի[2]։

Այս տեսակետից բնորոշ ե, վոր «հարճը» այս խոստումներից հետո Արտաշիրի հետ փախչում ե, Արտավանի և Արտաշիրի վճռական ճակատամարտից առաջ առանձնացվում ամուր դղյակում և այլևս հանդես չի գալիս։ Ճակատամարտից և Արտավանին սպանելուց հետո «Կարնամակ»-ը լակոնիկ արձանագրում ե՝ Արտաշիրը «Արտավանի դուստրը կնության առավ և նորից գնաց Ֆարս»։

Ըստ Ֆիրդուսու, Տաբակն ե խորհուրդ տալիս Արտաշիրին ամուսնանալու Արտավանի աղջկա հետ.

«Քեզ կը լինի թագն ու գանձըն անբաւ ան,
Զոր այնչափ նեղութեամբ դիզեց Արտաւան»։
Արտաշիր ընդունեց այս խրատն լաւ։
Մարդ ուղարկեց, աղջիկն ուզեց ու առաւ[3]։

«Կարնամակ»-ն ու Ֆիրդուսին պատմում են մի վիպական եպիզոդ, կապված Արտաշիրի և Արտավանի աղջկա (Արտադուխտի) հետ, վորը, ճիշտ ե, չի պահված մեր հին մատենագրության մեջ, բայց նրա զուգահեռները մենք գտնում ենք մեր նոր վեպում։

Ինչպես հաշտեցնենք հայ և պարսիկ աղբյուրների տվյալներն այս աղջկա մասին։

Մեզ թվում ե, թե Արտաշիրի և Արտավանի մասին պատմող գրույցներն սկզբում յերկու տարբեր պատումներ են ունեցել։ Դրանցից մեկի մեջ աղջկա դերը կատարել ե Արտավանի նաժիշտը, մյուսի մեջ՝ թշնամի Արտավանի դուստրը՝ Արտադուխտը։ Հայ աղբյուրի մեջ այդ յերկու պատումները միացվել են և առաջացել ե այն, վոր նաժիշտը-հարճը կրում ե Արտադուխտ անունը. իսկ պարսկական աղբյուրները հիշելով անանուն նաժիշտին, հետագայում մոռացության են տալիս նրան և առաջ քաշում Արտավանի անանուն աղջկանը, վորպեսզի հիմնավորեն Արտաշիրի գահակալության օրինականությունը։ «Կարնամակ»-ի և Ֆիրդուսու տեղ-տեղ սփռված ակնարկությունները յենթադրել են տալիս, վոր այդ աղջկա հոգեկան դրաման ել այդ բնականոն զարգացումն ունեցած պիտի լինի։ Սիրահար տափոտ աղջիկն իր կրքին հագուրդ տալու համար՝ դավաճանում ե իր հորն ու հարազատներին, սակայն տեսնելով իր հարազատների սոսկալի աղետն և լսելով իր հարազատ յեղբայրների կշտամբանքն ու պարսավանքը, վորոշում ե իր հոր վրեժն առնել Արտաշիրից, թունավորել նրան և նորից գահ բարձրացնել իր հարազատներին։ Այս եպիզոդն իր շարունակությամբ հետաքրքրական ե «Հօր յեվ վորդու կռվի» վիպական մոտիվի կապակցությամբ։

Զուգահեռների 5 և 6-րդ կետերը կան նաև մեր «Սասնա ծռեր» նոր ժողվեպի մեջ։

Հալածված հերոս՝ Դավթի պաշտպանն ե Մսրա Մելիքի մայրը (մի քանի պատումներում մոր հետ նաև քույրը)։ Սա յե կերակրում «վըր ցղին» մնացած—վորբ Դավթին. սա յե «շախում, պախում» Սասնա ծռին Մելիքի հալածանքներից ու հետապնդումներից, և, վերջապես, յերբ Մսրա Մելիքն ուզում ե սպանել Սասնա Դավթին, մայրն ե, վոր չի թողնում և խորհուրդ ե տալիս հեռացնել նրան Մսրա յերկրից, ուղարկել Սասուն կամ Սասունի ճանապարհին, իր աչքից հեռու նրան սպանել։ Մայրը գաղտնի կարգադրում ե Դավթին ուղեկցող փահլեվաններին, վոր չսպանեն։

Հալածված հերոսին ոգնելու փոխհատուցումն ե, վոր պահանջում են մենամարտի վերջին տեսարանում Մելիքի մայրն ու քույրը, յերբ աղերսում են Դավթին խնայել Մելիքի կյանքը, վորովհետև իրենք «շախել, պախել են» (մայրը և քույրը) կամ «շալակել» (քույրը) նրան[1]։

---

[1] Համտ. Fr. Justi, «Jranisches Narmenbuch» Marburg 1895, յերես 33. K. Патканьян «Матер. к армян. слов.» I, 21.

[2] «Շահնամակ» թարգմ. Դր. Թիրյաքյան, յերես 14.

[3] «Շահնամակ», եջ 30.

[1] Համտ. «Սասնա ծռեր»-ի ըստ պատրաստվող հրատարակության համապա-

Այստեղ ընդհատվում է «հալածված հերոսի» վիպական մոտիվի «Կարնամակյան վերսիան»։ Այդ վիպական մոտիվի օրինաչափ զարգացումն այն պիտի լիներ, որ հալածողը ծանր, անելանելի դրության մեջ ընկնելով և չկարողանալով ոչ մի տեղից օգնություն ստանալ, վերջը ստիպված լիներ դիմելու հալածված հերոսի (կամ մահվան դատապարտված, բայց հալածողի կնոջ կամ աղջկա կողմից փրկություն գտած հերոսի) օգնությանը, ներողություն խնդրեր նրանից և փրկություն հայցեր։

«Կարնամակ»-ում թերի մնացած այդ վիպական մոտիվի հատվածները մենք գտնում ենք Իրանի մյուս վեպերի և վիպական եպիզոդների մեջ։ Սրանք էլ իրենց հերթին ունեն տվյալ վիպական ընդհանուր կառուցվածքից որոշ խոտորումներ. մեկի մեջ, օրինակ, կառուցվածքն առկա է, բայց պակասում են նրա կուռ շղթայի օղակներից մեկը կամ մյուսը. մի ուրիշի մեջ մենք տեսնում ենք այս վիպական մոտիվի միայն մեկ միջադեպը, բայց այդ մեկը վարպետորեն զարգացած և ամբողջացած է։

Կառուցվածքային այդ բացերը կարող են առաջացած լինել և արվեստական յեղանակով, ստեղծագործողի աշխարհահայացքի ու ճաշակի համեմատ։ Մենք այդ չգիտենք։ Փաստն այն է, որ մեզ չեն հասել այդ վիպական մոտիվի զուտ ժողովրդական պատումներ, որոնք ազատ լինեին բանաստեղծի ստեղծագործական կնիքը կրելուց։ Մեզ հասածը պատկանում է հանճարեղ Ֆիրդուսու գրչին։ Այդ հատվածներն են՝ ա. Ռոստամ և Սոհրաբ վիպական ճյուղից «Քեյ-Քաուսի կռիվը Ռոստամի հետ» և բ. «Բեժան ու Մենիժա»։

Նախ, վերլուծենք «Քեյ-Քաուսի կռիվը Ռոստամի հետ» «Շահ-Նամե»-ի վիպական եպիզոդը, ապա անցնենք «Բեժան-Մենիժա» սիրավեպին։

Ռոստամը ծառայության մեջ է Քեյ-Քաուսի մոտ։ Սա շատ գոհ է Ռոստամից և համարում է նրան Իրանի փառք ու պարծանք։

«Թուրանցի» Սոհրաբն ասպատակում է Իրանը։ Դիմադրող չկա. բոլորը վախենում են այդ մանուկ հսկայից։

տասխան հատվածները հետևյալ վերնագրով՝ «Մելիքն ուզում է սպանել Դավթին» և «Դավթի և Մելիքի մենամարտը»։

Իրանի փահլևանների խորհրդով Քեյ-Քաուսը հրավեր-նամակ է ուղարկում Զաբուլ Ռոստամին և խնդրում նրան, որ նամակը ստանալուն պես գա իր մոտ։

Յերբոր կարդաս այս նամակը, ցերեկ լինի թե գիշեր,
Բերանդ անգամ էլ բաց չանես, թե ուզենաս դու խոսել.
Յեվ թե ծաղկե փունջ ունենաս ձեռքիդ, էլ հոտ չքաշես,
Այլ սրիր քո ուշք ու միտքը, շտապ ցույց տուր քո յերեսդ»[1]։

Ռոստամը չի շտապում, նա ուզում է սուրհանդակին, իր զինակից Գիվին լավ պատվել, նրա հետ յերեք օր, յերեք գիշեր ուրախանալ, քեֆ անել, ապա ճանապարհ ընկնել Քեյ-Քաուսի մոտ։ Այդպես էլ անում են։

Քեյ-Քաուսը դժգոհ է. նա գոռում է Գիվի վրա և անարգում Ռոստամին։

«Ռոստամն ո՞վ է, որ հրամանս հանդգնել է զանց առնի.
Ռոստամն ո՞վ է, որ չի ուզում իրեն պարտքը կատարի.
Թե թուր լիներ իմ ձեռի տակ, նարնջի պես իմ ձեռով
Կը կտրեյի նրա գլուխը։ Հետո Գիվին դառնալով,
Ասաց.— Բռնիր, տար, կենդանի հանիր նրան կախաղան,
Յեվ այսուհետ մի տար նրա անունն իմ հանդիման»։

Գիվն առարկում է։ Քաուսը կարգադրում է Թուսին կախաղան բարձրացնել յերկուսին էլ՝ և Ռոստամին և Գիվին։ Ռոստամը դեն է շպրտում Թուսին, նախատում Քաուսին, որ ապերախտաբար մոռացել է, որ Իրանի թագը նրա (Ռոստամի) ձեռքից է ստացել և ցատկելով իր Ռախշի վրա, աղաղակում.

«Յես հաղթողն եմ առյուծների, յես բաշխողն եմ թագերի,
Յեվ յերբոր յես զայրացած եմ, ո՞վ է Քաուսն իմ առաջ...
Իմ Ռախշ նժույգն է իմ գահը և աշխարհն ինձ հպատակ,
Իմ գուրզն է իմ գայիսոնը, սաղավարտս գլխիս թագ.
Իմ օգնական ընկերներն են իմ թուր և իմ նիզակ։
Իմ բազուկներն և իմ սիրտն ինձ հրամայողն միակ։
Գիշերային խավարին յես իմ թրով եմ լույս տալի
Յեվ ռազմական դաշտի վրա գլուխներ եմ թափ տալի։

[1] Բոլոր չափածո մեջբերումները Ֆիրդուսու «Շահ-Նամե»-ի այս վիպական եպիզոդից և «Յերգիծանքից» քաղում ենք Գեվորգ Ասատուրի նոր, մեծ բանաստեղծի հոբելյանի առթիվ կատարած շնորհալի թարգմանության ձեռագրից։ Անկեղծ շնորհակալությունս եմ հայտնում հարգելի Գ. Ասատուրին։

Քաուս շա՛ն ինձ վիրավորեց. ինչ իրավամբ և ինչու
Ստրուկ չե՛մ յես...»։

Ապա նա դիմում է Իրանի մեծամեծներին և փահլևաններին և ասում.

«Այսուհետև ինձ Իրանում չեք տեսնելու. Մնաք բարև։
Յերկիրը յես ձեզ եմ թողնում, իսկ յես կ'առնեմ անգղի թևը»։

Ռոստամի հեռանալուց հետո Իրանի մեծամեծները՝ վերահաս վտանգի ազդեցությամբ՝ վորոշում են Գուդերզին Քաուսի մոտ ուղարկել և նրան համոզել, վոր նա հետ կանչի Ռոստամին։

«Ունե՞ս, արդյոք, մի մարտնչող, վորը նրա հետ մրցի.
Դուրս գա նրա դեմ ռազմադաշտ, նրա փոշին փրցնի»։

Դյուրաբորբոք Քաուսը հասկանում է իր անմիտ վերաբերմունքն ու սխալ քայլը։ Նա ուղարկում է Գուդերզին Ռոստամի հետևից, խնդրում է, վոր վերադարձնի Իրանի փրկիչ — փահլևանին։

Ռոստամը հրաժարվում է վերադառնալ, սակայն, յերբ լսում է Գուդերզի ակնարկներով լի խոսքը, թե նրա հրաժարվելը կարող են բացատրել վախով, Ռոստամը շտապ վերադառնում է Քաուսի մոտ։

Քաուսը Ռոստամին տեսնելուն պես՝ անմիջապես վոտքի յե կանգնում և ներողություն է խնդրում։

«Յերբոր դիպավ անակնկալ թշնամու լուրն իմ սրտին,
Սիրտս այնպես եր բարակել, ինչպես ծնված նոր լուսին։
Ինձ օգնություն եր հարկավոր, և քեզ իսկույն կանչեցի։
Վորովհետև դու ուշացար, քեզ հետ կոպիտ վարվեցի։
Յեթե դու, ով փղամարմին, նեղացել ես ինձանից,
Փոշմանում եմ, փոշմանում եմ, հերոս, հողը բերանիս»։

Ռոստամը ներում է և Իրանն ազատում վերահաս վտանգից։

Վեպի շարունակությունն է «Շահ-Նամե»-ի ամենագեղեցիկ ու միաժամանակ ամենավողբերգական պոեմը՝ Ռոստամի և Սոհրաբի կռիվը, վիպական ամենատարածված մոտիվը՝ հոր և վորդու կռիվը։

Արդ՝ վո՞րն է այս վիպական եպիզոդի վիպական կառուցվածքը։

Մանուչարի յեվ Աֆրասիաբի աղջկա սիրահարությունը

1. Հալածված հերոսը ծառայության մեջ է հալածող հերոսի մոտ. 2. Հալածողը գոհ է հալածվածից. 3. Ինչ-ինչ պատճառներով հալածողը կռվում, վիրավորում է հերոսին և կարգադրում է սպանել նրան. հերոսը հրաշքով (ներկա դեպքում իր ուժով) ազատվում է մահից. 4. Հալածողը դրանից հետո ծանր օրեր է ապրում. նրա կյանքը վտանգի յե յենթարկված. օգնող—փրկող չկա. 5. Հարազատների կամ մերձավորների խորհրդով նա ստիպված է զգալ իր սխալ, չմտածված վարմունքն և դիմել հալածված հերոսի օգնության. 6. Հալածվածն օգնության հրավերն ընդունում է և ներկայանում հալածողին՝ իր տիրոջը. 7. Սա ներողություն է խնդրում հերոսից. և 8. Հալածված հերոսը փրկում է հալածող տիրոջը վտանգից:

Համեմատենք այս վիպական կառուցվածքը Լուսավորչի «պատմական» կյանքի հետ:

Համեմատենք նմանությունները ու վիպական զուգահեռները.

1. Գրիգորը ծառայության մեջ է Տրդատի մոտ. Ռոստամը՝ Բեյ-Բառսի:

2. Տրդատը գոհ է Գրիգորից («Ես գոհ էի զվաստակոց քոց և ունէի ի մտի կեցուցանել զքեզ»). Բեյ-Բառսը՝ Ռոստամից:

3. Գրիգորը չի կատարում Տրդատի հրաման-կամքը («Հրաման ետ թագաւորն Գրիգորի, զի պսակս և թաւ ոստս ծառոց նուէրս տարցի բագնին Անահտական պատկերին: Այլ նա ոչ առնոյր յանձն պաշտօնատար լինել դիցն երկրպագութեան»). Ռոստամը չի կատարում Բեյ-Բառսի հրամանը, անմիջապես ներկայանալու իրեն, այլ յերեք օր ու գիշեր ուշացնում է նրա հրամանի կատարումը:

4. Տրդատը կարգադրում է վերջին հաշվով սպանել Գրիգորին («Իջուցանել ի վիրապն ներքին, որ անհնարին էր խորութեամբ, մինչև անդէն մեռցի»). Բեյ-Բառսը հրամայում է կախաղան բարձրացնել Ռոստամին:

5. Գրիգորին Խոր-վիրապում մահից ազատում է այրի կինը (=Խոսրովիդուխտը). Ռոստամն ինքն է իրեն ազատում, ապավինելով իր վիթխարի ուժին:

6. Տրդատն և նրա հետ ժողովուրդը Գրիգորի կարծեցյալ մահից հետո ծանր օրեր են ապրում. Նրա կյանքը վտանգված է. վոչ վոք չի կարող նրան ազատել տանջալի մահից. Տրդատն այ-

մահար է լինում, յուրովի ուտում իր մարմինը, խոզակերպ է դառնում... «և անհնարին կործանումն ի վերայ աշխարհին հասանէր»...[1]:

Բեյ-Բասուսի գահն ու թագը, կյանքն և ունեցվածքը վտանգի տակ են. Թուրանցիները Սոհրաբի առաջնորդությամբ ավերում են Իրանը և սպառնում վոչնչացնել Իրանի գահն ու անկախությունը. վոչ վոք չի կարող նրան ազատել:

7. Տրդատն իր քրոջ՝ Խոսրովիդուխտի խորհրդով (յերազ, դարձյալ վիպական մոտիվ է) ստիպված է դիմել Գրիգորին և օգնություն խնդրել: Բեյ-Բասուսն Իրանի փահլեվանների խորհրդով ստիպված է կրկին դիմել Ռոստամին և օգնություն խնդրել:

8. Գրիգորն ընդունում է Տրդատի հրավերը և ներկայանում գահակալին. Ռոստամը զիջում է, ընդունում Բեյ-Բասուսի հրավերն և ներկայանում Իրանի արքայից արքային:

9. Տրդատը ներողություն է խնդրում Գրիգորից («Եւ մատուցեալ թագաւորն և նախարարքն՝ բուռն հարեալ զոտից սրբոյն Գրիգորի և ասէին՝ «Խնդրեմք ի քէն, թող մեզ զյանցումն մեր, զոր մեք ընդ քեզ արարաք»)[2]:

Բեյ-Բասուսը ներողություն է խնդրում Ռոստամից.

«Յեթե դու, ով փղամարմին, նեղացել ես ինձանից,
Փոշմանում եմ, փոշմանում եմ, հերոս, հողը բերանիս»:

Ֆիրդուսի

10. Գրիգորը ներում է Տրդատին, բժշկում նրան և փրկում նրան և ժողովրդի կյանքը:

Ռոստամը ներում է Բեյ-Բասուսին, հաղթում է Իրանի թշնամիներին, սպանում Սոհրաբին և փրկում է Բեյ-Բասուսի և Իրանի ժողովրդի կյանքը:

Ինչպես տեսնում ենք, նմանությունները շատ են և ակներև, իսկ տարբերությունները վիպական մոտիվի կառուցվածքի նկատմամբ սակավ և վոչ հիմնական:

Կառուցվածքային տարբերության մեջ համեմատաբար ամենախոշորն այն է, վոր Գրիգորի կյանքը փրկում է մահից մի կին (=Խոսրովիդուխտ): Խոսրովիդուխտն էր, վոր պալատականներին և հենց իրեն Տրդատին համոզում է դիմել «մեռած» Գրիգորին: Մի խոսքով, կինը հայկական վերսիայում աչքի ընկնող դեր է կատարում:

Այդ բանը մենք չենք տեսնում Ֆիրդուսու վեպի մեջ: Յեվ բնական է. Ֆիրդուսին, վոր այնքան վոգեվորվում է իր Ռոստամով և փառաբանում նրան, չէր կարող հաշտվել այն մտքի հետ, վոր «արքաներին թագեր բաժանող», «Իրանի պսակ», հզորների իդեալ Ռոստամը կախումն ունենար մի «թույլ արարածից», մի կնոջից:

Ազատարար կնոջ դերին նա անդրադառնում է իր «Բեժան և Մենիժա» սիրավեպում, վորը մենք կը վերլուծենք փոքր ինչ ստորև:

Հայ և իրանական, Ագաթանգեղոսի և Ֆիրդուսու յերկրորդ տարբերությունը կառուցվածքային չէ, այլ իդեոլոգիական:

Ագաթանգեղոսը հեռու յե աշխարհիկ, ռազմական, վիպական շնչից. Նրա վեպը գերազանցապես կրոնական է և վեպի հերոսը հոգևոր ուժի մարմնացում: Նա գույներ չի խնայում հակադրելու քրիստոնեականը կռապաշտականին, հոգևորը՝ նյութականին: Գրիգորը գերագույն իդեալն է նոր աշխարհայեցողության. Նա քրիստոնեական կյանքի և պայքարի անվեհեր զինվորն է: Կռապաշտական-աշխարհիկ բոլոր ուժերին հակադրված է համոզված, տոկուն բռնակալի դաժանությունները համառությամբ տանող, քրիստոսի համեստ զինվորը: Յեվ նա հաղթանակում է: Ագաթանգեղոսը հաղթանակող քրիստոնեության իդեոլոգն է:

Ֆիրդուսին, ընդհակառակը, գործ չունի կրոնական համեստության հետ: Նրա հերոսը մեծ համբերողը չէ, այլ բռնկվող, ռազմատենչ, դյուրաբորբոք և իր ֆիզիքական ուժերին վստահ փահլեվանը:

Ռոստամը ֆիզիքական ուժի մարմնացումն է. Նա բոլոր փահլեվանների իդեալն է: Վոչ վոք չի կարող նրա դեմ կանգնել: Հայրենիքի և իր նամուսի համար նա պատրաստ է իր կյանքը զոհելու. Իրանը հաճախ փրկել է ասպատակություններից, Իրանի գահակալներին ազատել թշնամիներից: Բայց նա միշտ այդպես չի վարվել: Վայ նրան, ով կը հանդգնի նրան անպատվել. լինի

[1] Ագաթանգեղոս, գլ. 211—213.
[2] Ագաթանգեղոս, գլ. 221.

նա թագավոր, թե «հասարակ մահկանացու» մեկ է, Ռոստամն արժանի պատիժը կը հասցնի:

Ռոստամը հերոսական Իրանի գերագույն իդեալն է:

Ֆիրդուսին հերոսական Իրանի գաղափարախոսը:

Հալածված հերոսի վիպական մոտիվի Ֆիրդուսու վերսիայում պակասում է ազատարար հերոսուհին: Այդ պակասը լրացված ենք տեսնում մեծ բանաստեղծի «Բեժան և Մենիժա» վիպական պոեմում, որը «Տրիստան և Իզոլդա»-յի, «Լեյլի ու Մաջնուն»-ի վիպական զուգահեռն է և Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետա»-յի նախատիպը:

Ֆիրդուսին այստեղ իրեն էլ ավելի ազատ է զգում դարերով մշակված թեմատիկ կառուցվածքի կապանքներից. ազատ փոփոխում է և՛ վիպական կառուցվածքը, և՛ սիրավեպի բնականոն զարգացումը: Նա իր ուշադրության կենտրոնն է դարձնում ոչ թե սիրավեպի բոլոր եպիզոդները, այլ միայն ու միայն սիրահարների հոգեկան աշխարհն և արկածալից կյանքը. մանրամասն նկարագրում է նրանց սիրո և ապրումների ելևէջները, նրանց սիրահար սրտերի զգացումնալից պատմությունը: Վիպական կառուցվածքն և եպիզոդների հետևողական շարադրանքը չէ նրան հետաքրքրողը, այլ միայն հոգեբանական մոմենտը, սիրահարների հոգեկան աշխարհի վերլուծությունը: Այդ պատճառով էլ առաջին հայացքից թվում է, թե սիրավեպը մերձավոր առնչություն չունի մեզ հետաքրքրող նյութի հետ: Մոտուստ վերլուծությունը, սակայն, ցույց է տալիս, որ այդ սիրավեպի նախնական խմբագրությունը նույն հալածված հերոսի վիպական մոտիվն է եղել:

Վո՞րն է այդ սիրավեպի առանցքը:

Իրանցի Բեժանը սիրում է Թուրանցի Մենիժային: Յերկուսն էլ բախտավոր են: Աղջկա հայրը, Թուրանի թագավոր Աֆրասիաբը — Իրանի վոխերիմ թշնամին, մեծ անպատվություն, անարգանք, նույնիսկ դավաճանություն է համարում իր աղջկա այդ քայլը: Նա ձերբակալում է Բեժանին և մահվան դատապարտում, հրամայելով կախաղան բարձրացնել նրան: Իմաստուն Փիրանը բարեխոսում է և կախաղանի փոխարեն Բեժանին մի խոր հոր-«խոր վիրապ» են գցում, վորտեղ նա ծարավ, անոթի պիտի հյուծվի ու մեռնի:

Աֆրասիաբի կարգադրությամբ՝ Մենիժային՝ այդ «պոռնիկին» կողոպտում են, դուրս են անում պալատից և ստիպում են, վոր մերկ ու բոբիկ հաց մուրալով՝ ինքն ապրի և կերակրի սիրած Բեժանին. Մենիժան այդպես էլ անում է:

Իրանցիները՝ Ռոստամի գլխավորությամբ ոգնության են գալիս Բեժանին: Մենիժայի ոգնությամբ իմանում են Բեժանի տեղը, ազատում են նրան ու սիրուհուն և մեծ ջարդ տալով թուրանցիներին, վերադառնում են Իրան:

Ինչպես տեսանք, այս սիրավեպի առանցքն է կազմում յերկու սիրահարների պատմությունը: Հակառակ ժողովրդական բանահյուսության վոգուն՝ Ֆիրդուսու սիրահար յերիտասարդները վոչ թե թագնված, գաղտագողի յեն իրար սիրում. սիրուհին՝ Մենիժան վոչ թե ծածուկ է ոգնում ու կերակրում իր սովամահության դատապարտված յարին, այլ բացահայտ, անգամ Աֆրասիաբի հրամանով, վորը ցանկանում է դրանով անպատված, անարգած լինել իր հարազատ աղջկանը:

Ֆիրդուսին դիտմամբ է շեղվում ժողովրդական աղբյուրից. նա ուզում է, վոր սիրահար յերիտասարդի նման սիրուհին էլ հոգեկան և ֆիզիկական տանջանքներ կրի, չարչարվի, դառն որեր ապրի, վորպեսզի գալիք ազատությունը սիրահարների համար էլ ավելի քաղցր լինի: Ֆիրդուսին սիրահարների հոգեկան ապրումները խտացրած վառ գույներով է նկարագրում, խիստ վողբերգական միջավայր է ստեղծում և այդպիսով հեռանում ժողովրդական բուն աղբյուրից: Ֆոլկլորին, մանավորապես վեպին, հատուկ չէ հոգեբանական նման մանրազնին վերլուծություններ. վեպի հիմնական հատկությունը դինամիկ գործողությունն է:

Յեվ չնայած Ֆիրդուսու հանճարեղ վերամշակության, չնայած այն բանին, վոր բանաստեղծը նպատակ էլ չի ունեցել հարազատորեն վերարտադրելու վիպական մոտիվը, նրա կառուցվածքային եպիզոդների հետևողականությունը, բայց և այնպես այստեղ էլ պահպանվել է հալածված հերոսի վիպական մոտիվի ամենաէական եպիզոդներից մեկը, այն է՝ աղջիկը հենց սկզբից ոգնության է գալիս իր սիրած հերոսին, փրկում է նրան սովա-

մահությունից և ամեն կերպ նպաստում է նրա ազատման գործին: Ժողովրդական վիպական մոտիվների մեջ սիրահար աղջիկը հանդես չի բերում այդքան աշկարա ակտիվություն: Նա գաղտնի յե կերակրում հերոսին և իր բուռն զգացմունքը թաքցրած, հալածողին տված խորհուրդներով է նպաստում սիրած յերիտասարդի ազատման գործին: Այդպես է, օրինակ, հայկական վերսիայում Ագաթանգեղոսի մոտ: Այրի կինը (=Խոսրովիդուխտը) գաղտնի կերակրում է Գրիգորին, փրկում է նրան սովամահությունից, ապա իր խորհուրդներով (յերազ) համոզում Տրդատին ազատել Գրիգորին և սրա միջոցով ազատվել վերահաս վտանգից, մահից: Հայկականի պես է նաև մյուս ժողովուրդների ֆոլկլորի մեջ հալածված հերոսի վիպական մոտիվը:

Հիշենք այստեղ նաև մեր նոր վեպից մի եպիզոդ, վոր, մեր կարծիքով, այս վիպական մոտիվին է պատկանում:

Սովամահության դատապարտված Սասնա Մհերին (Պստիկ Մհերին) խոր հորի մեջ կերակրում է մի պառավ, վորին և օգնում է նրան դուրս գալու հորից ու վոչնչացնելու թշնամու բանակը: Այս եպիզոդի մեջ պառավին օգնում է Ջոհար անունով նրա աղջիկը: Պառավը յեթե օգնում է Մհերին, այդ էլ վորոշ նպատակով, Մհերը խոստանում է ամուսնանալ նրա աղջկա հետ: Պարզ է, վոր նախնականում պառավ չի յեղել, այլ այդ դերը կատարել է սիրահարված աղջիկը: Հետագայում, սակայն, յերբ Մհերի վիպական ցիկլին՝ կոնտամինացիայի կարգով՝ միանում է մի նոր վիպական եպիզոդ — Մհերի ամուսնությունը Ջոհարի հետ, առաջին եպիզոդը՝ սիրահարված Ջոհարի հատվածը յերկփեղկվում է, մեկ դերը յերկուսի յե բաժանվում, առաջ է գալիս իր աղջկա բախտի մասին հոգատար պառավը:

Ֆիրդուսու սիրավեպի մեջ պակասում է քննության առարկա վիպական մոտիվի մյուս բաղադրիչ մասերը, օրինակ՝ ա) Սկիզբը՝ — հերոսը գալիս է աղջկա հոր (իշխանի) մոտ, յուր ծառայությունն առաջարկելու, ընդունվում է ու սիրվում հոր կողմից, ապա ընդհարվում է և «խոր հոր»—«խոր վիրապ» ձգվում, մահվան դատապարտվում. բ) Վերջը՝—հալածող հայրը (իշխանը) նեղության մեջ է. զղջում է, ափսոսում, վոր նրա հավատարիմ հերոսը, ազատարարը չկա, ապա յուր հարազատներից (կին, քույր, դուստր կամ մեծամեծները) իմանում հերոսի վողջ լինելու մասին, ազա-

տում է նրան կապանքներից, հորից, թողություն է խնդրում և նրա միջոցով ինքն էլ ազատվում սպառնացող վտանգից:

Կարծեցյալ այդ բացը, ինչպես տեսանք, կա Ֆիրդուսու ստեղծագործության մեջ: Նա այդ ընդհանուր և միասնական վիպական մոտիվը յերկու մասի յե բաժանել և ստեղծել յերկու հոյակապ, գեղարվեստական վեպեր՝ մեկն իր վերջավորությամբ վողբերգական «Ռոստամ և Սոհրաբ»-ը, մյուսն իր վողբերգական ընթացքով, բայց ուրախ յելքով «Բեժան ու Մենիժա»-ն:

Իրանի հանճարեղ բանաստեղծը միշտ ազատ է յեղել իր նյութի ընտրության և մշակման մեջ: Նա նյութն օգտագործում է ըստ իր գեղարվեստական և իդեոլոգիական ըմբռնման ու ճաշակի: Այդ տեսակետից նա նախորդում է մեծ հանճարներ՝ Շեքսպիրին և Գյոթեյին:

Իրանի առասպելների արձագանքը լսվում է նաև Բուզանդի պատմության մեջ:

Սրանից մոտ 20 տարի առաջ մենք հրավիրեցինք մեր ուսուցիչ, մեծանուն հայագետ պրոֆ. Հ. Մարկվարտի ուշադրությունը Պապ թագավորի և Աժդահակի առասպելի սերտ առնչության վրա: Հռչակավոր գիտնականը յերկար սպասել չտվեց և մի ընդարձակ միջանկյալ հավելում մտցրեց «Հանդէս ամսօրեայ»-ում պարբերաբար լույս տեսնող իր մեծածավալ և բովանդակալից ուսումնասիրության մեջ[1]: Նա փայլուն կերպով ապացուցեց այն սերտ կապը, վոր գոյություն ունի Պապ թագավորի և Աժդահակի մեջ:

Աժդահակի առասպելը հայ մատենագրության մեջ, մասնավորապես Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ շատ է զբաղեցրել հայ և օտար բանասերների միտքը: Ուսումնասիրել են այդ առասպելն ե՛ տեքստաբանական տեսանկյունով, ցանկանալով այդ առասպելի գրական աղբյուրներն ի հայտ բերել, վորոնցից օգտված պիտի լիներ Մ. Խորենացին, ե՛ համեմատական ա-

[1] Jos. Markwart «Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien 1930», յերես 135—148.

ռասպելաբանության տեսանկյունով, ցանկանալով Իրանի այդ առասպելի զուգահեռները գտնել հայ ժողովրդական առասպելների ու զրույցների մեջ, վորոնց թվին են պատկանում, որինակ, Արտավազդի, Շիդարի (Շիթառի) և Պղտիկ Մհերի առասպելներն ու առասպելախառն վեպերը[1]:

Մեզ առաջադրած թեմայի շրջանակներից դուրս կը գանք, յեթե մանրազնին զբաղվելու լինենք այդ առասպելի վերլուծությամբ[2]: Սակայն, այստեղ առիթից ոգտվելով՝ կը ցանկանայինք անցողակի մեր մի դիտողության վրա հրավիրել մասնագետների ուշադրությունն և, կարծում ենք, դրանով նպաստած կը լինենք այդ առասպելի լուսաբանությանը:

Պրոֆ. Հ. Մարկվարտի հիշածս ուսումնասիրության մեջ Պապ Թագավորին և Աժդահակին նվիրած հատվածը պարզ ցույց է տալիս, վոր Աժդահակյան առասպելը գոյություն է ունեցել հայկական միջավայրում և ուրույն մշակության է յենթարկվել: Մեզ թվում է, վոր այդ առասպելի հետ մեր առասպելական աշխարհում դարեր շարունակ առասպելաբանների բերանում պահվել է նաև Աժդահակի անունը:

Լեռներին ու ժայռերին գամված կամ նրանց մեջ փակված հսկաների շարքին է դասվում նաև Արտավազդը (Արտավազը) ու նրա կրկնակ Շիդարը (Շիթար, Շիթառ):

Մենք կարծում ենք, վոր այս Շիդար (ռամկական արտասանությամբ՝ Շիթար, Շիթառ) անունն առաջ յեկած պիտի լինի Աշի-դահակա-Աժիդահակա անունից, ընդ վորում սկզբնական այդ անվան ձևը, վերջին «ա»-յի անկումով դառնում «Աշի-դահակ — Աժիդահակ», վորն իր հերթին կ>ր վերածվելով՝ փոխվում է

1 Այդ ուսումնասիրություններից հիշենք միայն կարևորագույնները՝

ա) Մկրտիչ Եմին, «Վեպք Հնույն Հայաստանի».

բ) Гр. Халатьянц, «Армянские Аршакиды», Москва.

գ) Մանուկ Աբեղյան, «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց Պատմության» մեջ, Վաղարշապատ 1899.

դ) Թ. Ավդալբեկյան, «Միհրը Հայոց մեջ», Վիեննա 1930.

ե) Вс. Ф. Миллер, «Кавказск. предания о великан. приков. к горам». (ЖМНП, 1883).

զ) Լ. Մելիքսեթ-բեկ, «Արտավազդի և Մհերի հեքերը Վրաստանում», Բանբ. Հայ. Գիտ. Ինստ., Վաղարշապատ, 1922.

2 Այդ թեմային մենք կը վերադառնանք մի ուրիշ տեղ:

Աշիդահար-Աժիդահար ձևի, իսկ այս վերջին ձևից՝ սկզբնական «ա»-յի անկումով Շիդահար, միջին «ա»-յի սղմամբ>Շիդըհար> Շիդհար. իսկ այս վերջին ձևը Շիդար կամ Շիթար=Շիթառ (բարբառային արտասանություն). այսպիսով մենք կ'ունենաք Շիդար=Աշի-դահար, կամ Աժի-դահար:

«Շիդար» անունն ըստ Th. Nöldeke-յի ծագում է պարսկերեն šêdhâ (r) شیدا — շիդա (ր) բառից և նշանակում է «խենթ», «խելագար» («wahnsinnig»)[1]:

Յեթե մեր ստուգաբանությունը ճիշտ է, այդ դեպքում «Շիդար» հատուկ անունը, ապա և հասարակ անունը պետք է նշանակի «դեվ» («dêw»):

«Յատկար-ի Զարիրան»-ի մեջ Իրանի և Խիոնի այդ սոսկալի մարդկային սպանդը կոչվում է Az-dahak-յան («damit die Xyon erfahren, was sich begeben hat am Tage Fårvardin in der Az-dahak-schlacht der Leute des Vištäsp»).

Աժդահակն այս պատերազմի մեջ հանդես չի յեկել. նա չի մասնակցել այդ սարսափելի ճակատամարտին: Պարզ է, վոր «Յակտար-ի Զարիրան»-ի հեղինակն այդ ճակատամարտը Աժ-դահակ-յան անվանելով, ցանկացել է այդ մարդկային նախճիրը վորակել, վորպես Աժդահակ-ին հատուկ, այսինքն դիվային: Այսոր էլ Իրանի ժողովուրդները, ինչպես և հայերը աժդահա(ր) ասելով՝ հասկանում են — հսկա, վիշապ և դև. հաճախ յերկուսն էլ միասին են գործածում — աժդահա(ր) դև, հաճախ էլ փոխանակում են իրար[2]:

Մեր այս ստուգաբանությամբ հնարավոր է ավելի ճիշտ հասկանալ հայկական հետևյալ առածը՝

«Հուշիկ քալեմ, կ'ըսեն կամկար.
Շուշուտ քալեմ, կ'ըսեն շիթառ»:

Պրոֆ. Հր. Աճառյանը, մեջ բերելով այդ առածը «շիթառ» (Ալշ.) բառը բացատրում է՝ «խենթուկ կամ շտապող» (°)[3]:

1 Th. Nöldeke «Persische Studien», II, յերես 42.
Гр. Халатьянц, «Армян. Аршакиды», յերես 318.

2 Մանուկ Աբեղյան «Հայ ժողովրդ. առասպելները Մ. Խորենացու Հայ. Պատմ. մեջ», յեր. 348.

3 Հր. Աճառյան, «Հայերեն գավառական բառարան», Եմին. Ազգ. Ժողով.

Մեր անվանի լեզվաբանը «շիթառ» բառի նշանակությունը կասկածելի, հարցական է համարում:

Չի՞ նշանակում, արդյոք, «շիթառ» բառը դև, որի հիմնական հատկանիշներից մեկն է՝ ըստ մեր ժողովրդական հավատալիքների, տրագաշարժությունը, բուչերը, արագ աներևութանալը և այլն և այլն: Մենք հավանական ենք գտնում այդ:

Այսպիսով այդ առածի իմաստը կը լինի.

Հուշիկ եմ քայլում, ասում են կամկար (դանդաղաշարժ),[1]
Արագ եմ քայլում, ասում են շիթառ (դև, արագաշարժ):

Ագաթանգեղոսի և Բուզանդի «պատմությունների» մեջ դեռ շատ ակնարկներ կան Իրանի վիպաշխարհի գոյության մասին Հայ միջավայրում. առավել ևս Իրանի վեպերի և առասպելների զուգահեռներ, որոնք «պատմական» իրադարձություններ դիտվելով, մինչև այժմ քննության չեն ենթարկվել համեմատական ֆոլկլորիստիկայի տեսանկյունով:

Աշխատության ծավալն ու շրջանակները թույլ չեն տալիս ինձ զբաղվելու այդ նյութով: Այստեղ բավականանանք վերը քննարկած վիպական հատվածներով, հիմնական և մանրակրկիտ աշխատությունը թողնելով առաջիկային:

հատոր Թ., Թիֆլիս 1913 թ., էջ. 828–29: Նույն բառարանի մեջ «Կամկար» բառի տակ բերված է այդ առածը հետևյալ խմբագրությամբ՝

«Հուշիկ քալեմ, կ'ըսեն կամկար,
Շուշուտ քալեմ, կ'ըսեն Աթառ»: (էջ 543).

Արդյոք այդ «Աթառ» բառը վրիպակ չէ՞. «Աթառ» բառ չկա Հր. Աճառյանի բառարանի մեջ:

[1] Արդյոք «կամկար»-ը մեր ժողովրդական հավատալիքների մեջ մի վոգի չէ՞, որի հիմնական հատկություններից մեկը դանդաղաշարժություն-թամբալությունն է:

Դ

ՖԻՐԴՈՒՍՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՑԵՂԱՆԱԿՆԵՐՆ ԻՐԱՆԻ ՎԻՊԱՇԽԱՐՀԸ ԴՅՈՒՑԱԶՆԵՐԳԵԼԻՍ

Այստեղ, մեր այս հակիրճ ակնարկում վերլուծեցինք Իրանի վիպաշխարհի մոտիվներից ու եպիզոդներից մի յերկուսը, որ տեղ են գտել քննարկածս մատենագրական հուշարձանների մեջ: Մենք տեսանք, որ այդ ֆոլկլորիստիկ նյութերն անաղարտ չեն ավանդվել մեզ, որ դրանք կամ հայկական միջավայրում կենցաղավարող իրանական մոտիվներ են՝ յերանգավորված հայ կղերական մատենագրի ձեռքով, կամ նույն այդ մոտիվների հայկական պատումներն են միախառնված հայ վիպաշխարհի եպիզոդների հետ՝ ամբողջապես հայացած և փոխադրված կղերականի պատմական յերկի մեջ:

Իրանի վիպական մոտիվներն էլ իրենց հերթին նույնպես անաղարտ չեն պահված Ֆիրդուսու «Շահ-Նամե»-յի մեջ: Ֆիրդուսին էլ, քաղելով իր նյութերը գրական աղբյուրներից և ժողովրդի բերանից, հիմնովին վերամշակել է ստացած ժառանգությունը, նյութի մշակումը յենթարկելով իր բանաստեղծական ճաշակին և ստեղծագործական պրիոմներին:

Ֆիրդուսու ստեղծագործական պրիոմների մասին խոսելիս՝ մենք հիմք ենք ընդունում միայն գրավոր աղբյուրները, այսինքն՝ այն ֆոլկլորիստիկ նյութերը, որոնք ֆիկսացիայի յեն յենթարկվել մեծ բանաստեղծից առաջ գրականության մեջ՝ պահլավ գրական հուշարձաններում, որոնցից օգտվել է նա, և որոնց արձագանքը գտնում ենք քննարկածս հայ մատենագրության մեջ:

Նման հարցադրում և կոնկրետ մերձեցում, դժբախտաբար, չենք կարող ունենալ Ֆիրդուսու բանավոր աղբյուրների օգտագործման նկատմամբ, քանի որ պարսիկ ժողովուրդը չի պահպանել և սերունդից սերունդ ավանդել նախաֆիրդուսյան Իրանի վեպն ու առասպելը: Հանճարեղ բանաստեղծի ազդեցությունն այնքան մեծ է յեղել, որ նրա «Շահ-Նամե»-ն խեղդել է իր բնում ոչ միայն գրագետների, այլև անգրագետ աշխատավոր մասսայի ստեղծագործական թափը, մոռացնել է տվել Իրանի հին հերոսների մասին պատմվող ֆոլկլորը, գերիշխել է նրանց հոգևոր անդաս-

տանում և դարձել է նրանց հոգևոր սնունդը։ Այսօր էլ պարսիկները, անգամ անգրագետ մասսան, բերանացի հազարավոր տողեր գիտե «Շահ-Նամե»-յից, այսօր էլ նա համեմում է իր խոսքն ու զրույցը «Շահ-Նամե»-յական ասույթներով, այսօր էլ նա պաշտվում է, վորպես Իրանի չգերազանցված հանճար։

«Շահ-Նամե»-յի բանավոր աղբյուրների պատմության և վերլուծության համար, մեր կարծիքով, մեծ նշանակություն կարող են ունենալ քուրդ և հայ ֆոլկլորում մինչև այսօր էլ պահվող և պատմվող «Շահ-Նամե»-յի մոտիվները։ Հայ և քուրդ աշխատավորներն ու նրանց անգրագետ ասացողները — գուսաններն ազատ են լսել Ֆիրդուսու անմիջական ազդեցությունից և պահպանելով Իրանի վեպի հնագույն պատումները, վորոշ չափով «մշակել են» Իրանից փոխ առած պատումներն ազգայնացման և տեղայնացման ուղղությամբ, կցել են «Իրանի վեպին» հայ և քուրդ վեպերին հատուկ մոտիվներ, եպիզոդներ և այլն։

Այժմ անցնենք Ֆիրդուսու ստեղծագործական պրիոմների բնութագրման։

Ֆիրդուսին անցյալի այդ հարուստ ժառանգությունը յուրովի յե օգտագործում և մշակում։ Նրա նպատակը չեր հանգերով վերարտադրելու Իրանի եպիքական անցյալը, հարազատորեն պահպանելով իր աղբյուրների բոլոր տվյալները. վոչ. նա վարպետորեն վերամշակում է նյութը, նյութն ու անցյալի ամբողջ ժառանգությունը ծառայեցնելով իր նպատակին, իր բանաստեղծական ճաշակին։ Հաճախ իր աղբյուրներից մանր ու խոշոր եպիզոդներ է դուրս ձգում կամ ավելացնում, անանուն հերոսներին անուններ է տալիս, ճապաղ և աննշան մանրամասնությունները աչքաթող է անում, նոր գործող անձեր է հորինում, ընդգծում է հակասությունները, գլխավորին ուժեղացնելու նպատակով սրում է դրությունների ու պայքարի անցողիկ միջադեպերը, վիպական կառուցվածքն է փոխում, տրոհելով մի ամբողջական մոտիվ մի քանի վեպերի կամ մի քանի եպիզոդներ միացնելով, ստեղծում է կառուցվածքով ձույլ, բովանդակությամբ հետևողական, հոգեբանորեն բարդ մի մեծ վեպ, և այդ ամենը յենթարկում է իր բանաստեղծական սքեմային, համեմում է բարոյագիտական խորհրդածություններով, լիրիքական գեղեցիկ զեղումներով, բնության ընդարձակ նկարագրություններով և այլն և այլն։

Ֆոլկլորն օգտագործելու և մշակելու բնագավառում Ֆիրդուսին նման չէ մեր տաղանդավոր եպիկ Հովհ. Թումանյանին։ Մեր եպիկը յուր «Սասունցի Դավիթ»-ը կերտելիս՝ աշխատել է հնարավորության սահմաններում պահպանել ժողովրդականի վոչ միայն կառուցվածքը, այլև ամբողջ վոգին, նրա ամբողջ գեղջկական անարվեստ, պարզ հոգեբանությունը։ Հովհ. Թումանյանի «Սասունցի Դավիթ»-ի մեջ դուք չեք գտնի քիչ թե շատ լիրիքական զեղումներ, բարոյագիտական խորհրդածություններ, բնության նկարագրություններ կամ հերոսների բնութագրություններ խորհրդածությունների կարգով։ Հովհ. Թումանյանի «Սասունցի Դավիթ»-ի և այլ ժողովրդական ստեղծագործությունների մեջ դուք կը գտնեք բազմաթիվ բառացի հատվածներ, վոր բանաստեղծը վարպետորեն վեր է ածել գրականի, տեղ-տեղ միայն լցնելով այն բացերը, վոր ասացողը կամ գրի առնողը, գիտակցաբար կամ անգիտակցաբար, չի ասել կամ չի գրանցել։ Հովհ. Թումանյանի «Սասունցի Դավիթ»-ը գերազանցապես ժողովրդական է թե իր կառուցվածքով և թե աշխարհըմբռնմամբ։

Այլ է Ֆիրդուսու «Շահ-Նամե»-ն։ Այդ գրական ձույլ կոթողը գերազանցապես գրական մշակություն է, հարմարեցրած Իրանի տիրող դասակարգի իդեոլոգիային։

Այլ կերպ չէր կարող լինել։

Մանր բուրժուազիայի գաղափարախոս Հովհ. Թումանյանը վերարտադրում է իր դասակարգի մանր-բուրժուական գյուղացիության ստեղծագործությունը, նրա տնտեսության ու կենցաղի, նրա ապրումների և մտածողության խոշորագույն հուշարձանը։ Ընդհակառակը՝ մանր սեփականատեր Ֆիրդուսին կատարում է վոչ թե իր դասի, այլ ֆեոդալների, մեծամեծների, Իրանի տերերի սոցիալական պատվերը։

Հայ եպիկի «Սասունցի Դավիթ»-ը շահագործվող գյուղացիության իրավունքի պաշտպանության մի դրվագ է, Դավիթն էլ

... Զուրկ ու խավար, քաղցած ու մերկ,
Հազար ու մի կըրակ ու ցավ,
Հազար ու մի հոգսեր [1]

Հովհ. Թումանյան, «Սասունցի Դավիթ», Յերևան, 1934 թ., յերես 40—41։

ունեցող «ռանչպար-մարդկանց» դասի հզոր պաշտպանը. իսկ Ֆիրդուսու «Շահ-Նամե»-ն—Իրանի հզոր ֆեոդալների և առաջին հերթին primus inter pares, հզորագույն ֆեոդալների, Իրանի միապետ Սամանիդների «դասի», նրանց գահակալության իրավունքի փայլուն հուշարձանն է։ Յեվ Ֆիրդուսին այդ պատվերը կատարում է մեծ վարպետությամբ, նյութն ու նյութի կառուցվածքը հարմարեցնելով տիրողների իդեոլոգիային, գովերգելով և փառաբանելով Իրանի շահնշահներին և նրանց հնազանդ «ջոջերին, փահլևաններին» [1]։

Այս դրույթները կարելի յե բազմաթիվ օրինակներով հիմնավորել ու ամրապնդել, բայց մեզ թվում է այդ ավելորդ, վորովհետև այն անցողակի համեմատություններն էլ, վոր կատարել ենք աշխատության մեջ՝ քննարկելով Ֆիրդուսու գրավոր աղբյուրներից յերկուսը՝ «Յատկար-ի Զարիրան»-ն ու «Կարնամակ-ի Արտաշիրի Պապական»-ը լիովին բավական են յեզրակացություններս աներկբա համարելու համար։

ե

ԻՐԱՆԻ ՎԻՊԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԻ ՍԱԿԱՎՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մենք հիշեցինք «Շահ-Նամե»-յի վիպական աղբյուրներից մի քանիսը. դրանցից վերլուծեցինք միայն այն մոտիվները, վորոնք առկա յեն Բուզանդի և Ագաթանգեղոսի և վորոշ չափով Մ. Խորենացու[2] պատմությունների մեջ կամ վորոնց նախնական պատումներն ամբողջապես գրանցված չլինելով այդ մատենագիրների յերկերում, բայց և այնպես ծանոթ են յեղած նրանց կամ

1 Բնութագրելով հայ և պարսիկ բանաստեղծների ստեղծագործական պրինցիպները ֆոլկլորն օգտագործելու բնագավառում, մենք մեր նպատակից դուրս ենք համարում նրանց ստեղծագործությունների գրական-գեղարվեստական ու հասարակական արժեքավորում տալը։

2 Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ, ինչպես նաև մյուս հայ մատենագիրների յերկերում կան ևս մի շարք հատվածներ և ակնարկներ, վորոնք վերաբերում են Իրանի առասպելին և վեպին, սակայն այդ ամենն ստանձնած թեմայից դուրս են և չեյին կարող ներկա աշխատության քննության նյութ դառնալ։

Իսֆենդիարը վորսում է առյուծներ

իրանական զրույցների միջոցով, կամ այդ իրանական, թերևս շրջիկ մոտիվները գոյություն են ունեցել մեր հին վեպի գրական մշակության մեջ, վորպես միևնույն վիպական սյուժեյի և մոտիվի հայկական վարիանտներ։

Ընդհանուր առմամբ շատ չեն նման նյութերը։ Հազարամյա դրացիական հարաբերություններից կարելի յեր ավելի շատ բան ակնկալել։

Կարելի յեր սպասել, վոր հայ ֆեոդալները, մանավորապես թագավորները (Բագրատունիներ, Արծրունիներ, Ռուբինյաններ և այլն), թարգմանել տային «Շահ-Նամե»-ն կամ պատվիրեյին նրա նմանությամբ վիպերգելու հայ յերկրի անցյալը, թեկուզ հենց իրենց ֆեոդալական տոհմերի վիպական սխրագործությունները։ Սակայն նման հուշարձան մեր ձեռքը չի հասել և թվում է, վոր այդպիսի փորձեր էլ չեն կատարվել, հակառակ դեպքում դրանց մասին գոնե անցողիկ վկայություններ կ'ունենայինք մեր մատենագրության մեջ։

Այդ դեռ քիչ է։

Մենք չունենք մեր գրականության մեջ քիչ թե շատ ընդարձակ աշխարհիկ-վիպական քերթվածներ, էլ չենք ասում՝ մեծ վեպեր, ինչպես մեր հազարամյա դրացիները, կուլտուրապես մեզ հարազատ վրաց ժողովուրդը, վոր տվել է Շոթա Ռուսթավելու նման մի տաղանդավոր եպիկ՝ տոգորված Ֆիրդուսու «Շահ-Նամե»-յի վոգով՝ և մի շարք այլ եպիկներ։

Արդ՝ ինչպե՞ս բացատրենք այն, վոր «Շահ-Նամե»-ն պատմական Հայաստանում չի թարգմանվել հայերեն, վոր հայ մատենագիրները բացառությամբ Կոստանդին Երզնկացու՝ չեն հիշում անգամ «Շահ-Նամե»-յի անունը և ի՞նչն է պատճառը, վոր Իրանի վեպն ու առասպելը սպասածից քիչ են հիշատակվել և ֆիքսացիայի յենթարկվել մեր հին գրականության մեջ։

Մեր կարծիքով, դրանց պատճառները գերազանցապես քաղաքական և կրոնական-իդեոլոգիական բնույթ են կրում։

Հիմնական պատճառների մեջ պետք է ընդգծենք յերկուսը, վորոնք կապված են այդ յերկրների՝ ա. քաղաքական և բ. իդեոլոգիական խոշորագույն հեղաշրջումների հետ։

ա. III դարի 20-ական թվականներին տապալվում է Հայաստանի Արշակունիներին տոհմակից Իրանի Պարթևների հարստու-

թյունն և Արշակների գահը գրավում են Սասանյանները, Արտաշիր Պապականի առաջնորդությամբ։ Այս հեղաշրջումից հետո սկսվում է երկու հարևան երկրների՝ Սասանյան Պարսկաստանի և Արշակունի Հայաստանի դարավոր կռիվը, մի կռիվ, որ այնքան հարուստ բովանդակություն և վիպական լերանգներ է ստացել «Բուզանդարան»-ի հեղինակի գրչի տակ, հետագայում էլ՝ հայ Արշակունիների անկումից հետո՝ Հայաստանի տեր նախարարների և Իրանի շահնշահների մեջ։ Սասանյան Իրանը ձգտում է վերացնել, ոչնչացնել Իրանի Արշակունիների վերջին հենարանը, զորավիգը Հայաստանում — Հայ Արշակունիներին և նրա փոխարեն իրենց կամքին հլու հնազանդ Սասանյան վասալներ ու մարզպաններ նշանակել, իսկ Հայ Արշակունիները ոչինչ չեն խնայում տապալելու և «միջից հանելու» տոհմական թշնամի Սասանյաններին։ Այս բուռն ատելությունն իր կլասիկ ձևակերպումն է ստացել Արշակ II-ի բերանում, երբ վերջինս՝ մի պահ ինքնամոռացության մեջ՝ հոխորտալից աղաղակում է. «Ի բաց կաց յինէն, ծառայ չարագործ տիրացեալ տերանցն քոց. այլ ոչ թողից զքեզ և որդւոց քոց զվրէժ նախնեաց իմոց, և զմահն Արտաւանայ արքայի։ Զի այժմիկ ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է. բայց ոչ թողից, եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ» [1]։ Ցեվ դրան հակառակ այն արհամարհական վերաբերմունքը, որ գոյություն ունի արքայից արքայի արքունիքում և համակել է պալատական մեծամեծներին՝ «... իբրև տեսանէր (ախոռապետն) զթագաւորն (զԱրշակ), ոչինչ առ լաւս կալեալ մեծարեաց զնա, և ոչ ինչ շուքս դնէր նմա, այլ և անարգանս եւս դնէր թշնամանաց, ասելով ի պարսկերէն լեզու, թէ՝ «Այծից Հայոց արքայ, եկ, նիստ ի խրձան խոտոյ ի վերայ» [2]։

Այս արտահայտությունները երկու երկրների տիրող դասերի խտացած իդեոլոգիական ձևակերպումներն են գունագեղ վիպական լեզվով։ Սրանք արտահայտություններ են, որ առաջ են եկել տարբեր քաղաքական որիենտացիաների հետևանքով, ընդ որում Պարթև Արշակունիների հարստության անկումից հետո՝ Հայ Արշակունիները թեքվում են դեպի Արևմուտք՝ հունա-

[1] Բուզանդ, IV, ծգ.
[2] Անդ, IV, ժգ.

հռոմեական աշխարհը և յերես են դարձնում Իրանից, հարկ յեղած դեպքում դիմագրավելով Սասանյանների նվաճողական եքսպանսիային։

Հայ Արշակունիների հակասասանյան քաղաքական մտայնությունը համակում է նաև հայ ֆեոդալներին։ Բնորոշ են այդ տեսակետից վիպական լերանգով պատմած Մ. Խորենացու հատվածները Շապուհի թագավորության մասին Հայաստանում։

Սասանյան Հազկերտ I-ն իր որդի Շապուհին թագավոր է կարգում Հայաստանում։ Նա խորհում է, որ «իբր թէ այնպէս հանապազ առ նմա լինելով նախարարքն յանգչիցին խօսիւք, տուրևառիւք, խրախճանութեամբ և զբօսանօք որսոց, այլ և եկամուտ հարազատութեամբ մերձաւորեսցին խնամութեամբք» [1]։ Այս ծրագրի նպատակն էր՝ նորից ներգրավել Հայաստանը Սասանյանների արտաքին և ներքին քաղաքականության բնագավառը, դարձնել Հայաստանը մի ֆորպոստ ընդդեմ Բյուզանդիոնի վաբելիք պատերազմների ժամանակ։ Հազկերտի ծրագիրը, սակայն, անհաջողության է մատնվում, որովհետև նրա գործակալը՝ Շապուհը «ոչ կարաց հաճել զմիտս նախարարացն. ամենեցուն ատեցեալ զնա, և ոչ արքայօրէն մեծարէին զնա յորս կամ ի խաղու» [1]։

Հայ նախարարները ծաղրում և արհամարհում են Սասանյան Շապուհին։ Նրանցից մեկը՝ Մոկացի Ատոմն այպանում է Սասանյան արքայազնին, ասելով. «Միթէ և այդ քարի՞նք իցեն, զի ես յառաջեցից. և արդ՝ եթէ դու զՄոկացիս կոչես դիւազգիս՝ ես զՍասանեանսդ կոչեմ կճամարդիս»։

Մի այլ հայ նախարար՝ Շավասպ Արծրունին մականախաղի ժամանակ չի ցույց տալիս արքայավայել հարգանք Շապուհին և խլում է նրանից գնդակը։ Շապուհի զայրույթին և սպառնալիքին նա պատասխանում է՝ «Այո, ասէ, ճանաչեմ և զիս արքայորդի ի սերմանէ Սանասարայ, և ունիմ իշխանութիւնս ընդ եղբարս քո զբարձն արքայի համբուրել, որպէս և անուանակոչեցեալս եմ։ Եւ զայս ասացեալ յոյժ քամահարար, ի ձիարձակարանէն արքայագնաց [2] լինէր»։

[1] Խորենացի «Պատմութ. Հայոց», III, ծե.
[2] Անդ, III, ծե. Տպված է «արփայագնաց», որը գրչի սխալ եւ Բառն անի-

Այդպես է վարվում Սասանյանի հետ և Խոսրով Գարդմանացին։

Այս և նման միջադեպերն ու արտահայտությունները, ճիշտ է, վիպական ձևով ավանդված՝ պատահական չեն։ Դրանք արտահայտում են տիրող դասի վերաբերմունքը Սասանյանների հանդեպ. մի ակնհայտ թշնամական վերաբերմունք, որ մերթ լռելյայն է արտահայտվում, մերթ կարող է ակնհայտ դառնալ և բացարձակ ընդհարման վերածվել։

Շատ համարձակ կը լիներ, յեթե պնդեյինք, որ Հայաստանի բոլոր ֆեոդալներն էլ հակասասանյան մտայնությամբ են տոգորված։ Քաղաքական հանգամանքները, զուգորդված տնտեսական պայմանների հետ, հարկավ, կարող էյին վորոշ շրջաններում և վորոշ ժամանակ Սասանյան որիենտացիայի հայ նախարարներ Իրանի սահմանամերձ գավառներից հավաքագրել. բայց այդ յերևույթը միշտ էլ ժամանակավոր բնույթ է կրել։ Տիրող մտայնությունը յեղել է հակասասանյան։

բ. Քաղաքական այս հակամարտությանը հաջորդում է պայքարը բորբոքող յերկրորդ ծանրակշիռ իրադարձությունը։ Հայ Արշակունիներին հարազատ Պարթևների գահազրկմանն Իրանում մոտ մի դար հետո հաջորդում է քրիստոնեյության հռչակումը Հայաստանում, վորպես պետական կրոն։

Տարիներ շարունակ, կողք կողքի ապրած կրոնով, կուլտուրայով, քաղաքական կյանքով, կենցաղով ու տնտեսական հարաբերություններով հարազատ այդ յերկու յերկրների ժողովրդական զանգվածների մեջ այժմ տիրող դասերը վերևից փորձում են պաշտոնապես առաջ բերել մի խոր վիհ։ Ֆեոդալական իրավակարգում, յերբ կրոնը խոշոր քաղաքական ֆակտոր է հանդիսանում, յերբ նա դառնում է տիրող դասերի իշխող իդեոլոգիան,

մասն է և քերականորեն սխալ։ «Արփայադնաց լինել» որ և Արփեգնաց (°) կամ Արփիադնաց (°) լինել. խաղալ գնալ իբրև ընդ արփի. եթերընթաց իմն լինել՝ իբրև օդապարիկ ընդ օդս թռչել, խոյանալ» (ՀԲ)։ — Բռնազբոսիկ և սխալ բացատրություն։ Ուղղում ենք «արքայադնաց» հետևյալ նկատառումներով. 1. քերականորեն ճիշտ է. սխալը կարող է առաջացած լինել յերկաթագիր Ք. և Փ. շփոթությունից. 2. Հայ նախարարները Շապուհին արքայորեն չէյին մեծարում և 3. Շավասպն իրեն արքայորդի համարելով՝ արհամարհում է Սասանյանին և արքայաբար դուրս գալիս ձիարձակարանից։

այդ խոլխոլատը վոչ մի ուժով հնարավոր չեր լցնել։ Այս վերջին քաղաքական ակտով հայ պետականությունը և նրա քաղաքական ու իդեոլոգիական կյանքի ղեկավարները՝ ֆեոդալների խոշոր մասն և կղերը՝ մի անգամ ընդ միշտ յերես են դարձնում Իրանից և ձգտում են, իրենց ինքնուրույնությունը պահպանելով՝ մերձեցման միջոցներ և ուղիներ փնտրել Արևմուտքի հունահռոմեական աշխարհի հետ։ Քրիստոսի վարդապետության հետևորդները, ֆեոդալական Հայաստանի քաղաքական իդեոլոգիական ճակատի այդ ղեկավարները, յերբեք չէյին կարող իդեոլոգիայի բնագավառում համերաշխության կամ բարեկամության փորձ անել. իրենց ձեռքը մեկնել Ահուրամազդայի և Միթրայի աշակերտներին, Սասանյանների որոք վերածնություն ապրող գրադաշտականներին։ Քաղաքական և կուլտուրական այս հողի վրա պայքարն որ ավուր ուժեղանում է։

Մեր մատենագիրները չեն թաքցնում և մանրամասն պատմում են այն սիստեմատիկ միջոցառումների մասին, վորոնց նպատակն եր արմատախիլ անել Արամազդի կրոնի սերմերը հայ անդաստանից, իր բնում խեղդել հեթանոսական Հայաստանի անցյալը հիշեցնող ծեսն ու սովորույթը, յերգն ու խաղը, զրույցն ու առասպելը, վոր փոքր ինչ կարող եր հիշեցնել, կապ ունենալ հարևան Իրանի կուլտուրայի հետ։

Բնորոշ են այդ տեսակետից մեր մատենագիրների կծու հեգնանքը, խարազանող և վոչնչացնող քննադատությունը Պարսից Բեշի, Զրադաշտի վարդապետության (Եզնիկ, Եղիշե) և անարգական, արհամարհական վերաբերմունքն այն ամենին, ինչ վոր կապ ունի Իրանի կուլտուրայի, նիստ ու կացի, կենցաղի, նրա աշխարհայեցողության, մտքի ու ապրումի, զրույցի ու առասպելի հետ։ «Զի՞նչ քեզ այսոքիկ կարօտութիւն առասպելք սուտք, կամ զի՞նչ պէտք անմիտ և անհանճար բանից յարմարանք, — հեգնանքով հարցնում է Մովսես Խորենացին ու հակադրում այդ «անմիտ և անհանճար բանից յարմարանք»-ին «յունական պերճ և ողորկ առասպելքն..., որք զճշմարտութիւն իրաց այլաբանաբար յինքեանս ունի թաքուցեալ»[1]։ Խորենացու այդ տողերը չեն վերաբերում առհասարակ առասպելին և նրա գնահատման. վոչ, նա

[1] Խորենացի, I, հավելված Ա.

արհամարհական խոսքերը վերաբերում են հատկապես պարսիկների ֆոլկլորին՝ առասպելներին և զրույցին, «զի, ասում է նա, զորոց (իմա պարսիկների) ջառեմք զրանս և զգործս, և այնոցիկ մանաւանդ թէ լուրն զլսելիս մեր տաղտկացուցանէր՝ այսօր ձեռամբ իմով շարադրեմ զայնոսիկ»... [1]

Խորենացու այս բնորոշումն և այս վերաբերմունքը հատկանշական է բոլոր հայ մատենագիրների համար։

Հարկավ այդ միջոցառումները մեծ և կորստաբեր հաջողություններ են արձանագրել, բայց և այնպես ի վիճակի չեն յեղել իսպառ վոչնչացնելու այն ամենը, ինչ վոր դարերի հարազատության կնիքն եր կրում։ Կարելի յե ավելին ասել։ Հախուռն պայքարի ընթացքում հայ կղերն ինքը վորոշ չափով յենթարկվում է մինչ-քրիստոնեական իդեոլոգիային, քաղելով նրանից նոր գաղափարախոսության տարածման ու զարգացման համար մոտիվներ, պատկերներ, յերանգներ և այլն։ Մեր հոգևոր յերգերն ու շարականները, ծեսերն ու ժողովրդական կրոնական տոները լավագույնս ապացուցում են այդ։

Նախաքրիստոնեական Հայաստանում տարածված Իրանի զրույցների և առասպելների աշխարհից, ինչպես տեսանք, փրկվել են հայ կղերի վոչնչացման քաղաքականությունից և մեր ձեռքն են հասել հենց նույն այդ կղերի միջոցով բազմաթիվ հատ ու կտորներ, փշրանքներ, վորոնք ճիշտ է, վորոշ չափով փոփոխության են յենթարկվել, վորոշ գունավորում ստացել, բայց և այնպես գաղափար են տալիս մեզ Իրանի առասպելի ծավալի ու բովանդակության մասին պատմական Հայաստանում։

Վոչ Ֆիրդուսին և վոչ էլ հայ կղերը հարազատությամբ, անաղարտությամբ չեն պահպանել Իրանի առասպելներն ու զրույցները։ Յե՛վ Ֆիրդուսին, և՛ հայ մատենագիրները վորոշ իդեոլոգիական վերամշակման են յենթարկել Իրանի ֆոլկլորը։ Ֆիրդուսին հայրենիքի՝ հին Իրանի հերոսական անցյալը դյուցազներգելով՝ նոր Իրանի հզոր ֆեոդալների պատվերով ֆոլկլորիստիկ նյութը ծառայեցնում է վերածնվող Իրանի փառաբանության գործին, լավ է ըմբռնում առասպելի արժեքն և հարկ յեղած դեպքում հենց այդպիսի նյութերից է հյուսում իր պատմությունը։ Նրա այդ

[1] Անդ, I, հավելված Բ.

մշակում է բարձրացող Իրանի հզորների գաղափարախոսությունը. հայ մատենագիրները՝ ֆեոդալական Հայաստանի կղերական իդեոլոգները, տեսնելով Իրանի «զրանս և զգործս», ընդհակառակն վոչինչ չեն խնայում վատաբանելու, արհամարհելու, անարգելու Իրանի հարուստ կուլտուրայի ամեն մի արտահայտությունը, «անմիտ և անհանճար բանից յարմարանք» համարելով այն ամենը, ինչով վոր վոգևորվում է իր ազգային-ռոմանտիկական եքստազի մեջ Ֆիրդուսին։

Հենց այն հանգամանքը, սակայն, վոր Խորենացու մեկենաս Բագրատունին պահանջում է իր պատմագրից Պարսից առասպելի վերծանություն. այն հանգամանքը, վոր չնայած մեր կղերական մատենագրության իրանամերժ տրամադրության և իդեոլոգիայի, այնուամենայնիվ նրանց յերկերի մեջ Իրանի առասպելների արձագանքն ենք գտնում, հաստատապես ապացուցում են, վոր հայ ազնվականության շրջանում և ռամիկ դասի լայն զանգվածներում «ասում», պատմում եյին հարևան Իրանի վիպաշխարհի մասին, սիրում եյին նրանց հերոսներին։

Դեռ ավելին։

Հայ ազնվականության և նրա տրադիցիաների վոչնչացմամբ Իրանի վեպն ու առասպելը շատ ավելի դեգրադացիայի յե յենթարկվում, իջնում գյուղական խրճիթն և արմատներ ձգում նրա հոգևոր աշխարհի անդաստանում։ Հայ կղերի քարոզն այժմ դժվարությամբ է իջնում այդ անգրագետ միջավայրը։ Նրա քաղաքական-կրոնական ագիտացիան ընդդեմ Սասանյանների և զրադաշտականության բթացել է, վորովհետև այդ հակագործոններն էլ Իսլամի հաղթանակով վաղուց արդեն չքացել եյին։ Իրանի վիպաշխարհը դիտվում է այժմ վոչ իբրև սուր հակաագիտացիայի օբյեկտ, այլ սոսկ իբրև «հին-հին դարուց հիշատակ», իբրև մի պայքար լուսավոր-բարի հերոսների ընդդեմ խավարի-չարի սպասավորների։ Ֆիրդուսին, Իրանի հերոսական անցյալի այդ հանճարեղ գուսանը մուտք է գործում Հայաստան։ Անգամ հայ կղերը վոգևորվում է նրանով ու պահանջ է զգում մեծ բանաստեղծի տաղաչափությամբ, նրա «Շահ-Նամե»-ի չափով բանաստեղծական քերթվածներ ունենալու։

Այդ պահանջը բավարարելու, այդ բացը լրացնելու նպատակով հայ կղերի ներկայացուցիչ, ականավոր բանաստեղծ Կոս-

տանդին Երզնկացին[1] ստեղծում է «Բանք յաղագս անցաւոր մեծութեան» մեծ քերթվածը՝ ձևով իրանյան-ֆիրդուսյան, բովանդակությամբ քրիստոնեական-հայկական։

Ֆիրդուսին կյանքի ու վայելքի հարմոնիան է հնչեցնում, Կոնստանդին Երզնկացին, ընդհակառակը՝ կյանքի ու վայելքի մերժման տխուր մեղեդին։

2

«ՇԱՀ-ՆԱՄԵ»-Ի ՎԻՊԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ ՀԱՅ ԳՅՈՒՂԱՑՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ

«Շահ-Նամե»-ի վիպական մոտիվներն այլ բախտի արժանացան հայ գյուղացու միջավայրում։ Նա ազատ էր այն կրոնական-քաղաքական շղարշից, վորով պարուրված էր հայ կղերն և վորոշ չափով հայ ազնվականը։ Դարեր շարունակ, կողք կողքի ապրելով պարսիկների հետ նաև Հայաստանում, ապա Իրանյան կուլտուրայի հաղորդիչ դրացի քուրդ մասսայի հետ, նա վերցնում է պարսիկներից ժառանգություն ստացած Իրանի վիպաշխարհի մոտիվները, քուրդ մասսայի միջոցով թարմացնում ու լրացնում է Իրանի և քրդերի վեպերն ու առասպելները նորանոր էպիզոդներով և կոնտամինացիայի կարգով՝ փոխառնում ու վերամշակում է հայ հին ու նոր ժողովրդական վեպերն ու առասպելները։

Հայ գյուղացին, վոր այսօր էլ մեծ սիրով պատմում ու յերգում է Իրանի վիպաշխարհի մոտիվները քուրդ լեզվով, իսկ հայերեն այժմ պատմում է միայն մանրամասն բովանդակությունն «արձակ», այդ հայ գյուղացի վիպասանը սիրում է «Ռոստամ Զալ»-ը, վոգևորվում է նրանով և աշխատում է Իրանի հերոսներին հաստատուն կապերով կապել հայ ժողովրդական վեպի հերոսների՝ «Սասնա ծռեր»-ի հետ։

Այսպես «Ռոստամ Զալ»-ի վարիանտներից մեկի մեջ ասվում է՝ «Ավալ ժամանակ Սասունմա քաղաք Զալ թագավոր կը ապրեր...

[1] Կոստանդին Երզնկացի, Վենետիկ 1905։ Տես պրոֆ. Մ. Աբեղյանի «Շահ-Նամեյի ոտանավորի չափը հայ բանաստեղծության մեջ», այս ժողովածուի յերես 118։

Զալ թագավորին կեր մեկ աղբեր, անունն Դավիթ... Դավիթ ուներ մեկ տղա, անունը Բուրզե»...[1]

Բուրզեն և Իրանի փահլևանները կոչվում են «Սասնա ծռեր»[2], Ռոստամը Սասունցի յե[3], Ռոստամի հետ կռվի յե դուրս գալիս «Սասնա ծռեր»-ի գլխավոր հերոսներից մեկը՝ Դավթի յեղբայր, Բուրզեյի հորեղբայր՝ Ջենով Հովանը[4]. առևանգած աղջկանը «Իրանի» հերոսները սովորեցնում են հայերեն և առ ու տվարը բերում Սասուն[5]։

Իրանի հերոսները, մասնավորապես Ռոստամի տոհմը, ազգակից է Սասունի հզոր Թլոր Դավթին։ Նրանք «սերում են» «Սասնա ծռերից», ընդ վորում Սանասարից են սերում Սասունի հերոսներ՝ Ձոզ Մհերը, Թլոր Դավիթը և Պստիկ Մհերը, իսկ նրա յեղբայր Բաղդասարից՝ Իրանի փահլևանները.

«Դյուլու Բաղդասար ելավ ռըկավ,
Իթուխ գընաց Իրան — Թուրանա մեջ.
Հանդե ան ուր խամար պսակվավ.
Անու աղջնիր ելան էլ մ' էլ կռապաշտ։
Ելավ Կալեկալան, ելավ Զալ.
Զալից ելավ Ռոստամ։
Ռոստամ, ուըր կ'ըսին, Բաղդասարը' ցեղից ը»։

Կամ՝

«Բանի մ' տարի վերա կ'ընցնը.
Սանասար, Բաղդասար կը պառվին.
Դյուլու Բաղդասար կը թըղնը Սասուն,
Կը հա Իրան, կ'իլնի պարսիկ։
Ռոստամ Բաղդասարը' ձըղից կը հավէլնա»[6]։

Քուրդ աշխատավոր մասսան յերկար դարեր ապրելով հայ գյուղացու հարևանության մեջ՝ յուրացրել է և հարազատ դարձրել «Սասնա ծռեր» հայ ժողովրդական վեպը։ Նա էլ է պատմում ու ասում «Սասնա տունը» և ֆոլկլորի գոյացման վոգուն համապատասխան միաձուլում տարբեր ծագումն ունեցող վեպերը։

[1] Բ. Խալաթյանց, «Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ», Պարիս 1901 յերես 24։

[2] Անդ, յերես 25.

[3] Անդ, յերես 36, 74.

[4] Անդ, յերես 36—37.

[5] Անդ, յերես 76.

[6] «Սասնա ծռեր» ժողովրդի իմ գրի առած անտիպ պատումներից։

Բուրդ վերսիայում եւ տեղի յն ունենում նույն տեղայնացման ու ազգայնացման պրոցեսը, ինչ վոր նկատեցինք հայ-իրանական վեպի պատումներում: Այդ վերսիաներում Դավիթը Սասունցի լինելով հանդերձ՝ ազգությամբ քուրդ է. նրա հոր Մհերի անունը քրդերեն Զալ է:

«Rostam kyrə Zal, Zal kyre Kál, Kal kyre Sasum keral».

(Ռոստամ՝ վորդի Զալի, Զալ՝ վորդի Կալի, Կալ՝ վորդի Սասում—կռալի), այսպես է պատմում Կաղկացի Խուդոն[1], վորը, հարկավ, լսած ու սովորած պիտի լինի քուրդ ասացողից:

Այսպիսով Իրանի վիպաշխարհը, վոր դարեր շարունակ հալածանքի յեր յենթարկված, վոր հայ կղերի կողմից արհամարհված եր, վորպես «փծուն և անձոռնի առասպելք», «անմիտ և անհանճար բանից յարմարանք», «առասպելաց բարբաջմունք», այդ վիպաշխարհը հյուրընկալվում է կրոնական ու քաղաքական-ազգայնական նախապաշարումներից ազատ հայ աշխատավոր գյուղացու խրճիթում, վերամշակվում ու ազգակցվում է հայ ժողովրդական վեպի ամենից սիրված Թաղյան կամ Թլոր Դավթին:

Յեթե Ֆիրդուսու «Շահ-Նամե»-ն թարգմանության չարժանացավ հայ կղերական բանաստեղծի կողմից, ապա «Շահ-Նամե»-ն ճանապարհ հարթեց դեպի հայ անգրագետ գյուղացու խաղաղ նահապետական օջախն ու այնտեղ ունեցավ մի այնպիսի կենդանի հուշարձան, վորպիսին է՝ «Ռոստամ Զալ»-ը, «Բեժան-Մենիժա»-ն:

---

[1] Տ. Չիթունի «Ազգագրի հուշերից», տես «Հայ գրականություն, Հանդես ամսօրյա», Զմյուռնիա 1912, № 4, յերես 37:

Մ. Աբեղյան

„ՇԱՀՆԱՄԱ"-ՅԻ ՎՈՏԱՆԱՎՈՐԻ ՉԱՓԸ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կոստանդին Երզնկացին, մեր հին նշանավոր բանաստեղծներից մեկը, իր ԺԴ. քերթվածի համար վերնագրից հետո դրել է հետևյալ ծանոթությունը[1].

«Այր մին ...ել[2] կայր ու Շահնամայ ասէր ձայնով. նայ եղբայրք խնդրեցին թէ ի Շահնամայի ձայն մեզ ոտանաւոր ասայ. ես շինեցի զբանքս զայս ի Շահնամայի ձայն կարդացէք»:

Ի՞նչ ենք իմանում այս հետաքրքիր ծանոթությունից: Բայց նախ մի երկու պարզաբանող խոսք:

Կոստանդինը, ինչպես իր տաղերից իմանում ենք, պատանեկան հասակից ուսանել է, ապա կրոնավորել ու գործել է, հավանորեն, Երզնկայի վանքերում: Թե երբ է հորինել նա վերևում հիշված բանաստեղծությունը, մենք այդ չգիտենք. բայց նրա տաղերը, վորոնց թվում և ԺԴ. քերթվածը, հայտնի յեն 1336 թ. Թավրիզում կատարված մի արտագրությունից: Ապա՝ այդ տաղերից մեկի մեջ հիշվում է Ղազան Խանը (1292—1304) այնպիսի ձևով, վոր այդ խանը մեռած պիտի լիներ: Կը նշանակի՝ Կոստանդինն ապրել է 13-րդ և 14-րդ դարերի մեջերը: Հենց այդ դարերում էլ Երզնկայի մոտ Սեպուհ լեռան վանքերը նշանավոր են յեղել իրենց դպրոցներով: Վանականները, ինչպես դարձյալ Կոստանդնի իրեն բանաստեղծություններից իմանում ենք, կեղծ բարեպաշտությամբ ատում և նույնիսկ հալածում են մեր քերթողին այն պատճառով, վոր նա աշխարհիկ սիրու յերգի ձևով ու մոտիվներով կրոնական այլաբանական քերթվածներ է հորինում. վոր նա բնության գովքն է անում՝ անձնական շեշտերով յերգելով գարուն, արեգակ, լույս ու սեր. մարմնին տալիս է իր իրավունքը, հակառակ ճգնավորական վոգու, միաժամանակ և խարազանում է այդ վանականների տգիտությունը:

---

1 Կոստանդին Երզնկացի, Վենետիկ 1905, յեր. 128.

2 Այս բառի մի մասը ջնջված է ձեռագրի մեջ. պետք է լինի, անշուշտ, ինչպես նկատում է հրատարակիչ Պոտուրյանը, «Այր մին Նստել կայր»:

Այդ բանաստեղծի վերևում բերված ծանոթությունից անիմանում ենք, վոր աշխարհիկ վոգին այդ 13—14-րդ դարերում թափանցած ե յեղել վանքերը, և «յեղբայրները», այսինքն Կոստանդնի կրոնակից վանականները սիրով լսելիս են յեղել Շահնամա և նույն իսկ ցանկացել են դրա «ձայնով» վոտանավոր լսել հայերեն։ Հարկավ, Շահնաման միայն Սեպուհ լեռան վանքերում չի ասվել և ավելի ևս սիրով մեր աշխարհականներն են այդ դարերում լսել պարսից այդ մեծ դյուցազներգությունից։

Ի՞նչ լեզվով են Հայաստանում ասել Շահնաման։ — Կարծում եմ, պարսկերեն։ Շահնամայից հայերեն հին թարգմանություն, այն ել այդ քերթվածի չափով, հայտնի չե։ Շահնամայից հատվածներ, անշուշտ, կը պատմեյին հայերեն, ինչպես դեռ ևս մեր որերում ել պատմում են հայերեն։ Բայց Կոստանդնի հաղորդածը՝ «ասել ձայնով», «ի ձայն կարդալ», դա վերաբերում ե վոտանավորին, քանի վոր նրանից խնդրում են հորինել «ի Շահնամայի ձայն» վոտանավոր։

Հիմա, ինչ ե նշանակում նախ՝ «ասել ձայնով», ապա վոտանավոր ասել ձայնով, և յերրորդ՝ «ի Շահնամայի ձայն ոտանաւոր ասել» կամ «կարդալ»։

Հին ժամանակ բանաստեղծությունը կատարում եյին յերեք կերպ. յերգում եյին, «ի թիւ» եյին ասում և «ի ձայն» կամ «ձայնիւ» եյին ասում։

Յերգելը պարզ ե, թե բանաստեղծության վորպիսի կատարումն ե։

«Ի թիւ ասելը», դա «ի թիւ» ուսած, այսինքն՝ բերան արած արտասանելն ե, առանց վորևե յեղանակի, սովորական կարդալու կամ պատմելու ձևով, վորքան կարելի յե, պարզ և մեկին՝ այսպես «թիվ ե ասվել» մասամբ և յերգվել, մեր հին ժողովրդական վիպասանությունը, վոր և այդ պատճառով կոչվել ե նաև «թուելիք»։ «Թիվ են ասել» և դեռ այդպես ասվում են, և քիչ մասով միայն յերգվում, մեր «Սասնա ծռեր»-ը, ինչպես նմանապես նաև ուրիշ ազգերի ժողովրդական վեպերը։

«Ձայնով ասելը», դա մի առանձին տեսակի յեղանակավոր ասելն ե, վոր յերգելու և թիվ ասելու միջին տեղն ե բռնում։ Յեթե թիվ ասում են սովորական խոսակցական կամ զրուցատրական ձևով ու ձայնով, վորոշ դեպքերում նաև սովորականից ել

Բահրամ Չուբինի վերադարձը յեվ զրույցը թագավորի պալատում

ցած ձայնով, «ձայնով ասելու» ժամանակ ձայնը բարձրացնում են սովորականից ավելի։ Այսպիսի արտասանության ժամանակ խոսքի մեջ վորոշ բառերի վրա, նայելով բովանդակությանն ու բառերի կապակցության խմբերին, ուժեղ շեշտեր են դրվում և վանկերի ամանակը, այսինքն տևողությունը, յերկարացվում է, այնպես վոր ասացվածը, յեթե արձակ է, ստանում է մի առանձին ռիթմ ու յեղանակավորություն։ Մինչև այժմ էլ մեր «Սասնա ծռեր» պատմողները, յեթե չեն յերգում այն հատվածները, վոր ուրիշները յերգում են, հաճախ ձայնով են ասում. և հայտնում են, թե այդ ինչ կտորը պետք է ձայնով ասել։ Նույն իսկ վեպի պատմվածքի ընթացքում, վեպի բնագրի մեջ այդպիսի հատվածների համար գործածվում է կամ «յերգել», «խաղով (=յերգով) ասել», կամ թե չէ՝ «ձենով ասել» արտահայտությունը[1]։

Վոտանավորներն «ի ձայն ասելը» կամ «ձայնով կարդալը», դա նույն ձայնով ասելն է, միայն այս դեպքում առանձնապես շեշտվում ու յերկարացվում են, վոտանավորի կազմության համեմատ, վոտքերի ու անդամների այն վանկերը, վորոնք իրենց վրա պետք է կրեն ռիթմական շեշտերը։ Բացի այդ՝ ռիթմական վոտքերը կամ անդամները մի մի փոքրիկ դադարով անջատվում են հաջորդ ռիթմական վոտքերից կամ անդամներից։ Այսպիսի արվեստական արտասանումի ժամանակ վանկերը միակերպ մեկին են հնչում, ռիթմական շեշտերը միշտ միակերպ ուժեղ և այդ շեշտերը կրող վանկերը միակերպ յերկար տևողությամբ, այնպես վոր ունկնդիրների համար միշտ անջատ-անջատ լսելի յեն լինում առանձին ռիթմական վոտքերը կամ անդամները։

Այսպիսի արտասանումն ահա, վոր մեզնում կոչվում է «ի ձայն» կամ «ձայնով ասել» կամ «ողել ձայնիւ» scander սիրված է յեղել մեզնում մինչև 19-րդ դարի կեսերը և նույն իսկ մինչև 1880-ական թվականները առանձնապես գրաբար վոտանավորների համար։

Այսպիսի արվեստական արտասանումով կարդացել են Շահնա-

[1] Մինչև այժմ էլ հայոց յեկեղեցու ժամերգության ժամանակ պահված է վոչ միայն յերգելը, այլ և թիվ ասելն ու ձայնով ասելը վորոշ դեպքերի և առանձին տեղի ընթերցվածների համար։ Տես՝ Մ. Աբեղյան, Հայ ժող. առասպելները Մ. Խոր. Հայ. Պատմ. մեջ, Վաղարշապատ 1899, յեր. 56 — 71։

ման և դեռ կարդում են մինչև մեր օրերը։ Դրանով ուժեղ կերպով արտահայտվում է Շահնամայի վոտանավորին հատուկ ռիթմը։

Հիմա, ինչպիսի յե Շահնամայի չափը։

Պարսկական վոտանավորի եյական հիմունքը կազմում է վանկերի յերկարությունն ու կարճությունը։ Բնությամբ յերկար են այն վանկերը, վորոնց ձայնավորը յերկար է։ Դրությամբ յերկար են այն վանկերը, վորոնց կարճ ձայնավորին հաջորդում են յերկու բաղաձայններ, վորոնցից յերկրորդը կարող է նաև հաջորդ բառի սկզբում լինել։

Վոտանավորի մեջ վանկի ուժը, վոր կոչվում է ռիթմական շեշտ, կախված է վանկի յերկարությունից, և վոչ թե պրոզայիկ շեշտից, այսինքն սովորական, խոսակցական լեզվի շեշտից։ Ուրիշ խոսքով՝ պարսկերեն վոտանավորների մեջ ուժեղ են, այսինքն ռիթմական շեշտ ունեն յերկար վանկերը, թույլ են անշեշտ վանկերը։ Մինչդեռ հայերենում, ռուսերենում և ուրիշ նոր լեզուների մեջ վոտանավորի ռիթմական շեշտերը և սովորական լեզվի պրոզայիկ շեշտերը նույն են, այսինքն՝ վոր վանկը վոր արձակ խոսքի մեջ շեշտվում է, նույն վանկը և վոտանավորի մեջ ուժեղ է, կրում է ռիթմական շեշտ, — պարսկերենում ռիթմական շեշտերն անկախ են պրոզայիկ շեշտերից. դրանք կարող են պրոզայիկ շեշտերի հետ և ընկնել և չընկնել։ «Չպետք է կարծել սակայն, թե ռիթմական շեշտերով դուրս են մղվում պրոզայիկ շեշտերը. այս վերջինները պահվում են նաև վոտանավորի կարդալու ժամանակ, ինչպես պրոզայի կարդալու ժամանակ, բայց առաջիններից տարբերվում են իրենց վորակով։ Այդ դեպքում պրոզայիկ շեշտերը մի փոքր ավելի բարձր (բարակ) են հնչում, քան ռիթմականները։ Ռիթմական շեշտերը լսվում են առանց վորևե ջանքերի կարդացողի կողմից, յեթե նա ճիշտ է վերարտադրում յերկար ու կարճ վանկերի տարբերությունը»։

Վոտանավոր — ստիխ — համարվում է նույնահանգ յերկատողը, վոր կոչվում է բեյթ (տուն). իսկ ինչ վոր մենք այժմ ստիխ — վոտանավոր, տող — ենք ասում, պարսկերենում ընդունվում է իբրև կիսատող, վոր կոչվում է մեսրա։

Շահնամայի չափը կոչվում է սովորաբար մոտակարիբ. իսկապես՝ մոտաղարեբ-ե մաղսուր (կարճ մոտաղարեբ). դա գործածվում է ամեն տեսակի բանաստեղծությունների համար, առանձ-

նապես վեպի և դիդակտիկայի։ Այդ չափի յուրաքանչյուր վոտքը կազմվում է յերեք վանկերից, վորոնցից առաջինը կարճ է և անշեշտ, յերկրորդն ու յերրորդը յերկար են. ռիթմական շեշտը, վոր է առաջին աստիճանի կամ գլխավոր շեշտ, դրվում է յերկրորդ վանկի վրա. յերրորդ վանկը կրում է յերկրորդական շեշտ, վոր յերկրորդ վանկի ռիթմական շեշտի համեմատությամբ՝ թույլ է։ Այդ չափի յուրաքանչյուր տողը, վոր 11 վանկանի յե, կազմված է չորս այդպիսի վոտքերից, վորոնց վերջինը չունի յերրորդ վանկը, վոր «կտրված է» և լրացվում է վերջի դադարով (պաուզա), այսպիսի սքեմայով.

◡ –́ –̀   ◡ –́ –̀   ◡ –́ –̀   ◡ –́

Ռիթմական շեշտերը կրող յերկար վանկերը նշանակելով հայերենի յերկար նշանով (՛), իսկ վոտքերի յերրորդ յերկար վանկերը՝ հայերենի բութ (՝) նշանով, Ֆիրդուսու հետևյալ տունը (բեյթն) ունենում ենք այսպես.

Բե նամ-ե՝ խոդա՛վա՝նդ-ե ջա՛ն-ո՝ խերա՛դ
Կ-ազ ի՛ն բա՝րտար ա՛նդի՝շա բա՛ր նա՝-գզարա՛դ

(Յանո՛ւն տեա՝ռն հոգւո՛յ եւ՝ բանակա՝նութեա՛ն
Զոր ո՛չ ա՝նցանէ՛ զա՛նցանէ՛ մի՝տ մարդկա՛ն)։

Այսպես և հետևյալ տողերը նույն բանաստեղծից.

Կունո՛ւն պուր շիգի՛ֆտի յակի՛ դաստա՛ն
Բիպա՛րդազամ ա՛զ գուֆտաի՛ բաստա՛ն.

Այս բեյթերն ոգում են, ձայնով ասում են այսպես.

Կունո՛ւնպու՝ր | շիգի՛ֆտի՝ | յակի՛դա՝- | ստա՛ն,
Բիպա՛րդա՝զ- | ամա՛զգո՝ւֆ | տաի՛բա՝ | ստա՛ն.

Նույնպես և նախորդ տունը.

Բենամ-ե՝ | խոդա՛վա՝նդ | եջա՛ն-ո՝ | խերա՛դ,
Կ-ազի՛ն-բա՝ր | տարա՛նդի՝ | շաբա՛րնա՝ | գզարա՛դ.

Այսպիսի արտասանումի ժամանակ պրոզայիկ շեշտերը, վորոնք վերևում դրված չեն, մնում են իրենց բնական տեղերում. բայց ամեն յերեք վանկ միասին կազմում են մի յեռավանկ ռիթ-

մական ոտք, որ մեջտեղի յերկար վանկի վրա ունի ուժեղ ռիթմական շեշտ (պրոզայիկ շեշտից անկախ) և յետևից մի փոքր դադար, որով նախորդ ոտքը բաժանվում է հաջորդ ոտքից։ Ոտանավորը դրանով ստանում է բարձրացող-ընկնող ռիթմ։ Մինչդեռ ոտանավորը բովանդակության համեմատ արտասանելիս, ինչպես և արձակ խոսքի մեջ թիվ կամ ձայնով ասելիս, դադարն ընկնում է միշտ բառերից հետո, յերբեք չի ընկնում բառամեջերում, — ոտանավորն ոգելու կամ ձայնով ասելու ժամանակ ռիթմական ոտքերից հետո դադարը կարող է ընկնել և ընկնում է ամեն մի վանկից հետո և նույնիսկ բառամեջերում, ինչպես յեթե վերևում բերված թարգմանությունը ոգեյինք.

Ցանո՛ւնտե՛առն | հոգո՛ւյե՛ւ | բանի՛կա՛- | նութե՛ան
Զորո՛նչա՛ն- | ցանե՛զա՛ն- | ցանե՛ մի՛տ՝ | մարդկա՛ն.

«Ցեղրայրները», վանականները Կոստանդինին խնդրել են, ահա, հայերեն լեզվով այնպիսի ոտանավորներ հորինել, որ կարելի լինի «Շահնամայի ձայնով ասել»։

Ի՞նչպես է լուծում նա այս խնդիրը։

Հայերենը չունի յերկար ու կարճ ձայնավորներ. ուստի Կոստանդինը չէր կարող ռիթմական շեշտի հիմք ընդունել յերկար վանկը և անուշադիր թողնել արձակ խոսքի բնական շեշտերը։ Նա յելնում է հայերեն ոտանավորների ընդհանուր հատկություններից, որ ծագում է հայոց լեզվի պրոզոդիայից — առոգանությունից։ Հայերենում ոտանավորի ռիթմական շեշտերը միաժամանակ պրոզայիկ շեշտեր են. ուժեղ են ոտքերի այն վանկերը, որոնք արձակ խոսքի մեջ ևս շեշտվում են։ Այս նկատի ունենալով՝ Կոստանդինը պարսկերենի ռիթմական շեշտերը կրող յերկար վանկերի տեղ դնում է հայերենում շեշտված վանկեր, իսկ մնացած վանկերն անշեշտ է թողնում։ Այսպիսով 11-վանկանի տողի մեջ շեշտվում են 2-րդ, 5-րդ, 8-րդ և 11-րդ վանկերը, որոնք պարսկերենում ևս կրում են ռիթմական շեշտերը։ Յեվ որովհետև շեշտված վանկերը կարելի յե հեշտությամբ յերկարել, ուստի այսպիսի ոտանավորը կարելի յեր «Ի Շահնամայի ձայն կարդալ» ամեն յերեք վանկից հետո անելով դադար, ուշադրություն չդարձնելով, թե այդ դադարը բառերի հետ է ընկնում, թե բառերի մեջ, թե՞ այնպիսի բառերից հետո, որոնք իմաստով պատկանում են հաջորդ ռիթմական ոտքերին։ Այսպիսի ոգումի, արվեստական արտասանումի ժամանակ ոտանավորն ստանում է նույն բարձրացող-ընկնող ռիթմը, ինչ որ Շահնամայի տողը ոգելիս։ Կոստանդինի տողերը պարսկերենից գլխավորապես այն տարբերությունն ունեն, որ պարսկերենում ոտքերի յերրորդ վանկերն էլ յերկար են և ունեն յերկրորդական շեշտ. իսկ հայերենում այդ վանկերն անշեշտ լինելով դժվար է նույն իսկ արվեստական կերպով յերկարել, յեթե միայն դրությամբ յերկար չեն։

Կոստանդինն այս ձևով հորինել է մի մեծ քերթված՝ «Բանք յաղագս անցաւոր մեծութեան»։ Դրանից բերում եմ հետևյալ չորս տողը.

Այս կենքս է ունայն և ժառանգ ենք մահու,
Զունի մեզ դըրունք բարութեան և շահու.
Երազ է խաբող և խայալ անցաւոր,
Է սուտ սիրելի և ընկեր նենգաւոր։

Ձայնով ոգելիս այս տողերն ստանում են բարձրացող-ընկնող ռիթմ, այսպես.

Այսկե՛նքսէ | ունա՛յնև | ժառա՛նգենք | մահո՛ւ,
Զունի՛մեզ | դըրո՛ւնքբա- | րութե՛անև | շահո՛ւ.
Երա՛զէ | խաբո՛ղև | խայա՛լան- | ցաւո՛ր,
Էսո՛ւտսի- | րելի՛և | ընկե՛րնեն- | գաւո՛ր։

Ինչպես կարելի յե տեսնել, «ձայնով» կարդալիս ռիթմական ոտքերի անջրպետը, ուրեմն նրանց մեջ յեղած փոքր դադարն ընկնում է նույն իսկ բառամեջերում և այնպիսի բառերից հետո (բերված տողերի մեջ «և» շաղկապից հետո), որոնք բնական արտասանության ժամանակ հաջորդ բառի հետ պետք է կարդացվեն։ Ռիթմական շեշտերը նույն են, ինչ որ խոսքի բնական շեշտերը։ Կոստանդինը, սակայն, այս մեծ քերթվածի մեջ 352 ռիթմական շեշտերից 19-ը դնում է այնպիսի վանկերի վրա, որոնք շեշտ չունեն։

Կարելի չէ կարծել, թե հայերին Կոստանդին Երզնկացու ապրած շրջանում միայն ծանոթ է յեղել Ֆիրդուսու Շահնաման և նրա բանեցրած չափը, որ պարսից մեծ բանաստեղծից առաջ էլ ուրիշները գործածել են։ Յեվ իսկապես Գրիգոր Նարեկացին ունի

այդ չափով մի տող («Եկեղեցւոյ»), որ Շահնամայի ձայնով կարդալով, ստանում ե նույն բարձրացող-ընկնող ռիթմը.

Երկինքն ի յերկիրս և երկիրս ի յերկինքն,
Վայրէջք ի խոնարհ և վերելք ի բարձունս...

Ձայնով ասելիս՝

Երկի՜նքնի | յերկի՜րսև | երկի՜րսի | յերկի՜նքն,
Վայրէ՜ջքի | խոնա՜րհև | վերե՜լքի | բարձո՜ւնս...

Այսպես ուրեմն, 10-րդ դարում, Ֆիրդուսու ապրած ժամանակից արդեն մեր բանաստեղծության մեջ գործածված կա Շահնամայի վոտանավորի չափը: Սակայն դա հայերենում ուրիշ բան չե իսկապես, բայց յեթե անապեստյան 11-վանկանի վոտանավոր. սկզբից մի յերկավանկ յամբական վոտքով, մեջը մեկ մեկ քողաղոտ յեռավանկ վոտքերով: Բովանդակության համեմատ բնական ընթերցումի ժամանակ դա ունի բարձրացող անապեստյան ռիթմ, և արվեստական կերպով ոգելով կարելի յե բարձրացող-ընկնող քողաղոտ վոտքերի ռիթմ տալ դրան: Իսկական բարձրացող-ընկնող ռիթմով վոտանավորներ հաջողվում ե հորինել միայն մեր նորագույն բանաստեղծներին, և այդ առաջ ե գալիս արևելյան աշխարհաբարում տեղի ունեցած առոգանական փոփոխության հետևանքով[1]: Այսպես են, որինակ, Զարենցի հետևյալ տողերը.

Աշո՜ւնը | թափո՜ւմ ե | թերթե՜րը | հիմա,
Ու թո՜նը | թըրջո՜ւմ ե | արտե՜րը | հիմա:

---

[1] Տես՝ Մ. Աբեղյան, «Հայոց լեզվի տաղաչափություն», Յերևան 1933, յեր. 241 հմմ: Պարսկերենի համար տեսնել՝ Persische Crammatik, von C. Salemann und V. Schukovski, Berlin 1899. և Грамматика персидского языка, сост. Мирзою-Джафаром, Москва 1901.

Գ. Լևոնյան

ՖԻՐԴՈՒՍԻՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Հարուստ չէ մեր գրականությունը պարս հեղինակների, մասնավորապես Ֆիրդուսու անմահ ստեղծագործության թարգմանություններով։ Մինչ մեր թարգմանական գրականության մեջ մենք կտեսնենք Արևմտյան Եվրոպայի և ռուս առաջնակարգ ու յերկրորդական բազմապիսի հեղինակների յերկեր։ Մերձավոր Արևելքի, մեր անմիջական հարևան յերկրների՝ Թուրքիայի և Պարսկաստանի թե դասական և թե նոր շատ հայտնի հեղինակները գրեթե մնում են մեզ անծանոթ իրենց ստեղծագործություններով. ել չենք խոսում մեր յեղբայրական հանրապետությունների՝ Վրաստանի և Ադրբեջանի մասին, վորոնց հեղինակներից վերջերս են միայն սկսել հատ ու կտոր թարգմանություններ կատարվել հայերեն լեզվով։ Ընդհանուր գրականության պատմություն չունենք, կամ յեթե ունենք մի ձեռնարկ, լույս տեսած Վենետիկի Մխիթարյանների կողմից անցյալ դարի 70-ական թվականներին (Զարբանալյան), այնտեղ ել դարձյալ վոչ մի խոսք մերձարևելյան գրականության մասին։

Պարսիկ հեղինակներից մեզ մոտ առանձին բախտի յե արժանացել Խայամը, վոր լույս է տեսել ամբողջական և մի քանի թարգմանությամբ, այնուհետև թարգմանված են քնարերգու Հաֆիզից (Սեյադ, «Կռունկ» 1868) և քառյակների մի շարք՝ առանձին գրքույկով (Մաքսուտյան), ապա և վերջերս Բաբա-Թահիր Ուրիանի. (Թեհրան, Ռ. Աբրահամյան)։ Մեր հին պարբերականներում հատ ու կտոր յերևում են նաև Սաադի, Ռուտակի, Ջալալեդդին Ռումի։

Մենք տեսնենք ինչ կա հայ գրականության մեջ պարս դասական գրականության խոշորագույն դեմքի՝ Ֆիրդուսու, նրա «Շահ-Նամե»-յի և հերոսների մասին։

Ա. «ՇԱՀ-ՆԱՄԵ»-ԻՑ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ֆիրդուսի, «Ռոստոմ և Սոհրաբ», ամբողջ վեպ և զանազան հատվածներ Շահ-Նամեյից. Գ. թարգմանեց բնագիր պարսկերենից Սամուել Գյուլզադյանց, Շուշի, 1893 թ. 150 յերես.

Այս գրքում Թարգմանիչն ունի տաս հատված՝

1. «Սպանդյարի Ցոթ խան ճանապարհի» նախերգանը յուր մեկենաս Մահմուդ շահին.
2. Նարիմանյան Սամ պահլավանի մենամարտը.
3. Ռոստոմի ծնունդը.
4. Ռոստոմը ստանում է իր հորից պահլավանական գուրզ և վագրի կաշի պահպանակ.
5. Ռոստոմի «Րաշխ» ձին.
6. Ռոստոմի գնալը Ելբրուզ, Քեյ Կոբադին բերելը.
7. Ռոստոմի առաջին կռիվը Թուրանի դեմ և հաղթանակը.
8. Ռոստոմի նետաձգությունը. քուշան Գամուս վեպից.
9. Ագավան դեի վեպի նախերգանը և վերջաբանը.
10. «Ռոստամ և Սոհրաբ» վեպի նախերգանը:

Սրան հետևում է Ֆիրդուսու կենսագրությունից՝

1. Ֆիրդուսու գրած պատասխանը Շահի գրչապետին.
2. Մահմուդ Շահի յերեք բանաստեղծների և Ֆիրդուսու անպատրաստից քառատողը.
3. Նույն Շահին Ֆիրդուսու ուղղած հանպատրաստից մի վոտանավորը:

Ապա գալիս է «Ռոստոմ և Սոհրաբ» վեպը 23 գլուխ. վերջում Թարգմանիչն ունի այսպիսի ծանոթություն —

«Թարգմանության մասին մեր ձեռում ունեցել ենք տարբերությունները համեմատելու համար չորս պարսկերեն Շահնամաներ, վորոնց մեկը տպված է համեմատաբար 17 ընտիր ձեռագիր Շահնամաների: Հետևել ենք ավելի այդ վերջինին, նայելով հեղինակի վոճի և բովանդակության հավանականությանը»:

Գյուլզադյանցը «Շահ-Նամե»-ն թարգմանել է հոմերյան տաղաչափությամբ 4-4-4-3. ահա յերկտող նմուշներ Հոմերոսից և Ֆիրդուսուց —

Վարդածըլին ծագէր յաշխարհ զայր առաւօտն այգածին
Եւ Տելեմաք զգեղեցիկ կապէր կօշիկ ի յոտին:

«Ոդիսական», թարգմ. Թովմաճյանի

Հրաման արեց Ռոստամ-Զալը թամբել բաշխը՝ փայլակ ձի—
Ցեվ անընդհատ հնչեցնել զալարափող պղնձի:

«Շահ-Նամե», թարգմ. Գյուլզադյանցի

2. Ֆ ր դ ո ւ ս ի, «Զոհակ Բյուրասպի աժդահակ» ամբողջ վեպ Շահնամայից.

Ա. Թարգմանեց բնագիր պարսկերենից Սամուել Գյուլզադյանց. Շուշի 1894 թ. 72 յերես:

Այս գրքում Թարգմանիչն ունի՝ Ֆիրդուսու 8 տող ընծայականը Շահ-Մահմուդին. ապա առաջաբանը և մի յերկրորդ, ավելի ընդարձակ ընծայական նույն Մահմուդին: Ապա գալիս է բուն նյութը՝ «Զոհակ Բյուրասպի աժդահակ» 11 գլուխ, վերջում հետևյալ ծանոթությամբ.

«Այս գրքում, նմանապես և հրատարակված «Ռոստամ և Սոհրաբ» գրքում թվահամարով նշանակված ծանոթությունները մեր կողմից և մեր ինքնուրույն կարծիքները բոլորը միասին մի անգամից կտպվեն մեր վերջին գրքում, Ֆիրդուսու ընդարձակ կենսագրության մեջ»:

Նույն այս գրքում վորպես «հավելված», էջերի նոր համարակալումով, Գյուլզադյանցն ունի՝ «Զոհակ Բյուրասպի և Ջեմշիդ վեպի շարունակությունը», վորի մեջ Զոհակի և Ջեմշիդի պատերազմը, Ջեմշիդի վիրավորվելը Զոհակից, Ջեմշիդի փախուստը և թագուստը: Ապա 3 հատված՝ 1. Ֆիրդուսու նախերգանը իր վիպագրության մասին, 2. Ֆիրդուսու վերջաբանը «Շահ-Նամե»-յի ավարտման մասին և 3. Ֆիրդուսու պարսավը Մահմուդ-Շահի դեմ:

3. Ֆ ի ր դ ո ւ ս ի, Սիավուշ, Քեյ Խոսրովից հատվածներ. ամբողջ վեպ Շահնամայից. Բ. Թարգմանեց բնագիր պարսկերենից Սամուել Գյուլզադյանց: Շուշի 1895 (?):

Այս գիրքը մեր ձեռքի տակ չունենալով չենք կարող խոսել նրա մասին:

4. Շ ա հ ն ա մ ա կ Ֆ ի ր դ ո ւ ս ի, գրված Արտաշիր Բաբականի, Թարգմանեց Յ. Թիրաքյան Նյու-Յորք, 1909 թ.:

(Նույնի մի մասը նախ տպագրված է Պարիզի «Անահիտ» հանդեսի մեջ):

Բանասեր-լեզվաբան, պարսից արքունի բժիշկ, Հարություն խան Թիրաքյան ժամանակագրական կարգով Գյուլզադյանից յերկրորդն է, վոր ձեռք է զարկել Ֆիրդուսու թարգմանության: Բայց նա գործին մոտեցել է վորպես գիտնական քան արվեստագետ: Զենդ և պահլավ լեզուների ուսումնասիրության աշխատանքներին զուգահեռ նա թարգմանական աշխատանքները կատարել է այդ լեզուների և հայերենի հարաբերության խնդրում «Նոր հայտնություններ» յերևան հանելու: Թիրաքյան իր այս

գիրքը մի պարզ ընծայականով նվիրաբերում է «Հայոց-քերթող բանաստեղծ Հայրիկի» հիշատակին։

Ցերևում է վոր Խրիմյանն է յեղել Թիրաքյանին նամակներով հորդորողը «Ջանալ ի հայ յեզուլ պարսիկ գրական հրաշակերտները»։ Դոկտոր Թիրաքյան, նախ, լույս է ընծայում ա. «Արտաշիր Բաբական Կարնամակը» Պարիզ 1907 թվին, ապա յերկու տարի անց, Նյու-Յորկում բ. Ատրպատ (Մարասպանդա անդարձ) և յերրորդ՝ Ֆիրդուսու Շահնամակը։

Թիրաքյանի այս գիրքը պարունակում է յառաջաբան (4 եջ), «մի քանի խոսք Ֆիրդուսիի վրա» (5 եջ), ապա բուն նյութը յերեք «դրվագի» մեջ, 1975 տող։ Թարգմանիչն աշխատել է պահել Շահնամեյի տաղաչափական ձևը 6 — 5 = 11 վանկ, վորը սակայն այնքան էլ չի հաջողվել նրան։

Ահա մի նմուշ՝

Արտավան ներս կոչեց պատանին սիրով
Ցեվ շատ բաներ հարցուց Բաբաքի վրայով
Իր գահուն մոտերը տեղ ցուցուց անոր
Պալատեն վոչ հեռու մի տուն փառավոր...
Դրվագ Ա.

5. Ֆրդուսի, Սոհրաբի «Սամանդ» ձին. (քաղված Ս. Գյուլգաղյանցի թարգմանություններից) 70 տող. «Գիր և կյանք» Հովհ. Մալխասյանի և Նար-Դոսի. Թիֆլիս 1911 թ. եջ 593.

6. Ֆրդուսու «Բեժան և Մանիժա» վեպի նախերգանքը (Շահնամեյից 72 տող) թարգմ. Գևորգ Աստուրի. «Նորք», Յերևան 1924 թ. նո. 4, եջ 60 — 62.

Թարգմանիչը պահել է բնագրի չափը 6 — 5 = 11։

Սև սաթի գիշերըն է կպրում լողում
Հրատն յերկակ այուրը չեն դողում...

Գ. Ա. իր թարգմանության տակ ունի այսպիսի ծանոթություն՝

«Աբուլ Ղասիմ Թուսեյին, մականունով Ֆիրդուսին, Պարսկաստանի ամենամեծ եպիկ բանաստեղծը, ապրում եր 925—1020 թվականին...

«Շահ-Նամե»-յի բարձր գեղարվեստական եպիզոդ-վեպերից մեկն է «Բեժանի և Մանիժայի» դաստանը — վորի նախերգանքի թարգմանությունը տալիս ենք այստեղ»։

7. Ֆիրդովսի. 1. «Փոքրիկ բանաստեղծը» «Աղբյուր» ամսագիր, Թիֆլիս, 1884 նո. 8 — 9, եջ 288 — 296. 2. «Պատանի բանաստեղծը», եջ 297 — 304 և 3. «Դրախտայինը» նո. 10, եջ 359 — 364։

Թարգմանիչը՝ Րաֆֆին ունի այսպիսի ծանոթություն՝

«Թարգմանելով Վ. Ովսեննկովի այդ գեղեցիկ աշխատությունը, թույլ տվեցինք մեզ մի քանի տեղերում փոփոխություն անել, վորոնք չեյին համապատասխանում այն ավանդությանը, վոր կապված է Պարսից մեծ բանաստեղծի կենսագրության հետ»։

8. Ֆիրդուսից, 6 տող թարգմանություն (ըստ յերևույթին ռուսերենից)

«Կուզեյի հալվել, ձուլվել իմ յերգին...»
Հով. Թումանյան, «Բանաստեղծություններ»
Թիֆլիս, 1903, եջ 223.

9. «Երգիծաբանութիւն.

Ի դիմաց մեծանուն բանաստեղծ պարսից Ֆիրդովսի մականվանելոյ առ սօլթան Մահմուդ շահն իւրեանց այնր աղագաւ զի Շահս այս խոստացաւ տալ նմա զհարուստ վարձ վասն յօրինելոյ զգիրքն Շահնամէ չափաբերական ոճիւ բայց յետ աւարտման գործոյս անկատար եթող խոստմունս իւր»

«Ով արքա Մահմուդ տիրող աշխարհաց՝
Թէ չունես զերկիւղ իմա՛ գոյ աստուած...

Ամբողջը բռնում է 202 տող. թարգմանություն Սեյադի։

«Երկասիրութիւն Սեյադի կապիտան Պետրոս բեգի Մագաթեանց. Բաքու, 1884. գ. մաս, եջ 31։

10. Ֆիրդովսի (Հայնեից)

Ո՛վ ինչ է ասում...
Ցերբ վոր աղքատը մի խոսք է խոսում
Թումանի մասին—արծաթի թուման
պետք է հասկանալ և ոչ այլ բան,

այսպես շարունակվում է մինչև 154 տող.
Թարգմ. Րաֆֆի, «Աղբյուր» Թիֆլ. 1884, եջ 352—358.

11. Պոետ Ֆերդուսի, Հայնրիխ Հայնեյի. (տաղաչափական)

Ցեթե մի անճարակ աղքատ
Մտքումն իր հաշվիվ ըսկսի,
Ի հարկե, կխորհի վոչ շատ
Արծաթե թումանի մասին...

այսպես շարունակվում է և բռնում ամբողջը 154 տող. Թարգմ. Սողոմոն Տարոնցու։

«Խորհ. Հայաստան» 1934 թ., № 122.

12. Ֆ ե ր դ ո ս ի, Ծաղր սուլթան Մահմուդի մասին. (տաղաչափական)

Ով աշխարհակալ դու սուլթան Մահմուդ
Մարդուց չես քաշվում, քաշվիր Աստծուց...

Այսպես շարունակվում է, ամբողջը բռնելով 218 տող։

Թարգմ. Սողոմոն Տարոնցու. «Խ. Հայաստան» 1934 թ. № 141.

13. Ֆ ի ր դ ո ւ ս ի, Հատվածներ «Շահ-Նամե»-ից

Զարմանալի յե մարդկային թե մարմինը թե հոգին։
Շարունակվում է, բռնելով 28 տող.

Թարգմ. Սողոմոն Տարոնցու, «Գրական Թերթ» 1934 թ. № 18.

14. Ֆ ի ր դ ո ւ ս ի, Ռոստամի և Զոհրաբի վերջին մենամարտը։
Թարգմ. Սողոմոն Տարոնցի, «Գրական թերթ» 1934, № 20.

15. Թ ի ր ա ք յ ա ն Մ ի հ ր դ ա տ.

Պրոֆ. Հրաչյա Աճառյանը մեզ հաղորդեց, վոր Նյու-Յորկից, Հ. Թիրաքյանի վորդի Միհրդատ Թիրաքյանից ստացել է մի նամակ և այդ գրության մեջ վերջինս հաղորդում է, վոր ինքը թարգմանում է Ֆիրդուսու ամբողջական Շահնամեն, և վոր արդեն գործի մի յերրորդ մասը պատրաստ է տպագրության։

Բ. ՖԻՐԴՈՒՍՈՒ «ՇԱՀ-ՆԱՄԵ»-ՅԻ ՅԵՎ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Ֆիրդուսին և իրեն Շահնամե քերթվածը
«Բազմավեպ» ամսագիր, Վենետիկ 1858 թ. եջ 362—366.

Հոդվածագիրը տալիս է բանաստեղծի կենսագրությունը, հայտնում է նույնպես, վոր Շահնամեն առաջին անգամ ֆրանս. թարգմանված է 1838-ին և բնագրով հանդերձ հրատարակված Գ. Մոլ արևելագետի կողմից։

2. Գ ե ո ր գ Ա ս ա տ ո ւ ր — Ֆիրդուսի, Ռոստոմ և Սոհրաբ, Ս. Գյուլզադյանի հրատարակության մասին քննադատական հոդված, «Մուրճ» 1894 նո. 5.



Բահրամ Չոբինի գահ բարձրացում

3. Խալաթյանց Բ[ագրատ], Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ. ա. առաջաբան, բ. Նյութ, Վանա, Կողպա և Ապարանի բարբառներով. Պարիզ, տպագրություն «Բանասեր»-ի 1901.

Այս գիրքը պարունակում է առաջաբան, որի մեջ ա. Հայ և Պարսիկ հերոսները. բ. «Արքայից գրքի» (Շահնամեյի) գրականական մշակումը. գ. Շահնամեյի համառոտ բովանդակությունը: Նյութ, որի մեջ 1. Բուրդի, պատմել է Ապարանի Թաքարլի գյուղից Բարսեղ Հարությունյանը, 2. Ռոստամ, պատմել է Վանի Զիրուխլու գյուղացի Վարդան Գալստյանը՝ Էջմիածնում, 3. Ռըստամի Զալ. պատմել է Ապարանի Ջամըլու գյուղից Մուրադ Մխիթարյանը, 4. Ռոստամ, քրդերեն վարիանտ, պատմել է Սուրմալույի Բարվանսարա գյուղից յեզիդի Փիր Կակոն:

4. Հովսեփյան Գարեգին Վ., Հայ Իրանական վեպ Ռոստամ Զալ: ժողովրդական վեպ, տեկստը և ուսումնասիրություն «Ազգագրական Հանդես». Թիֆլիս, գիրք 8—9, 1901—2.

5. Հայկունի Սարգիս, Ռոստամ ու Զալ, այս «Ըռոստամի Զալ» երկու տեկստ Մոկաց և Բաջբերունյաց Արծկեյի Առընկույս գյուղի բարբառով «Էմինյան Ազգագրական Ժողովածու», Մոսկվա 1903

6. Լալայան Յերվանդ, Ռոստամ Զալ, Նոր Բայազեդի բարբառով «Ազգագրական Հանդես» 1906 նո. 2 (գիրք 14).

Գ. ՖԻՐԴՈՒՍՈՒ ԱՆՎԱՆ ԿԱՄ «ՇԱՀՆԱՄԵ»-ՑԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Կոստանդին Յերզնկացի (տաղերգու 14 դարի), իր մի տաղը հորինել է Շահնամեյի տաղաչափությամբ, որ ունի այսպիսի վերնագիր՝ «Բանք յաղագս անցաւոր մեծութեան...» այս վերնագրի տակ ունի այսպիսի ծանոթություն.

«Այր մի կայր եւ Շահնամայ ասէր ձայնով, նա եղբայրք խնդրեցին, թէ ի Շահնամէի ձայն մեզ ոտանաւոր ասա, ես չինեցի զբանս զայս ի Շահնամայի ձայն կարդացէք»:

Ինչպես յերևում է Յերզնկացու օրերում Հայաստանում յերգվել և ասվել են Շահնամեյից հատվածներ, որոնք և պատճառ են դարձել մեր տաղերգուին գրել նույն չափով մի ոտանավոր, որ նույն «ձայնով կարդան» հայերեն:

Յանուն անմեղին Աստուծոյ մեծին
Յանուն Հօր եւ որդւոյն որ է միածին... և այլն. 22 տուն.

Կոստ. Երզնկացի, Վենետիկ, 1905 եջ 198.

«Թեպետ և Կոստանդինի վոտանավորը «Բանք յաղագս անցաւոր մեծութեան», Շահնամայի բովանդակության և նույն իսկ գեղեցկության հետ վոչ մի կապ չունի, գրում է Կ. Կոստանյանց, բայց և այնպես մենք տեսնում ենք, վոր Կոստանդինը վոչ միայն Ֆիրդուսու տաղաչափությանը քաջ տեղյակ է, այլ մինչև անգամ նորա ձևերին ել է հետևում, նա իր յերգն սկսում է գրեթե այնպես, ինչպես Ֆիրդուսին յուր Շահնաման». «Գր. Աղթամարցին և իր տաղերը», Թիֆլ. 1898. եջ 107.

2. Գրիգոր Աղթամարցի.

Իր տաղերից մեկի մեջ («Տաղ վասն սիրոյ») Աղթամարցին ունի այսպիսի տողեր.

Ունքերդ է քաման, թարթափդ է քո բիր
Ջահանդար լաշքար մեքունի թապտիր,

Հրատարակողը՝ Կոստանյանց իր ծանոթության մեջ ասում է՝

«Աղթամարցին թերևս Ֆիրդուսու Շահնամեից առած է Ջահանդար լաշքար մեքունի թապտիր նախադասությունը, վորովհետև ջահանդար և ջիհանդար (աշխարհակալ) Շահնամեյի յերգչի սիրած խոսքն է».

Կ. Կոստ. «Գրիգոր Աղթամարցին և յուր տաղերը» Թիֆլ. 1898 եջ 71.

3. Կոստանյան Կ.

Գր. Աղթամարցու տաղերին կից իր հրատարակած «Ալեքսանդրի պատմության կաֆաների» առաջաբանում Կ. Կ. գրում է՝

«Այլ անգամի թողնելով պարզելու այն խնդիրը, թե վոր չափով ազդեցություն է ունեցել միջնադարյան հայոց գրականության վրա, այժմյան հարևան ցեղերի, մանավանդ պարսից բանաստեղծությունը, մենք այստեղ կարևոր ենք համարում հիշատակել, վոր Աղեքսանդրի պատմության մեջ կաֆաներ հյուսող յերգիչներն անշուշտ ծանոթ են յեղել Շահնամայի այս մասերին, վորոնք վերաբերվում են Աղեքսանդրին»:

«Գր. Աղթամ.» եջ 106.

4. Սայաթ-Նովա.

Իր «Դուն են գլխեն իմաստուն իս» խաղի մեջ աշուղն ունի այսպիսի մի տող.

«Չկա քիզ պես հուքմի հեքիմ՝ դուն Ռոստամի Զալ թագավուր».

Գ. Ախվերդյանն իր հրատարակության մի ծանոթության մեջ ասում է.

«Ռոստոմի Զալ — Ռյուստեմի Զալ. Զալի վորդի Ռյուստեմ՝ վորո քաջությունները գովաբանում է Ֆիրդուսին իր Շահնամեյում»:

Սայաթ-Նովա, Մոսկվա 1852 եջ 67.

Գ. Լևոնյան իր «Սայաթ-Նովայի» մեջ (Յերևան 1932 թ.) նույն խաղի տակ ծանոթության մեջ ունի այսպիսի տեղեկանք.

«Ռոստոմի Զալ միջնադարյան հռչակավոր պարսից բանաստեղծ Ֆիրդուսու Շահ-Նամայի հերոսներից են Զալ և նրա վորդի Ռոստամը»:

5. Շահազիզյան Սմբատ.

«Գրիգոր Մագիստրոսը, յուր ժամանակի (11 դար) բազմակողմանի և տաղանդավոր ուսումնականներից մինը, «Շնորհոք Քրիստոսի Աստուծոյ» յերեք որում հին և նոր կտակարանի պատմությունը փոխում է վոտանավոր՝ հազար տուն և յուրաքանչյուրը բաղկացած յերկու տողից, ինչպես և նույն դարու Իրանի ամենամեծ բանաստեղծը՝ Ֆիրդուսի, գրում է յուր ականավոր «Շահնամե» 60 հազար տուն, նույնպես յերկտող: Վորպես յերևում է այս գործում Գրիգոր Մագիստրոս հետևել է Ֆիրդուսի բանաստեղծին, վորովհետև Ֆիրդուսին յուր Շահնամեն գրել է 1009 թվին, իսկ Մագիստրոսը 1044 թվին: Մեկը սկսում է պարսից առասպելական դարերից մինչև յուր ժամանակը, մյուսը՝ Ադամից մինչև յերկրորդ գալուստը: Յերկու ևս բանաստեղծության ձևը նույնն է»:

«Ամառնային նամակներ» Մոսկվա, 1897, եջ 117:

6. Փորթուգալ Միքայել փաշա, «Պատմություն Եղիշեյի և քննությունք» Վենետիկ, 1903 թ.

Իր ընդարձակ առաջաբանում հեղինակը մի քանի անգամ հիշատակում է Ֆիրդուսու անունը լեզվական խնդիրների առնչությամբ.

ա. «Բայց եւ ակն հանդիման կը տեսնենք այն այլայլութիւնքը՝ զոր իրենց պարսկերենը վշտասպյան Դարեհի որեն մինչև Սասանյանն Արտաշիր և ապա ցՖիրդեսի, դժվարին է հավատալ թե Հայկազն Տիգրան և Վռամշապուհ իրարու զրուցածը պիտի հասկանային, յեթե յերբեք հանդիպեյին իրերաց, ինչպես վոր հայտնի յե՝ թե Արտաշիր, Հազկերտ և Ֆիրդեսի պիտի չկարեյին հասկանալ Դարեհի լեզուն...» եջ 87.

բ. Այժմ Պարսկաստանի հնագույն մատենագիրը Ֆիրդեսին է, զոր գրեաց իր Շահնամեն Քրիստոսի 1003 թվականին, այս է մեր ձեռքը հասած նախնագույն հայ հեղինակություններեն 700 տարի ետքը», եջ 87.

գ. «Նույնպես Ֆիրդեսի ատենը վոչ միայն բևեռագիրք, այլ և Ավեստան, այլ և Սասանյան պաշտոնական լեզուն Բահլավի սեպված լեզուն եր», եջ 100.

դ. «... ինչպես և մոգական որենքը վանեցին ու ջնջեցին պարթևաց ատենը մտած հունական դիցապաշտությունը, ինչպես ալ ավելի վերջերս Ֆիրդեսին իր մեծահատոր դյուցազներգությունը ջանացեր և հաջողեր եր ի գլուխ հանել

-տանց գործածելու արաբական բառեր՝ վոր մուտք գրած եյին մահմեդականությունն հետը», եջ 109.

ե. «Երկու գրության ձև ունին եաշտք, չափեալ տաղեր՝ վորք պարսից վիպասանաց յերգերն ըլլալու եյին, եւ որովք հյուսեց վերջերս Ֆիրդևսին գյուր գյուցազներգությունը», եջ 150.

7. Փառնակ.

Իր «Ոմար Խայամի քառյակները» հրատարակության առաջաբանում մի քանի անգամ հիշատակում է Ֆիրդուսու անունը.

«Իր (Խայամի) ծննդավայրն է Նիշաբուր քաղաքը Խորասանի մեջ, վոր պարսից բանաստեղծության մասին այնքան նախասիրական «տեղի լիզման» եղած կծիլի ծնունդ տված ըլլալով տասնյակե ավելի պարսիկ բանաստեղծներու՝ ինչպես Ֆիրդուզի...» և այլն։

«Ոմար պահած է այդ համեստ մականունը (վրանական) փոխանակ ավելի շողշողուն մը ընտրելու՝ ուրիշ պարսիկ բանաստեղծներու նման, ինչպես Ֆիրդուզի (վոր «դրախտային» կնշանակե), Սաադի (յերջանիկ), Էնվարի (լուսավոր(։

«Ոմար Խայամ,» Պարիզ 1904, եջ 3։

8. «Շահ-Նամե»-յի հայերեն թարգմանությունը»

Խոսվում է Ս. Գյուլզադյանի թարգմանությունների մասին։

«Հանդ. Ամսօր.» 1896, եջ 253.

9. Սրվանձտեան Գարեգին վ.

Իր «Համով-հոտով» աշխատության մեջ Գ. բաժնում, «Բանի մը հեքաթներ» վերնագրի տակ, տպագրել է «Սալմանն ու Ռոստոմն» անունը կրող մի փոքրիկ «հեքիաթ»։ Այստեղ Ռոստոմի հայրը Զալի փոխարեն կոչվում է Զալ, ձին՝ Նեջերալաք։ Ռոստոմ մենամարտի յե դուրս գալիս Սալմանի դեմ.

«Ձեռքեր կը փշրվին, կուտան կ’առնեն, կելնեն ձիեն, կը դրկվին ու մեկմեկու բարչամեն կու կախվին։ Մինչև այսօր իրար չեն հաղթած։ Ահա այս է վոր քանի տարին հեղ մը գլխար կը քաշկռտեն ու գլխար կը ջրդեն, տոնց դարըեն ժաժկ կը լինի...»։

«Համով-հոտով», Թիֆլ. 1904, եջ 222.

10. «Ֆիրդոուսու «Շահ-Նամե»-յի հայերեն թարգմանությունը»

Խոսվում է Ս. Գյուլզադյանի թարգմանություններն ամբողջական հրատարակության հանձնելու մասին։

«Արձագանք» Թիֆլ. 1906 թ., № 71.

11. Ֆրդուսի (935—1020) պատկերներ նրա կյանքից. կազմեց Աթ. Խնկոյանց. Թիֆլ. 1912. Հրատարակություն «Հերմես» տպարանի. 24 եջ.

Կազմողն իր գրքույկի մինչև 20-րդ եջը բանաստեղծի կենսագրությունն անելով, վերջը առաջ է բերում մի քանի հատվածներ Գյուլզադյանի թարգմանություններից։

12. Շահնազարյան Աս. Ֆիրդուսու «Շահ-Նամե»-յի ձեռագրի մի օրինակը.

Հոդվածագիրը խոսում է Յերևանի Պետ. Թանգարանում գտնվող «Շահ-Նամե»-յի ձեռագրի մասին, վոր գրված է Հիճրայի 1245 թվին (1827-ին). Մահմուտ անունով մի խանի հրամանով և Մահմուդ Հյուսեյին Իբն ալի Մուհամեդ ադավալի ձեռքով։

«Խ. Հայաստան» 1934 թ. № 120.

13. Որբելի Իոսիֆ. «Շահ-Նամե» (Ֆիրդուսու ծննդյան 1000-ամյակի առթիվ).

Հոդվածագիրը խոսում է Ֆիրդուսու և նրա ստեղծագործությունների գրական ու գեղարվեստական արժեքի վրա, նշելով վոր բանաստեղծի 1000-ամյակի տոնը «միջազգային բնույթ է կրում»։

«Խ. Հայաստան», 1934, հունիսի 30.

14. Մելիք-Օհանջանյան Կ., «Ֆիրդուսին».

Տպագրված է հեղինակի «Ֆիրդուսին և իրանական վիպական մոտիվները «Շահ-Նամե»-յում և հայ մատենագրության մեջ» աշխատության առաջին գլխի մի մասը։

«Խորհրդ. Արվեստ» 1934 թ. № 5—6.

Կազմելով այս բիբլիոգրաֆիական տեղեկատու հոդվածը, մենք այն կարծիքին չենք, վոր սա մի լիակատար աշխատանք է. թերևս մեր պարբերական մամուլի մեջ լինեին դարձյալ ուրիշ ուրիշ հոդվածներ և հիշատակություններ, վորոնց հավաքելը և ի մի խմբելը կը մնա հետագային։

Ինչպես տեսանք Շահնամեյի հանճարեղ հեղինակի անունը մեր բանասերները և թարգմանիչները գրում են տարբեր ձևերով՝ Ֆրդուսի, Ֆիրդուսի, Ֆիրդովս, Ֆիրդևս, Ֆիրդուզի։ Վո՞ր ձևն է ավելի ճիշտը, դրա պատասխանը թողնում ենք մեր լեզվաբաններին և պարսկագետներին։

Աս. Շահնազարյան

«ՇԱՀ-ՆԱՄԵ»-Յի ՁԵՌԱԳՐԻ ՄԻ ՕՐԻՆԱԿԸ

Հռչակավոր Ֆիրդուսու «Շահ-Նամե»-ի դյուցազներգությունը յուր գրավիչ բովանդակությամբ և գեղարվեստական հոյակապ կառուցվածքով պարսիկ ժողովրդի ամենասիրելի ընթերցանության գիրքն է յեղել։ Դարեր շարունակ բազմաթիվ ձեռագիր որինակներ են արտագրվել նրանից, վորոնք մեծամասամբ զարդարվել են «Շահ-Նամե»-ի այլ և այլ մասերի բովանդակության հիման վրա վառ յերևակայությամբ ստեղծած նկարներով. մինչև անգամ յերբ Պարսկաստանում և Հնդկաստանում արդեն սկսել եյին հրատարակվել «Շահ-Նամե»-ի վիմատիպ որինակները (XIX դարի սկզբներից), դրանից հետո էլ դեռ բավական ժամանակ Ֆիրդուսու հանճարի յերկրպագու անհատներ շարունակում եյին այդ նույն գրքի ձեռագիր որինակները պատրաստել տալ իրենց ընթերցանության համար։ Այդ է պատճառը, վոր ներկայումս «Շահ-Նամե»-ի բազմաթիվ ձեռագիր որինակներ կան վոչ միայն Պարսկաստանում, Հնդկաստանում, Իրաքում և Թուրքիայում, այլ և աշխարհիս բոլոր քիչ ու շատ հայտնի թանգարանների ձեռագրատներում և մասնավոր անձանց մոտ։ «Շահ-Նամե»-ի ամենահին ձեռագիր որինակը, վորը հասել է մինչև մեր որերը, արտագրված է XIII—XIV դարերում, Ֆիրդուսու մահվանից 2—3 դար հետո։

Խ. Հայաստանի Պետական Կուլտ-պատմական թանգարանը ներկայումս ունի «Շահ-Նամե»-ի յերկու ձեռագիր նկարազարդ պարսկերեն որինակներ, վորոնցից ամենից ավելի աչքի յե ընկնում № 20-ը (ըստ գույքամատյանի № 4786/327), վորն ստացվել է Լազարյան ճեմարանից։

Այդ ձեռագիրը թեև արտագրվել է XIX դարի առաջին կիսում, հետևաբար վերջին ժամանակի գործ է, բայց ձեռագրի թե ներքին և թե արտաքին հանգամանքներից, ինչպես նաև մանրանկարչության տեսակետից յերևում է, վոր դա ընդորինակված է XVI—XVII դարերի լավագույն մի որինակից։

«Շահ-Նամե»-ի այս ձեռագրի մեծությունն է 35×23×5 ս.

բաղկացած է 389 թերթից (777 էջ). յուրաքանչյուր էջը հավասարաչափ բաժանված է 4 սյունյակի, վորոնցից ամեն մեկի բարձրությունն է 19, լայնությունը 2 ս. և բովանդակում է 27 տող: Բացի դրանից սյունյակները լուսանցքների կողմից (վերին, ներքևի և աջ կամ ձախ) շրջափակված են համաչափ լայնությամբ գծած արտաքին մի այլ սյունյակով, ուր վոտանավորների տողերի գրությունը շարունակվում է թեք ուղղությամբ և ուր տողամիջերին թողնված են յեռանկյունաձև գծագրած փոքր և ազատ տարածություններ տողերի թեքության ուղղությունը ճշտությամբ պահպանելու համար: Շրջափակի սյունյակը պարունակում է 50 տող: Յուրաքանչյուր էջ ունի յերկու լուսանցք, վորոնցից ա-ի լայնությունն է 1,7 ս. (հաշվելով թերթի ծայրից) և բաժանված է հարևան մի այլ լուսանցքից յերեք գծով, մյուս լուսանցքի լայնությունն է 3 ս. և բաժանված է թեք գրությամբ տողերի սյունյակից վեց զանազանագույն գծով: Լուսանցքները, արաբական տառերով գրված ձեռագրերում ընդունված սովորության հակառակ, միանգամայն ազատ են վորևէ գրությունից: Ամբողջ ձեռագիրն այնպիսի խնամքով և մեծ զգուշությամբ է գրված, վոր չկա ավելացրած կամ ուղղած մի բառ անգամ: Թերթերի յերկրորդ էջերի ներքևի լուսանցքներում կրկնված է հաջորդ էջի առաջին տողի մի կամ յերկու բառը՝ բովանդակության շարունակությունը ճշտությամբ պահպանելու համար: Թուղթը մարմնագույն է, հղկված և խիստ բարակ, ունի խավաքարտե կազմ, վորի արտաքին յերկու յերեսները պատերազմների տեսարաններ են նկարված, իսկ նույն կազմի ներսի յերեսները քառանկյունի զարդարուն շրջանակի մեջ մուգ-կարմրագույն ֆոնի վրա ծաղիկներ և թռչուններ են պատկերացրած. ձեռագրի սկզբից և վերջից մեկական մուգ-դեղնագույն թերթեր իբրև պահպանակ են ծառայում: Գրությունը մանրատառ նասխի յե սևագույն մելանով, պարզ և անշփոթ տառերով, առանց ավելորդ գծիկի. վերնագրերը՝ բաց կարմրագույն մելանով: Ձեռագիրը լավ վիճակում է գտնվում, միայն մի քանի թերթեր լուսանցքների կողմից, ինչպես նաև ա-ին էջի խորանազարդը, թղթի նրբության և նկարների գույների ազդեցության շնորհիվ քիչ պատռվածք և ճեղքվածքներ ունեն. Ջրաներկ մանրանկարների մեջ սպիտակ գույնը մասամբ թափված է:

Ձեռագրի 1, 2, 411 էջերը մանրանկար ծաղիկներով և արևելյան վոճով գեղեցիկ խորանազարդեր են, ուր տիրապետող գույներն են վոսկեգույնը, մանիշակագույնը, բաց և մուգ կարմիրը, մասամբ նաև սպիտակագույնը. 1, 2, 12, 13, 411, և 412 էջերի լուսանցքները ծաղկազարդ են, իսկ նույն էջերի գրության տողերն ընդգծված են վոսկեգույն, խոշոր կեռման գծերով: Այս մասի վերնագրերը զետեղված են նկարազարդ յեզրերով գծած լայն վոսկեգույն ֆոնի վրա, իսկ այդ նույն էջերի սյունյակները բաժանված են միմիանցից մանիշակագույն և կարմրագույն զարդարուն գծերով:

Ձեռագիրն ունի միայն մի հիշատակարան, վորը զետեղած է գրքի վերջին (777 էջ) և բովանդակում է հետևյալը՝ «ոգնությամբ պարգևատու Թագավորին ամեն մասով վերջացավ պերճարան և արժանավայել «Շահ-Նամե» գիրքը ի վայելումն, խմաստնագույն շեյխ Աբուլ Ղասիմ Թուսիի, մականվանյալն Ֆիրդուսի. տերն վողորմե, զիլհաջ ամսի 3-ին չորեքշաբթի օրը 1245 թվին [1828 թ.] ըստ հրամանի բարձրապատիվ, վսեմագույն, փառապանծ, յերջանկության ուղեկից, կորովի, արթնությամբն շրջահայաց, հենարան մեծամեծների Մահմեդ Քիարիմ Խանի, նվաստ ծառա գրիչ Մահմեդ Հուսեյին Իբն Ալի Մուհամմեդ Աղավալի». հայտնի չէ գրության տեղը և նկարչի անունը:

«Շահ-Նամե»-յի այս ձեռագիրը բովանդակում է նախ մի ընդարձակ նախաբան (1—11 էջը) առանց վորևէ վերնագրի, թեև դրա համար առանձին տեղ է թողնված. Այդ նախաբանը Ֆիրդուսու գրչին չի պատկանում, այլ կազմված է անհայտ մի գրչի ձեռքով ավելի հետին ժամանակներում, հավանականաբար XIV դարի վերջին, ժողովրդի մեջ տարածված ավանդությունների հիման վրա և վերաբերում է Ֆիրդուսու կյանքին, «Շահ-Նամե»-ն գրելու հանգամանքներին և վերջանում է գրքի մեջ հիշված դյուցազունների, իշխանական դինաստիաների և թագավորների տարեթվերի ցուցակով: Առաջին անգամ այդպիսի նախաբան զետեղված ենք գտնում «Շահ-Նամե»-յի մի ձեռագրի մեջ, գրված 1425 թ. Թիմուրի թոռ Բեյսանգուր Խանի հրամանով (տպագրվել է 1892 թ. Մեկենի հրատարակությամբ). նույնը պարունակում է նաև 1434 թ. գրված մի այլ ձեռագիր, վորը ֆրանսերեն թարգմանությամբ հրատարակել է Վալլենբուրգը (Վիեննա 1810 թ.), ապա Դով-

լաթ-շահի մոտ 1487 թ. ձեռագրում (հրատարակել է Վուլլերսը Բոննում 1831 թ.)։ Այնուհետև այդպիսի նախաբան ամփոփող ձեռագրերի թիվն ավելանում է։ Ստ. Նազարյանը յուր դիսերտացիայի համար նյութ ծառայեցրեց այդ նախաբանը, վորը և թարգմանեց ռուսերեն։ Թեև ավանդությունը, վորի հիման վրա կազմված է նախաբանը, կարող է վորոշ չափով միայն արձագանքը լինել իրականության, բայց դրա անհայտ հեղինակը լինելով բուն իրանցի և կատարելապես յերկրպագու Ֆիրդուսու հանճարին և նրա անմահ ստեղծագործության, համոզված է յեղել, թե Ֆիրդուսու հալածական կյանքի և «Շահ-Նամե»-ն գրելու հանգամանքների մասին տարածված ավանդությունն ամբողջովին համապատասխանում է իրականության. այդ պատճառով նա ձգնել է այս նախաբանի մեջ այնպիսի պատկերավոր վոճով և լուսավոր գույներով հանդես բերել Ֆիրդուսու դեմքը և անհրապույր ձևով գծագրել Ղազնևիի շահ Մահմուդին, վոր պարսիկ ընթերցող հասարակությունը միանգամայն համոզված է յեղել դրա ճշմարտության։ Բայց թե Ֆիրդուսու յուր մասին հայտնած տեղեկությունները («Շահ-Նամե»-ի, «Յուսուֆ-Զուլեյխա»-ի և «Յերգիծանք»-ի մեջ) և թե Ահմեդ Արուզիի (ալ Արուդի) 1116 թ. բանաստեղծի հայրենիք Թուսում նրա մասին հավաքած կենսագրական տեղեկությունները մեծամասամբ չեն համապատասխանում ավանդական այդ տվյալներին [1]։

Ձեռագրի 12-րդ եջից սկսվում է «Շահ-Նամե» դյուցազներգությունն առանց սովորական ընդունված վերնագրի (թեև դրա համար առանձին տեղ թողնված է). Վուլլերսի հրատարակությունն (Լեյդեն 1877)[2] այս եջում ունի հետևյալ վերնագիրը՝ «Շահ-Նամե

[1] «Շահ-Նամե»-ի այդ նախաբանը քննության առարկա յե դարձրել և պարզաբանել Ժ. Մոլը (1838 թ. Փարիզ), ինչպես նաև Նյոլդեկեն՝ յուր «Das iran. Nationalepos» արժեքավոր ուսումնասիրության մեջ («Grundriss der iran. Philologie», Stras. 1895). Վուլլերսի 1877 թ. հրատարակությունը չունի հիշյալ նախաբանը։

[2] «Շահ-Նամե»-ի բնագրի ամենալավ հրատարակությունը կատարել է Վուլլերսը 1877—1883 թ. թ. հիմնված Մոլի հրատարակության վրա, ուր ցուցադրված են նաև Մեկենի 1829 թվի հրատարակության տարբեր ընթերցումները. Վուլլերսը հրատարակել է «Շահ-Նամե»-ի միայն յերեք հատորը՝ վերջինը՝ չորրորդ, հատորը բացակայում է. ձեռագրի համեմատությունը կատարված է Վուլլերսի հրատարակության հետ։

գիրքը», «սկիզբը», «հանուն գթած և վողորմած աստուծուն». վերջին դարձվածը հիշված է միայն 411 եջի վերնագրի ներքև, վորտեղից սկսվում է Լվարսաբի պատմությունը։ 16 յերկտողից հետո այս ձեռագրի և Վուլլերսի հրատարակության վերնագրերն ընդհանուր գծերով միայն համապատասխանում են միմյանց, տարբերություն նկատելի յե ավելի բառերի գործածության և վոճի կազմության մեջ։ Այսպես Վուլլերսի հրատ. ա-ին գլխի վերնագիրն է՝ «Խոսք ներբողական իմաստության մասին». մեր ձեռագիրը նույն վերնագիրն արտահայտում է՝ «գովեստ իմաստության». բ-րդ գլուխը՝ «Խոսք աշխարհքի ստեղծագործության մասին», իսկ ձեռագրի մեջ՝ «ստեղծագործություն տարրերքի»։ Բացի դրանից ձեռագիրն ունի գլուխների ավելի քանակ, քան Վուլլերսի հրատարակությունը. և այդ նոր գլուխների հավելումից առաջացել է այն հանգամանքը, վոր վոտանավորների տողերի մի մասը կամ անցել է նախորդ գլխին և կամ կցվել հաջորդին։ Բայց և այնպես «Շահ-Նամե»-ի 60 հազար յերկտող վոտանավորների քանակը նույնն է թողնված։ Աչքի ընկնող տարբերություն է նկատվում վոտանավորների տեղերի, ինչպես յերբեմն նաև հանգերի կազմության մեջ. յերբեմն տարբեր ածականների, հատկացուցիչների ու բայերի գործածությունը ցույց է տալիս, վոր մեր ձեռագրի բնագիրը, վորը XVI—XVI դարերի գործ պիտի լինի, դեռ այդ ժամանակվանից ունեցել է ընթերցանության աչքի ընկնող տարբերություններ։ Վուլլերսի հրատարակած «Շահ-Նամե»-ի յերրորդ հատորը վերջանում է Դարեհ վերջինի սպանությամբ Աղեքսանդր Մակեդոնացու ժամանակ, վորը համապատասխանում է մեր ձեռագրի 493 եջի վերնագրին՝ «Դարեհի կռակն Իսկենդերին», վորից հետո Ֆիրդուսին կրկին մի ձոն է նվիրում Մահմուդ շահին և ապա շարունակում յուր դյուցազներգությունը, ասելով՝ «Իսկենդերի պարսից գահը բարձրանալը» և ապա հաջորդաբար շարահարում է մինչև Սասանյան Հազկերտ վերջինի մահը։

Այս ձեռագրի ամենահետաքրքիր և ուշադրության արժանի կողմն է կազմում նրա մանրանկարչությունը, վորով զարդարված են գրքի 52 եջերը. նկարչի համար իբրև նյութ են ծառայել «Շահ-Նամե»-ի մեջ դեղարվեստական պատկերացումով հանդես բերված դյուցազունները, առասպելական շրջանի թագավորները,

արքաները և զորավարներն ու հերոսները, նրանց կռվի, վորսի հանդեսները, խրախճանքի, սիրահարության և պալատական կյանքի այլ և այլ տեսարանները, ինչպես նաև այդ բոլորին կից Իրանի կապտագույն կամ արևվառ յերկինքը, գորշ և չերկ լեռներն ու բլուրները, կանաչ մարգագետինները, ջրառատ ավազանները և սաղարթախիտ նոճիները։ Թեև ձեռագրիս մանրանկարչության հեղինակն ապրում եր XIX դարում, Ղաջարների հարստության շրջանում, յերբ պարսկական արվեստը վոչ միայն անկման վիճակում եր գտնվում, այլ և Սեֆևյանների թողած հոյակապ գեղարվեստական կառուցվածքները բարբարոսաբար ավերվում, իսկ վորմնանկարները գաճով ծածկվում եյին, բայց և այնպես նա կարողացել ե վորոշ չափով հավատարիմ մնալ պարսից Սեֆևյան շրջանի (XVI—XVII դարերի) նկարչական դպրոցին։

Պարսից մանրանկարչությունը չինական արվեստի ուժեղ ազդեցությունն ե կրել։ Դեռ ևս XIII դարում պարսից զանազան ֆեոդալների պալատները, ինչպես և հասարակական այլ և այլ շինությունները զարդարված եյին չինացի արվեստագետների ձեռքով։ Շահ Աբաս մեծի ժամանակ նշանավոր նկարիչներ հրավիրվեցին Չինաստանից, Հնդկաստանից և Յեվրոպայից։ Հնդիկ հռչակավոր նկարիչ Մանին յերկար ժամանակ մնաց Պարսկաստանում, յուրացրեց պարսից հին նկարչական դպրոցի արվեստը և տիրապետելով նրա տեխնիկային՝ կարողացավ հոյակապ գեղեցկությամբ զարդարել Սեֆևյանների պալատները։ Հենց այդ ժամանակն ե, վոր սկսվում ե պարսկական արվեստի ռենեսանսը։ Ահմեդ Թավրիզին հիմնում ե յուր նկարչական դպրոցը, վորտեղից յելնում են տաղանդավոր արվեստագետներ, վորոնց ամենանշանավոր ներկայացուցիչն եր Բեհզադեն, վորի Սաադու «Բոստան»-ի նկարազարդերը համարվում են պարսից արվեստի մեծագույն ստեղծագործությունները։ Պարսկական արվեստն ունեցավ նաև գործնական մեծ նշանակություն. հանդես յեկան արհեստագետներ, վորոնք փայտի, պղնձի, արծաթի և վոսկորի վրա սկսեցին գեղեցիկ կերպով և մեծ ճաշակով փորագրել այն, ինչ վոր տալիս եր պարսկական մանրանկարչությունը կամ թե նույնը գործադրել նաև գորգագործության մեջ և շինանյութերի համար շքաղյուս պատրաստելու։

Հենց այդ դպրոցին ե հետևել նաև այս ձեռագրի անանուն

Ռուստամը և Իսֆանդիարը

նկարիչը, որն յուր տաղանդի ամբողջ ուժով աշխատել է բազմազան և նուրբ գույների ներդաշնակությամբ պատկերացնել արևելյան քնքշությունն ու գրավչությունը։ Այստեղ հանդես բերված նկարներն իրենց հիմնական գծերով դեկորատիվ են, ավելի ուժեղ տպավորություն գործելու համար և վոչ իրական. նկարչին հաջողվել է ցայտուն կերպով պատկերացնել Իրանի պայծառ-կանաչ մարգագետինը, բարձր սաղարթախիտ ծառերը, մուգ-կապտագույն ջրերը, լազուր կամ արեվառ յերկնակամարը, ինչպես նաև լերկ լեռներն ու բլուրները և բաց մոխրագույն գետինը, պալատական կահկարասիների նկարազարդերը, մարդկանց հագուստների, ձիերի և փղերի ծածկոցների գեղեցկահյուս գործվածքները և այլն։ Նկարչի սիրած ժանրն է հանդես բերած դյուցազունների, թագավորների, զինվորների, ձիերի և փղերի խտացրած նկարները տալ ավելի փոքր տարածության վրա, ուր շատ անգամ խախտվում է հեռանկարի հիմնական սկզբունքը։ Ինչպես արևելյան շատ գեղարվեստագետների, այնպես էլ «Շահ-Նամե»-ի այս ձեռագրի նկարչին չի հաջողվել ճշտությամբ պատկերացնել մարդկանց դեմքերի գծագրությունը նրանց հոգեկան ապրումների այլ և այլ մոմենտներում. հանդես բերված մարդկանց դիմագծերն առհասարակ միատեսակ են, սառն ու անկենդան թե ուրախության և թե սարսափի րոպեներին. յերբեմն նույն իսկ մարմնի զանազան անդամների համաչափությունը ճշտությամբ չի պահպանված։ Զննելով այս պակասությունները, վոր հատուկ են առհասարակ արևելյան մանրանկարչության, այնուամենայնիվ «Շահ-Նամե»-ի այս ձեռագիրը բավական մեծ հետաքրքրություն է ներկայացնում թե մյուս ձեռագրերից ունեցած տարբեր ընթերցանությամբ և թե գլխավորապես պարսկական մանրանկարչական արվեստի ուսումնասիրության տեսակետից [1]։

---

[1] Ներկա ժողովածուի մեջ լույս տեսնող մանրանկարները վերցրված են այս ձեռագիր «Շահ-Նամե»-ի օրինակից։ Խմբ.

«ՌՈՍՏԱՄ-ԶԱ՛Լ»

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊ

Պատմեց Նարեկցի ՊԱՏՈՒՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Գրի առավ 1915 թ.
ԱՐՏԱՇԵՍ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Խմբագրություն յեվ առաջաբան
Կ. ՄԵԼԻՔ-ՈՀԱՆՋԱՆՅԱՆԻ

ԱՌԱՋԱԲԱՆ

«Ռոստամ-Զալ» ժողովրդական վեպի այս պատումը գտնվում է ՀՍԽՀ Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի ֆոլկլորի արխիվում: Այստեղ կենտրոնացած են տարիներ առաջ «Հայ Ազգագրական Ընկերության» նախաձեռնությամբ և վաստ. ազգագրագետ Յերվ. Լալայանի անմիջական ղեկավարությամբ կազմակերպված բանահյուսական գիտարշավի նյութերը: Այդ գիտարշավը մոտ 2—3 տարի տևող ֆոլկլորիստիկ աշխատանքների ընթացքում հավաքել ու գրի է առել հազարից ավելի «հեքաթներ, վեպեր և զրույցներ», մի քանի հազար առակներ, հազարավոր առածներ, հանելուկներ, յերգեր, տաղեր, շուտասելուկներ և այլն:

Գիտարշավի նյութերի մեջ աչքի յեն ընկնում «Ռոստամ-Զալ» հայ-իրանական ժողովրդական վեպի 7 վարիանտները:

Կուլտուրայի Պատմության Ինստիտուտը 1932 թ. սկսած յեռանդուն հավաքում է հայ և քուրդ ֆոլկլորը: Ընդամենը յերկու տարվա ընթացքում կազմակերպած գիտարշավների, անհատական գործուղումների միջոցով ի թիվս այլ բանահյուսական նյութերի՝ գրի յեն առնված հայ-իրանական և քուրդ-իրանական այս ժողովրդական վեպի 10—12 նոր պատումներ: Գրանցված նյութերի մեջ մանավանդ աչքի յեն ընկնում քուրդ-իրանական վեպի քրդական վերսիաները, վորոնց մեծագույն մասը յերգել կամ առել են հնչյուն վոտանավորներով Խորհրդային Հայաստանում ներկայումս հաստատված՝ սասունցի, մոկացի, շատախցի և ուրիշ գավառների հայերը[1]:

Ինստիտուտի «ֆոլկլորի արխիվում» կուտակված հայ-իրանական վեպի պատումներից, վորպես նմուշ, առաջարկում ենք ֆոլկլորիստների և իրանիստների հատուկ ուշադրությանն այս վերսիան:

Պատումիս ասացողն է Նարեկցի (Ռշտունիք) անգրագետ «բոստանչի» Պատուր Պողոսյան (50 տարեկան, գրի առնելու ժամանակ), վորը լսել և սովորել է այս «հեքաթը» համագյուղացի հռչակավոր «հեքաթ ըսող» հյուսն Ուստա Հարոյից: Ուստա Հարոն, Պատուրի ասելով, բացի «Ռոստամ-Զալ»-ի այս ճյուղից գիտեր ևս ուրիշ ճյուղեր և բազմաթիվ հայերեն և քրդերեն հեքաթներ ու զրույցներ:

«Ռոստամ-Զալ»-ի այս պատումը գրի յե առել 1915 թ. ն. Ալեքսանդրա-

---

[1] Ինստիտուտի Քրդագիտական սեկցիան պատրաստում է քուրդ-իրանական վեպի քննական հրատարակությունը (բնագիր, ծանոթագրություններ, գրական-բանասիրական ներածություն և բառարան):

գյուղում Նորեկցի ուսուցիչ (այժմ հանգուցյալ) Արտաշես Բարսեղյանը: Սա ազգագրագետ Յեր. Լալայանի ամենայնատանդուն օգնականն է յեղած: Ա. Բարսեղյանի գրչին են պատկանում Ինստիտուտի ժողովածուների մեջ մոտ 150 հեքաթ, զրույց և այլն, վոր նա գրի յե առել իր կարողությունների համեմատ, հատուկ ուշադրություն դարձնելով հավաքած նյութերի բարբառային առանձնահատկությունների վրա:

Լույս ընծայվող այս պատումը ձեռագրի մեջ արձակ է գրի առնված: Ընթերցանությունը դյուրացնելու, ինչպես և վեպի բովանդակությունն ըստ եպիզոդների ավելի ընդգծելու և կոնկրետացնելու նպատակով՝ մենք հատվածների յենք բաժանել այն, յուրաքանչյուր եպիզոդին տալով հատուկ վերնագիր՝ Բացի դրանից հարազատությամբ պահպանելով պատումի տեքստը՝ վեր ենք ածել մեր ժողովրդական վեպին հատուկ «վոտանավորի» տողերի: Խմբագրական այս աշխատանքը կատարելիս՝ հիմք ենք ընդունել մեր բանահյուսության և տաղաչափության հայտնի մասնագետ պրոֆ. Մանուկ Աբեղյանի ժողովրդ. վեպի տողատման սկզբունքները:

...«Յամբական վոտանավորների մեջ, ասում է պրոֆ. Մ. Աբեղյանը, մեկ մեկ կարող են շարժուն դրությամբ մտնել անապեստյան վոտքեր, վորոնցով վերանում է յամբական ռիթմի միակերպությունը, և տողը մեկ վանկով յերկարում է: Այս միևնույնը կարող է լինել նաև յամբական պարզոտնյա ազատ վոտանավորի մեջ: Անապեստների այս խառնուրդն այնպես պետք է լինի, վոր իշխող վոտքը միշտ յամբականը, այսինքն՝ յամբական վոտքերի թիվը տողի մեջ ավելի լինի, քան անապեստինը, վորպեսզի չփոխվի հորինվածքի ընդհանուր յամբական բնավորությունը»[1]:

Այսպիսի ազատ վոտանավորներ գործ են ածվում մեր ժողովրդական յերգերի և վիպերգների մեջ («Մոկաց Միրզեն», «Կարոս խաչ», «Ասլան Աղեն», «Նարեկացին», «Ալեքսիանոս» և այլն): Այս տեսակի վոտանավորներով են ասված և մեր «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի պատումները: «Այստեղ ռիթմական վոտքը լսելի յե ավելի պատմական ու նկարագրական հատվածների, ինչպես և յերգերի մեջ. ռիթմը համեմատաբար պակաս է կարճ խոսակցությունների մեջ: Հնում, յերբ յեղել են վարպետ ասացողներ, անշուշտ, ավելի մեծ տեղ է բռնել վոտանավորը, վորը հետագայում մասամբ վերածվել է արձակի»[2]:

Այս տեսակի վոտանավորի տողերի մեջ վանկերի թիվը կայուն չի և տատանվում է 2-ից մինչև ամենաշատը 15 — 16:

Մեջ բերենք մի նմուշ «Ռոստամ-Զալ» ժող. վեպի պատումի մեր տողատումից.

«Ռոստամ գընա̈ց մեյդա̈ն, թող եխան.
Սալման ենդեխեն եկավ:
Ենոնց սրտքեր երին սընդան,

1 Պրոֆ. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, Յերևան 1933 թ., § 88, յեր. 365 հմմ.:
2 Անդ, յերես 370:

Ենոնց գօ̈րզեր երին կռան.
Ենպես գօ̈րզ կը զա̈նեն մեկ-մեկու սրտին,
Կրակ մոտեն կը Թա̈լը.
Թուր խալա̈վ, մնաց պո̈ռ.
Գօ̈րզ խալա̈վ, մնաց ող:
Սըմուռ խավքեր ենոնց հաւո̈ն,
Փախան, գա̈ցին Ծիայե Կաֆ»[1]:

Մի յերկու խոսք էլ այս պատումի բարբառի մասին:

Նորեկի յ/բարբառը պատկանում է Վանա մայր ճյուղին[2]: Բացի «ա», «ո» և «ու» ձայնավորներից այս բարբառում կան նաև ä = արաբ. | (օրին. «շա̈քա̈ր» բառի մեջ), ö=գերմ. ö, ü=ֆրանս. «u» կամ գերմ. «ü»:

Բաղաձայններից «գ», «կ» (մասամբ) և «ք» արտասանվում են քմայնացած և հնչվում մոտավորապես արագ արտասանած «գյ», «կյ» և «քյ»: Հատուկ տպագրական նիշ չունենալու պատճառով քմայնացած այս բաղաձայնները թողնվում են անփոփոխ՝ «գ», «կ» և «ք»:

Այս յ/բարբառի մեջ բոլոր հայարմատ, մի քանի էլ հայացած, բառերի «հ» դառնում է «խ», որինակ, «խաց» (հաց), «խեր» (հայր), «խինգ» (հինգ), «խամար», «ճամբա̈խ», «խալա̈վ», «խեծնել», «խավքեր» և այլն: Հաճախ ձայնավորներից առաջ ավելանում է «հ» հնչյունը, որինակ, «հա̈խպո̈ր» (աղբյուր), «հիրիկուն», «հըմեն», «հեսոր», «հախու», «հըլլին», «հո̈րո̈ղկել» և այլն:

Մյուս բաղաձայները թողել ենք անփոփոխ բանահավաքինը: Պետք է այստեղ նկատել, վոր հանգ. բանահավաքը չի հետևել գրանցման վորոշ սկզբունքի և տուրք է տվել արևելահայ և արևմտահայ խառն բարբառային տառադարձությանը:

Վերջում կցել ենք «Ոտար և բարբառային դժվար հասկանալի բառերի և քերականական ձևերի բառարան»:

Հայ-իրանական վեպ «Ռոստամ-Զալը» չի վրիպել մեր հմուտ բանահավաքների աչքից: Մեր ժողովրդական բանահյուսության, մասնավորապես «Սասնա ծռեր» ժող. վեպի պատումներին զուգընթաց՝ նրանք հավաքել և գրի յեն առել նաև ծագումով ոտար՝ իրանական կամ քրդական, բայց ժամանակի ընթացքում հայացած, հարազատացած այս և սրա նման այլ ժողովրդական վեպեր: Այս բնագավառում մեծ վաստակ ունեն մեր բանահավաքների ավագ սերունդը՝ Գարեգին Սրվանձտյան, Սարգիս Հայկունի, Յերվանդ Լալայան, Բագրատ Խալաթյանց, Գարեգին Հովսեփյան և ուրիշներ[3]: Սրանց ջանքերով հրատարակված և Կուլտուրայի Պատմ. Ինստիտուտում պահվող պատումները վկա-

1 «Ռոստամ-Զալ», գլուխ 15:
2 Տես Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, ԷԱԺ, հտ. Ը, 1911, յեր. 140—158:
3 Տես Գարեգին Լևոնյան, «Ֆիրդ. Հայ գրակ. մեջ», յեր. 129—144:

յում են, որ այս վեպը նույնքան տարածված է եղել Հայաստանում, որքան մեր «Սասնա ծռեր» ժողովրդական վեպը։ Մեր վեպի ասացողները՝ չնչին բացառությամբ՝ գիտեն նաև «Ռոստամ-Զալ»-ի ճյուղերից որևէ մեկը և գիտացածն «ասում» են թե հայերեն և թե քրդերեն։

Հայ-իրանական վեպի հավաքման զուգընթաց՝ բանահավաքները (Բագ. Խալաթյանց, Գար. Հովսեփյան) փորձեր են արել նաև ուսումնասիրելու հայկական պատումները՝ համեմատած Ֆիրդուսու «Շահ-Նամե»-ի հետ։ Նրանք արդեն նկատել են, որ հայ-իրանական վեպը «փոխառություն» է Ֆիրդուսու «Շահ-Նամե»-յից, բայց այդ «փոխառությունը» կատարված է միայն նյութի, բուն վիպական մասերով, հաճախ աղբյուրի պատմվածքից տարբեր կապակցությամբ, հայացքներով, շարահյուսությամբ։ Մի հատված, որ «Շահ-Նամե»-ի մեջ ուրիշ կապակցության մեջ է պատմված, այստեղ միացված է բոլորովին այլ պատմության կամ հատվածի հետ»[1]։ Վեպի կառուցվածքի, շարահարության և գեղարվեստական տարբերությունների մեծ մասը «բանաստեղծի յերևակայության և ստեղծագործության արդյունք են, քան բուն, ժողովրդական վեպի մասեր».... «Ժողովուրդն յուր ստացած նյութը կրճատել կամ ավելացրել, փոփոխել և դասավորել է յուր հայացքների, ճաշակի և գեղարվեստական հակումների համեմատ»[2]։

Հայ-իրանական վեպի և Ֆիրդուսու «Շահ-Նամե»-ի տարբերությունների մեծ մասը նաև պետք է առաջացած լինեն հետևյալից. 1. Հայը կամ նրա միջնորդ աղբյուրն օգտվել է Ֆիրդուսու հետևողությամբ XI — XII դ.դ. կազմված «Բարզու-Նամե»-ի, «Ֆերամորզ-Նամե»-ի և նման գրքերի վիպական մոտիվներից. 2. Հայկական վերսիան կազմված է քուրդ բանահյուսության-հերոսական վեպի միջնորդությամբ և ազդեցությամբ (հայ ասացողների մեծ մասն այդ վեպը պատմում — «ասում» է հայերեն և քրդերեն). 3. Հայ պատմողն, անշուշտ, օգտվել է նաև Ֆիրդուսուց առաջ և հետո Հայաստանում պատմվող Իրանի վեպերի և առասպելների մոտիվներից[3]. և վերջապես, 4. Կոնտամինացիայի սկզբունքով հայ պատմողը միացրել է այդ իրանական վեպին հայ բանահյուսությունից, մանավորապես «Սասնա ծռեր» ժող. վեպից՝ եպիզոդներ և պատկերներ, վերամշակել է այդ վեպը, ձևով ու փոքր չափով բովանդակությամբ յուրացրել, ազգայնացրել։

«Շահ-Նամե»-ի, «Բարզու-Նամե»-ի և այլ իրանական էպոսների համեմատությունը հայ-իրանական վեպ «Ռոստամ-Զալ»-ի այս պատումի հետ (նմանությունների և տարբերությունների գծով) հատուկ ուսումնասիրության նյութ

[1] Գ. Հովսեփյան, «Ռոստամ-Զալ» ժող. վեպ, արտատպված «Ազգագրական Հանդես»-ից, Թիֆլիս 1905, յերես 9.

[2] Անդ, յերես 9. տես նաև «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահ-Նամե»-յում և մեր մատենագրության մեջ» մեր աշխատութ. յերես 101—104

[3] Այդ վեպերի և առասպելների հիշատակությունները ծանոթ են բանասիրությանը Մովսես Խորենացու «Հայոց Պատմություն»-ից, I, հատվածներ Ա և Բ., II, Ը, Հ, ՀԲ, ՀԳ և այլն, Գրիգոր Մագիստրոսի «Թղթերից», հրատ. Կ. Կոստանյանցի, յերես 101, 126—127, 216, 220 և այլն։

է։ Հակիրճ առաջաբանի մեջ հնարավոր չէ բավարար չափով վերլուծել այդ խնդիրը։ Այստեղ, կարծում ենք, բավական է միայն նշել հետևյալը.

ա. Հայ պատումների մեծ մասի անունները (քրդական արտասանությամբ) կրկնվում են Իրանի էպոսների մեջ.

բ. Հայկական (նաև քրդական) վերսիաներն ընդհանուր առմամբ վերարտադրում են Իրանի վերսիաներում նկարագրված Իրան-Թուրանի հազարամյա անհաշտ կռիվը.

գ. Հայկական (նաև քրդական) վերսիաները վեպի վերամշակման ընթացքում ազատ են եղել Իրանում գոյություն ունեցող ստեղծագործական յեղանակներից. հայկականը բուն ժողովրդական ստեղծագործություն լինելով՝ զերծ է Իրանի անհատական-գրական ստեղծագործության ամենաէական ատրիբուտներից՝ անհատական ոճը, լիրիկական զեղումներ, նկարագրություններ՝ բնության և բնավորության խորհրդածությունների կարգով և այլն։

դ. Հայկական վերսիան, նկարագրելով իր անմիջական ճանաչողությունից հեռու Իրան-Թուրանի պայքարը՝ տեղ-տեղ շփոթում է նրանց հերոսներին և վիպական միջադեպերը, օրինակ, Քեփ-Կոսրային (Քեյ-Խոսրով) համարելով Թուրանցի, իսկ Փիրանին՝ Իրանցի և այլն։ Յեվ, վերջապես,

ե. Հայկական վերսիան հայացրել է ոչ միայն Իրանի հերոսներից շատերին[1], այլ և վիպական շատ եպիզոդներ պատմում է «Սասնա ծռեր» հայ ժողովրդական վեպի եպիզոդների նմանությամբ, հայ վեպին հատուկ ստեղծագործական պրիոմներով ու ձևով, բովանդակության աստիճանական զարգացմամբ։

Այս վերջին կետը մանավանդ ուշադրության արժանի է։ Դա ցույց է տալիս, որ օտար, հերոսական Իրանի վեպն այնքան հող է գտել հայ աշխատավոր գյուղացու միջավայրում, այնքան է հարազատացել, որ ցեղակցելով հայ վեպի հերոսներին, սրանց էլ է մասնակից դարձնում Իրան-Թուրանի կռվին, Իրանի փահլևանների սխրագործություններն էլ հայկական ձևով է պատմում։ Այսպես օրինակ, 1. Ռոստամի ձի ընտրելը, «պապկե Թուր» ստանալը պատմված է ոչ «Շահ-Նամե»-ի նման և հետևողությամբ. այդ եպիզոդներն իրանական անունների փոփոխությամբ ամբողջապես հայկական են, այն է՝ Դավթի (Ձոջ Մհերի) ձի ընտրելն ու հոր (պապկե) Կայծակի Թուր ստանալը։

2. Ռոստամի կռիվը «Թիրանի թագավոր Քեփ-Կոսրայի հետ» համարյա ամբողջական հարասումն է «Դավթի կռիվը Մսրա Մելիքի հետ» վիպական եպիզոդի։ Դավիթը հզորանալուց հետո ուզում է հարձակվել Մսրա Մելիքի «ճաքարի» վրա, բայց տեսնելով թշնամու բանակը՝ վախենում է և լաց լինում։ Քուռկիկ Ջալալին քաջալերում է նրան՝ խոստանալով իր աջակցությունը։ Դավիթը սրտապնդված հարձակվում է թշնամու վրա և անխնա կոտորում։

Ռոստամը հարձակվում է թշնամու բանակի վրա։

[1] ա. Բ. Խալաթյանց, «Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ» Պարիս 1901, յերես 8—11, 25, 26, 32, 33, 37 և այլն։
բ. Գ. Հովսեփյան, հ. ա., յերես 7, 12, 13 և այլն։
գ. Իմ «Ֆիրդուսին և Իրանի վիպ. և առասպ.» և այլն, յերես 114—116։

«Ռոստամ ըղձին քշեց, եկավ ցածր.
Ինք վըր ուր ոժարացավ, լաց եառւ վերեն։
Ձին ասաց.— Ռոստամ, Ռոստամ,
Ընչի վախեցար, քե ինչ եղավ.
Բու աստված կանչի,
Համա քե վըր իմ քամկին պըռնես, բաս ա։
Եառ ծաքար վոր կա, մըժկի պես ա.
Վոր յեմ պոչի հառձեվ տ'երթան,
Վոր յեմ վոտքերուն, վոր յեմ բեհնին։
Ուր աստված կանչեց, ինգավ մըչ ծաքըրին.
Վոր թըռավ կը կոբեր, կը ջարդեր,
Վոր ձիու վոտքերու տակ կը կոխկըռտվեր,
Վոր բեհնով կը մեռներ։
Տիր մ'էլ աչքեր եբաց, իբիշկեց՝
Ինչ երկու գըլոխ մըչ ծաքըրին գընաց, եկավ,
Ծարած, թի ծաքար, թի պան մնացե։
Նըժավ եթող, եկավ, ասաց.
— Կարիճ են եր, ինչ ուր անից չեկեր ե տուս»․

3. Հարկահանների պատուհասելու միջադեպն այս վեպի մեջ նկարագրըված է «Սասնա ծռեր» ժող. վեպի նմանողությամբ։ Այստեղ էլ, ինչպես և նախորդ կետում, յերկուսի տարբերությունն այն է, որ հայ-իրանականն ավելի համառոտ է նկարագրում, քան նրա նախատիպ հայկականը։

«Կը տանի չափ կը կոծա,
Վոսկիք կը լըցա վըր չափի վոտուն,
Փետ կը տա, շուռ կը տա տակ։
Շատ կը պարկանան։
Թակավոր ինչըխ վոր կ'ենա,
Ռոստամի խետ չկանա չարա տեսնա։
Ռոստամն էլ գետոնց տասմքեր
Կը քաշա, գանա ճակատ,
Կ'ասա.— Դե, գացեք Սալմանին ասեք՝
Մեր քաղաք էլ ուր խարջ չիտա.
Վոր չի գա կռիվ, մեկ ուր տկով աղբ ուտա»։

4. Այս պատումի գլուխներ՝ «Ռոստամի վորդի Զոհրաբի մանկական չարությունները ու քաղաքի բողոքը», «Զոհրաբի վորսորդությունն ու արտատեր պառավի անեծքը», «Զոհրաբը մորից իմանում է, որ իր հայրը Ռոստամն է» ամբողջովին վերապատմում են, տեղ-տեղ անգամ բառացի, մեր Թլոր Դավթի կամ Պզտիկ Մհերի մանկական չարությունների, վորսորդության, ապա վերջինիս (Մհերի) կամ նրա վորդու (անանուն) հոր տեղն ու անունն իմանալու եպիզոդները։ Յեթե հայ-իրանական պատումի այս միջադեպերի մեջ փոխելու լինենք իրանական անունները հայկականներով, այդ դեպքում առանց տատանվելու

կարելի կը լիներ այս ամբողջ հատվածը «Սասնա ծռեր» ժողվեպի բաղադրիչ մասը համարել։

Բերենք այդ եպիզոդից մի կտոր։

«Կնիկ լաճ ըմ կը պերա,
Անուն կը տնա Զոհրաբ։
Թի խըլղի ճիժ տարեկան կը պետանա,
Ենի որական կը պետանա։
Կ'ըլնի յոթ-տաս տարեկան,
Կ'երթա խըտ ճըժերուն կը խաղա։
Բարդի ծառ կը կոռա,
Ջճըժեր կը խանա վերին,
Վոր տըըընգուզա տանէ
Հանկարծ ծառ կը թողնա,
Ճըժեր մե-մեկ գեխ ըմ կը թալա։
Բաղաք կը գան, կը բողոքեն վերեն,
Կ'ասեն.— Յաման, մե ճըժե կտրեց,
Մեկ թաղըևր ըմ երեք վերեն»...

Այսպիսի համեմատությունների շարքը մենք կարող ենք շարունակել[1]։
Սրանք ոչ թե ընդհանուր վիպական նմանություններ կամ զուգահեռներ են,
վոր հատուկ են բոլոր ժողովուրդների, ներառյալ իրանցիների և հայերի, ֆոլկլո-
րին, այլ սրանց մեծ մասը վիպական ընդհանուր մոտիվներ լինելով հանդերձ՝
բացակայում են «Շահ-Նամե»-ում և, որ գլխավորն է, հայկական դուռնավո-
րում են ստացել ու մշակվել, ձևավորվել են «Սասնա ծռեր» ժողովրդական
վեպի միջնորդությամբ, անմիջական հետևողությամբ և ազդեցությամբ։ Այս
և սրանց նման վիպական մոտիվների և միջադեպերի համեմատական ուսումնա-
սիրությունը մեծապես կը նպաստի «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի ծննդ-
գիսի և կազմավորման խնդրի լուծմանը։
Ի՞նչ են տալիս, սակայն, հայ-իրանական «Ռոստամ-Զալ» վեպի և «Սաս-
նա ծռեր» ժողվեպի վերը բերված համեմատությունները։ Պատասխանը մեկ է։
Հայ-իրանական վեպը՝ լինելով իր ծագումով զուտ իրանական, վերարտադրելով
Իրան-Թուրանի հազարամյա վիպական իրադարձությունները, վորոշ չափով
պահպանելով այդ պայքարի վիպական հերոսների անունները, ապա փոխադրվե-
լով (հայերի, թե հարևան քրդերի միջոցով—այդ կարևոր չէ) Հայաստան, ամ-
բողջապես հարազատացել է, «ազգայնացվել», վերամշակվել հայ վեպի վոգուն,

1 Շատ նման են, օրինակ, 1. «Բեժանդն այրի մեջ սպանում է Թագավորի աղջիկը փախցնող Ցռնդա դևին» = «Սանասարը սպանում է վիշապին (կամ դևին) և ազատում Թագավորի աղջկանը», 2. «Ռոստամի զինավառումն ու հզորանալը» = «Դավթի զինավառումն ու հզորանալը». 3. «Ռոստամի և Սալմանե Սնդիի մենամարտը» = «Դավթի և Մսրա Մելիքի մենամարտը» և այլն, և այլն։

աշխարհըմբռնման և ձևավորման համեմատ, և դարձել է «Սասնա ծռեր» ժողովրդի կողմնակի ճյուղերից մեկը: Արդի հայ «դուստանը», ասացողը, ճիշտ է գիտակցում է, որ «Ռոստամ-Զալ»-ը ծագումով հայկական չէ, բայց նա սիրում է այդ «նաղլը», ամենայն հոգատարությամբ մշակում և իր հոգեկան աշխարհի լավագույն և հարազատ «հեքիաթներից» մեկը համարում:

Կ. Մելիք-Օհանջանյան

ՌՈՍՏԱՄ-ԶԱԼ

1

Ռոստամի ծնունդը։

Ժամանակով մարթ ըմ կ'ըլնի, անուն Զալ։
Զալ ուր կընիկ կը նստին փա̈նջարեն,
Կը տեսնան երկու ճնճղուկ վըր պատին.
Են մեկ քառսուն տիր կը թռնի վըր են մեկլին, կ'եճնի տակ։
Կնիկ կ'ասա.— Զալա́-Ջեռի, տես,
Խընձ մեկ պըրդո̈ւճ ա, ենա քառսուն տիր են ի՞նչ եր երաց։
Հըռս կը գա̈, մեկ սախա հըլլին ցանկուլթեն
Զալա-Ջեռից կը թա̈փի տակ։
Կնիկն ել կ'առնի, կը տա պերնին, մեկ տիր կը խըմա։
Ին ամիս, ին որ վոր կը թըմըմի,
Ցավ կը քա̈շա, հնար չ'ըլնի.
Հեքըմներ կը ժողվեն վերեն,
Կ'ասեն.— Պերանվե յա գա̈ցե,
Պերանվե պետք ա ըլնի տո̈ւս։
Կնկա̈ն կող կը ճղեն ուրենց գիցածով,
Լաճըն կը խանեն տո̈ւս։
Լաճ կը շախեն, անուն կը տնեն Ռոստամ։

2

Ռոստամը ձեռք է բերում իր համար ծովային ձի յեվ ստանում է պապիկի թուրն ու զգեստը։

Ժամանակ ըմ կ'ընցնի, լաճ կը ջո̈ջա̈նա,
Ավուր մեկլին կ'ասա.— Կա̈կո, ընցկնա̈ չե́լնի,
Զի պա̈մ տու, յես երթամ նեճիր։
Խեր կ'ասա.— Վո́րտի, ձի յոթ թավլախանա կա,
Գընա̈ աչքի, վոր ձին քու ջա̈ն կ'ուզա,
Խա̈մբի, պե տո̈ւս, խեծի, գընա̈, նեճիր երա։

Կ՚երթա, վո՛ր մեկ ձիու քամկին ծեռ կը տնա,
Փոր կը տա գետին, կը գա, կ՚ասա.
— Կա՛կո, աստված քո տուն ավիրա,
Քե խորոտ կոտ բերգիր կա, երթան մոլող կըրեն,
Արա՛քեք լծեն, չուր հիրիկուն կըրեն։
Են էլ կ՚ասա. — Վոր ըցկոն ա,
Գընա՛ ձի յոթ ռա՛մի կա չայիր,
Վոր մեկին կը խամ՚ես, առ պե՛։
Կ՚երթա ռա՛միքտերաց մեջ կան կը գա։
Են մեկ ձիու հա՛ռճեվ բա՛լա՛ք Ջըվանի մ՚ կ՚ըլնի.
Երկու թիզ վըր ուր մոր պա՛նցը ա։
Ռոստամ կ՚ասա Նախըրըթուն.
— Գընա՛ մեկ ենա Ջըվանին պըռնի պե ձի խամար։
Են էլ կ՚ասա. — Յեմ հա՛դ չի յես զեն Ջըվանին պըռնեմ.
Թի քենե կը գա, պըռնի, գո հա՛ռճեվ քե յա։
Կ՚ասա. — Ընչի՞, քո կարողութեն չը խըռնի։
Կ՚ասա. — Ենո՛ր մեր ինչ կը քըռեր՝
Ավուր մեկին ծովուց ձի մ՚ ելա՛վ,
Երկու տիր թռավ վերեն,
Գընա՛ց մտավ մըջ ծովուն։
Ռոստամ հեդի ելա՛վ գընա՛ց,
Ծեռ եթա՛լ գՋըվանու վիզ գըրկեց։ —
Ձե՞ ծովուց եր ելե՝ կա՛ստ ծովուն երաց, —
Են էլ վոտ ակռկեցուց քարին, գՋըվանու վիզ ծալեց.
Ջըվանուն լեզու եկավ, ասաց.
— Յեմ խեծնող տո՛ւ յես, վըր քե վե էլ թո՛ւ մարթ չկա։
Ընցավ հա՛ռճեվ, ըզՋըվանին առեց եկավ տուն։
Գընա՛ց ժըռ խեր, ասաց. — Կա՛կո, ձի թուր ըմ։
Ասաց. — Վո՛րտի, գընա՛ կըլիճխանեն,
Միլոնավոր թուր կա ենտեղ,
Աչքի՛, մեկ քե խամար չոկի՛։
Ռոստամ գընա՛ց ենտեղ.
Վո՛ր առեց, վո՛ր շարժեց,
Ելա՛վ իրեք կտոր, գնա՛ց, ասաց,
— Կա՛կո, ենո՛նք խորոտ սեխ են,
Ախչկներ գա՛րնան տանեն,

ՀՍՍՀ Կուլտուր-պատմական թանգարանում գտնվող «Շահ-Նամե» վեպի 1828 թ. ձեռագիր օրինակի կազմը

Կեծուկ-մեծուկ խանեն,
Ենոնք մարթու թուր չե՛ն.
Ասաց.— Վո՛րտի, յես գիտեմ,
Տո՛ւ յեմ գլխու բո՛լեն ես,
Գը՛նա, քու պապկե թուր,—
Գո՛ դա՛ կուպը լցուկ կարաս,
Քու պապիկ ինք ուր ձեռնով դո՛րկե մեչ,
Վօվ եկե, հնար չը կա՛րցե տեսե,—
Գը՛նա, թի քեզնե կը գա՛, քա՛շի խա՛ն տո՛ւս:
Գը՛նա՛ց, ձեռ ետու հինք,
Ինչխ մաղ խմորից քա՛շեն,
Թուր քա՛շեց եխան տո՛ւս. առեց եկե:
Պապկե խալա՛թներն էլ ինչ կեր, առեց:
Ջձին ետար, ետու նալել.
Նալբա՛նդ դձին նալեց,
Այար եսի վըր քա՛մկին,
Պապկե խալըթներ խագա՛վ,
Ջթուր կապեց, ձին խեծավ:
Մեկ դըլո՛խ գընա՛ց եկավ մեյդան,
Ջիու չորս նալն էլ վոտքերուց թռան:

3

Հրեշտակը պայտում է Ռոստամի ձին: Ռոստամն ազատում է Սև սարի շինածուքից տեղից Իրանի թագավոր Փիրանին:

Ժամանակ ըմ վերեն ընցավ:
Ասաց.— Կնկո, յես կ'երիշկեմ
Մեր սարեր ինչըխ ավեր ա,
Տո՛ւռատակ ա, մարթ չկա հինե:
Ասաց.— Վո՛րտի, փոպեվերու տուն ա,
Հըրպա ի՞նչըխ շեն տ'ըլնի:
Մե թակավոր ըմ կա,
Ենա յոթ տարի կա, գո՛ցե Սև սար,
Շինածուքիկ տեղ ըմ կա, մտե հինե,
Քառսուն դո՛ղ խող ավե վըր տըռան, ծածկե:
Ասաց.— Ընչի՞ յա գո՛ցե:

Ասաց.— Վոլա̈, Թիրանա թակավոր
Տրե վերեն կռիվ կ՚ուզա̈.
Էն էլ ուր հախուն՝ գա̈ցե մըտե դի:
Ասաց.— Վոլա̈, տու̈ ձի շանց տը տաս,
Յես երթամ մեր թակավոր պերեմ.
Հեսորն ա հեսոր, վոր յես գթակավոր տը պերեմ:
Խեր ասաց.— Վո́րտի,
Տու̈ ճիժ ես, քու̈ ձին աննալել ա.
Էնա տաս որ կա, քու̈ հա̈ուճեվ պռնած ա,
Լսած ա՝ տու̈ տ՚իյաս մըտ թակավոր, մ՚երթա̈:
Ռոստամ մտիկ չ՚երաց, ելավ գընա̈ց:
Գընա̈ց տա̈շտի մեջ, հինքն էլ վըր ուր փոշպնավ.
Ձիուց էջավ, նստավ եստա տեղ,
Գո̈ արտասունք աչքերուց եկավ տակ.
Կը մտածա. իրիշկեց, կը խի՝
Մարթ ըմ գո̈ վըր ուր գըլխուն կայնուկ,
Խուրջին էլ թեվեն թալուկ:
Ասաց.— Տու̈ ի՞նչ մարթ ես:
Ասաց.— Վոլա̈, յես նալբա̈նդ եմ:
— Էհ, ասաց, աղեկ ա,
Շատ կարելի՝ աստված քե ձի խամար հերա̈դկեց:
Յեմ ձին աննալել ա̈. դե́, արի́, նալի́:
Տոպրակ թեվեն առեց տակ, նալեր եխան տա̈ս,
Ծեռ եռու ձիու վոտ վիրուց,
Ձին էշու պես կայնա̈վ, չորս նալն էլ եզար.
Նալեր վոսկի յին, պիվըռներ՝ արծաթ:
Ասաց.— Հե́ն որ՝ ինչ ենա նալեր ընդա̈ն,
Քու մեռնելա̈ ո́րն ա:
Տիր մ՚էլ իրիշկեց, մարթ չը կա̈.
Ելա̈վ քո̈ւ-փոշման եկավ:
Ռոստամ ձիուց եճա̈վ տակ,
Տարավ թավլախանեն կապեց:
Եկավ, գընա̈ց ուր հո̈դեն,
Վըր քինթ պերնին ինգա̈վ դի:
Էնոնց պահման էլ էն ա,
Իրեք որ վերեն չըն խա̈րցնե:

Իրեք որ թըմըմավ, խեր գընա̈ց, ասաց.
— Ռո́ստամ, Ռո́ստամ, եստա քե ի՞նչ ա էլե.
Ջ՚ըլնի մեկ ըմ քե գեշ խո́սք ա տըվե. ելի վե́, խենք:
Ելա̈վ ասաց.— Չէ́, վոլա̈, կա́կո,
Մարթ ձի գեշ խոսք չա́սե, ձի աղեկ ավեր չե́րե.
Հա̈լա̈ յեմ նիյաթն էն էր,
Մեկ ավուր մեջ յես չորս նալ թա̈լի.
Գա̈ցի սարի մեչ, մեկ փիր ըխթիյար մարթ մ՚եկավ,
Յեմ ձին նալեց, ասաց.
— Հե́ն որ՝ ինչ ենա նալեր ինեն,
Ռո́ստամ, քու մեռնելու որն ա:
Խեր ծըծղաց, ասաց.— Վո́րտի, ելի վե́, մը՞ վա̈խենա.
Ենի խըրիշտակ ա էլե, եկե քու ձին նալե.
Հա̈մ տու̈ շա́տ տ՚ապրես, հա̈մ երկիրն էլ տու̈ տը գա̈վթես:
Լաճ ելա̈վ վե, խաց կերաւ.
Ելա̈վ ըզձին խեծավ, գընա̈ց մեյդան,
Բըռ ըմ գըլո̈խ գընա̈ց, ենդեխեն եկավ.
Չէ́, ձիու նալ թա̈լել չը կա:
Մեկ քա̈նի որ վերեն ընցավ.
Ելա̈վ թախումով ժողվեց, գա̈ցին Սև սար:
Գա̈ցին փորեցին, չուր տու̈ռ կընդա̈ն,
Յոթ մարթ հա̈խու մեռան եստա թակավորի թախումից:
Վոր կընդա̈ն, խանին տու̈ս, շա́տ ուրախացան,
Ասաց Ձա̈լա-Ձեռին.
— Փի́րա̈ն, Փի́րա̈ն, ելի́ տու̈ս,
Աստված մե նոր աղ̈ուկ մ՚ա տըվե,
Դու̈նեն ֆա̈տա տ՚ենա,
Երթանք, ուտենք, խմենք, մե կյանք ենենք:
Ելա̈ն, ենդեխ շա́տ ուրախութեն էրին, եկան:

4

Թիրանի թագավոր Քեֆ-Կոսրան կտրում է Սեվ-սարից վերադարձող իրանցիների ճանապարհը. իրանցիները փախչում են։ Ռոստամի վախը. ձիու քաջալերքը, Ռոստամի հարձակումն ու ջարդը։

Նստա Թիրանա Թակավոր, Քեֆ-Կոսրա,
Եկե ենոնց ճամբա̈խ պըռնե։
Վոր ցածրացան, իրիշկեցին մըչ տա̈շտին, տեսան ինչ.—
Էլ աստղերուն հաշիվ կա, մարթերուն հաշիվ չկա,
Էնքա̈ն լըցված, տա̈շտ, պըռնած ա։
Ռոստամ ասաց.— Տո̈ւ ձե տըվեք մեկ դեխ, յես կ'երթա̈մ,
Ախըր յա̈ աստված տա ձի, յա̈ տա ենոնց։
Ջալա-Ջեռին վըր քինթ-պերնին՝
Ինգա̈վ գետին, մնաց դի.
Թակավորի Թախումն էլ փախան, գա̈ցին վե̈ր,
Մեկ գըրի վերեն նստան։
Ռոստամ ըղձին քըշեց, եկավ ցածր.
Ինք վըր ուր ոժա̈րացավ, լաց եղու վերեն։
Ձին ասաց.— Ռո̈ստա̈մ, Ռո̈ստա̈մ,
Ընչի՞ վա̈խեցար, քե ինչ էլա̈վ,
Քո̈ւ աստված կանչի,
Համա քե վըր իմ քա̈մկին պըռնես, բա̈ս ա։
Նստա մա̈ւքա̈ր վոր կա, մըժկի պես ա.
Վո̈ր յեմ պոչի հա̈ռճեվ տ'երթան,
Վո̈ր յեմ վոտքերուն, վո̈ր յեմ բեհնին։
Ուր աստված կանչեց, ինգա̈վ մըչ մա̈ւքըրին.
Վո̈ր Թըռվ կը կըտրեր, կը ջա̈րդեր,
Վո̈ր ձիու վոտքերու տակ կը կոխկըռտվեր,
Վո̈ր բեհնով կը մեռներ։
Տիր մ'էլ աչքեր եպա̈ց, իրիշկեց,
Ինչ երկու գըլա̈խ մըչ մա̈ւքըրին գընաց, եկավ,
Խա̈րա̈'մ, թի մա̈ւքա̈ր, թի պա̈ն մնացե։
Էլավ եթող, եկավ, ասաց.
— Կորիճ ե̈ն եր, ինչ ուր տնից չե̈լեր է տո̈ւս։
Եկավ, ինչըխ խեր ընգե, գա̈ մըչ ուր հա̈լին ա։
Ճա̈ր եզար խոր իրես, ախկըլ եկավ վերեն։

Ելա̈վ լաճու գլա̈խ պագեց,
Գընա̈ց գթակավոր վիրուց, առեց, եպե։
Եկան յոթ օր, յոթ գիշեր ուրախութեն երին, նստան։

5

Հակա Սալմանե Սնդին բռնում է Զալա-Ձեռիին. նա ազատվում է մահից, յերդվելով իր փոխանակ Ռոստամին կովի հանելու նրա դեմ։

Զալա-Ձեռին ձին կը խեծնի, կ'երթա̈ կան գա̈լ։
Կ'երթա ճամբխի վերեն, կ'իրիշկա՝
Դա̈վս ըմ են տեղեն գա̈ցե։
Ինչըխ գութան թա̈լեն ամըռվան գետին,
Էն էլ էն տեսակ, փորեր ա ըղճամբա̈խ։
Շատ նկատի կ'առնի,—հիսնի դա̈վս ա։
Էն էլ կ'ինի խետ դա̈վսին կ'երթա։
Կ'երթա սարի հա̈ռճեվ կը խի,
Մարթ ըմ գա̈ էնտեղ նստե,
Կազան տրե վըր կըրակին, ուր կեր կ'եփա։
Էն էլ կասա. «Վոյա̈՛, մըչ մեր Թախումին
Բեբախտութեն չ'էլե մըչ Իրանա, եսա տրո̈ն տ'ենեմ»։
Կ'ըլնի վիրուց ահակին քարեր կը կլորա,
Կը կլորա, վոր տ'ըսպանա։
Քարեր ինչ կը գա̈ն վերեն,
Ծեռ կը տա հա̈ռճեվ, կը թա̈լա̈ պա̈նցըր,
Ձեն հա̈լա̈ կ'ընցուցա վեր։
Կը մոտծա, կ'ասա. «Վոյա̈, յես Թո̈ւջար
Յեմ քա̈մակ նա̈յարոչ չըմ տըվե, մկա յել չըմ խտա»։
Կ'ելնի վիրուց հո̈ւջո̈ւմ կ'ենա, կը գա̈ վերեն։
Էն էլ կը պռնա, մաղ ուր մուրսից կը քա̈շա,
Ձեռ վոտ կը կապա, կը թա̈լա̈ դի։
Կը մնա չուր յեմա̈կ կ'եփի,
Խա̈ց կը տընա ուր հառճեվ, վոր տ'ուտա,
Ընցկըռնա կ'իրիշկա կ'ասա. «Վո̈՜յ,
Եսա յեխսիր յես ընցկըռնա̈ կապեր եմ,
Ընգա̈ եսո̈ր մեղաց տակ»։ Կ'արձկըրա։
Էն էլ կ'ըլնի մեկ մուղդա̈ր ըմ կը գա̈, կը մոտծա,

Կ՚ասա. «Վույ, կարելի՝ չեմ մեռնելու որ հեսօրն ա,
Կարելի՝ մեկ նախրորթ ըմ տեսե, ձի ի՞նչ ա՚ասեն»:
Ել ըմ կը տա̈ռնա, կ՚երթա խետ:
Կ՚երթա, են մեկ քար կը կլորա,
Հո̈ւջո̈ւմ կ՚ենա վերեն, ձեն չ՚ածա,
Ջուր կը մօթխըռնա: Ել ըմ կը պռնա
Մազ ուր մուրուից կը քեշա.
Ծեռներ վոտներ կը կապա, կը տնա են տեղ:
Կ՚ասա. — Դե՛, յան քո̈ ռաստին ձի ա՚ասես,
Յան թի չե՛, քու վիզ տը կտրեմ:
Կ՚ասա. — Վույ, յես Ջալա-Ջեռին եմ:
Են էլ կ՚ասա. — Վա՛յ, աստված քու տուն ավիրա,
Յես քու հա̈խուն եմ եկե՝ ձի ավըե եսա տեղրանք:
Դե՛, ձի խոսք տուր, վոր երթա̈ս,
Թո̈ լաճ Ռոստամ հերո̈զկես գա̈ յեմ կռիվ, քե կը թողնեմ:
Կ՚ասա. — Տո̈ վա̈վ ես, յես գիտե՛մ,
Վո՛ր երկիր հերո̈զկեմ, վոր գա̈ քե կընդընի:
Կ՚ասա. — Յես Սալմանե Սընդըին եմ,
Իմ տեղն Հընդի Յեմա̈ն ա:
Են էլ կ՚ասա, — Խա̈, ա̈հդ ըլնի,
Յես յեմ լաճ հերո̈զկեմ, գա̈ քո̈ կռիվ:

6

Ռոստամ Զալա-Ձեռից իմանալով յեղելությունը՝ կերպարանափոխված ճանապարհ է ընկնում Սալման Սնդիի դեմ. Նրան ընկերանում է Բեժանը:

Կ՚ելնի կը գա̈ ուր տուն.
Ել սուտեն չխմնա, վոր լաճուն ասա.
Կ՚երթա ուր հո̈զեն, վըր քինթ պերնի կ՚ինի.
Իրեք օր կը թըմըմի: Ռոստամին ախպրագիր կա.
Կ՚ասա. — Դե, ելի, երթանք յեմ խոր խարցնի,
Խեմ՝ ի՞նչ ա ելե:
Կը գա̈ն ենտեղ. Ռոստամ մըչ հո̈զին կը պախկըվի.
Դո̈ւսե Նազա̈ր կ՚երթա, կը խարցընա,
Կ՚ասա. — Զա̈լա-Ձեռին, Զա̈լա-Ձեռին,
Ելի՛ վե, քե ի՞նչ ա ելե:

Կ՚ասա. — Իրիշկի՛, խենք,
Ռոստամ եսա գա̈րքա̈ր չը կը՞նդըվի:
Կ՚ասա. — Չե՛, մարթ չը կա ըստա̈.
Ի՞նչ եկե քո̈ գըլա̈խ, համա ասա̈, ձենե մը պա̈խե:
Կ՚ասա. — Վույ, յես գա̈ցի սարի մ՚ մեջ,
Սալմանե Սընդըին ենտեղն եր:
Են գձի հաղթեց, յես յեմին եմ երե,
Վոր զՌոստամ տը հերո̈զկեմ ենոր կռիվ:
Մըկա յեմ սիրտ կա̈րա̈ր չիտա, մնացեր եմ շըլվար:
Ռոստամն էլ ենդեխեն կը թռնի կ՚ելնի տուս,
Կ՚ասա. — Ի՞նչ ենե՛մ, խերութնի անուն վըր քե յա.
Թի չե՛, մըկա գքե տը պռնեմ գա̈նեմ ենա թալան,
Մինչեվ կիյամա̈թին տո̈ մնաս ենտեղ:
Չե՞ ա̈հդի տակ քաղաք քաղքով վըր մեր կտրին կ՚ավիրի:
Տո̈ ա̈հդ ենես, չըդա̈՞ս մե ասե՛ս:
Կ՚երթա յոթ յեղ կը գլնա, կ՚ենա քուրք,
Կը թա̈լա վըր ուր թեվքերուն, կ՚ելնի կ՚երթա:
Կ՚երթա քիչ ըմ կը գա̈տնանա,
Բեժա̈նդ ենդեխեն կը գա̈:
Ինչ կը գա̈, կը խի ենդեխեն՝
Մեկ հա̈զլա̈ջեր մարթ ըմ կը գա̈, կը փախի:
Ռոստամ կ՚ասա. — Բե՛ժա̈նդ, Բե՛ժա̈նդ,
Ետի տո̈ գա̈րվե՞ կը փախես:
Կը տա̈ռնա կ՚ասա. — Վո՛ւյ, աստված քու խիմ չը քակա,
Եսա ի՞նչ ա ելե քե, տո̈ եսա գա̈ր տ՚երթաս:
Կ՚ասա. — Գընա̈ խըտ քու պա̈նին, քե գործ չը կա խը ձի:
Կ՚ասա. — Վույ, յես տը գա̈մ խը քե.
Կ՚ասես, քո̈ քեֆն ա, չըս տաե, քո̈ քեֆն ա:
Կ՚ասա. — Վույ, յես տ՚երթամ վըր Սալմանե Սընդըու̈ն կըռիվ:
Վոր կը գա̈ս, դե գընա̈ քու տուն,
Թո̈ թագըիր տես, արի:
Կ՚երթա չորս յեղ էլ են կը գլնա, կ՚ենա քուրք,
Կը թա̈լա̈ վըր ուր թեվքերուն, կը գա̈:
Կը գա̈, կը խասնի, կը տա ճամբա̈խ, կ՚երթան:

7

Նրանք ավերակ դաշտի մեջ դևերի աղբյուրի վրա սպանում են յոթն յեղբայր դևերին։

Կ՚ինեն մեկ ավերակ ա̈շտի մի մեջ։
Ճո̈ւր, պա̈ն ծեռքեր չինի․ շատ կը ծարվընան։
Ռոստամ կ՚ասա․ — Բեժա̈նգ, վոլա̈, հա̈ր յես ծեռաց եղա̈․
Էտա սար-ծո̈ր կան արի, ճո̈ւր կընդի․
Էլ վըր ձի կա̈ղա̈մ չըկա։
Կ՚ըլնի Բեժա̈նգ, դեն կան կը գա̈, դես կան կը գա̈,
Հա̈խպո̈ւր ըմ կը կընդնի, մեկ ջա̈ղցի ճո̈ւր մընեն կը թա̈լա̈։
Կը գա̈ զՌոստամ կ՚առնի կ՚երթա վըր հա̈խպըրին․
Էն տեղ ճո̈ւր կը խմեն, խաց կ՚ուտեն։
Ռոստամ կ՚ասա․ — Բեժա̈նգ, ձի քուն կը գա̈,
Տու̈ կաց հիշար, հա̈լա̈ չըլնեմ քընես,
Բա̈մ յես կը ուրհա̈թեմ, զո̈ր տու̈ քընի, յես կ՚ըլնեմ վե։
Ռոստամ կը քընի։
Մ՚ա̈սե, հա̈խպո̈ւրն ել յոթ դեվին ա։
Դեվեր էտա տեղրանք ավիրած, գա̈ չը կա։
Հիրեկուն դեվ տիկ կ՚առնի կը գա̈, վոր ճո̈ւր տանի։
Բեժա̈նգ կը պռնա զդեվ,
Ընցկոմ կը զա̈նա, հա̈լե կը խանա։
Դեվ կ՚ըլնի տըքտըքալեն կ՚երթա հեր։
Կ՚ասեն․ — Քե ի̈նչ ա եղե։
Կ՚ասա․ — Ցեմ փոր կը ցավի,
Ցես չը կարցա ճո̈ւր պերեր։
Կ՚ըլնեն մեկել կը հերո̈ղկեն, կ՚երթա։
Էն ել էնպես կը տփա, կը թողնա՝ տա̈ռատակ կ՚երթա։
Ցոթն ել կը գա̈ն․ էտապես կը տփա, կը տա̈րցուցա։
Հիտին ջոջ ախպեր վոր կը գա̈,
Էլ ըմ կը տփա, էտապես տա̈ռատակ կը տա̈րցուցա,
Կ՚ասա․ — Աստված ձե տուն քակա,
Էլ չըք ա̈սե, մա̈լքա̈մառ կա վըր հախպըրին․
Թըխ հա̈ռա̈ճո̈ւց ասեք, մեկն կը ըփվեր։
Կ՚ըլնեն յոթն ել խըռնըրա̈ց կը գա̈ն։
Կը զա̈նեն Բեժա̈նգին, կը կովեն։

Բեժա̈նգ համա կ՚ինի ուր գա̈րրի բա̈ռա̈վան։
Էլ ամոթու Ռոստամին չը կա̈նչա։
Հա̈ հիտխվանց հեղի-հեղի կ՚երթա,
Վոտ կը զա̈նա վըր Ռոստամի գլխուն։
Աչքեր կը պա̈նա̈, կը խի, ի̈նչ․ —
Վիրա̈ գո̈ կը տան հա̈ռճեվ գո̈րդի․
Բեժա̈նգի նա̈ֆա̈ս վերեն կտրած ա։
Կ՚ասա․ — Աստված քո̈ւ տուն ավիրա,
Ընչի՞ շուտ չը կանչեցիր․
Գա̈խն եր քե սպանեն, իմ աչքեր կուրցուցեն։
Վույա̈՜, յես չըմ կանա կայնե,
Քե տու̈ վըր ձի վե՛, արի՛։
Ինչ վոր կը գա̈ն, կը մոթխըրնան,
Մեկ ծեռ կը թա̈լա̈, զերկուս կը պռնա,
Մեկ ծեռ՝ զերկուս, կը զա̈նա հիրար,
Կ՚ենա չիր, կը թա̈լա̈։
Կ՚ասա․ — Մե՛կ ել վըր ձի վե արի՛։
Կը գա̈ն, երկու յել կը պռնա, կը զա̈նա հիրար,
Կըսպանա, կը թա̈լա̈․ կը մնա մեկն։
Կ՚ասա․ — Էն մեկն վըր քե։
Բեժա̈նգն ել զեն մեկ կը սպանա։
Կ՚ըլնեն կ՚երթան, ըղդեվերու սարի տա̈ռ կը շինեն․
Ցեղած-չեղած կը մնա ներս,
Էնոնք կը թողնեն, կ՚երթան։

8

Բեժանգն այրի մեջ սպանում է թագավորի աղջիկը փախցնող Փռնգա դևին։

Շատ կ՚երթան, քիչ կ՚երթան, կ՚ինեն տա̈շտի մ՚ մեջ։
Մուզզա̈ր ըմ կ՚երթան, կը խեն՝ էնտեղ քաղաք ըմ կա։
Էտ քաղքից մեկ բա̈շահի մ՚ կը տա տա̈ն։
Կը գա̈ մըչ տա̈շտին, կը տա̈ռնա կ՚երթա։
Էնոնք ել կ՚երթան, նախըորթ ռաստ կը գա̈ էնոնց։
Կը խարցնեն, կ՚ասեն․ — Եսիկ ի̈նչ բա̈շահի յեր։
Կ՚ասա․ — Ջա̈նըմ, ձե ի̈նչ գործ կա խըռտ էն պա̈ներաց,
Գա̈ցեք խըռտ ձեր հա̈լին։

Ռոստամ կ'ասա.— Տնաշե՛ն, մենք էլ քու պես մարդ ենք,
Խարցումից խո մեղավոր չե՞նք:
Կ'ասա.— Տնավե՛ր,
Էնա յոթ տարի կա մեր թագավորի ախչիկ
Ուր հոգի մեջ նստեր էր, արեվ-լուս չըր ըխե,
Փանջարեն չըր՛ գըխշընե նստե.
Մինակ հեսը փա՛նջարեն եկաց,
Ծունդն դեվ եղա՛ր, առեց տարավ:
Կ'ասա.— Գա՛լը, վըրտեղ տարավ:
Կ'ասա.— Էնոր տեղ գը էնա տաշտի մեջ մըչ հերին ա:
Բեժանգ կ'ասա.— Բեռե՛, ընցկընա կ'ըլնի՞,
Յեխսիր վըր մե վե ընցնի, մենք երթանք.
Վըլա մեր պատվուն տեխ ա:
Կասա.— Նախըրըրթ, կանչա մե շանց տաս էն հեր:
Կը լա, կը բոռա, կ'ասա.— Աստված ձե տուն ավիրա,
Յես ոլուխ-չոջուխի տեր, աղքատ,
Յես գամ էն տեղ, էնոր բեհն գձի կը սպանա,
Յես ինչըխ շանց տամ:
Ռոստամ ձեռ կը պռնա, կը քաշա, կ'ասա.
— Համա արի, պատնուց շանց տու մե, տարցի,
Քե լաղի չը կա. գընա քու տուն:
Կը տանի, շանց կը տա, կը տառնա:
Կ'երթան վըր հերի պերնին,
Էլ Ռոստամ չը կանա մտի ներս:
Բեժանգ կ'ասա.— Յես կը մտնեմ ներս,
Թի հաղթեցի, հաղթեցի.
Թի չը հաղթեցի, չխո տու գիտես էն:
Կը մտի ներս, դեվ ուր գլոխ արե վըր աղջկան ծնգան, քնե:
Ախչիկ կ'ասա.— Թող գընա՛ խըտ քու պանին,
Էն անաստվածի խետ թու ճար չե՛լնի:
Կ'ասա.— Ջանըմ, յես էնոր խոգու խամար եմ եկե,
Յես գո՞ր տը թողնեմ, երթամ:
Կ'ասա.— Վըր էնոր սեյրի կա.
Էնի մեկ ուր թըրով՝ թի սպանվի, սպանվի,
Թի չէ՝ թու պանով էնոր սպանվել չը կա:
Թուր գորկուկ մըչ կըպրին կ'եյնի:

Բեժանգ կը քաշա տուս, ախչիկ կ'ասա.
— Ինչ կը զանես, փախի, մտի ակու հոգեն,
Թի չէ՝ ուր գըլոխ կը գըվռա, կը գըվռա,
Կը զանա, քե կը տանի հանդութք, կը կուրուսա:
Բեժանգ թուր կը թալա, վիզ կը կտրա, գինք կը պախա,
Գըլոխ փաթ ըմ երկու կը գըվռա,
Կը զանա, գլեշ կը կուրուսցուցա:

9

Նրանք թագավորի աղջկանը տալիս են մի նախրորդի, որ տանի հանձնի թագավորին. նախրորդը վազիրին է հանձնում. սա հանձնում է թագավորին, հայտնելով, որ ինքն է ազատել աղջկան դեվից:

Կ'ըլնի զախչիկ կը խանա տուս, կը գան մըտ Նախըրըրթ:
Կ'ասա.— Նախըրըրթ, ախըր մենք վըր ճամըխին ենք,
Տու եսա ախչիկ տար, ուր խոր տուն թալիմ երա:
Ախչկան էլ կ'ասեն.— Զըլնեմ ասես՝
Ընցկընա մարթեր մ՛ եկան գձի ազատեցին:
Ախչիկ գողտիկ զմարթեր կը նշանա,
Էնոնք կ'երթան խըտ էնոնց հալին:
Նախըրըրթ զախչիկ կը պերա,
Կ'ասա.— Ջանըմ, յես մեկ նախըրըրթ մարթ ըմ,
Յես ինչըխ տ'ըլնեմ թագավորի իրես:
Կը տանի, վազրին թալիմ կ'ենա:
Վազիրն էլ կը պերա, ճարեկ ըմ կը տա նախըրըրթին,
Կ'ասա.— Գընա խըտ քու հալին:
Վազիր կ'երթա մըտ թագավոր:
Թագավոր կ'ասա.— Ա՜խ, անսխտ անաստված,
Էնա իրեք որ կա, յեմ ախչիկ տարած ա,
Տու խնդալուց վըր ձի վե չըս իգա:
Կ'ասա.— Ողորթ վոր ժամանակ ա,
Աղեկ երողի գըլոխ ծակ ա:
Էնա իրեք որ կա, կը զանեմ, կը զարկվեմ,
Զորով եմ զախչիկ ազատե.
Մկա տու ձի չանձ կը տաս:
Կ'ասա.— Տո ջանըմ, տու ինչ կ'ասես:

Կ՚ասա.— Խա՛, ղախչիկ ազատեր եմ, զո՛ իմ տուն։
Թակավոր շատ կ՚ուրախանա,
Կը հերո՛ղկա ղախչիկ կը պերա, խոր կը հանցնա։
Ախչկան կը խարցնեն.— Ողո՞րթ վո՛ղեր ըղքե եղե։
Կ՚ասա.— Զըմ գիտե, խա՛։
Ենոնք կը մնան մըչ ենոնց հա՛լին։

10

Բեժանը մի քաղաքի թագավորի մոտ տամբուր նվագող ջեղ յերգիչ է դառնում։

Ենոնք կ՚երթան. շատ քի՛չ, աստված գիտի.
Կ՚երթան մեկ քաղաք ըմ կը հանդիպեն։
Բեժա՛նդ կ՚ասա.— Բեռի, տո՛ւ նստի ըստա՛,
Յես երթամ քաղքի մեջ կա՛ն գա՛մ,
Բա՛լքի տեղ ըմ կընդընեմ մե։
Բեժա՛նդ կ՚երթա, կա՛ն կը գա՛.
Կ՚երթա Թակավորի սարեն, կը մտնի ներս,
Կ՚ընի վեր, թամա՛նդա կ՚ենա, կը նստի։
Կ՚ասեն.— Դե՛ նստի, մե մա՛ստլ մ՚ասա։
Բեժա՛նդի կողից տամբուր ըմ կեր կախուկ։
Նստավ, ուր տամբուր պռնեց ուր ձեռ,
Բա՛նդ ըմ երկու խաղ ասաց։
Ձե մ՚ կեր վերեն, մարթո՛ւ խելքե քա՛ր, թուփ կը լա՛ր, կը գեր.
Ենքան քաղցր ձե մ՚ կեր վերեն։
Թակավոր ձենին շատ խամխավ, ասաց.
— Վոլա՛, տո՛ւ քա՛նի մոր տը մնաս ըստա։
Ասաց.— Զի մեկ ընդեր կա, հա՛ղե մ՚ տըվեք,
Յես յեմ ընդեր նստենք հինե.
Ինչ գա՛խ ուդեք, գա՛մ, ձե խամար խաղ ասեմ։
Հա՛ղե մ՚ տըվին,երկուսն ել եկան.
Թոստամ մտներ ներս՝ Բեժա՛նդին տեղ չըր ըլնե.
Բեժա՛նդ մտներ ներս՝ Թոստամին տեղ չըր ըլնե։
Ենոնք ել խընդըրա՛ց գա՛ցին.
Մեչքով վեր ներս մնացին, վոտքեր մնաց տո՛ւս։
Հըմեն հերիկուն, կ՚երթեր Թակավորի դիվան,
Տամբո՛ւր կը քա՛շեր, խաղ կ՚ըսեր։



ՀՍԽՀ Կուլտուր-պատմական թանգարանում գտնվող «Շահ-Նամե» վեպի 1828 թ. ձեռագիր օրինակի կազմի ներսի կողմը

11

Սալմանն Սնդին հարկահաններ է ուղարկում այդ քաղաքը. Ռոստամը պատասխանում է հարկահաններին. նրա պատգամը Սալմանն Սնդին:

Ավուր մեկին Սալմանն Սնդու խարջգյորներ եկան,
Յոթ տարվան խարջ կը ժողվեն:
Բեժանգ ելավ վազեց մոտ Ռոստամ,
Ասաց. — Յեմ ակընջկլեն...
Սալմանի խարջգյորներ եկած ա ըստա:
Էն էլ ասաց. — Շատ աղեկ ա.
Գընա, խընթըրվի, ասա՝ ձի ընգեր ըմ կա,
Պերեր եմ ըստա, լալ-կյառ ա.
Պերեմ ըստա, ուր բեհն թըլխ ըլնի:
Ինչ վոր կը զըռացեն, յես չըմ զըռացե,
Կ'ենեմ՝ լալա, լալա, լալա:
Ենոնք կ'ասեն՝ ինչ կ'ասա. տու ասա,
Կ'ասա՝ ենոնց խաց շատ ենք կերե,
Թըլխ մե պա մ' խաթըր տան:
— Տաս քիսա, թի քըսան քիսա, հայդե ձե խաթըր.
Էլ մ'էլ էն տեսակ Ռոստամ կը խառնա հիրար:
Կ'ասեն. — Ի՞նչ կ'ասա:
Բեժանգ կ'ասա. — Կ'ասա՝ կըխնթրեմ, հըմեն ընցընեն,
Պան չ'առնեն, թողնեն երթան:
Ետոնք կը քըռխեն:
Դեր կ'ասա. — Վոր չըն ընդունե՝
Ջափի փետ յես կը զանեմ:
Կը տանի, չափ կը կոռծա,
Վոսկիք կը լըցա վըր չափի վոռուն,
Փետ կը տա, շյուռ կը տա տակ:
Շատ կը պարկանան:
Թակավոր ինչըխ վոր կ'ենա,
Ռոստամի խետ չկյանա չարա տեսնա:
Ռոստամն էլ գետոնց ատամքեր
Կը քաշա, կը զանա ճակատ,
Կ'ասա. — Դե, գացեք Սալմանին ասեք՝
Մեր քաղաք էլ ուր խարջ չիտա.

Վոր չի գա կոխ, մեկ ուր ակով ադը ուտա։
Թագըքըցիք շատ կը փախենան. մարթեր կ՚երթան։

12

Ծալմանե Մնդին հարձակվում է այդ քաղաքի վրա, բռնում է Բեժանցին, արհամարհում է քաղաքի հզորներին յեվ վերադառնում իր յերկիրը։

Զատնուց կը տեսնան, վոր կը ծծղան, կը գան,
Ենոնց ատըմներ բաշ կը տա։
Կը գան, կը մոթխըրնան. կը տեսնան — հա՛յ հո՛յ, —
Ատըմներ քաշած՝ գարկած ճակըտներ։
Մընաց. Սալման ուր պատրաստութեն տեսավ։
Թըլլատն եյան տեսան, ինչ.
Տաշտ-ծոր չագըրից պըռվեր ա,
Ել թռ. պան չերեվա, հըմեն լըցվե ապքար։
Տող եսու վերենքաեր։
Սալմանե Մնդին ուր ձին խեծավ, եկավ մեյդան։
Ասաց. — Ե՛յ, վով կա կոխ երող,
Թըխ գա, դինք հայտնի ենա։
Բեժանդ չոլախ եյավ գընաց հառճեվ։
Մեկ աիր եղար, ենոր ծեռներ կապեց հետեվ. առեց, գընաց։
Թիչ ըմ հնաց, ասաց.
— Եսա՛ երկրի կոխ երող կա-չկա, եսա յեր։
Առեց քաշվավ, գընաց ուր երկիր։

13

Ռոստամը հետապնդում է Սալմանե Մնդիին. ճանապարհին նեղն է քնկնում։ Թալոշե Բալաքը Ռոստամի զենքն ու սարքը հանցնում է նրան։ Ռոստամը զեթավառվում է յեվ շարունակում ճանապարհը։

Ռոստամ կ՚ըլնի կ՚իրիշկա,
Նա ապքար, նա հալ, նա պան, գա չը կա։
Են էլ կ՚ըլնի, համա ենպես չոլախ կ՚ինի հիարվքեր.
Դավս կը կընդընի, կ՚ինի խըտ գավխին, կ՚երթա։
Շատ կ՚երթա, նալըֆ կ՚ըլնի, մըչ խերկին կ՚ինի։
Ջին ուրջանը կ՚ակխի, թե Ռոստամ ինքե նեղ։
Ծեն կը խասնի Զալին, թե Թալոշե Բալաք

14

Ռոստամն իջնում է Սալմանե Մնդիի գերած իրանցի պառավի տանը. նա պատմում է իր գալու նպատակը. պառավի խորհուրդը։

Գընաց պառվու մ՚ տան կայնավ։
Եճավ տակ, գընաց պառվու տուն, ասաց.
— Պառավ, ձի, յեմ ձիուն տեղ երա։

Զուր թավլեն ինչ կա-չկա, եպե տակ,
Հըմեն կտըրտեց վըր ուր կոտին.
Են էլ կ՚ասա. — Դե՛ շատ երեք,
Թասեք, թավլուց քաշեք տուս։
Ռոստամի գուրզ, ուր թուր, ուր խալվըներ, ինչ կա,
Պերեք, կապեք վերեն, թողեք, թըխ երթա,
Ինք ուր ճամբան գիտի։
Իրեք սհաթվան մեջ գընաց, վըր Ռոստամին կայնավ։
Պեքըլ երաց վառնավ, եխան վե։
Աչքեր եղաց, իրիշկեց, կը խի՝
Գա Թալոշե Բալաք վերեն կայնե։
Եյավ ենտեղ կաճիմ թիմար մ՚եստու։
Զգլախ պագեց, եյավ խագվավ,
Ուր թուր կապեց, համայիլ աջ ու ծախ եթալ.
Ուր ալմաստապան խանչալ եղար ուր մեջք,
Ուր բեղեր ոլորեց, աչքեր եյան մե-մեկ խընձ փընջա մ՚,
Ուր Բալքե Բայանի կաշին կը խագնի վերեն.
Ծեռ կը թալա խըտ իրեք խարեր վաթսուն վեց կիդր ծանդըր գուրզ.
Կը տնա վըր ուր աչ թեվին.
Կըփկըփոց կ՚ինի ուր մեճաց ողեր.
Ող վոր կարի, զատ կը ծակա, կ՚ընցնի։
Ուր վոտ եաի զանգան, եյավ վըր ձիու քամկին,
Բշեց ձըմենվե, քըշեց բառոժվե,
Գընաց, քաղքին մոթխըրցավ։
Ասաց. — Քանի վոր ձին կա, մըրազ ա,
Ցես յեմ գամ ար թողնեմ,
Վոր տեղ վոր իմ ձին կայնի, դի տ՚եճնեմ։

Ասաց.— Բե, քո̈ ձիուն տեղ կա,
Հա̈լա̈ նա̈ կա ուտենք, նա̈ կա խմենք:
Ասաց.— Տո̈ւ տեղ երա̈, ուտել-խըմել աստված կարող ա:
Ջին քա̈շեց ներս կապեց, լուպ ըմ վոսկի եխան, եսու պառվուն,
Ասաց.— Գընա̈ մե խաց, յաթաղ, ինչ վոր պետկն ա, ա̈ռ պե:
Առեց եպե, կերան մինչեվ առավոտուն:
Ասաց.— Պա̈ռավ, յես եկեր ես Սալմանի հա̈պով:
Ասաց.— Տո̈ւ վո՞ր երկրեն ես:
Ասաց.— Յես Իրա̈նա յեմ:
Պառավ ելա̈ց, ասաց.
— Ա՜խ, վոլա̈, յես է՛լ Իրանա յեմ.
Պատիկ ժամանակ ձի պերած յեխսիր:
Ասաց.— Յես եկեր եմ Սալմանի խետ կռիվ.
Բո̈ւ խելք ի՞նչ կը կտրա:
Ասաց.— Ա՜խ, ենի յամա̈ն ա,
Վա̈խենամ քու լեշ մնա ըստա̈,
Կռիվ բա̈ռա̈գա̈ երթա, քու լեշ կոկըներ ուտեն:
Ասաց.— Պա̈ռավ՝ ենոր կըռվու ա̈դա̈թն ինչըխ ա:
Ասաց.— Ջա̈ չե, քո̈ Ռա̈խշ կը խեծնես, կ'երթաս մեյդա̈ն,
Կ'երթաս. կը գա̈ս, քո̈ ուրմ կը տաս գետին, թող կը խանա.
Կ'ասես՝ հո՞ւր ա Սալմանե Սնդին, թըխ գա̈ յեմ կռիվ:

15

Ռոստամի յեվ Սալմանե Սնդիի առաջին մենամարտը. պառավի խրատը հավուզի յեվ ղեմանի դարմանի մասին:

Ռոստամ գընա̈ց մեյդա̈ն, թող եխան.
Սալման ենդեխեն եկավ:
Ենոնց սրտըեր երին սընդան,
Ենոնց գո̈րզեր երին կըռան.
Ենպես գո̈րզ կը զա̈նեն մեկ-մեկու սրտին,
Կրակ մոտեն կը թա̈լա̈.
Թուր խալա̈վ, մնաց պո̈ւռ,
Գո̈րզ խալա̈վ, մնաց ող:
Սըմուռ խավքեր ենոնց հա̈խուն՝
Փախան, գա̈ցին Ճիյայե Կաֆ:

Խրիշտըկներ փախան, ելա̈ն երկինք, մնացին յոթ:
Հո̈ւտ ու խա̈զա̈ր հո̈ւտ՝ գա̈ցին ինգա̈ն ծով:
Ծովուց ելա̈ն հո̈ւտ ու անձրեվ:
Դա̈ս մ'ասին. Շաշկ ելա̈վ:
Դա̈ս մ'էլ ասին.— Աշխարհ պըլա̈վ:
Դա̈ս մ'էլ ասին.— Ռոստամ ու Սալման ա կը կռվեն:
Ջուր հեվարին գա̈րկին.
Հեվարին թողին, մե-մեկ ուր տեղ գա̈ցին:
Իրեք օր գա̈րկին. են մեկ օր հեվարին
Ռոստամ եկավ, պառվուն ասաց.— Պա̈ռավ,
Յես կ'իրիշկեմ Սալման խընձ ձի շատ կ'ըլնի յարալու,
Խըլխուն ինչ կը գա̈նք՝ ենիկ ժիր ա.
Յես հիրիկվան պես յարալու յեմ:
Ասաց.— Վա̈յ, տո̈ւ ընչի՞ ձի շա̈տ չասիր:
Ենոր հավուզ կա, ղեմանի դա̈րման կը թա̈լա̈ հինե.
Կը մտնի մեջ կը լո̈ղկընա,
Կը քա̈վվի, կը ժըրի, կ'ելնի տո̈ւս:
Կ'ասա.— Ապա եսա հավուզ վո՞ր տեղն ա, չըս գի՞տե:
Կ'ասա.— Գիտեմ, հա̈լա̈ չըմ գըխշե քե շանց տամ:
Կ'ասա.— Ախըր տո̈ւ ձի ասեր ես՝ վո̈րտի,
Յես քե ասեր եմ՝ մա̈րե:
Խըլխուն ելի երթանք,
Ձի զա̈տնուց շանց տու, տա̈րցի, արի:
Կ'երթան, շանց կը տա, պառավ կը տա̈ռնա,
Ինք կ'երթա, կ'ասա.— Հա̈յ բերա̈խտ,
Ետապես բերա̈խտութե՞ն էլ կ'ըլնի:
Փալե՞նի բա̈խտ՝ բա̈խտ ա:
Կ'ասա.— Յես գո̈ ելա̈ տո̈ւս, գո̈ր արի տո̈ւ.
Բու շանց տըվողի վիզ կոտրի:
Են էլ կը մտնի հինե,
Կը ժըրի, կը գա̈ պառվու տուն:

Սալմանն Սնգին հրամայում է սպանել գերի Բեժանգին. նրա աղջիկը խնդրում է, որ թույլ տա իրեն սպանի: Աղջիկը սիրում է Բեժանգին՝ նրանց սիրո տեսարանից Ռոստամի ուժն ավելանում է, իսկ Սալմանինը՝ պակասում:

Վոր կը ժըրի, դըլ Բեժա̈նգ սաղ ա:
Սալման զԲեժա̈նգ կը պերա, կ՚ասա.
— Սպանե̈ք, փա̈նջա̈րեն վե կախեք տակ,
Վոր Ռոստամ տեսնա, ուր վա̈ժ պակսի.
Թե չէ, հեսոր յես կը սպանվեմ:
Ախչիկ ինչ աչք հիսե կ՚ինի,
Կը վա̈զա̈, կ՚ասա. — Կա̈կո, կա̈կո,
Եսա թողեք, յես կը զա̈նեմ, կը սըպանեմ:
Աղչիկ կ՚առնի կը նստի փա̈նջա̈րեն,
Պա̈ու ըմ մանուշակ կը պըռնա ուր ծեռ,
Մեկ կը տա Բեժա̈նգին, էն կը տա ուր քընթին,
Էն կը տա ուր քընթին:
Ինչ կը գա̈ն մեյդա̈ն, Սալման կ՚ասա.
— Ռոստամ, Ռոստամ, իրիշկէ, յեմ սարեն թամաշա երա.
Վոր քե սպանեմ, չ՚ասես՝ բեբա̈խտութնով ձի սպանեց,
Չեթող ուր քոչք ու սարեն թամաշա̈ ըներ:
Ռոստամ կ՚իրիշկա, կը խի՝ ի՞նչ:
Գա̈ Բեժա̈նգ ու ախչիկ նստած էտա տեղ,
Էն մանուշակ կը տա ուր քընթին,
Էն կը տա ուր քընթին,
Քեֆ՝ ուրենց քեֆն ա:
Յոթ գոմշու վա̈ժ վերեն կը հա̈վելնա̈,
Կ՚ասա. — Սալմա̈նե Սնգի,
Տա̈ իրիշկէ քու քոչք ու սարեն թամաշա երա.
Վա̈ղվան որ չ՚ասես, Ռոստամ Իրա̈նա եզա̈ր երի բատա̈,
Չեթող՝ յեմ քոչք ու սարեն թամաշա ըներ:
Կ՚իրիշկա, վոր զախչիկ զԲեժա̈նգ
Կը տեսնա մըչ էտա ուրախութնին,
Յոթ գոմշու վա̈ժ վերեն կը պակսի:

Ռոստամի յեվ Սալմանե Սնգիի մենամարտը. նա գլխատում է Սալմանին. պառավը միջամտում, փրկում է Ռոստամի կյանքը վերևից իջնող Սալմանի գլխից:

Պառավն ա, գա̈ մեյդնի գըլա̈խ կայներ ա.
Ռոստամ կ՚ասա. — Բա̈ս ա, Սալման,
Կա̈վըլ դնենք՝ իրեք դա̈րբ զարնենք, խեբե̈ք ա:
Կ՚ասա. — Ե՛, վե̈վ հա̈ուա̈ճ տը զա̈նա:
Կ՚ասա. — Հա̈ուա̈ճ տա̈ զա̈ր, քա̈ երկիրն ա,
Մըչ քա̈ կնիկ, տղեն ա, յես սպանվեմ էլ պա̈ն չկա:
Ռոստամ կայնավ, Սալման եզա̈ր:
Հենդա̈մ ինչ գա̈րզ կը վիրուցեր զա̈ներ, —
Ռա̈շխե Բա̈լա̈քի տուն աստված ավիրեր,
Իրեք սհա̈թվան ճամբա̈խ զՌոստամ կը զատնացուցեր.
Ինչ գա̈րզ կ՚իներ գետին,
Էլ ըմ կը գեր, ուր տեղ կը կայներ:
Իրեք դա̈րբեն էլ էտապես:
Սալմանե Սնգին կայնավ, ասաց,
— Դա̈ր քե, Ռոստամ:
Ռոստամ ասաց. — Ձի մեկ դա̈րբ կա, յա երթա, յա գա̈:
Կայնա̈վ, աստծու անուն էտու,
Թուր եթա̈լ զվիզ թըռուց, գըլա̈խ պա̈նցըրացավ:
Պառավ անթրոց մ՚եզար Ռա̈խշե Բա̈լա̈քեն,
Իրեք ավուր ճամբա̈խ զա̈տնացավ մեյդնից.
Տիր մ՚էլ հըռստամ, ենդեխեն տա̈րցավ,
Ասաց. — Հա̈յ, ռոստըմ դե՛լ,
Տա̈ ընցկոծ ըլնե՞ս, յեմ ձիուն զա̈նե՞ս:
Ասաց. — Տա̈ քե բա̈մ պըռնի, հա̈լա̈ տես ընչե՞ր տ՚ըլնէ:
Գլա̈խ վիրուց եկավ տակ, եզա̈ր վըր լեշին,
Տարավ, հա̈նդա̈թքվե կուրուսեց:
Դա̈րխս պառավ ասաց.
— Վոր յես չը զարկեր եր քա̈ ձիուն,
Եսա տեղեն չըր զատնացեր է,
Գըլա̈խ կը գեր, քե կը տաներ տակ:
Ելա̈վ զԲեժա̈նգ, զախչիկ առեց,
Եկավ հա̈ուա̈ճի քաղաք, Յեման, նստավ ենտեղ:

18

Ռոստամը թագավոր է դնում Բեժանգին Հնդա ժողովուրդի վրա. նա իր հետ վերցնում է Սալմանի աղջկան, ապա այրից ազատված թագավորի աղջկան ու բերում է Իրան. մեկին տալիս է Բեժանգին, մյուսին ամուսնացնում է իր յեղբոր հետ:

Հընդա ժողովուրթ հըմեն ժողվեց Յեմա̈ն,
Ասաց. — Տես, հեսավա յետ,
Տա̈ւք եսա մարթա̈ւն տը հնազանդվեք,
Խա̈րջ ենոր տը տաք, թե չե՝
Ձե հըմեն սըրե կ'ընցուցեմ:
Ըղհըմեն հնազանդեցուց,
Իտե եսա թակավորի իշխանութնի տակ:
Առեց ըղՍալմանե Սնդու ախչիկ,
Եկավ են թակավորի քաղաք,
Ինչ ենոր ախչիկ հերից խանած ա:
Ինչ մտան պա̈կ, ախչիկ երեսպա̈ց կան կը գեր:
Վա̈ղեց մըտ խեր, ասաց. — Կա̈կո, ելե̈,
Գա̈ ենա յա յեմ ազատողներ, ինչ եկան ըստա̈:
Խըտ մըտնեւա̈ն ներս, թակավոր ուր թախտից եհա̈վ տա̈կ,
Ասաց. — Ահա̈, յեմ թախթն ել ձե, .
Յեմ քաղաքն ել ձե, յեմ աշխարքն ել ձե.
Մենակ ցամաք խաց ըմ տըվեք՝ յես ուտեմ,
Վոր են աղեկութեն տա̈ւ խը ձի երեք:
Ռոստամ ասաց. — Քու թակավորութեն ել,
Քու քաղաքն ել քե բըմբա̈րա̈ք ըլնի,
Յես սաղ մնամ, ձի ինչ ասեա, կա,
Մենակ ախչիկ կը տանեմ:
Թակավոր քառսուն պեռ մալ կը տնա̈ խետ ախչկան, կը գա̈ն:
Ջալ ուր մարթերով կը գա̈ն հա̈ռճեվ, կը տանեն:
Մեկ ախչիկ Բեժա̈նգ կ'առնի.
Մեկ ել կը տա ուր ախպոր,
Յոթ որ յոթ գիշեր խարսնիս կ'ենեն, կը զա̈նեն, կը խաղան:

19

Ռոստամը սառած ընկնում է Թիրան, նրան ընդունում, խնամում են: Ռախշե Բալաքը փախչում, վերադառնում է Իրան:

Ռոստամ ուր թախումով կը նստեն, ա̈րա̈ղ կը խմեն.
Շա̈տ կը խմեն, Ռոստամ կը սա̈րխոշնա:
Կ'ասա. — Ելեք, ա̈յա̈ր թա̈լեք վըր յեմ ձիու քա̈մկին,
Յես կը խեծնեմ, ելնեմ քիչ ըմ կան գա̈մ:
Փա̈թ ըմ երկու, մեյդա̈ն կ'երթա կը գա̈,
Մեկ գեշ զա̈նգա̈ւ մ' կը զա̈նա Ռա̈խշե Բա̈լա̈քին:
Վոր կը զա̈նա, կ'առնի կը վերնա:
Տառ տըռնըխենգ ավուր կոնախ մեկ տեր կը տանի:
Կ'երթա, մեկ պաղութեն կը տա վերեն, կը պաղի.
Լեզա̈ւն կը կապվի, կը մնա վըր ձիուն:
Կը գա̈ Թիրան, սարե մ' տա̈ւռ կը կայնի:
Մարթ կը հերա̈ղկեն ճրա̈ւ:
Մութն կ'ըլնի, կը գա̈, կը տեսնա,
Կը տա̈ռնա, կը փախի կ'երթա,
Լեզվե կ'ինի, չը կանա խասկըցուցա:
Կ'ելնեն իրեք-չորս խոգի կը գա̈ն, կը տեսնան,
Կ'երթան թակավորին քըսա կ'ենեն,
Կ'ասեն. — Ձի մ'ա կայնե հա̈ռճեվ տեան,
Ուր գըլա̈խ ելե երկինք,
Փա̈լեվա մ' կա վըր քա̈մկին, խընձ սար մ':
Ինչըխ պա̈րեվ կը տան, պա̈րեվ չառնի:
Ծեռ կը տան հինե, ելե փետ, մնացե վըր ձիուն:
Կ'ասա. — Դե̈, խասեք, պըլինձ մ'երկու ճա̈ւր տաքցուցեք,
Լըցեք վըր վոտքերուն, թըխ զանգա̈ւքտերաց պռծընի,
Առե̈ք տակ, պերե̈ք քոչք ու սարեն:
Կը պերեն մըչ լխեֆներուն կը փա̈թութեն.
Կ'ասա. — Կացե̈ք վերեն,
Վոր ժրա̈վ, վով ձի ակընջկլա̈ եպե՝
Ջա̈չ փա̈ռու մ' կը տամ ենոր:
Են կը մնա դի՝ ձին գա̈ պա̈կ վե:
Կ'ասա. — Դե, գա̈ցեք ձին քա̈շեք թավլախանեն վե:
Ինչ վոր կը գա̈ն, ձիու տուն ավեր չ'ըլնի,
Ռա̈խշե Բա̈լա̈քն ա.
Պոչ կը կանթա, կը տա քա̈մակ,
Կը թռնի բա̈ղա̈նվե, կ'երթա,
Կ'երթա ուր տեղ կը խասնի:
Տա̈ռնանք վըր Ռոստամուն:
Մեկ գիշեր-ցերեկ կը մնա եատպես:

Թագավորի լաճ կ'երթա ներս,
Ռոստամ գըլխեփն կը տա դեն:
Կ'իրիշկա հո̈ւրիք, դո̈րբո̈ր, ել ըմ կը տա գլո̈խ:
Խեր կ'ասա. — Ուր քե̈փն ա, դե̈, պատրաստեք չայ, պո̈ն.
Վոր շաշմիշ չըլնի, ուր սո̈վդեն ընցնի:
Կը խաննեն վե, կ'ելնի կը նստի,
Կ'ասա. — Ջա̈նըմ, եսի երա̈զ, ինչ պո̈ն ա,
Յես դո՞ր եր, մըկա եկա դո̈ր ընգա̈:
Կը խարցնեն, կ'ասեն. — Տո̈ւ ինչ մարթ ես, վոր երկրացի յես:
Կ'ասա. — Ձըմ գիտե, յես ձի դո̈ ըստա̈ տեսա:

20

Ռոստամը դառնում է թագավորի սպասավոր. նա ամուսնանում է թագավորի աղջկա հետ:

Շատ կը սիրեն, շատ կը խավնեն,
Թագավոր երաց ուր կո̈լոնչի,
Ուր հո̈ւճեվու խըղմո̈թքո̈ր:
Կը մնա մեկ տարի մ' վերեն կ'ընցնի:
Թագավորի պստիկ լաճ շո̈տ կը սիրա զՌոստամ,
Կ'ըլնեն ախպրագիր:
Կ'ուզեն զՌոստամ փսակեն:
Ռոստամն էլ կասա. — Յես եսա տեղ
Սեվ մազերով ախչիկ մ'եմ տեսե փո̈րդի ծիտեվ.
Վոր են տաք ձի՝ կը փսակվեմ.
Վոր չը տաք՝ չըմ փսակվի:
Կը պերեն զախչիկ.
Թագավորի լաճ կ'ասա. — Ենի իմ քո̈րն ա:
Կ'ասա. — Յես չըմ գիտե վո̂րն ա.
Վոր ձի կը փսակեք՝ դե̈ն տըվեք.
Յես չըմ ենե վըր ձե դո̈ւ:
Խոր, մոր, ախպերնեքուն կ'ասա.
Խեր, մեր, են պստիկ ախպեր կ'ընտունին.
Են երկու ախպեր չըն ընտունե,
Կ'ասեն. — Մենք թագավոր,
Մեր քո̈ր ինչըխ տանք մեր խըղմո̈թքո̈րին:

Կ'ասա. — Ջա̈նըմ, քանի մեր խիչ կենա, մեր քո̈ր կը տանք,
Խըլղի պո̈նն ինչ ա խըտ մե:
Դեւ-դեն զուելով, խոսքեր կ'երթան վըր իրարու,
Ախչիկ կը տան ենոր. կը փսակվի:

21

Ռոստամն իր եղի կնոջը թողնում է նրանց տանը, ինքը վերադառնում է հայրենիք:

Տարի մ'երկու կ'ընցնի, ախչիկ կ'ըլնի տղով:
Ավուր մեկլին ենիկ, ախչիկ կը նստեն հո̈ղի մեչ,
Ծեռ կը տնա գըլխուն, կը մտածա.
Ախչիկ կ'ասա. — Ի՞նչ ա ելե՝ կը մտածես.
Չըլնի՞ մեկ ըմ քե դեշ խոսք ա տըվե
Յեմ ախպեր, յեմ խեր, յեմ մեր:
Քու պակսութեն ինչ ա, կը մտածես:
Գլո̈խ թափ կը տա, կը ծըծղա, կ'ասա.
— Աստված քու տուն ավիրա,
Վոր յես չը մտածեմ, ապա վո̂վ տը մտածա.
Յես մեկ խընձ Ռոստամ, մըկա եկեր եմ ըստա̈,
Ելեր եմ խըղմո̈թքո̈ր, քե հո̈պով նստեր եմ ըստա̈:
Մկա մեր յերկիր վո̂վ գիտի,
Խեմ՝ ավիրա̈ծ ա, շինա̈ծ ա, ինչըխ ա երած:
Կ'ասա. — Հա̈՛յ աստված քո̈ւ տուն ավիրա̈,
Եսա երկրներ Ռոստամի հո̈խուն չըն քը՛նե.
Մըկա Ռոստամ տո̈ւ՞ յես:
Կ'ասա. — Խա̈, վոլա̈, յես եմ:
Կ'ասա. — Ապա ինչըխ տ'ըլնի մեր հա̈լ:
Կ'ասա. — Ջա̈ չե, տ'երթամ յեմ երկիր:
Կնիկ կ'ասա. — Յեմ հա̈լ ինչըխ տ'ըլնի ապա:
Կ'ասա. — Առ ենա վոտաց խալխալ, թե ախչիկ ելա̈վ,
Տո̈ւ, քո̈ւ ախչիկ քանի սաղ եք, ուտեք, ձե խեր ա:
Առ ենա բա̈զբա̈նդ, վոր լաճ ելա̈վ,
Չխո ենա բա̈զբա̈նդ կը կապես վըր թեվին,
Չխո կը գա̈ ձի կը կընդնի:
Լաճու անուն ել կը տնես Զոհրաբ:

Հինք կ'ըլնի կը գա̈ ուր երկիր։
Կ'ասա. — Ռոստամ կուրուսեր ա,
Նա̈յարներ գըլոխ վիրուցած ա,
Ջաքըլ տըռատըմած ա։
Վոր ակընջկլեն եկավ,
Գա̈ցին Ռոստամի հա̈ռճեվ։
Առին, պերին, յոթ օր կերան, խըման,
Ջա̈րկին, խաղցին, ենոնց ուրախութեն երին։
Տա̈ռնանք վըր կընգա̈ն։

22

